



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

3(111)2023






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
3(111)2023



Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Յ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Ք., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի սլաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը սլաշտասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- «ԿԱՍԿԱԾԻ ԴԵՊՔՈՒՄ ՄԵՂՄ ՈՐՈՇՄԱՆ ՕԳՏԻՆ (IN DUBIO MITIUS)»
ՄԱՔՍԻՄԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԵԼԻՍ – **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ,**
Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Մ. ՄԿՐՏՉՅԱՆ 8

- НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ЮРИДИЧЕСКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ
ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА - **А. АЙРАПЕТАН**
(ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ԱՄՊԵԿՏՆԵՐ – **Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**)..... 46

- ՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ ԽԱՌԸ ՏԻՊԻ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՍՈՒԲՅԵԿՏԱՅՆԱՅՄԱՆ
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆ ՀԱԿԱՌԱԿ ԸՆԹԱՅՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ (ՎԵՐԱՔՆՆԻՉ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՅԱԿԱՐԳՈՎ ԿԱԼԱՆՔԻ (ԴՐԱ
ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ) ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՅՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ) – **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ** 67

- ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ –
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 111

- ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ՈՒԺԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ –
Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Ֆ. ԱՂԱՐԵԿՅԱՆ 120

- О ВОПРОСЕ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНСТИТУТА ОСВОБОЖДЕНИЯ
ОТ АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ – **Г. ИСРАЕЛЯН**
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ

ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ – Գ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ) 149

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

▪ ПРИМЕНЕНИЕ СРОКА ИСКОВОЙ ДАВНОСТИ К ВИНДИКАЦИИ НЕДВИЖИМЫХ ВЕЩЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ – **Г. ГЕВОРГЯН** (ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՒՐԻՇԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ՀԵՏ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ – **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**) 163

▪ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ – **Հ. ՂԱԶԱՐՅԱՆ** 180

▪ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ – **Մ. ՄԵԼԻՔՅԱՆ** 213

▪ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ – **Ս. ՀԱԿՈՐՅԱՆ** 225

▪ НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С ПОНЯТИЕМ “ВОЛЯ ЗАКОНОДАТЕЛЯ – **К. АДАМЯН** (ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ՝ ԿԱՊՎԱԾ «ՕՐԵՆՍԴՐԻ ԿԱՄՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ – **Կ. ԱԴԱՄՅԱՆ**) 240

▪ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԻՋՈՑՈՎ – **Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ** 249

3(111)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՏԵՂԵԿԱԳՐԱՆ ՂԱՏԱՐԱՆ

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1693-1698)

- ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԶԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 317-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 337-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1693, 4 հուլիսի 2023 թվականի) 266

- 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ՝ «ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1694, 28 հուլիսի 2023 թվականի) 289

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 294

- «ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1695, 28 հուլիսի 2023 թվականի) 309

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ314

- ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1696, 28 հուլիսի 2023 թվականի) 324

3(111)2023
 ◆ ՏԵՂԵԿԻՊԻԿ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 5

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 329
- 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1697, 28 հուլիսի 2023 թվականի) 339
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 344
- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1698, 26 սեպտեմբերի 2023 թվականի) 354

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԴԵՄՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ 361
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ..... 363

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ
ՀԱԿԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ 365
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ 366
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ
ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ 368
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ369

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

- ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
ԿԱՅԱՑԵԼ Է ԲԱՐՁՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԽՈՐՀՐԴԻ
ՎԵՑԵՐՈՐԴ ՖՈՐՈՒՄԸ 371
- ՍԴ - ԱՄՆ ՄՋԳ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ 372



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ՊԿԱ Իրավագիտության
ամբիոնի պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան



ՄԱՆՈՒԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրի պետ,
իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ



ՄԱՐԻՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանողուհի,
Ժան-Մյուլեն Լիոն 3 համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի
3-րդ կուրսի ուսանողուհի

**«ԿԱՍԿԱԾԻ ԴԵՊՔՈՒՄ ՄԵՂՄ ՈՐՈՇՄԱՆ ՕԳՏԻՆ
(IN DUBIO MITIUS)» ՄԱՔՍԻՄԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼՈՒԾԵԼԻՍ**

Ամփոփագիր

Սույն հոդվածի նպատակն է պարզել, թե «in dubio mitius (կասկածների դեպքում մեղմ որոշման օգտին)» իրավական մաքսիմն արդյոք կարո՞ղ է օգտագործվել իրավական անորոշությունները (իրավական նորմերի բովանդակային անորոշությունները, իրավական կոլիզիաների և օրենսդրական բացերի հետևանքով ծագած անորոշությունները) լուծելու (վերացնելու) նպատակով:

Հեղինակներն իրավահամեմատական մեթոդի օգնությամբ կատարել են միջնյուղային վերլուծություն և եզրակացրել, որ «in dubio mitius» մաքսիմը կիրառվում է իրավունքի տարբեր ճյուղերում և ունի տարբեր ձևակերպումներ: Օրինակ՝ սահմանադրական իրավունքում այն առավել հայտնի է որպես «in dubio pro libertate (կասկածները հօգուտ ազատության/իրավունքի)», հարկային իրավունքում՝ «in dubio pro tributario (կասկածները հօգուտ հարկատուի)» կամ «in dubio contra fiscum (կասկածներն ի վնաս գանձարանի)», քրեական դատավարությունում՝ «in dubio pro reo/favor rei (չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի)»:

Որոշ իրավական համակարգերում, օրինակ՝ Գերմանիայում «in dubio mitius» մաքսիմը որպես իրավական անորոշությունները հաղթահարելու վերջին միջոց դիտարկելու մոտեցումը մերժվում է: Սակայն իրավական համակարգերի մեծ մասում «in dubio mitius» մաքսիմը կիրառվում է որպես իրավական անորոշության լուծման վերջին միջոց: Մի շարք պետություններ պոզիտիվ իրավունքում էքսպլիցիտ ամրագրել են իրավական անորոշությունների պայմաններում անձի համար բարենպաստ որոշում կայացնելու մասին նորմ:

Հիմնաբառեր: «In dubio mitius» մաքսիմ, իրավական անորոշություն, բարենպաստ որոշում, օրենսդրական բաց, իրավական կոլիզիաներ:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Կասկածները մեղմ որոշման օգտին» մաքսիմի էությունը

Հռոմեական իրավունքում գործում էր «Semper dubiis benigniora praeferenda sunt» կարգախոսը, որը նշանակում է կասկածելի դեպքերում նախապատվելի է բարենպաստ (մեղմ) որոշումը (Dig. 50, 17, 56)¹: Իրավաբանական բառարաններում այս կարգախոսը հակիրճ ձևակերպված է հետևյալ կերպ՝ «in dubio mitius», այսինքն՝ կասկածի դեպքում մեղմի (բարենպաստի) օգտին: Սա նշանակում է, որ եթե առկա են կասկածներ, անորոշություններ, ապա պետք է նախապատվություն տալ գթասարտությանը (ներողամտությանը) և կայացնել մարդու համար առավել մեղմ (բարենպաստ) որոշումը:

Միջազգային իրավունքի լատիներենի ուղեցույցում «in dubio mitius» մաքսիմը մեկնաբանվում է մի քանի իմաստներով.

1) սկզբունք, ըստ որի՝ եթե քրեական գործով ապացույցները երկիմաստ կամ անորոշ են, ապա մեղադրյալը պետք է անմեղ ճանաչվի.

2) սկզբունք, ըստ որի՝ փոխհատուցումը կամ դատավճիռը պետք է մեղմացնել, եթե պատասխանատվության կամ վնասի վերաբերյալ ապացույցները լիովին չեն հաստատում հայցը կամ հետապնդումը.

3) սկզբունք, ըստ որի՝ միջազգային իրավունքով պարտավորության գոյության վերաբերյալ կասկածների առկայության դեպքում պետք է խուսափել որևէ պարտավորության որոնումից (սահմանելուց), որը կարող է սահմանափակել պետական ինքնիշխանությունը²:

Այս մեջբերման վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ: Նախ՝ հեղինակը «in dubio mitius (կասկածների դեպքում մեղմ որոշման օգտին)» մաքսիմի բովանդակության մեջ իրավացիորեն ընդգրկել է իրավունքի տարբեր ճյուղերին հայտնի սկզբունքներ: Օրինակ՝ «in dubio mitius» մաքսիմի վերաբերյալ առաջին մոտեցումը քրեական դատավարությանը հայտնի «in dubio pro reo» սկզբունքն է՝ չփարատված կասկածները մեկնաբանվում են hoqուտ մեղադրյալի:

Երկրորդ՝ հեղինակը «in dubio mitius» մաքսիմի գործողությունը տարածում է ոչ միայն փաստերի, այլ նաև իրավական հարցերի վրա: Խոսքը միջազգային պարտավորությունների գոյության վերաբերյալ անորոշու-

¹ Black's law dictionary / by Henry Campbell Black. 4th ed.1968. P. 1526.
² Aaron X. Fellmeth, Maurice Horwitz, Guide to Latin in International Law. Oxford University Press. New York. 2009. P. 126.

թյունների դեպքում նորմերը պետական ինքնիշխանության (այն չսահմանափակելու) օգտին մեկնաբանելու մասին է:

«In dubio mitius» մաքսիմն իրավունքի տարբեր ճյուղերում կարող է ունենալ տարբեր ձևակերպումներ, օրինակ՝ սահմանադրական իրավունքում այն առավել հայտնի է որպես «in dubio pro libertate (կասկածները հոգուտ ազատության/իրավունքի)», հարկային իրավունքում՝ «in dubio pro tributario (կասկածները հոգուտ հարկատուի)» կամ «in dubio contra fiscum (կասկածներն ի վնաս գանձարանի)», քրեական դատավարությունում՝ «in dubio pro reo/ favor rei (չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի)»: Պետք է նշել, որ բոլոր այս ձևակերպումների հիմքում դրված է ըստ էության նույն գաղափարը՝ եթե առկա են չփարատված (չլուծված) կասկածներ (անորոշություններ), ապա պետք է կայացնել անձի, մեղադրյալի կամ հարկատուի համար առավել մեղմ (բարենպաստ) որոշումը:

Թվարկվածներն ըստ էության «in dubio mitius» ընդհանուր մաքսիմի ճյուղային դրսևորումներն են: Պատահական չէ, որ առանձին մասնագետներ, օրինակ՝ հարկային իրավունքի ոլորտում «in dubio mitius» և «in dubio pro tributario» ձևակերպումներն օգտագործում են նույն իմաստով¹:

Հայ իրավաբաններին առավել ծանոթ է քրեաիրավական ոլորտում կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու «in dubio pro reo» դրույթը, որը 1995-2015 թթ. ուղղակիորեն ամրագրված էր նաև ՀՀ Սահմանադրության տեքստում, սակայն այն իր տառացի ձևակերպմամբ քրեաիրավական է, որի գործողությունը սահմանափակվում է միայն քրեական դատավարությունում:

Այնուամենայնիվ, «in dubio pro reo / favor rei» քրեադատավարական մաքսիմը և «in dubio mitius» դրույթն ըստ էության արտահայտում են նույն իմաստը, պարզապես տարբեր են դրանց ընդհանրացման աստիճանը (գործողության ոլորտը). ի տարբերություն «in dubio pro reo» քրեադատավարական դրույթի՝ «in dubio mitius» մաքսիմն իր ձևակերպմամբ առավել ընդհանուր է, այդ իսկ պատճառով այս աշխատանքում մաքսիմը կօգտագործվի առավելապես այս ձևակերպմամբ: «In dubio mitius» դրույթն իրավական տարբեր համակարգերում կարող է ունենալ տարբեր

¹ Wojciech Morawski, Radim Boháč, In Dubio Pro Tributario/In Dubio Mitius as a Rule of Reasoning in Tax Law Interpretation // Intertax, 2023, № 51, Issue 6, PP. 506-518.

ձևակերպումներ, ընկալումներ և կիրառության սահմաններ: Օրինակ՝ անգլոամերիկյան իրավական համակարգերում գործում է մեկնաբանման գթասրտության սկզբունքը՝ «the rule of lenity»: Այն դատավորներին ուղղորդում է երկիմաստ քրեաիրավական նորմերը մեկնաբանել նեղ¹: ԱՄՆ գերագույն դատարանը նշել է.

«Երբ Կոնգրեսի նպատակը բուն օրենքից պարզ չէ, և խելամիտ մարդիկ չեն կարող համաձայնության գալ դրա մտադրության վերաբերյալ, ապա դատարանը կընդունի ավելի քիչ խիստ մեկնաբանություն (U. S. v. Callanan, D.C.Mo., 173 F.Supp. 98, 100):

Մուսուլմանական իրավական համակարգում առկա է նմանատիպ դրույթ, որը թույլ է տալիս պատիժ սահմանել միայն «կասկածի կամ երկիմաստության» բացակայության դեպքում²:

1.2. «In dubio mitius» մաքսիմի գործողության ոլորտները

Իրավաբանական վարույթի ընթացքում չփարատված կասկածներ և անորոշություններ կարող են ծագել ինչպես իրավական հարցերի, այնպես էլ փաստերի (փաստական տվյալների) վերաբերյալ: Զարգացած բոլոր իրավական համակարգերում փաստերի վերաբերյալ չփարատված կասկածների դեպքում մեղմ որոշում կայացնելու (հոգուտ անձի մեկնաբանելու) սկզբունքը, ընդհանուր առմամբ, կասկածի տակ չի դրվում: Սակայն նույնը չի կարելի պնդել իրավական հարցերով «չփարատված» կասկածների (իրավական անորոշությունների՝ իրավական նորմերի բովանդակային անորոշությունների, իրավական կոլիզիաների և օրենսդրական բացերի հետևանքով ծագած անորոշությունների) դեպքում մեղմի օգտին որոշում կայացնելու (հոգուտ անձի մեկնաբանելու) մասին:

«In dubio mitius» մաքսիմն արդյո՞ք կիրառելի է իրավական հարցերի (իրավական անորոշությունների՝ իրավական նորմերի բովանդակային անորոշությունների, իրավական կոլիզիաների և օրենսդրական բացերի հետևանքով ծագած անորոշությունների) վերաբերյալ առկա կասկածները

¹ Antonin Scalia A Matter of Interpretation: Federal Courts and the Law. Amy Gutmann ed., 1997. P. 29.

² Rabb A. The Islamic Rule of Lenity: Judicial Discretion and Legal Canons // Vanderbilt Journal of Transnational Law, 2011. № 44. PP. 1299–1351, Rabb A. Doubt in Islamic Law: A History of Legal Maxims, Interpretation, and Islamic Criminal Law. Cambridge University, New York, 2015. PP. 25-48.

ՍԱՀՄԱՆԱՐՈՂՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

լուծելիս, այսինքն՝ արդյոք այն հնարավորություն տալի՞ս է իրավակիրառողին իրավական հարցերի վերաբերյալ չհաղթահարված (չփարատված) կասկածները վերացնելու նպատակով իրավունքը կիրառել այնպես, որպեսզի հնարավոր լինի կայացնել առավել մեղմ որոշումը: Այս հարցը տարբեր իրավական համակարգերում կարող է ունենալ տարբեր պատասխաններ: Օրինակ՝ գերմանական իրավունքում չփարատված կասկածներն անձի օգտին մեկնաբանելու մաքսիմը կիրառվում է բացառապես փաստերի մասով¹: Գերմանական դոկտրինը հերքում է իրավական հարցերով այս մաքսիմը կիրառելու հնարավորությունը², ավելին՝ գերմանացի առանձին գիտնականներ առհասարակ հերքում են «in dubio pro reo» մաքսիմի անհրաժեշտությունը, այդ թվում՝ փաստերի մասով կիրառելու դեպքում³:

Մյուս կողմից, լեհ մասնագետները «in dubio pro reo» մաքսիմը համարում են որպես քրեական իրավունքի սկզբունք և քրեաիրավական նորմերի անորոշությունների հաղթահարման միջոց⁴: Միջազգային իրավունքի լատիներենի ուղեցույցում «in dubio pro reo» սկզբունքը դիտարկվում է ոչ միայն չփարատված փաստերը, այլ նաև իրավական անորոշությունները մեղադրյալի օգտին մեկնաբանելու լույսի ներքո:

«In dubio pro reo մաքսիմի էությունն այն է, որ եթե կիրառվող օրենքները կամ համապատասխան փաստերն անհասկանալի են կամ երկիմաստ, ապա բոլոր կասկածները պետք է մեկնաբանել մեղադրյալի համար բարենպաստ եղանակով: Այս մաքսիմն առավել հաճախ կիրառվում է

¹ Քրեական իրավունքի ռուս մասնագետները նշում են, որ որոշ դեպքերում Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանն ուղղակիորեն նշել է, որ քրեական օրենքի իմաստի վերաբերյալ կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու անհրաժեշտությունը բխում է Գերմանիայի Հիմնական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասից (Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի 17.12.2013 թ. որոշումը (1 BvL 5/08). §121.): Տե՛ս **Алаторцев А. Ю.** Правовая определённость уголовно-правового запрета: автореферат дис. ... кандидата юридических наук. - М., 2018. - С. 119:

² BGHSt 14, 68 (73); Eicker, JA 2021, 330 (331); Huber, JuS 2015, 596; Norouzi, JuS 2008, 17; Stuckenberg, JA 2000, 568 (571); Wessels/Beulke/Satzger, Rn. 1301; Wolter, JuS 1983, 363. Հղումն ըստ՝ Bernd Heinrich, Strafrecht AT, 7. Auflage 2022, Fn. 3376:

³ **Axel Montenbruck**, In dubio pro reo aus normtheoretischer, straf- und strafverfahrensrechtlicher Sicht. Duncker & Humblot, 1985.

⁴ **Koszowski M.** Restrictions on the Use of Analogy in Law // Liverpool Law Review. 2016. Vol. 37. Issue. 3. P. 138. Մեջքերումն ըստ՝ **Алаторцев А.Ю.** Правовая определённость уголовно-правового запрета: автореферат дис. ... кандидата юридических наук. - М., 2018. - С. 118:

քրեական գործերով, բայց կարող է կիրառվել նաև քաղաքացիական գործերով»¹:

Հարկային իրավունքի մասնագետները «in dubio pro tributario/in dubio mitius» դրույթը քննարկում են որպես իրավական անորոշությունները լուծելու միջոց և նշում են, որ այս սկզբունքը տարբեր իրավական համակարգերում ընկալվում է տարբեր կերպ: Նաև ավելացնում են, որ սա հարկային օրենսդրության համընդհանուր սկզբունք չէ, և որ Եվրոպական Միության Արդարադատության դատարանը (CJEU) կոնկրետ գործով մերժել է այս դրույթի կիրառությունը (այս մասին հաջորդիվ)²:

Սույն հոդվածում, այնուամենայնիվ, կներկայացվի, որ ժողովրդավարական ժամանակակից իրավական համակարգերում «in dubio mitius / in dubio pro reo / in dubio pro tributario» մաքսիմները ժամանակի ընթացքում ընդլայնել են իրենց գործողության (կիրառության) ոլորտները: Օրինակ՝ չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու «in dubio pro reo» դրույթը ծագումնաբանությամբ անկասկած վերաբերում է փաստերին, սակայն ստորև կներկայացվեն մի շարք դեպքեր, երբ ժամանակի ընթացքում մաքսիմի գործողության ոլորտն ընդլայնվել է և կոնկրետ դեպքերում կիրառվել է նաև որպես իրավական հարցերի վերաբերյալ առկա անորոշությունները լուծելու (մեկնաբանելու) վերջին միջոց:

Բոլոր դեպքերում, իրավական նորմերի անորոշությունները (կասկածները) անձի (մեղադրյալի, հարկատուի կամ այլ մասնավոր անձի) օգտին մեկնաբանելու մասին «in dubio mitius» մաքսիմը չի կարող համարվել օրենքի դրույթները սաքոտաժի ենթարկելու միջոց, այն կարող է կիրառվել որպես վերջին միջոց, երբ որևէ այլ եղանակով հնարավոր չէ հաղթահարել իրավական ոլորտի անորոշությունը:

Սույն հետազոտության ընթացքում նախ՝ կներկայացվի իրավական հարցերով «in dubio mitius» սկզբունքի կիրառության պատմական ասպեկտը, այնուհետև՝ իրավահամեմատական մեթոդաբանությամբ կներկայացվի հանրային իրավունքի տարբեր ճյուղերում այս սկզբունքի կիրառու-

¹ Aaron X. Fellmeth, Maurice Horwitz, Guide to Latin in International Law. Oxford University Press. New York. 2009. P. 126.

² Wojciech Morawski, Radim Boháč, 'In Dubio Pro Tributario/In Dubio Mitius as a Rule of Reasoning in Tax Law Interpretation // Intertax, 2023, № 51, Issue 6, PP. 506-518.

թյունը կամ դոկտրինալ ճանաչումը, որից հետո անցում կկատարվի ՀՀ իրավական համակարգին:

2. «In dubio mitius» մաքսիմի զարգացման համառոտ պատմությունը

2.1. Ընդհանուր դրույթներ

Միջազգային հանրային իրավունքի հանրագիտարանում նշվում է.

«Չնայած լատիներեն ձևակերպմանը՝ այս մաքսիմի ակունքները գալիս են ոչ թե հռոմեական իրավունքից, այլ *ius commune*-ից, որտեղ նույն գաղափարն արտահայտվել է այլ մաքսիմներում: *Dubio mitius*-ի ճշգրիտ բանաձևն ավելի նոր է և առաջին անգամ հայտնվել է փաստիներորդ դարի վերջին քրեական իրավունքի վերաբերյալ գիտական աշխատություններում»¹:

Այնուամենայնիվ, գերակայում է այն մոտեցումը, որ «in dubio mitius» մաքսիմը ծագումնաբանությամբ հռոմեական իրավունքի դրույթ է:

2.2 «In dubio mitius» մաքսիմը հռոմեական իրավունքում

Հռոմեացի որոշ փիլիսոփաներ տարբեր ձևակերպումներով անդրադարձել են «in dubio mitius» մաքսիմին: Հատկապես իրավական անորոշությունների լուծման հարցի տեսանկյունից կարևոր են հռոմեացի իրավաբանների հետևյալ թեզերը.

«Եթե կասկած կա ստրուկի իրական կարգավիճակի վերաբերյալ, ապա նա պետք է ճանաչվի ազատ» (Պոմպոնիոս, D. 50.17.20)²:

«Անորոշության դեպքում նախընտրելի է գնալ առավել մեղմ լուծման ճանապարհով» (Ուլպիանոս, D. 34,5,10)³:

Հռոմեացի իրավաբան Գայոսը նույնպես խոսել է նույն հայեցակարգի մասին՝ այն համարելով իրավունքի ընդհանուր սկզբունք¹:

¹ The Max Planck Encyclopedias of International Law // <https://opil.ouplaw.com/display/10.1093/law-mpeipro/e2678.013.2678/law-mpeipro2678#:~:text=1%20In%20dubio%20mitius%2C%20literally,the%20content%20of%20a%20treaty>

² Черниловский З.М. Римское частное право: Элементарный курс. - М.: "Новый Юрист", 1997. - С. 13.

³ Doubt In Favour Of The Defendant, Guilty Beyond Reasonable Doubt Comparative Study, published by OSCE Mission to Skopje, 2016. P. 17.

2.3. «In dubio mitius» մաքսիմը Ցարական Ռուսաստանի իրավունքում

Մինչև հոկտեմբերյան ռուսական հեղափոխությունը ռուսական իրավունքի դոկտրինում և պրակտիկայում նույնպես հանդիպում են դեպքեր, երբ «in dubio mitius» մաքսիմը համարվել է իրավական անորոշության լուծման վերջին միջոց: Այսպես՝ ռուս ականավոր իրավաբան Ե.Վ. Վասկովսկին օրենսդրական նորմերի մեկնաբանության վերաբերյալ իր աշխատություններում անդրադարձել է քննարկվող հարցին: Նա թվարկում է երկիմաստ իրավական նորմերի մեկնաբանման կանոնների որոշակի հերթականություն (արդարության կանոնը, նպատակահարմարության կանոնը) և որպես մեկնաբանման երրորդ հերթի կանոն՝ նշում է.

«Նորմի երկու հավասարապես արդար և նպատակահարմար իմաստներից պետք է ընտրել այն, որն ավելի գթասիրտ է (...) Այս կանոնով կարելի է ղեկավարվել միայն այն պայմանով, եթե դրանով չեն խախտում արդարությունը և գործնական նպատակահարմարությունը: Հակառակ պարագայում ստիպված կլինեն օրենսդրին վերագրելու ոչ ողջամիտ և վնասակար բարեհաճություն»²:

Նույն հեղինակը մեկ այլ աշխատանքում ավելացրել է հետևյալ միտքը.

«Այս կանոնը հաճախ ձևակերպվում է այլ կերպ. կասկածի դեպքում պետք է օրենքին փալ ավելի մեղմ իմաստ (in dubio mitius), իսկ քրեական իրավունքի կիրառման դեպքում նաև այսպես՝ ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուր ամբաստանյալի (in dubio pro reo)»³:

Ինչպես նկատում ենք, իրավական նորմի մեկնաբանման գթասրտության սկզբունքը հեղինակն ուղղակիորեն կապել է «in dubio mitius» և «in dubio pro reo» մաքսիմների հետ:

Ցարական Ռուսաստանում քրեական դատավարության պրակտիկայի ամփոփման վերաբերյալ դոկտրինալ աղբյուրում հեղինակը նշում է.

¹ Doubt In Favour Of The Defendant, Guilty Beyond Reasonable Doubt Comparative Study, published by OSCE Mission to Skopje, 2016. P. 17.

² **Васьковский Е.В.** Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и применении гражданских законов. – Одесса, 1901. – С. 192-193.

³ **Васьковский Е.В.** Руководство к толкованию и применению законов. Для начинающих юристов. – М., 1913. – С. 100.

«Քրեական իրավունքի ընդհանուր կանոնի համաձայն՝ օրենքի իմաստի վերաբերյալ կասկածների դեպքում պետք է ընդունել ամենամեղմ մեկնաբանությունը (*in dubio mitius*), իսկ քրեական դատավարության օրենքները մեկնաբանելիս՝ «ցանկացած կասկած (ինչպես նշել է Սենատը 1869 թ. № 831 որոշման մեջ) պետք է մեկնաբանվի ոչ այլ կերպ, քան որպես ամբաստանյալի օգտին և նրա համար առավել բարենպաստ իմաստով»¹:

Այս մեջբերումից կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի բարձրագույն դատական մարմինը (Սենատը) «*in dubio pro reo*» քրեաիրավական մաքսիմը համարել է նաև քրեական և քրեադատավարական նորմերի բովանդակության վերաբերյալ կասկածները լուծելու միջոց: 1869 թ. քննված մեկ այլ գործով կասկած էր ծագել այն հարցի շուրջ, թե ամբաստանյալը պետք է պատասխանատվության ենթարկվեր մե՞կ, թե՞ երկու հանցագործությունների համար (№ 486 գործ): Սենատը որոշել է, որ նման կասկածների դեպքում դատավճիռը պետք է կայացնել միայն մեկ հողվածով²:

Ռուսական քրեական իրավունքի հայտնի մասնագետ Ն. Տագանցևը ևս անդրադարձել է այս հարցին: Մասնավորապես, հեղինակը նշում էր, որ օրենքներում հանդիպող հակասությունների լուծման նպատակով քրեական իրավունքը մշակել է մի քանի դրույթ: Առաջին դրույթն այն է, որ կասկածի դեպքում պետք է կիրառել ամբաստանյալի համար առավել բարենպաստ օրենքը՝ *in poenalibus causis benignius interpretandum est: in dubiis mitius*: Հաջորդ դրույթն այն է, որ կասկածի դեպքում դատարանը պետք է հետևի իրավունքի ընդհանուր սկզբունքներին և կասկածները մեկնաբանի հոգուտ օրենքով ճանաչված հիմնական սկզբունքների, ինչպիսիք են՝ անձի ազատության իրավունքը, անձեռնմխելիության իրավունքը և այլն³:

Այսպիսով՝ ցարական Ռուսաստանի իրավունքը «*in dubio mitius*» մաքսիմը, ընդհանուր առմամբ, համարում էր իրավական կասկածները

¹ **Чебышев-Дмитриев А.П.** Российское уголовное судопроизводство по Судебным уставам 20 ноября 1864 г. - СПб.: В.П. Печаткин, 1875 - С. 16.

² **Фон-Резон А.** Обзор кассационных решений, относящихся до постановки вопросов по делам, решаемым с участием присяжных заседателей // Журнал гражданского и уголовного права: Март и апрель. - СПб.: Тип. А.М. Котомина, 1874, Кн. 2. - С. 147-148.

³ **Таганцев Н.С.** Русское уголовное право. Часть общая. Том I: лекции. - СПб., 1902. - С. 180-181.

(անորոշությունները) հաղթահարելու վերջին միջոց, սակայն նույնը չի կարելի ասել խորհրդային իրավունքի մասին:

2.4. «In dubio mitius» մաքսիմը խորհրդային իրավունքում

Խորհրդային պետաիրավական համակարգում գերակայող էթատիզմը «պետություն-մարդ» հարաբերություններում բնականաբար չէր կարող հանդուրժել իրավական նորմերի անորոշությունները հոգուտ մարդու մեկնաբանելու մաքսիմի գոյությունը: Ավելին, խորհրդային քրեական դատավարությունում երկար տարիներ մերժվում էր նույնիսկ անմեղության կանխավարկածը և «in dubio pro reo» մաքսիմը:

1982 թ. Մ. Միխենկոն, քրեադատավարական ապացուցման հարցերը քննարկելիս, ընդհանուր (անուղղակի) ձևով անդրադարձ է քննարկվող մաքսիմին: Նա նշել է.

«Անկասկած, չփարատված կասկածների մեկնաբանման դրույթն առաջին հերթին վերաբերում է ապացույցներին և դրանց աղբյուրներին, երբ գործի փաստական հանգամանքները կասկածելի են, հակասական և անորոշ, թույլ են փալիս փարբեր մեկնաբանություններ ու եզրակացություններ: Այս ոլորտում կասկածների մեկնաբանումն իրականացվում է միայն օրենքը կիրառելիս և անհրաժեշտ է քրեական և քրեադատավարական իրավունքի նորմերի ճիշտ կիրառման համար: Բնականաբար, դրա հետ մեկտեղ, անհնարին է խուսափել քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ընդհանուր և հատուկ մասերի նորմերի մեկնաբանումից՝ առանց հիմնվելու փաստական փյալների վերաբերյալ կասկածների մեկնաբանման կանոնի վրա»¹:

Այս մեջբերումից պարզ է, որ հեղինակը խուսափել է էքսպլիցիտ նշելու, որ չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու մաքսիմը կարող է վերաբերել նաև իրավական նորմերի ընկալման հարցում առկա կասկածներին (անորոշություններին), սակայն նրա բարդ ձևակերպված միտքը ենթադրաբար կարելի է ընթերցել հենց այն իմաստով, որ նա ցանկացել է նշել, որ «in dubio pro reo» մաքսիմը

¹ Михеенко М.М. Доказывание в советском уголовном судопроизводстве. – Киев, 1984. – С. 72.

վերաբերում է նաև քրեաիրավական և քրեադատավարական նորմերի իմաստային անորոշությունները լուծելուն:

3. «In dubio mitius» մաքսիմը հանրային իրավունքի տարբեր ճյուղերում (իրավահամեմատական տեսանկյունը)

3.1. Ընդհանուր դրույթներ

Մի շարք երկրներ, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Լեհաստանը և Պերուն պոզիտիվ իրավունքում էքսպլիցիտ ճանաչել են իրավական հարցերով «in dubio mitius» իրավական մաքսիմի կիրառման հնարավորությունը: Այլ երկրներում, ինչպիսիք են՝ Բելգիան, Կանադան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, այս մաքսիմն օրենսդրորեն ամրագրված չէ, սակայն ժամանակ առ ժամանակ այն վկայակոչվում է դատական պրակտիկայում¹:

Քննարկվող մաքսիմն իրավական անորոշությունների լուծման նպատակով կիրառելու հարցի իրավահամեմատական վերլուծությունը կիրականացվի ըստ իրավունքի ճյուղերի:

3.2. «In dubio pro libertate» սկզբունքը սահմանադրական իրավունքում

Սահմանադրական իրավունքի դոկտրինում երբեմն «in dubio pro libertate (կասկածները հօգուտ ազատության/իրավունքի)» մաքսիմը հիշատակվում է կա՛մ որպես իրավունքները սահմանափակելիս հավասարակշռության ապահովման միջոց, կա՛մ որպես սահմանադրաիրավական նորմերի մեկնաբանման եղանակների (մեթոդների) միջև ընտրություն կատարելու սկզբունք:

Նախապես նշենք, որ այս ձևակերպման մեջ «libertate - ազատություն» բառը չի ընկալվում նեղ՝ մարդու ֆիզիկական ազատության իմաստով, այն օգտագործվում է ավելի լայն՝ առհասարակ մարդու իրավունքներին նախապատվություն տալու իմաստով: Այս տեսանկյունից զարմանալի չէ, երբ հարկային իրավունքի չեխ մասնագետները «in dubio pro tributario (կասկածները հօգուտ հարկատուի)» գաղափարը կապում են «in dubio pro libertate» մաքսիմի հետ՝ այն հիմնավորմամբ, որ հարկերը (այն վճարելու պարտականությունը) միջամտում են մարդու իրավունքներին, հատկա-

¹ Goldswain G.K. The Purposive Approach to the interpretation of Fiscal Legislation – the Winds of Change/ 2008. Vol. 16. N2. P116, Thuronyi V. Comparative Tax Law, New York, Law International, 2003, P. 136, 140, 145.

պես՝ սեփականության իրավունքին¹: Վարչական իրավունքի լեի մասնագետները նույնպես իրավական հարցերով կասկածները հոգուտ մասնավոր անձի մեկնաբանելու մասին Վարչական դատավարության օրենսդրական դրույթը դիտարկում են «in dubio pro libertate» մաքսիմի լույսի ներքո (այս մասին հաջորդիվ)²: Ասվածը վկայում է այն մասին, որ «in dubio pro libertate» մաքսիմն ունի ընդհանուր սկզբունքի նշանակություն, և այն կարող է օգտագործվել «in dubio mitius» մաքսիմին համարժեք իմաստով:

Հայտնի իրավագետ Ա. Բարակը մարդու իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի հարցերը քննարկելիս անդրադառնում է այն խնդրին, թե ինչպես պետք է վարվել, եթե նժարներին դրված են հավասար նշանակության հանրային և մասնավոր բնույթի արժեքներ: Նա հարցին տալիս է տարբերակված պատասխան. եթե սահմանադրական ժողովրդավարության մոդելն այնպիսին է, որ մարդու իրավունքներն ունեն հատուկ նշանակություն (ի տարբերություն սահմանադրական ժողովրդավարական այն համակարգերի, որտեղ մարդու իրավունքները թեև կարևոր են, սակայն առավել կարևոր է հանրային շահը), ապա այն դեպքերում, երբ նժարները հավասարակշռված են, ապա մարդու իրավունքները պետք է գերակայեն: Ա. Բարակը «in dubio pro libertate» մաքսիմը կիրառելի է համարում նման սահմանադրական ժողովրդավարական համակարգերում: Նա նշում է.

«ժողովրդավարության նման համակարգերում կասկածների դեպքում ազատությունը գերակայում է (*in dubio pro libertate*)»³:

Այս տեսանկյունից հասկանալի է, թե ինչու խորհրդային պետաիրավական համակարգում «in dubio pro libertate» մաքսիմը, մեծ հաշվով, գոյության շանս չէր կարող ունենալ: Չ՞է որ այդ համակարգում պետական-կուսակցական շահերն ունեին բացարձակին հասնող գերակայություն: Այս

¹ Wojciech Morawski, Radim Boháč, 'In Dubio Pro Tributario/In Dubio Mitius as a Rule of Reasoning in Tax Law Interpretation // Intertax, 2023, № 51, Issue 6, P 506.

² Szejna, Przemysław. The Principle of in dubio pro libertate in Administrative Proceedings and Its Function: A Step Forward or a Step Back // Krytyka Prawa. Niezależne Studia nad Prawem. 2020, № 12(4), PP.161-177.

³ Aharon Barak, Proportionality constitutional rights and their limitations. translated from the Hebrew by Doron Kalir. Cambridge : Cambridge University Press, 2012. PP. 367, 399.

համատեքստում պետք է հասկանալ խորհրդային իրավունքին հայտնի այն մոտեցումը, որ եթե օրենսդիրը **միևնույն** արարքը սխալմամբ համարել է և՛ հանցագործություն, և՛ վարչական զանցանք, ապա պետք է նախապատվություն տալ խիստ (քրեական) օրենքին, այսինքն՝ անձին պետք է պատասխանատվության ենթարկել ոչ թե վարչական, այլ քրեական իրավունքի նորմերով (այս մասին հաջորդիվ):

Սահմանադրագետ Դ. Շուստրովն այն քիչ ռուս սահմանադրագետներից է, ով «in dubio pro libertate» մաքսիմը դիտում է որպես նորմերի մեկնաբանման մեթոդների կամ մեկնաբանման արդյունքների միջև առկա կոնֆլիկտները լուծելու սկզբունք: Նա նշում է.

«In dubio pro libertate» սկզբունքը պահանջում է, որ իրավական ակտերի դրույթները մեկնաբանվեն այնպես, որ վերջինիս արդյունքը լինի մարդու իրավունքների հնարավոր առավելագույն պաշտպանությունը: Իրավական տեքստը պետք է մեկնաբանվի հնարավորինս համապարփակ կերպով, որպեսզի մարդու իրավունքներին միջամտությունը հասցվի նվազագույնի: Եթե փարբեր մեթոդների հիման վրա կատարվող մեկնաբանությունն առաջացնում է մեկնաբանման արդյունքների հակասություն, ապա պետք է ընտրվի այն արդյունքը, որն առավելապես նպաստում է անձի իրավունքներին և ազատություններին: Այսպիսով՝ առաջնահերթություն պետք է տալ այն մեկնաբանությանը, որն ամենաքիչն է միջամտում մարդու իրավունքներին ու ազատություններին»¹:

Դ. Շուստրովը նշում է, որ սահմանադրության մեկնաբանության այս սկզբունքն առաջին անգամ քննարկվել է Վայմարյան Հանրապետության ժամանակաշրջանի գերմանական գրականության մեջ: Հեղինակն այս սկզբունքը համարում է իրական մարդասիրական սկզբունք, որը հիմնված է մարդու արժեքանական ընկալման, նրա արժանապատվության, իրավունքների և ազատությունների վրա՝ որպես բարձրագույն արժեքների (օրինակ՝ 1949 թ. Գերմանիայի Հիմնական օրենքի 1-ին հոդված, ՌԴ Սահմանադրության 2-րդ հոդված և այլն)²:

¹ Шустров Д.Г. Толкование в конституционном праве: теоретические основы. - М., 2022. - С. 167.

² Տե՛ս նույն տեղում:

«In dubio pro libertate» մաքսիմից բխում է մեկ այլ մարդասիրական սկզբունք՝ ըստ որի պարտականությունների պատկանելիության վերաբերյալ կասկածները պետք է մեկնաբանվեն որպես պետության վրա դրված պարտականություններ: Օրինակ՝ ՌԴ սահմանադրական դատարանը, 30.03.2018 թ. № 14 որոշմամբ վիճարկվող նորմերի սահմանադրականությունը որոշելիս, իմպլիցիտ հիմք է ընդունել «in dubio pro libertate» մաքսիմը: Նշված գործով կազմակերպությունը վիճարկել է մի շարք նորմերի սահմանադրականությունը. իրավակիրառ պրակտիկայում այդ նորմերին տրված մեկնաբանության համաձայն՝ հատուկ որսորդական տարածքներում որսորդական ռեսուրսները հիվանդություններից պաշտպանելու համար, հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու նպատակով անասնաբուժական դեղամիջոցներ (պատվաստանյութեր) ձեռքբերելու պարտականությունը դրվում է ոչ պետական կազմակերպությունների վրա՝ պետությանն անհիմն ազատելով հանրային նշանակություն ունեցող այս գործառույթների իրականացումը ֆինանսավորելու բեռից:

ՌԴ Սահմանադրական դատարանը նշել է, որ մինչև օրենսդրական կարգավորումներն այդ դեղամիջոցները պետք է ձեռք բերվեն պետական բյուջեի միջոցներից: Դատարանն իր դիրքորոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ.

«Իրավական պետությունում, որի բարձրագույն արժեքը մարդն է, նրա իրավունքներն ու ազատությունները (ՌԴ Սահմանադրության 2-րդ հոդված), հանրային (վարչական) հարաբերությունների իրավական կարգավորման վերաբերյալ անհաղթահարելի կասկածները, հատկապես եթե դրանք կապված են մասնավոր անձանց՝ դրա խախտման համար պարասխանադրության ենթարկելու հնարավորության հետ, չեն կարող, ընդհանուր կանոնի համաձայն, ուղղված լինել այդ անձանց՝ որպես այդ իրավահարաբերությունների ակնհայտորեն ավելի թույլ կողմի դեմ»:

3.3. «In dubio mitius» մաքսիմը վարչական իրավունքում

Ռուսական վարչական իրավունքի դոկտրինում քննարկվում է օրենսդրությունը հօգուտ քաղաքացիների մեկնաբանելու մաքսիմը պաշտո-

նապես ճանաչելու հարցը: Մասնավորապես առաջարկվում է ՌԴ վարչական օրենսդրությունում ամրագրել հետևյալ դրույթը.

«Բոլոր չփարապրված կասկածները, հակասությունները և օրենսդրական անորոշությունները վարչական մարմինը պետք է մեկնաբանի միայն հօգուտ քաղաքացիների և կազմակերպությունների՝ վարչական ակտ կայացնելիս և գործողություններ կատարելիս հնարավորինս հաշվի առնելով նրանց օրինական շահերը»¹:

Քանի դեռ ուս գիտնականները քննարկում են վարչական օրենսդրությունում «in dubio mitius» մաքսիմն ամրագրելու հարցը, 2017 թ. Լեհաստանի օրենսդիրն այս մաքսիմն ուղիղ ձևով ամրագրել է Վարչական դատավարության օրենսգրքի 7a հոդվածում: Նշված հոդվածի 1- ին մասի համաձայն.

«Եթե վարչական վարույթի առարկան կողմի վրա պարտականություն դնելն է կամ կողմի իրավունքները սահմանափակելն է կամ իրավունքից զրկելն է, և եթե իրավական նորմի բովանդակության վերաբերյալ մնում են կասկածներ, ապա այդ կասկածները լուծվում են հօգուտ անձի, եթե դրանով չեն շոշափվում կողմի շահերը կամ երրորդ անձի շահերը»:

Միաժամանակ օրենսդրությամբ նախատեսվեցին նաև այս սկզբունքի կիրառումը վերահսկելու լրացուցիչ կանոններ: Այս սկզբունքը չի կիրառվում նաև այն դեպքում, երբ դա պահանջում են պետության կարևոր շահերը, և հատկապես՝ նրա անվտանգությունը, պաշտպանությունը կամ հասարակական կարգը, ինչպես նաև սպաների և պրոֆեսիոնալ զինվորների անձնական հարցերում²:

Վարչական դատավարության օրենսգրքի այս նորմը կիրառվում է, երբ նյութական իրավունքի նորմերն առաջացնում են այնպիսի կասկածներ, որոնք հնարավոր չէ վերացնել: Այլ կերպ՝ դրանք հնարավոր չէ լուծել՝

¹ Соловей Ю.П. Принципы административных процедур как правовые средства «связывания» административного усмотрения // Ежегодник публичного права 2018: Принципы административных процедур и административного судопроизводства. - М.: “Инфотропик Медиа”, 2018. - С. 160.

² Szejna, Przemysław, The Principle of in dubio pro libertate in Administrative Proceedings and Its Function: A Step Forward or a Step Back // Krytyka Prawa. Niezależne Studia nad Prawem. 2020, № 12(4), PP. 166.

օգտագործելով մեկնաբանության առկա հնարքները: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ իրավակիրառը նորմի մեկնաբանման արդյունքում գալիս է հետևության, որ առկա են մի քանի ճիշտ լուծումներ, սակայն անորոշ է, թե որն է կիրառելի: Նման իրավիճակում ծագած կասկածները պետք է լուծել հոգուտ անձի, այսինքն՝ անհրաժեշտ է նորմը կիրառել անձի համար առավել բարենպաստ մեկնաբանությամբ՝ երաշխավորելով նրա իրավունքների պաշտպանությունը¹:

3.4. «In dubio pro tributario» մաքսիմը հարկային իրավունքում

Հարկային իրավունքում հաճախ են հանդիպում ներքին հակասություններ, անորոշություններ²: Հարկային իրավունքի անորոշությունները հաղթահարելու նպատակով առաջարկվում է կիրառել «in dubio pro tributario» մաքսիմը³: Մաքսիմը հնարավորություն է տալիս հարկային իրավակիրառման ընթացքում առաջացող անորոշությունները (հակասությունները) մեկնաբանել հոգուտ հարկատուի⁴: Ռուսական հարկային իրավունքում «In dubio pro tributario» մաքսիմի փոխարեն ընդունված է օգտագործել «in dubio contra fiscum» մաքսիմը⁵, ըստ որի իրավական անորոշությունները պետք է մեկնաբանել ի վնաս հարկային մարմինների: Թեև «in dubio contra fiscum» մաքսիմն ունի փոքր-ինչ այլ շեշտադրություն⁶, սակայն այն իր էությունով նույնանուն է «in dubio pro tributario» մաքսիմի հետ: Հարկեր վճարելու ոլորտում իրավական անորոշությունն ի վնաս հարկային մարմնի մեկնաբանելը (in dubio contra fiscum), ըստ էության, նշանակում է այդ անորոշությունը լուծել հոգուտ հարկատուի (in dubio pro tributario):

¹ **Smarż, Joanna.** Zasada in Dubio Pro Libertate W Przepisach Kodeksu postępowania Administracyjnego // Studia Prawnicze. 2017, № 4 (212), PP. 62-63.

² **Beck P.J., Lisowsky P.** Tax Uncertainty and Voluntary Real-Time Tax Audits // Accounting Review. 2013, № 3, Vol. 89, PP. 867-869.

³ Այս մասին մանրամասն տե՛ս՝ **Pikulska-Radomska A.** Fiscus non erubescit. O niektórych italskich podatkach rzymskiego pryncypatu. L/o 'dz', 2013, S. 150. (էլ. ռեսուրս՝ https://dspace.uni.lodz.pl/bitstream/handle/11089/31425/Pikulska-Radomska_Fiscus.pdf?sequence=1&isAllowed=y, վերջին մուտքը՝ 11.09.2023)

⁴ **Obuchowski S.** In dubio pro tributario jako zasada prawa podatkowego // Financial Law Review, 2016, № 1(4), S. 58-59.

⁵ **Чочиев А.В.** Принцип in dubio contra fiscum в российском налоговом праве: монография. – М.: “Юстицинформ”, 2020. – С. 23.

⁶ **Wojciech Morawski, Radim Boháč,** 'In Dubio Pro Tributario/In Dubio Mitius as a Rule of Reasoning in Tax Law Interpretation // Intertax, 2023, № 51, Issue 6, PP. 507.

Թեև առանձին գիտնականներ կարծում են, թե «in dubio pro tributario» մաքսիմն օտար է ժամանակակից իրավունքին¹, սակայն ի հակադրություն այդ գնահատականների, այս մաքսիմի նկատմամբ հետաքրքրությունն աճում է:

Առանձին պետություններ «in dubio pro tributario» մաքսիմը էքսպլիցիտ ամրագրել են օրենսդրության մեջ (Ուկրաինա, Բելառուս, Հայաստան, Ադրբեջան, Լեհաստան, Ռումինիա, ՌԴ և այլն), իսկ որոշները թեև այն ուղղակիորեն չեն ամրագրել օրենսդրության մեջ, սակայն նրանց դատարանները հաճախ կիրառում են այդ մաքսիմը (Բելգիա, Կանադա, ԱՄՆ-ի որոշ նահանգներ)²: Եվրոպական դատարանը Ուկրաինայի վերաբերյալ գործերով նույնպես կիրառել է այս մաքսիմը, սակայն դրանից չի կարելի եզրակացնել, որ այդ գաղափարը ճանաչվել է որպես ընդհանուր սկզբունք: Նշված գործերում Եվրոպական դատարանը մաքսիմը կիրառել է ոչ թե որպես ինքնավար, այլ որպես պատասխանող պետության ազգային իրավունքում գործող սկզբունք³:

«In dubio pro tributario» մաքսիմը հատուկ ուշադրության է արժանացել հատկապես լեհական իրավաբանական պրակտիկայում և գիտության մեջ⁴: Ընդգծվում է, որ այս մաքսիմն առավելապես պետք է օգտագործել հարկային օրենսդրության կիրառման ընթացքում, և դատարանների կողմից դա չպահպանելը կնշանակի նահանջ Լեհաստանի Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների պաշտպանությունից⁵:

«In dubio pro tributario» մաքսիմի ճանաչման և կիրառման հարցում էական է Լեհաստանի սահմանադրական դատարանի ներդրումը: Բարձր դատարանն ընդգծել է, որ չնայած հարկային ոլորտին վերաբերող օրենսդրական ակտերն ավելի քան 20 տարվա կիրառություն ունեն,

¹ **Vogenaue S.** «Im Zweifel gegen den Fiskus». Aufstieg und Niedergang einer Interpretations maxime // Aktendes 36. Deutschen Rechtshistorikertages / eds. R. Lieberwirth, H. Luck. Nomos Verlagsgesellschaft mbH & Co KG, 2008, P. 475.

² **Чочиев А.В.** Принцип in dubio contra fiscum в российском налоговом праве: монография. - М.: Юстицинформ, 2020. - С. 28-29.

³ ECHR, Case of Serkov v. Ukraine (Application No. 39766/05). Judgement of 7 July 2011, § 43; ECHR, Case of Shchokin v. Ukraine (Applications nos. 23759/03 and 37943/06). Judgement of 14 October 2010, § 57.

⁴ **Bernat R.** Selektywne stosowanie zasady in dubio pro tributario w konteks'cie zakazu przyznawania pomocy publicznej // Zeszyty Naukowe Ostrol/c-kiego To warzystwa Naukowego. 2015, T. 29, S. 88-100.

⁵ **Юхневич Э., Ствол М.** Принцип in dubio pro tributario в польском налоговом праве // Налоговед. - 2017. - № 8. <https://e.nalogoved.ru/579405>

այնուամենայնիվ, դատական պրակտիկայում մնում են անորոշություններ: Դատարանների և հարկային մարմինների որոշումների արդյունքում առաջացող ոչ ցանկալի հետևանքները բացատրվում են ոլորտային օրենսդրության անկատարությամբ, ցածր որակով, անորոշություններով: Ըստ Սահմանադրական դատարանի՝ նման իրավիճակների հաղթահարման ճիշտ գործիքը հարկային իրավունքի ոլորտում ծագած անորոշությունները, Սահմանադրությանը համահունչ, հոգուտ հարկատուի մեկնաբանելն է¹:

Ուկրաինայի 2010 թ. Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 4.1.4 մասի օրենսդրական ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ եթե տարբեր օրենքներ կամ իրավական ակտեր թույլ են տալիս ոչ միանշանակ (բազմիմաստ) մեկնաբանություն, ապա պետք է ելնել հարկ վճարողների գործողությունների օրինականության կանխավարկածից և **նորմերը մեկնաբանել հոգուտ վերջիններիս (ընդ. հեղ):**

ՌԴ 1998 թ. Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հարկերի և տուրքերի մասին օրենսդրական ակտերում բոլոր չփարատված (չհաղթահարված) կասկածները, հակասությունները և անորոշությունները մեկնաբանվում են հոգուտ հարկատուի (հարկ վճարող, ապահովագրական վճարներ վճարող, հարկային գործակալ):

Հարկային իրավունքի մասնագետները նշում են, որ հարկային օրենքի մեկնաբանության ժամանակ իրավակիրառողը պետք է առաջնորդվի հարկատուի իրավական պաշտպանվածության գերակայության բանաձևով, քանի որ հարկատուն, ով իրավաբանորեն հակադրվում է պետությանը, ֆինանսաիրավական հարաբերությունների թույլ կողմն է²: Մասնագետները նշում են, որ երկակի անարդար կլինի, եթե հարաբերությունների իրավական կարգավորման հետ կապված պետության բացթողումները, վրիպումները մեկնաբանվեն ի վնաս ակնհայտ թույլ

¹ Wyrok Trybunału Konstytucyjnego z 18.07.2013. Sygn. akt SK 18/09, Dz. U. 2013. Poz. 985. (էլ. նետուրս՝ <https://isap.sejm.gov.pl/isap.nsf/download.xsp/WDUJ20130000985/T/D20130985TK.pdf>, վերջին մուտքը՝ 11.09.2023), էջ. 54.

² **Щекин Д.М.** Конституционное толкование налогового законодательства // Налоговед. – 2004. - № 11. - С. 154; **Запольский С.В.** Дискуссионные вопросы теории финансового права: монография. - М.: РАП, Эксмо, 2008. - С. 154.

կողմի¹: Ընդ որում՝ ՌԴ Գերագույն դատարանը բազմիցս կարևորել է քննարկվող մաքսիմը՝ շեշտադրելով հարկատուի առավել «թույլ» կողմ հանդիսանալու հանգամանքը²:

Երբեմն «in dubio pro tributario/ contra fiscum» մաքսիմը դիտարկվում է որպես իրավական որոշակիությունը խախտելու համար պետության պատասխանատվության ձև³:

Այսպիսով՝ չնայած հիմնահարցի վերաբերյալ դոկտրինալ և պետությունների օրենսդրական մակարդակով մոտեցումների տարբերությանը՝ «in dubio pro tributario» մաքսիմի կիրառությունը հարկային հարաբերություններում ունի իր ուրույն տեղը:

3.5. «In dubio pro reo / favor rei» մաքսիմը քրեական իրավունքում

3.5.1. Տերմինաբանության մասին: Ինչպես նշվեց, տարբեր իրավական համակարգերում քրեաիրավական նորմերի բովանդակության վերաբերյալ անորոշությունները, կասկածները մեղադրյալի համար բարենպաստ եղանակով մեկնաբանելու հնարքն ունի տարբեր անվանումներ՝ «favor rei» դոկտրին, մեկնաբանման գթասրտության սկզբունք («the rule of lenity»), խիստ մեկնաբանության սկզբունք («the principle of strict construction»), մեղմացնող մեկնաբանության հնարք («mitigating interpretation»)՝⁴:

Անհրաժեշտ է անդրադառնալ «in dubio pro reo» մաքսիմի և «favor rei» դոկտրինի հարաբերակցությանը: Ոչ հստակ օրենքը մեղադրյալի համար բարենպաստ եղանակով մեկնաբանելու մասին «favor rei» մաքսիմը հաճախ դուրս է բերվում «in dubio pro reo» մաքսիմից⁵, իսկ ռուս մասնագետներն այս երկու դոկտրինաների միջև անջրպետ չեն տեսնում, նրանք

¹ **Брук Б.Я.** Предотвращение неправомерного использования льгот, предусмотренных соглашениями (договорами, конвенциями) об избежании двойного налогообложения: настоящее и будущее // Закон. – 2016. – № 5. – С. 134.

² **Чочиев А.В.** Принцип in dubio contra fiscum в российском налоговом праве: монография. – М.: Юстицинформ, 2020. – С. 24.

³ **Демин А.В.** Принцип определенности налогообложения: монография. – М: “Статут”, 2015. – С. 50.

⁴ **Алаторцев А.Ю.** Использование принципа favor rei для преодоления неопределенности уголовного закона // Вестн. Моск., Сер. 11. Право. – 2016. – № 5. – С. 113 – 114.

⁵ **Hallevy G. A.** Modern Treatise on the Principle of Legality in Criminal Law. Berlin, 2010. P. 162.

«in dubio pro reo» մաքսիմը համարում են դատավարական, իսկ «favor rei» դոկտրինը՝ նյութաիրավական սկզբունք¹:

Իտալացի մասնագետները նշում են, որ «in dubio pro reo» մաքսիմը կարող է տարածվել ոչ միայն փաստերի, այլ նաև՝ նորմի կիրառման ժամանակ ծագած ողջամիտ կասկածների նկատմամբ, որը կարող է բնորոշվել որպես մեկնաբանման հնարք: Բանն այն է, որ դատավորի զգացմունքները, զգացողությունները, գաղափարախոսությունը, այսինքն՝ նրա կամքը, պոտենցիալ ի հայտ է գալիս ոչ միայն փաստի հաստատման պահին, այլ նաև հերմենևտիկ (մեկնաբանման՝ հեղ.) ընտրության ժամանակ: Երբ նորմի մեկնաբանության վերաբերյալ առկա է ողջամիտ կասկած, ապա պետք է կիրառվի «in dubio pro reo» մաքսիմը: Այսինքն՝ դատավորը հնարավորություն ունի ընտրելու մի քանի հերմենևտիկ տարբերակներից մեկը, որը համարվում է ավելի արդար կամ տրամաբանական, ինչպես նաև առավել բարենպաստ: Հետևաբար, դատավորը, բախվելով մի քանի հերմենևտիկ (մեկնաբանման՝ հեղ.) տարբերակների, որոնք բոլորն էլ խելամիտ են, պետք է ընտրի հանցագործություն կատարողի համար առավել բարենպաստը²:

3.5.2. «In dubio pro reo/ favor rei» մաքսիմի սահմանադրական ճանաչումը: Քրեաիրավական անորոշությունները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու սկզբունքը երբեմն ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությունների տեքստում, երբեմն այն բխեցվում է կամ անմեղության կանխավարկածի մասին սահմանադրական նորմից, կամ «չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի» սահմանադրական դրույթից: Օրինակ՝ Պերուի քաղաքական Սահմանադրության 139-րդ հոդվածի 11-րդ կետում ուղիղ նշված է, որ քրեաիրավական նորմերի կասկածների (doubt) անորոշության կամ մրցակցության դեպքում պետք է կիրառել մեղադրյալի համար բարենպաստ նորմը³:

Ինչպես նշվեց՝ 1995 թ. ընդունված ՀՀ Սահմանադրությունում և 2005 թթ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունում անմեղության կանխավարկածի վերաբերյալ հոդվածում ամրագրված էր նաև հետևյալ դրույթը. «Չփա-

¹ **Алаторцев А.Ю.** Правовая определённость уголовно-правового запрета: автореферат дис. ... кандидата юридических наук. - М., 2018. - С. 118.

² **Mario Caterini** In dubio interpretario pro reo // *Politica Criminale E Cultura Giuspenalistica*, Edizioni Scientifiche Italiane, 2017, PP. 515-516.

³ https://www.constituteproject.org/constitution/Peru_2021.pdf?lang=en

րատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի»: Սահմանադրական այս նորմն իրավացիորեն մեկնաբանվել է հետևյալ կերպ.

«Չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի» սահմանադրական պահանջը չի վերաբերում միայն մեղադրանքի փաստական կողմին: Այս մաքսիմը գործում է նաև այն ժամանակ, երբ կասկածներ են ծագում իրավական նորմերի ընտրության և կիրառության հարցում: Նորմերի կիրառման կասկածները կարող են պայմանավորված լինել իրավական նորմերի հակասություններով, նորմերի ոչ հստակ ձեւակերպմամբ կամ օրենսդրական այլ սխալներով: Նման դեպքերում իրավական նորմը մեկնաբանվում եւ կիրառվում է այն տարբերակով, որն առավել բարենպաստ է մեղադրյալի համար»¹:

2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունում «չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի» դրույթն էքսպլիցիտ ամրագրված չէ, սակայն դա չի նշանակում, որ այն սահմանադրական արժեհամակարգում գոյություն չունի. այս պահանջը բխում է ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածից (անմեղության կանխավարկածը):

3.5.3. «In dubio pro reo / favor rei» մաքսիմը միջազգային քրեական դատարանների և ատյանների որոշումներում: Միջազգային դատական մարմինները մի շարք գործերով «favor rei» մաքսիմը համարել է ընդհանուր միջազգային քրեական իրավունքի բաղկացուցիչ, ավելի կոնկրետ՝ իրավունքի ընդհանուր սկզբունք:

Այսպես՝ Prosecutor v. Furundžija գործի շրջանակներում Դատարանը դեռևս 1998 թ. դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ եթե հանցագործության սահմանման վերաբերյալ գոյություն ունեն կասկածներ, ապա այդ սահմանումը պետք է մեկնաբանվի այնպես, որ բարենպաստ լինի մեղադրյալի համար (favor rei): Այդ գործի շրջանակներում բռնաբարության հանցակազմի սահմանման վերաբերյալ առկա էին հակասություններ. մի մեկնաբանությունն առավել խիստ էր, իսկ մյուսը՝ հոգուտ մեղադրյալի: Փաստորեն, տվյալ դեպքում Միջազգային դատական ատյանը արձանագրել է, որ Դատարանը, կիրառելով հանցակազմի առավել

¹ Թամազյան Ա., Ղամբարյան Ա., ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի մեկնաբանություն // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր: 2010, էջ 259:

խիստ մեկնաբանությունը, խախտել է favor rei մաքսիմը, որն ընդհանուր միջազգային քրեական իրավունքի մաս է¹:

Մեկ այլ գործով համապատասխան դատարանը նշել է, որ կիրառելի Կանոնադրության 2-րդ հոդվածի 2Ա պարագրաֆի անգլերեն տարբերակում օգտագործվում է «սպանություն» (killing) տերմինը, մինչդեռ ֆրանսերեն տարբերակում խոսվում է «դիտավորյալ սպանության» մասին (meurtre): Ի տարբերություն «սպանության» (killing)՝ «meurtre»-ը պահանջում է դիտավորության ձևով լրացուցիչ տարրի առկայություն: Դատարանը, ելնելով անմեղության կանխավարկածի և քրեական իրավունքի ընդհանուր կանոնների պահանջներից, որոշել է, որ տվյալ դեպքում պետք է կիրառվի մեղադրյալի համար առավել բարենպաստ տարբերակը²:

4. «In dubio mitius» մաքսիմը ՀՀ իրավական համակարգում

4.1. Ընդհանուր դրույթներ

Ինչպես նշվեց՝ հայ իրավաբաններին առավել ծանոթ է կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու (In dubio pro reo) դրույթը, իսկ «in dubio mitius» մաքսիմը, ընդհանուր առմամբ, քննարկման առարկա չի հանդիսացել: «Datalex» որոնողական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատարանները դատական ակտերում «in dubio mitius» մաքսիմը էքսպլիցիտ չեն վկայակոչել:

Այնուամենայնիվ, ասվածը չի նշանակում, որ ՀՀ իրավական համակարգին «in dubio mitius» մաքսիմն առհասարակ անծանոթ է: ՀՀ օրենսդիրը մի շարք իրավաբանական հարցերի վերաբերյալ կարգավորումներ նախատեսելիս փաստացի հիմք է ընդունել «in dubio mitius» մաքսիմը:

«In dubio mitius» մաքսիմն առավել հաճախ գործածվում է իրավական նորմերի բովանդակային անորոշությունները և իրավական նորմերի կոլիզիաները հաղթահարելու համար, սակայն Օրենսդիրն, ըստ էության, ղեկավարվում է այս մաքսիմով, երբ սահմանում է, որ օրենսդրական բացի դեպքում օրենքի անալոգիայի կարգով պետք է կիրառել մարդու համար բարենպաստ նորմը:

¹ Raimondo F.O. General principles of law in the decisions of international criminal courts and tribunals. [Thesis, fully internal, Universiteit van Amsterdam]. 2007. P. 119.

² Տե՛ս նույն տեղում, էջ 151-152:

4.2. *Օրենսդրական կարգավորումներ, որոնց հիմքում դրված է «in dubio mitius» մաքսիմը*

ՀՀ իրավական համակարգում իրավական նորմերի կոլիզիաների, օրենսդրական բացերի լուծման (վերացման) վերաբերյալ նախատեսված են օրենսդրական կարգավորումներ, որոնց հիմքում ըստ էության դրված է «in dubio mitius» մաքսիմը:

Նախ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն.

«Նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը (...) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը»:

Օրենսդրական այս կարգավորման հիմքում ակնհայտորեն ընկած է «in dubio mitius» մաքսիմը, քանի որ եթե նախորդ հերթի կոլիզիոն նորմերով հնարավոր չէ լուծել իրավական նորմերի միջև առկա հակասությունը, ապա, ըստ Օրենսդրի, իրավակիրառողը պետք է նախապատվություն տա մարդու համար բարենպաստ նորմին:

Երկրորդ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պարտասխանարվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պարտասխանարվության, հարկադրանքի միջոցները (...)»:

Եթե այս դրույթը վերաձևակերպենք, ապա այն կարող է ունենալ հետևյալ բովանդակությունը. «Օրենքի կամ իրավունքի անալոգիա կարող է կիրառվել, եթե դրանով չեն սահմանափակվում անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար չեն նախատեսվում նոր պարտականություններ»: Այլ կերպ՝ մասնավոր անձին անմիջապես հասցեա-

գրված իրավական նորմն օրենքի անալոգիայի կարգով կիրառելը չպետք է վատթարացնի անձի վիճակը:

«In dubio mitius» մաքսիմի վերլուծության տեսանկյունից պետք է պատասխանել հետևյալ հարցին՝ օրենքի անալոգիայի կիրառման՝ «անձի վիճակը չվատթարացնելու» պայմանից արդյո՞ք բխում է, որ օրենքի անալոգիայի կիրառման դեպքում անձի վիճակը բարելավվում է: Հարցին պետք է տալ դրական պատասխան:

1) Անձի վիճակը չվատթարացնող նորմը (խոսքը մասնավոր անձին անմիջապես հասցեագրված նորմերի մասին է) օրենքի անալոգիայի կարգով կիրառելն ինքնին անձի վիճակը բարելավում է, քանի որ դրա միջոցով հաղթահարվում է «դատարկ տարածության» մեջ հայտնված մասնավոր անձի կարգավիճակի անորոշությունը: Օրենսդրական բացի հետևանքով անորոշության մեջ հայտնված անձի կարգավիճակի որոշակիացումը բոլոր դեպքերում առավել բարենպաստ է:

2) Անալոգիայի կարգով կարող են կիրառվել միայն այնպիսի նորմեր, որոնք անձի վիճակը չեն վատթարացնում: «Անձի վիճակը չվատթարացնող նորմ» ձևակերպումը հավասարազոր է «անձի վիճակը բարելավող նորմ» ձևակերպմանը, քանի որ անալոգիայի կարգով կիրառվող նորմն իր բովանդակությամբ չի կարող անձի հանդեպ լինել չեզոք. անձին հասցեագրված նորմն անձի համար կա՛մ բարենպաստ է, կա՛մ անբարենպաստ է:

Այս վերլուծությունից հետո կարելի է եզրակացնել, որ օրենքի անալոգիայի կիրառման՝ «անձի վիճակը չվատթարացնելու» պայմանի հիմքում դրված է «in dubio mitius» մաքսիմի տրամաբանությունը:

«In dubio mitius» մաքսիմի լույսի ներքո կարող են դիտարկվել նաև ստորև նշված օրենսդրական կարգավորումները:

Առաջին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Եթե վարչական ակտը ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի (...) պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԴԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(11)2023

համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը (...):»

Երկրորդ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն.

«Պաշտոնական պարզաբանումը տրվում է դիմումը ստանալուն հաջորդող ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում: (...) Սահմանված ժամկետում պաշտոնական պարզաբանում չստանալու դեպքում դիմող անձն իրավասու է նորմատիվ իրավական ակտի պահանջներն իրականացնելիս առաջնորդվելու իր ներկայացրած պարզաբանման տարբերակով»:

Այս բոլոր դեպքերում, պետական մարմնի լուրջամբ պայմանավորված իրավական անորոշ վիճակները լուծվում են հօգուտ անձի:

4.3. «*In dubio mitius*» մաքսիմի կիրառությունը համընկնող հանցակազմի և զանցակազմերի վերաբերյալ կոլիզիաները լուծելիս

4.3.1. Հանցանքների և վարչական զանցանքների օրենսդրական սահմանազատումը: Հասարակական վտանգավորություն ներկայացնող արարքների զգալի մասը պետության կողմից որակվում են կա՛մ որպես հանցագործություն, կա՛մ որպես վարչական զանցանք: Անթույլատրելի է միևնույն արարքը միաժամանակ համարել և՛ հանցանք, և՛ վարչական զանցանք: Որոշակի արժեքների պաշտպանության գործում իրավունքի արդյունավետությունը կասկածի տակ է դրվում, եթե Օրենսդիրը սխալվում է և նույն արարքը նախատեսում է ինչպես ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում (այսուհետ՝ ՎԻՎՕ), այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ քր. օր.):

Օրինակ՝ 22.12.2006 – 09.04.2007 թթ. զենքով տեղամասային կենտրոն մուտք գործելու համար (նույն արարքի համար) պատասխանատվություն էր նախատեսված ՀՀ ՎԻՎՕ-ով և ՀՀ քր. օր-ով: Այսպես՝ ՀՀ ՎԻՎՕ-ի 40.5-րդ հոդվածը և ՀՀ քր. օր-ի 154.4-րդ հոդվածն արգելում էին քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության: Այս սխալն ուղղվեց

09.04.2007 թ., երբ ՎԻՎՕ-ում փոփոխություն կատարելու մասին օրենքով ՀՀ ՎԻՎՕ-ի 40.5 հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց: Օրենքի նախագծի տեղեկանք-հիմնավորման մեջ նշված է, որ ՎԻՎՕ-ում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նույն արարքի համար պատիժ է սահմանված և՛ ՀՀ քր. օր-ում, և՛ ՎԻՎՕ-ում:

Եթե նույն արարքի համար նախատեսվում է և՛ քրեական, և՛ վարչական պատասխանատվություն, ապա նման իրավիճակներում քրեական և վարչական իրավունքի նորմերի (սանկցիաների) միջև ծագում է միջնուղային կոլիզիա, որը պետք է լուծել՝ հիմք ընդունելով «in dubio mitius» մաքսիմը:

4.3.2. «In dubio mitius» մաքսիմի կիրառությունը համընկնող արարքների դեպքում: Նշված հակասությունը «in dubio mitius» մաքսիմով լուծելիս համընկնող հանցակազմի և զանցակազմի կոլիզիայի դեպքում պետք է նախապատվություն տալ զանցակազմին, եթե կոնկրետ դեպքում քրեական իրավունքի նորմերի համեմատությամբ, զանցանքի համար նախատեսված պատասխանատվությունն առավել մեղմ է: Օրինաստեղծի թույլ տված սխալի բացասական հետևանքները չի կարող կրել իրավախախտը:

Մինչդեռ ՀՀ պոզիտիվ իրավունքը և իրավակիրառ պրակտիկան զարգացել է հակառակ տրամաբանությամբ: Այսպես՝ ՀՀ ՎԻՎՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան»:

Տարածված մոտեցման համաձայն՝ քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող նորմերի նման մրցակցության հարցը վերաբերելի է ֆիզիկական անձի կողմից կատարված **նույն արարքին**¹:

¹ **Андрианов В.К.** Техничко-юридическая сторона разграничения преступлений и смежных административных правонарушений // Вестник Краснодарского университета МВД России. – 2016. – № 3. – С. 19.

Այստեղ անհրաժեշտ է պարզաբանել ՀՀ ՎԻՎՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «խախտումներն իրենց բնույթով» բառակապակցությունը: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ «իրավախախտման բնույթը» որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն իրավախախտման օբյեկտը, այլև օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ կատարման տեղը, ժամանակը, եղանակը և այլն¹: Համադրելով ՀՀ ՎԻՎՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումն «իրավախախտման բնույթի» վերաբերյալ դոկտրինալ մոտեցման հետ՝ կարելի է արձանագրել, որ նման ձևակերպմամբ Օրենսդիրը նկատի է ունեցել այնպիսի իրավիճակները, երբ նույն արարքը նախատեսված է և՛ ՎԻՎՕ-ում, և՛ ՀՀ քր. օր-ում:

ՀՀ ՎԻՎՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված կարգավորումը «in dubio mitius» մաքսիմի հետ ուղիղ կոնֆլիկտի մեջ է:

Հատկանշական է, որ նույնաբովանդակ կարգավորումների կարող ենք հանդիպել հետխորհրդային պետությունների ՎԻՎՕ-ներում:

4.3.3. Իրավահամեմատական տեսանկյունը: ՀՀ ՎԻՎՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումը կրկնում է ՌՍՖՍՀ 20.06.1984 թ. ՎԻՎՕ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումը:

«Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն է առաջանում, եթե այդ խախտումներն իրենց բնույթով չեն առաջացնում քրեական պատասխանատվություն՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով»:

ՌԴ օրենսդիրը ՎԻՎՕ-ն (30.12.2001 թ. խմբագրությամբ) ընդունելիս հրաժարվել է «in dubio mitius» մաքսիմի հետ կոնֆլիկտի մեջ մտնող վերը նշված կարգավորումից: Ավելին՝ ՌԴ գերագույն դատարանի պլենումի՝ «Ձեռքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի գողության, շորթման և ապօրինի շրջանառության գործերով դատական պրակտիկայի մասին» 12.03.2002 թ թիվ 5 որոշման 8-րդ կետում նշվում է, որ զենքի և զինամթերքի շրջանառության կանոնների խախտման դեպքերը գնահատելիս (որակելիս) պետք է նկատի ունենալ, որ արարքը կարող է միաժամանակ պարունակել ինչպես վարչական իրավա-

¹ **Тхань Н.В.** Индивидуализация административной ответственности граждан: по материалам России и Вьетнама: дис. ... канд. юрид. наук. - Иркутск, 1993. - С. 29.

խախտման, այնպես էլ՝ հանցագործության տարրեր, հետևաբար անհրաժեշտ է սահմանազատել նմանատիպ իրավիճակները¹: Պլենումն ընդգծել է, որ նման իրավիճակներում իրավախախտը կարող է ենթարկվել միայն վարչական պատասխանատվության: Հումանիզմի նման դրսևորումը բխում է նաև «in dubio mitius» մաքսիմի էությունից:

Դոկտրինում նման դիրքորոշումը ևս ունի կողմնակիցներ: Այսպես՝ Վ.Ա. Նավրոցկին նշում է, որ պատասխանատվության «կրկնօրինակման» դեպքում, երբ նույն արարքները նախատեսված են և՛ Ռ-Դ քր. օր-ում՝ որպես հանցագործություն, և՛ Ռ-Դ ՎԻՎՕ-ով՝ որպես վարչական իրավախախտում, առաջնահերթությունը պետք է տրվի նվազ խիստ միջոցներ նախատեսող օրենքին: Տրամաբանական է՝ խոսքը Ռ-Դ ՎԻՎՕ-ի մասին է²: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ հանրային իրավունքի ոլորտում նորմատիվ իրավական ակտերի միջև կոլիզիայի դեպքում պետք է կիրառել քաղաքացու կարգավիճակը բարելավող ակտը³: Ցավոք, ո՛չ Գերագույն Դատարանը, ո՛չ վերը նշված տեսաբաններն իրենց դիրքորոշումներն ուղիղ չեն բխեցրել «in dubio mitius» կամ նմանաբնույթ մաքսիմից:

Ինչպես նշվեց, Ռ-Դ օրենսդիրը հրաժարվել է «in dubio mitius» մաքսիմի հետ կոնֆլիկտի մեջ մտնող նախկին կարգավորումից, սակայն առանձին զանցակազմեր նկարագրելիս նախատեսել է. «(...) եթե այն չի պարունակում քրեորեն պատժելի արարք» պայմանը: Օրինակ՝ Ռ-Դ ՎԻՎՕ-ի 5.27-րդ հոդվածի 6-րդ մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում սահմանված ժամկետում աշխատանքային հարաբերությունների շրջանակում աշխատավարձ, այլ վճարներ չվճարելու կամ ոչ ամբողջական վճարելու համար, եթե այն չի պարունակում քրեորեն պատժելի արարք, (...): Պետք է նկատի ունենալ, որ «քրեորեն պատժելի արարք չպարունակելու» պայմանը չի հակասում «in dubio mitius» մաքսիմին: Բանն այն է, որ Ռ-Դ ՎԻՎՕ-ի կոնկրետ զանցակազմերում «քրեորեն պատժելի արարք չպարունակելու» պայմանը վերաբերում է ոչ թե նույն, այլ «խառը» կամ «սահմանային» արարքներին, որոնք կարող են

¹ Бюллетень Верховного Суда РФ. - 2002. - № 12.

² **Васильев А.М., Мошкин С.В.** Предоставление муниципальных услуг в сфере экономики (Имущественные отношения, земельные отношения, предпринимательство) // Государственная власть и местное самоуправление. - 2016. - № 2. - С. 45-50.

³ **Кисин В.Р., Попугаев Ю.И.** О коллизии (конкуренции) норм, предусматривающих административную и уголовную ответственность, и способы ее разрешения // Журнал «Научный портал МВД России». - 2013. - № 2 (22). - С. 87.

լինել օբյեկտիվ կողմով նման, սակայն առանձին հատկանիշներով (օրինակ՝ հետևանքով) տարբերվող¹: Նման կարգավորումները չեն նույնանում «սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով չեն առաջացնում քրեական պատասխանատվություն՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով» նախադասության հետ²:

¹ Այսպես՝ ՌԴ քր. օր-ի 145.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերը պատասխանատվություն են նախատեսում՝ համապատասխանաբար **շահադիտական կամ անձնական այլ հեղափոխականությունից ելնելով «...»՝ երեք ամսից ավելի** աշխատավարձ, թոշակ, կրթաթոշակ, նպաստ և օրենքով նախատեսված այլ վճարների մասնակի չվճարելու (մաս 1) և **շահադիտական կամ անձնական այլ հեղափոխականությունից ելնելով «...»՝ երկու ամսից ավելի** աշխատավարձ, թոշակ, կրթաթոշակ, նպաստ և օրենքով նախատեսված այլ վճարներ ամբողջությամբ չվճարելու կամ երկու ամսից ավելի ֆեդերալ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չվճարելու քիչ վճարելու համար (մաս 2): Այսպիսով՝ ՌԴ քր. օր-ով նախատեսված արարքը տարբերվում է ՌԴ ՎԻՎՕ-ով նախատեսված արարքից առնվազն սուբյեկտիվ կողմի (շահադիտական կամ անձնական այլ հետաքրքրվածություն) և օբյեկտիվ կողմի (պարտականությունը չկատարելու կամ) ոչ պատշաճ կատարելու ժամկետներով) հատկանիշներով: Կամ՝ ՌԴ ՎԻՎՕ-ի 7.32-րդ հոդվածի 7-րդ մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում պետական և մունիցիպալ կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների ոլորտում պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման համար, որը պետության և հասարակության օրենքով պաշտպանվող հետաքրքրություններին հասցրել է **էական վնաս, եթե այդ արարքը չի առաջացնում քրեական պատասխանատվություն**: ՌԴ գործող քր. օր-ի 200.4-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում պետական կամ մունիցիպալ կարիքների ապահովման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների ոլորտում չարաշահումների համար՝ եթե այդ արարքները կատարվել են **շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և պայծառել են խոշոր վնաս**: Այսպիսով՝ ՌԴ քր. օր-ով նախատեսված արարքը տարբերվում է ՌԴ ՎԻՎՕ-ով նախատեսված արարքից առնվազն սուբյեկտիվ կողմի (շահադիտական շահագրգռվածություն) և օբյեկտիվ կողմի (խոշոր վնաս) հատկանիշներով:

² ՎԻՎՕ-ի առանձին հոդվածներ թաքնված հղում են պարունակում քր. օր-ի վրա, որում նախատեսված են ՎԻՎՕ-ով սահմանված կոնկրետ իրավախախտումից որևէ հատկանիշով տարբերվող արարքներ: Այս մասին տես՝ **Андрянов В.К.** Технико-юридическая сторона разграничения преступлений и смежных административных правонарушений // Вестник Краснодарского университета МВД России. - 2016. - № 3, - С. 20-21. Համարժեք կարգավորումներ առկա են նաև ՀՀ ՎԻՎՕ-ում: Այսպես՝ ՀՀ ՎԻՎՕ-ի 117-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Օդանավակայանի սարքավորումները, օդանավակայանի նշանները, օդանավերը և դրանց սարքավորումները վնասելը, **որը չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հեղանքներ**: Այս դեպքում ևս գործ ունենք հանցանքի բացառումով (փաստացի հետևանքի բացառումով) վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի հետ: Հատկանշական է, որ գոյություն ունեն իրավական տեխնիկայի տեսանկյունից հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատման այլ հնարքներ ևս, որ պարագայում օրենսդիրը, ոչ թե թաքնված, այլ ուղիղ հղում է կատարում քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածի վրա: Օրինակ՝ ՌԴ ՎԻՎՕ-ի 6.1.1 հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ծեփ կամ այլ բռնի գործողություններ կատարելու համար, որոնք պատճառել են ֆիզիկական ցավ, սակայն չեն

3(111)2023
 ◆ ՏԵՄԵԿԱԿՐԱԿԱՆ ՊԱՏՄԱՆՎՈՐՎԱԿԱՆ
 ◆ 37

Ի տարբերություն ՀՀ-ի, Ղազախստանի ՎԻՎՕ-ի 10-րդ հոդվածում ամրագրվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Նշված Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Մեղքի վերաբերյալ ցանկացած կասկած մեկնաբանվում է հօգուտ այն անձի, ում նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ: Նրա օգտին պետք է լուծվեն նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կիրառումից բխող կասկածները»:

Նշված հոդվածի 2-րդ նախադասության հիմքում հստակ դրվել է «in dubio mitius» մաքսիմը. սահմանվել է, որ ենթադրյալ վարչական խախտում կատարած անձի օգտին պետք է լուծվեն նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կիրառումից բխող կասկածները:

Սակայն Ղազախստանի ՎԻՎՕ-ի 25-րդ հոդվածում սահմանվել է նաև հետևյալ դրույթը.

«Սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն է առաջանում, եթե այդ իրավախախտումներն իրենց բնույթով չեն առաջացնում օրենքով սահմանված քրեական պատասխանատվություն»:

Այս ձևակերպումը նման է ՀՀ ՎԻՎՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասին: Եթե այս պարագայում Ղազախստանի օրենսդիրը նկատի է ունեցել նույն արարքները, ապա նման կարգավորումը հակասում է անմեղության կանխավարկածի վերաբերյալ 10-րդ հոդվածի 3-րդ մասին և «in dubio mitius» մաքսիմին: Բանն այն է, որ Օրենսդիրը մի կողմից՝ սահմանել է, որ

հանգեցրել ՌԴ քր. օր-ով նախատեսված հետևանքների...: Առանձին հնարք է ՀՀ ՎԻՎՕ-ի 183-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման դիսպոզիցիայում կիրառված հնարքը, երբ օրենսդիրը նշում է ոչ թե վարչական իրավախախտման հատկանիշները, այլ այն հատկանիշները, որ վարչական իրավախախտման կազմում պետք է բացակայեն: Այսպես՝ ՀՀ ՎԻՎՕ-ի նշված հոդվածում նախատեսված ինքնիրավչության դիսպոզիցիայում նշված է այն հատկանիշը (հետևանքը), որը կբացառի արարքը վարչական իրավախախտում որակելու հնարավորությունը (ինքնիրավչությունը՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնական (ինքնագլուխ) իրականացնելը, որը **չի պատճառել էական վնաս** անձանց իրավունքներին կամ օրինական շահերին կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական շահերին):

3(11)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կիրառումից բխող կասկածները պետք է լուծվեն իրավախախտի օգտին, մյուս կողմից՝ նշել է, որ երբ անձը կատարել է ՎԻՎՕ Հատուկ մասով նախատեսված արարք (օբյեկտիվ փաստակազմ), սակայն այդ նույն արարքի օբյեկտիվ փաստակազմն առաջացնում է նաև քրեական պատասխանատվություն, ապա պետք է նախապատվություն տալ առավել խիստ՝ քրեաիրավական միջոցներին:

5. Եզրակացություններ

Արմատներով դեպի հոռմեական իրավունքը գնացող «in dubio mitius» մաքսիմի էությունն այն է, որ եթե առկա են կասկածներ, անորոշություններ, ապա պետք է նախապատվություն տալ գթասրտությանը (ներողամտությանը) և կայացնել մարդու համար առավել մեղմ (բարենպաստ) որոշում:

Անկախ այն հանգամանքից, որ քննարկվող մաքսիմն իրավունքի տարբեր ճյուղերում ունի տարբեր ձևակերպումներ, այնուամենայնիվ, դա չի փոխում մաքսիմի գենետիկ բովանդակությունը: Իրավունքի տարբեր ճյուղերում գոյություն ունեցող ձևակերպումները փաստացի «in dubio mitius» ընդհանուր մաքսիմի ճյուղային դրսևորումներն են:

Հայ իրավական մտքին «in dubio mitius» մաքսիմն առավելապես ծանոթ է քրեաիրավական ոլորտում կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու «in dubio pro reo» դրույթով:

Զարգացած բոլոր իրավական համակարգերում փաստերի վերաբերյալ չփարատված կասկածների դեպքում մեղմ որոշում կայացնելու (հօգուտ անձի մեկնաբանելու) սկզբունքը, ընդհանուր առմամբ, կասկածի տակ չի դրվում: Սակայն նույնը չի կարելի պնդել իրավական հարցերով «չփարատված» կասկածների (չլուծված անորոշությունների, հակասությունների) դեպքում մեղմի օգտին որոշում կայացնելու (հօգուտ անձի մեկնաբանելու) մասին: Աշխատանքում հետևություն է արվել առ այն, որ իրավաբանական վարույթի ընթացքում չփարատված կասկածներ և անորոշություններ կարող են ծագել ինչպես իրավական նորմերի (հարցերի), այնպես էլ փաստերի (փաստական տվյալների) վերաբերյալ:

Իրականացնելով պատմական և իրավահամեմատական վերլուծություն՝ աշխատանքում եզրակացվել է, որ իրավական նորմերի անորոշությունները (կասկածները) անձի (մեղադրյալի, հարկատուի կամ այլ մասնավոր անձի) օգտին մեկնաբանելու մասին «in dubio mitius» մաքսիմը չի կարող համարվել օրենքի դրույթները սաբոտաժի ենթարկելու միջոց, այն կարող է կիրառվել որպես վերջին հնարք, երբ մեկնաբանման այլ մեթոդներով հնարավոր չէ հաղթահարել իրավական հարցերին առնչվող անորոշությունները:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք» (ընդունվել է 2018 թվականի մարտի 21-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 07-ին):
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենք» (ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 31-ին):
3. **Թամազյան Ա.Ա., Ղամբարյան Ա.Ս.**, ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի մեկնաբանություն // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր.: 2010, էջ 259:
4. **H. Campbell**, Black Black's law dictionary, 4th ed.1968., P. 1797.
5. **A. X. Fellmeth**, Maurice Horwitz Guide to Latin in International Law. Oxford University Press. New York. 2009., P. 296.
6. **W. Morawski, Radim Boháč**, In Dubio Pro Tributario/In Dubio Mitius as a Rule of Reasoning in Tax Law Interpretation // Intertax, 2023, № 51, Issue 6, P. 717.
7. **A. Gutmann**, Antonin Scalia A Matter of Interpretation: Federal Courts and the Law., 1997. P. 176.
8. **A.Montenbruck**, In dubio pro reo aus normtheoretischer, straf-und strafverfahrensrechtlicher Sicht. Duncker & Humblot, 1985, P. 216.

9. **A. Barak**, Proportionality constitutional rights and their limitations. translated from the Hebrew by Doron Kalir. Cambridge : Cambridge University Press, 2012. P. 611.
10. **Raimondo F.O.** General principles of law in the decisions of international criminal courts and tribunals. [Thesis, fully internal, Universiteit van Amsterdam]. 2007, P.255.
11. **Hallevy G.** A Modern Treatise on the Principle of Legality in Criminal Law. Berlin, 2010. P. 196.
12. **P.J. Beck, Lisowsky P.** Tax Uncertainty and Voluntary Real-Time Tax Audits // Accounting Review. 2013, № 3, Vol. 89, PP. 867-869.
13. **V. Thuronyi, Goldswain G.K** The Purposive Approach to the interpretation of Fiscal Legislation – the Winds of Change/ 2008. Vol. 16. N2., P.121, Comparative Tax Law, New York, Law International, 2003, P. 531.
14. **Koszowski M.** Restrictions on the Use of Analogy in Law // Liverpool Law Review. 2016. Vol. 37. Issue. 3. P. 151.
15. Doubt In Favour Of The Defendant, Guilty Beyond Reasonable Doubt Comparative Study, published by OSCE Mission to Skopje, 2016. P. 152.
16. **Rabb A.** The Islamic Rule of Lenity: Judicial Discretion and Legal Canons // Vanderbilt Journal of Transnational Law, 2011. № 44., P. 1351.
17. **Rabb A.** Doubt in Islamic Law: A History of Legal Maxims, Interpretation, and Islamic Criminal Law. Cambridge University, New York, 2015. P. 432.
18. ECHR, Case of Serkov v. Ukraine (Application No. 39766/05). Judgement of 7 July 2011, § 43; ECHR, Case of Shchokin v. Ukraine (Applications nos. 23759/03 and 37943/06). Judgement of 14 October 2010, § 57.
19. The Max Planck Encyclopedias of International Law // <https://opil.ouplaw.com/display/10.1093/law-mpeipro/e2678.013.2678/law-mpeipro/e2678#:~:text=1%20In%20dubio%20mitius%2C%20literally,the%20content%20of%20a%20treaty>
20. **Алаторцев А.Ю.** Правовая определённость уголовно-правового запрета: автореферат дис., кандидата юридических наук. - М., 2018. - С. 203.
21. **Черниловский З.М.** Римское частное право: Элементарный курс. - М.: "Новый Юрист", 1997. - С. 224.
22. **Васьковский Е.В.** Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и применении гражданских законов. – Одесса, 1901. - С. 375.

23. **Чебышев-Дмитриев А.П.** Русское уголовное судопроизводство по Судебным уставам 20 ноября 1864 г. - СПб.: В.П. Печаткин, 1875. - С. 756
24. **Фон-Резон А.** Обзор кассационных решений, относящихся до постановки вопросов по делам, решаемым с участием присяжных заседателей // Журнал гражданского и уголовного права: Март и апрель. - СПб.: Тип. **А.М. Котомина**, 1874, Кн. 2. - С.238.
25. **Таганцев Н.С.** Русское уголовное право. Часть общая. Том I: лекции. - СПб., 1902. - С. 832.
26. **Михеенко М.М.** Доказывание в советском уголовном судопроизводстве. - Киев, 1984. - С. 539.
27. **Шустров Д.Г.** Толкование в конституционном праве: теоретические основы. - М., 2022. - С. 208.
28. **Соловей Ю.П.** Принципы административных процедур как правовые средства «связывания» административного усмотрения // Ежегодник публичного права 2018: Принципы административных процедур и административного судопроизводства. - М.: «Инфотропик Медиа», 2018.
29. **Чочиев А.В.** Принцип in dubio contra fiscum в российском налоговом праве: монография. - М.: «Юстицинформ», 2020. - С. 180.
30. **Юхневич Э., Ствол М.** Принцип in dubio pro tributario в польском налоговом праве // Налоговед. – 2017. - № 8. <https://e.nalogoved.ru/579405>
31. **Щекин Д.М.** Конституционное толкование налогового законодательства // Налоговед. – 2004. - № 11. - С. 154; **Запольский С.В.** Дискуссионные вопросы теории финансового права: монография. - М.: РАП, Эксмо, 2008. - С. 154.
32. **Брук Б.Я.** Предотвращение неправомерного использования льгот, предусмотренных соглашениями (договорами, конвенциями) об избежании двойного налогообложения: настоящее и будущее // Закон. – 2016. - № 5. - С. 134.
33. **Демин А.В.** Принцип определенности налогообложения: монография. - М: «Статут», 2015. - С. 368.
34. **Алаторцев А.Ю.** Использование принципа favor rei для преодоления неопределенности уголовного закона // Вестн. Моск., Сер. 11. Право. - 2016. - № 5. - С. 118.

35. **Андрианов В.К.** Техничко-юридическая сторона разграничения преступлений и смежных административных правонарушений // Вестник Краснодарского университета МВД России. – 2016. - № 3. - С. 23.
36. **Тхань Н.В.** Индивидуализация административной ответственности граждан: по материалам России и Вьетнама: дис. .. канд. юрид. наук. - Иркутск, 1993. - С. 29.
37. Бюллетень Верховного суда РФ. - 2002. - № 12.
38. **Васильев А.М., Мошкин С.В.** Предоставление муниципальных услуг в сфере экономики (Имущественные отношения, земельные отношения, предпринимательство) // Государственная власть и местное самоуправление. - 2016. - № 2. - С. 45–50.
39. **Кисин В.Р., Попугаев Ю.И.** О коллизии (конкуренции) норм, предусматривающих административную и уголовную ответственность, и способы ее разрешения // Журнал «Научный портал МВД России». – 2013. - № 2 (22). - С. 87.
40. **Caterini M.**, In dubio interpretario pro reo // *Politica Criminale E Cultura Giuspenalistica, Edizioni Scientifiche Italiane*, 2017, P.747.
41. **Lieberwirth R., Luck H.**, «Im Zweifel gegen den Fiskus». Aufstieg und Niedergang einer Interpretations maxime // *Aktendes 36. Deutschen Rechtshistorikertages / eds. Nomos Verlagsgesellschaft mbH & Co KG*, 2008, P. 475.
42. **Heinrich B.**, *Strafrecht AT*, 7.Auflage 2022, Fn. 3376.
43. Wyrok Trybunału Konstytucyjnego z 18.07.2013. Sygn. akt SK 18/09, Dz. U. 2013.Poz. 985. (<https://isap.sejm.gov.pl/isap.nsf/download.xsp/WDU20130000985/T/D20130985TK.pdf>)
44. **Przemysław Szejna**, The Principle of in dubio pro libertate in Administrative Proceedings and Its Function: A Step Forward or a Step Back// *Krytyka Prawa. Niezależne Studia nad Prawem*. 2020, № 12(4), P. 177.
45. **Smarż Joanna**, Zasada in Dubio Pro Libertate W Przepisach Kodeksu postępowania Administracyjnego // *Studia Prawnicze*. 2017, №. 4 (212), P. 72.
46. **Bernat R.**, Selektywne stosowanie zasady in dubio pro tributario w kontekście zakazu przyznawania pomocy publicznej // *Zeszyty Naukowe Ostrol/c-kiego Towarzystwa Naukowego*. 2015, T. 29, S. 88–100.
47. **Obuchowski S.**, In dubio pro tributario jako zasada prawa podatkowego // *Financial Law Review*, 2016, № 1(4), S.75.

48. **Pikulska-Radomska A.** Fiscus non erubescit. O niektórych italskich podatkach rzymskiego pryncypatu. L/o 'dz', 2013, S. 150

(https://dspace.uni.lodz.pl/bitstream/handle/11089/31425/Pikulska-Radomska_Fiscus.pdf?sequence=1&isAllowed=y)

ПРИМЕНИМОСТЬ МАКСИМЫ “БОЛЕЕ СМЯГЧАЮЩЕЕ РЕШЕНИЕ В СЛУЧАЕ СОМНЕНИЙ (IN DUBIO MITIUS)” ПРИ РАЗРЕШЕНИИ ПРАВОВЫХ НЕОПРЕДЕЛЕННОСТЕЙ

Аннотация

Цель настоящей статьи выяснить, может ли правовая максима «in dubio mitius (в сомнительном случае - более мягкое решение)» использоваться для разрешения правовой неопределенности.

Авторы провели межотраслевой анализ с помощью сравнительно-правового метода и пришли к заключению, что «In dubio mitius» максима применяется в разных отраслях права и имеет разные формулировки, например: в конституционном праве она более известна как «in dubio pro libertate (в сомнительном случае в пользу свободы/права)»; в налоговом праве - «in dubio pro tributario (в сомнительном случае в пользу налогоплательщика)» или «in dubio contra fiscum (в сомнительном случае в ущерб казне)»; в уголовном судопроизводстве - «in dubio pro reo/ favor rei (неустранимые сомнения толкуются в пользу обвиняемого)».

В некоторых правовых системах, например, Германии, подход к рассмотрению максимы «In dubio mitius» как последнего способа преодоления правовой неопределенности отвергается.

Однако в большинстве правовых систем «in dubio mitius» максима применяется как последний способ разрешения правовой неопределенности.

Ключевые слова: максима “In dubio mitius”, правовая неопределенность, благоприятное решение, законодательный пробел, правовая коллизия.

“IN FAVOR OF A SOFT SOLUTION IN CASE OF DOUBT (IN DUBIO MITIUS)” APPLICATION OF THE MAXIM IN RESOLVING LEGAL UNCERTAINTIES

Annotation

The purpose of this article is to find out whether the legal maxim "in dubio mitius" (in favor of a soft solution in case of doubt) can be used to resolve legal uncertainties.

The authors conducted an intersectoral analysis using a comparative method and came to the conclusion that the maxim "in dubio mitius" is used in different branches of law and has different formulations: for example, in constitutional law it is better known as "in dubio pro libertate" (suspicions in favor of freedom/law), in tax law "in dubio pro tributario" (suspicions in favor of the taxpayer) or "in dubio contra fiscum" (doubts to the detriment of the treasury), in criminal proceedings "in dubio pro reo/ favor rei" (doubts in favor of the accused).

In some legal systems, for example, in Germany, the approach to considering maxims "in dubio mitius" as a last resort to overcome legal uncertainty is rejected. However, in most legal systems, the Maxim "in dubio mitius" is used as a last resort to resolve legal uncertainty.

Keywords: "in dubio mitius" maxim, legal uncertainty, favorable decision, legislative omission, legal colosseums.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.09.2023 թ., պրվել է գրախոսության 26.09.2023 թ., ընդունվել է պայագրության 03.10.2023 թ.:



ԱՍՈՏ ԱՅՐԱՔԵՅԱՆ

*Профессор кафедры юриспруденции
Международного университета Евразия,
доцент, доктор юридических наук*

**НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ЮРИДИЧЕСКОЙ
ОТВЕТСТВЕННОСТИ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА**

Аннотация

С каждым годом ИИ становится все более интегрированным в такие различные области жизни человека, как юриспруденция и медицина, наука и образование, финансы и банковское дело, производство и промышленность, транспорт и т.д. Естественно возникают разные вопросы, связанные с безопасностью и правовыми последствиями использования ИИ.

Цель. Основная цель – выявить проблемы с определением юридической ответственности ИИ, возникающие вследствие автономности действий ИИ, то есть принятие решений без вмешательства человека, а также в случаях, когда вмешательство человека может не иметь прямой связи с последствиями работы ИИ, определения причинно-следственных связей между действиями ИИ и их последствиями, субъектов правонарушений при использовании ИИ. Предложить решения выявленных проблем.

Методы. В рамках нашего исследования был проведен анализ существующих законодательных и других актов, связанных с искусственным интеллектом, а также некоторых случаев юридической ответственности искусственного интеллекта. Использовались

сравнительно-правовой метод, эмпирические методы описания и интерпретации. Эти методы позволили определить существующие проблемы юридической ответственности искусственного интеллекта.

Результаты. На основании анализа положений, изложенных в статье, обосновывается необходимость правового регулирования отношений, связанных с правосубъектностью и ответственностью ИИ, представлен проект международной конвенции “О признании правосубъектности искусственного интеллекта” и даны определения как общей, так и юридической ответственности ИИ.

Выводы. Необходимо разработать соответствующие юридические нормы и стандарты для правового регулирования ИИ. Нужно отметить, что государственные органы при принятии соответствующих новых нормативных актов или при внесении изменений в них должны также учитывать ныне существующие в области права трансформации, связанные с развитием новейших технологий.

Ключевые слова: искусственный интеллект, ответственность, юридическая ответственность, автономность систем, размытость ответственности, причинно-следственная связь, субъект правонарушений, суррогатное лицо, гиноид.

Введение

Искусственный интеллект (ИИ) является главной технологией XXI века и в тоже время самой обсуждаемой темой в обществе, так как он затрагивает все области нашей жизни. Создание ИИ явилось действительно очень важным явлением нашей жизнедеятельности. Впервые термин “искусственный интеллект” был введен в обиход ученым Джоном Маккарти в 1956 году на первой в истории конференции по ИИ, которая проходила в Дартмутском колледже (США). Сегодня ИИ используется в таких областях нашей жизни, как юриспруденция и медицина, наука и образование, финансы и банковское дело, производство и промышленность, транспорт и т.д.

Нами даны некоторые определения, связанные с ИИ:

1. “Искусственный интеллект” – техническая и/или программная система, способная самостоятельно выполнять и решать определенную группу задач с присущей человеку логикой (анализом) и творческим подходом.

2. “Суррогатное лицо” – робот (устройство) с искусственным интеллектом (гуманоид, андроид, гиноид и т.д.), который самостоятельно, автоматически выполняет сложные действия (работы) с присущей человеку логикой (анализируя) и творческим подходом, способен к общению: задает вопросы и отвечает на них (говорит на одном или нескольких языках).

3. “Владелец суррогатного лица” – физическое или юридическое лицо, а также государство, создавшее (изготовившее), заказавшее или купившее суррогатное лицо с правами, зарегистрированными в удостоверении личности суррогатного лица в порядке, предусмотренном внутригосударственным законодательством.

4. “Удостоверение личности суррогатного лица” – удостоверяющий личность суррогатного лица документ, в котором в обязательном порядке указываются дата создания суррогатного лица, государство регистрации, собственник, внешние и функциональные данные и т.д. Форма, порядок и другие условия выдачи удостоверения личности суррогатному лицу определяются внутренним законодательством Договаривающихся сторон с учетом условий настоящей Конвенции.

5. “Государство принадлежности суррогатного лица” – государство или государства (при двойном или многократном гражданстве) гражданства собственника суррогатного лица – физического лица, государство регистрации собственника юридического лица (или государства)¹.

Использование ИИ помогает людям повысить эффективность различных процессов в самых разных областях жизнедеятельности человека. Но при этом все стороны этого процесса обязаны

¹ Айрапетян А.С. “Миграционная политика Республики Армения: теоретические и прикладные проблемы конституционно-правового регулирования”: докторская диссертация. – С. 390-391.

продемонстрировать ответственный и этический подход для управления рисками, для их минимизации и защиты прав человека.

Ответственность искусственного интеллекта (ИИ) - это свод этических, социальных, юридических и технических принципов и правил, которые устанавливаются как для создателей и операторов, так и для пользователей ИИ с целью обеспечения безопасного и надежного использования ИИ, учитывая его автономность и способность к саморазвитию.

В рамках этой статьи будут представлены некоторые аспекты юридической ответственности ИИ.

Основными вопросами для определения юридической ответственности являются вопросы о том, кто несет эту ответственность, за что, перед кем и какой это вид ответственности? Если в классическом варианте юридической ответственности государство для применения мер принуждения к виновному лицу за совершение противоправного деяния четко устанавливает причинно-следственную связь между действиями правонарушителя (субъекта) и причиненным вредом и определяет виновного, то в случае с юридической ответственностью ИИ проблемой является как установление причинно-следственной связи между использованием ИИ и дальнейшими последствиями, так и определение субъектов правонарушения.

Устанавливая субъектов правонарушений при использовании ИИ, а также причинно-следственную связь между действиями ИИ и их последствиями, нужно четко представлять существующие трудности. Эту связь определить достаточно сложно из-за особенностей работы ИИ, а именно из-за автономности действий, принятия решений без вмешательства человека, а также в случаях, когда кажется, что вмешательство человека может не иметь прямой связи с последствиями работы ИИ.

ИИ работает на анализе информации из различных баз данных и имеет сложные алгоритмы действий, и если база содержит неточные или неправильные сведения, с учетом факта автономности работы анализа ИИ, дальнейшие последствия не могут контролироваться человеком и

могут нанести вред. Например, в Китае в ходе осуществления правосудия активно используется ИИ (“цифровой судья”, “цифровой прокурор”), и если решения будут приняты ИИ на основании неверного анализа законодательных актов или по другим причинам, независимо от времени их принятия, то они могут иметь негативные последствия. В этом случае очень сложно будет как определить причинно-следственную связь, так и установить виновных.

Примеры юридической ответственности ИИ.

Нужно отметить, что юридическая ответственность ИИ является сложной и активно развивающейся областью правового регулирования, так как она требует адаптации существующего правового поля к новейшим IT-технологиям, использование которых иногда приводят к трансформациям в области права.

Определение ответственных за правонарушения (субъектов правонарушений) при использовании ИИ является одним из самых сложных аспектов юридической ответственности ИИ. Нами выявлены основные субъекты – разработчик, оператор системы и пользователь. Приведем несколько примеров юридической ответственности ИИ.

В марте 2018 года 38-летний программист Apple Уолтер Хуанг ехал по шоссе на кроссовере Tesla Model X с активированным автопилотом. Автомобиль разогнался до 110 километров в час, выехал с полосы и врезался в отбойник. В результате полученных травм Хуанг скончался. Стоит отметить, что данный случай привлек внимание общественности и стал поводом для дальнейших дебатов о безопасности автономных автомобилей и юридической ответственности при использовании таких технологий. Национальный совет по безопасности на транспорте США (NTSB) обнародовал результаты расследования. ДТП произошло из-за ошибки автопилота Tesla, халатности дорожных служб и невнимательности водителя. Во время судопроизводства было доказано, что:

1) водитель знал о несовершенстве работы автопилота в Tesla Model X (в некоторых ситуациях автомобиль вело влево), и он обращался с этой проблемой в сервисный центр, однако в день аварии водитель

активировал автопилот и отвлекся на мобильную игру (этот факт подтвердили в Apple), он не держал руки на руле и не следил за ситуацией на дороге, подъезжая к аварийно-опасному участку, где ранее произошло уже 11 ДТП;

2) автопилот ошибочно вывел автомобиль влево из-за стёршейся дорожной разметки;

3) на участке дороги, где произошла авария, отсутствовала смягчающая удар дорожная конструкция, которую вовремя не установил транспортный отдел Калифорнии. Если бы установка была на месте, смертельного исхода удалось бы избежать¹.

Подобное решение NTSB с учетом факта появления общественного транспорта с функцией автопилота должно заставить представителей бизнес структур, которые занимаются производством транспортных средств, работающих на автопилоте, более ответственно относиться к своей продукции, унифицировать и модернизировать ее.

Кроме того, в 2018 году в США (штат Вирджиния) в ходе судебного разбирательства по поводу портрета, созданного с помощью ИИ, был поднят вопрос о том, может ли ИИ быть автором и владеть авторскими правами. Компьютер, который создал что-либо с помощью ИИ, не может быть внесён в патент как изобретатель, поскольку в соответствии с Федеральным законом США об авторских правах только живой человек может быть изобретателем, физическое лицо должно подать заявку на изобретение, принести присягу. Именно поэтому окружной судья штата Вирджиния, ссылаясь на юридическое определение физического лица, постановил, что физическим лицом может быть только живой человек².

Суд, конечно, обязан учитывать положения Федерального закона, но должен также учитывать, что развитие новейших технологий приводит к трансформациям в области права. Например, человекоподобный робот в виде женщины (гиноид) “София” в октябре 2017 года получил

¹ Смертельная авария Tesla Model X произошла из-за ошибки автопилота и невнимательности водителя.

<https://habr.com/ru/news/490078/>

² Суд США решил, что искусственный интеллект не может значиться изобретателем в патенте. <https://3dnews.ru/1048314/sud-ssha-reshil-iskusstvenniy-intellekt-ne-moget-znachitsya-izobretatelem-v-patente>

В 2020 году в США был принят “Закон о национальной инициативе в области искусственного интеллекта” (National Artificial Intelligence Initiative Act of 2020). Ответственность ИИ стала одним из главных принципов правового регулирования технологической сферы. В США огромное значение придается вопросам этики при применении современных технологий. К слову, компании отказываются использовать программы, если следствием может быть предубеждение против отдельных групп лиц. IBM отказалась от деятельности по использованию биометрии и анализа изображений в целях наблюдения за гражданами. Такой подход помогает предотвратить потенциальный вред гражданским правам, следовательно, является профилактикой решения вопроса о юридической ответственности искусственного интеллекта¹.

19 августа 2020 года было принято распоряжение Правительства Российской Федерации №2129-р Об утверждении Концепции развития регулирования отношений в сфере технологий искусственного интеллекта и робототехники на период до 2024 года, в котором регулируются вопросы, связанные с юридической ответственностью в случае применения систем ИИ и робототехники. В частности, в связи с автономностью ИИ предлагается организация соответствующих мероприятий для дальнейшего совершенствования механизмов гражданско-правовой, уголовной и административной ответственности ИИ.

14 июня 2023 года Европарламент одобрил “Закон об искусственном интеллекте”, который должен вступить в силу в октябре. Принятие Закона стало большим прорывом в области правового регулирования ИИ.

В Законе предусмотрено, что в рамках своей цифровой стратегии ЕС намерен регулировать ИИ, чтобы обеспечить лучшие условия для разработки и использования этой инновационной технологии. ИИ может предложить ряд преимуществ в сферах улучшения здравоохранения, безопасности и чистоты транспорта, более эффективного производства, а также более дешевой и устойчивой энергетики. Помимо этого, Закон

¹ Ответственность искусственного интеллекта в правовом поле. <https://dgtlaw.ru/analytic/otvetstvennost-iskusstvennogo-intellekta-v-pravovom-pole>

устанавливает, что системы ИИ, используемые в ЕС, должны быть “безопасными, прозрачными, отслеживаемыми, недискриминационными и экологически безопасными”, и “во избежание неблагоприятных последствий системы ИИ должны контролироваться людьми, а не автоматическими системами”. Также обновлены существующие правила строгой ответственности производителей за некачественный продукт (от умных технологий до фармацевтических продуктов), чтобы в сфере бизнеса сформировалось доверие в плане юриспруденции и шли инвестиции в инновационные продукты, в то же время должна быть обеспечена справедливая компенсация пострадавшим за некачественный продукт, включая наносящие ущерб цифровые продукты. Также предлагается целенаправленно гармонизировать национальные правила ответственности ИИ, которые должны способствовать получению компенсации пострадавшим от ущерба, нанесенного в результате деятельности ИИ. В Законе особое внимание отведено вопросам, связанным с так называемыми “контент-генерирующими” системами. Такие системы, как ChatGPT или Midjourney обязаны информировать пользователя о том, что он контактирует с машиной, и указывать, что контент (изображение, звук, текст) был создан ИИ. Законом также предусмотрено обязательство для фирм-разработчиков исключить риск создания запрещенного Законом контента, а также публиковать данные о защищенных авторскими правами материалах (научных или литературных текстах, музыке, фотографиях и т. д.), которые были использованы программами для создания нового контента¹.

¹ Европейский парламент утвердил первый в мире проект закона об искусственном интеллекте.

<https://www.rfi.fr/ru/%D0%B5%D0%B2%D1%80%D0%BE%D0%BF%D0%B0/20230615-%D0%B5%D0%B2%D1%80%D0%BE%D0%BF%D0%B5%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9-%D0%BF%D0%B0%D1%80%D0%BB%D0%B0%D0%BC%D0%B5%D0%BD%D1%82-%D1%83%D1%82%D0%B2%D0%B5%D1%80%D0%B4%D0%B8%D0%BB-%D0%BF%D0%B5%D1%80%D0%B2%D1%8B%D0%B9-%D0%B2-%D0%BC%D0%B8%D1%80%D0%B5-%D0%BF%D1%80%D0%BE%D0%B5%D0%BA%D1%82-%D0%B7%D0%B0%D0%BA%D0%BE%D0%BD%D0%B0-%D0%BE%D0%B1-%D0%B8%D1%81%D0%BA%D1%83%D1%81%D1%81%D1%82%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D0%BC-%D0%B8%D0%BD%D1%82%D0%B5%D0%BB%D0%BB%D0%B5%D0%BA%D1%82%D0%B5>

Проект Закона, принятый в июне 2023 г., обеспечивает контроль конфиденциальности; ограничивает использование программного обеспечения для распознавания лиц; требует от компаний проведения анализа рисков, которые влекут за собой ИИ-услуги, например, для систем здравоохранения или национальной безопасности.

Китай совершил еще более революционный шаг в сфере правового регулирования ИИ. Пока правительства других стран дискутируют на тему, нужно ли сдерживать развитие ИИ и какие правила могут быть применимы к этому новому в жизни человечества явлению, правительство Китая с 15 августа 2023 года ввело правила координирования ИИ. Правилами, в частности, предусмотрено, что вводится обязательная регистрация услуг и алгоритмов. Искусственно созданный контент, включая фото и видео, должен быть помечен заметными ярлыками, чтобы не вводить общественность в заблуждение. Создатели контента должны будут проводить проверку его безопасности до вывода на рынок. Для обучения ИИ-моделей необходимо использовать “законные данные” и раскрывать эти данные регулирующим органам по мере необходимости. Кроме того, китайские компании должны предоставить четкий механизм рассмотрения публичных жалоб на услуги или контент¹.

Конвенция “О признании правосубъектности искусственного интеллекта”.

Проанализировав вышеизложенное и обосновав необходимость правового регулирования отношений, связанных с правосубъектностью и ответственностью ИИ, нами разработан проект международной конвенции “О признании правосубъектности искусственного интеллекта”.

“Договаривающиеся стороны,
принимая во внимание цели и принципы Устава ООН,
руководствуясь Всеобщей декларацией прав человека,
обязуясь содействовать устойчивому экономическому и социальному прогрессу и повышению уровня жизни человеческого общества,

¹ Китай вводит 24 новых правила регулирования ИИ. Среди них обязательные ярлыки и регистрация алгоритмов. https://www.cnews.ru/news/top/2023-08-15_kitaj_vvodit_24_novyh_pravila

признавая, что достижения науки должны быть на благо человека, следовательно, осознавая роль и значение современных информационных технологий в жизни человеческого общества, решив подписать Конвенцию с этой целью, договариваются о следующем:

Статья 1

Определения, используемые в настоящей Конвенции (изложены выше).

Статья 2

1. Договаривающиеся стороны признают на территориях, находящихся под их юрисдикцией, опосредованную (через собственника) правосубъектность суррогатного лица и в связи с этим обязуются обеспечить на территориях, находящихся под их юрисдикцией, возможности суррогатного лица работать, свободно передвигаться (въезжать на территорию государства, свободно передвигаться на ней и покидать территорию), проводить исследования, заключать мелкие бытовые сделки и общаться с физическими лицами.

2. Договаривающиеся стороны обязуются создавать на территориях, находящихся под их юрисдикцией, правовые, экономические, социальные и иные механизмы, необходимые для достижения целей, изложенных в настоящей Конвенции.

Статья 3

1. Договаривающиеся стороны заявляют, что деятельность суррогатного лица на территориях, находящихся под их юрисдикцией, не может преследовать военные цели, а должна быть направлена на благо человека.

Статья 4

1. Для достижения целей, определенных настоящей Конвенцией, Договаривающиеся стороны обязаны создавать на территориях, находящихся под их юрисдикцией, такие механизмы, чтобы в результате деятельности суррогатного лица не возникали неблагоприятные для физических лиц ситуации: угроза жизни и здоровью, массовая миграция, ухудшение социальных условий, социальная катастрофа и т.д.

2. Деятельность суррогатного лица не может привести к проявлению дискриминационного отношения к физическим лицам или к нарушению (ущемлению) основных прав и свобод человека.

3. Договаривающиеся стороны констатируют, что труд является одним из важных факторов социальной самореализации и становления человека как социального существа, и по этой причине они обязуются создать необходимые правовые, социальные и экономические механизмы для управления безработицей физических лиц и ликвидацией ее последствий, возникших в результате деятельности суррогатного лица на территориях, находящихся под их юрисдикцией.

Статья 5

1. Договаривающиеся стороны обязуются облагать налогом заработную плату, плату за услуги и другие доходы, полученные в результате деятельности суррогатного лица на территориях, находящихся под их юрисдикцией.

2. Договаривающиеся стороны соглашаются, что суррогатное лицо является опосредованным (через собственника) налогоплательщиком, ответственность за надлежащее исполнение налоговых обязательств которого несет собственник суррогатного лица.

Статья 6

1. За ущерб, причиненный третьим лицам в результате деятельности суррогатного лица, в первую очередь ответственность несет лично само суррогатное лицо, а в случае имущественного (материального) ущерба опосредованную ответственность должен нести собственник суррогатного лица.

2. Договаривающиеся стороны обязуются в рамках своего внутреннего законодательства регулировать отношения между формой ответственности за ущерб, причиненный третьим лицам в результате деятельности суррогатного лица, и ее осуществлением с учетом положений настоящей Конвенции.

3. Договаривающиеся стороны вправе отключить суррогатное лицо за ущерб, причиненный третьим лицам в результате деятельности

суррогатного лица (прекращение физической и программной деятельности).

Статья 7

1. Настоящая Конвенция открыта для подписания всеми государствами.

Статья 8

1. Документы сдаются на хранение Генеральному секретарю Организации Объединенных Наций.

Статья 9

1. Документы о присоединении сдаются на хранение Генеральному секретарю Организации Объединенных Наций.

Статья 10

1. Настоящая Конвенция вступает в силу через тридцать дней после сдачи на хранение сороковой ратификационной грамоты или документа о присоединении Генеральному секретарю Организации Объединенных Наций.

2. Для каждого государства, ратифицировавшего или присоединившегося к настоящей Конвенции, настоящая Конвенция вступает в силу на тридцатый день после сдачи на хранение этой ратификационной грамоты или документа о присоединении.

Статья 11

1. Генеральный секретарь затем направляет предложенные поправки и дополнения государствам-участникам с просьбой указать, высказываются ли они в пользу созыва Конференции государств-участников с целью обсуждения этого предложения и проведения голосования по этому вопросу. Любые изменения и дополнения, принятые большинством государств, присутствующих на Конференции и принявших участие в голосовании, вносятся на утверждение Генеральной Ассамблеи.

2. Принятые в соответствии с пунктом 1 настоящей статьи поправки и дополнения вступают в силу в случае утверждения Организацией Объединенных Наций и принятия двумя третями государств-участников.

3. После вступления в силу поправки и дополнения становятся обязательными для государств-участников, принявших их, а для других

государств-участников обязательными остаются положения настоящей Конвенции и все предыдущие поправки и дополнения, которые они приняли.

Статья 12

1. Генеральный секретарь Организации Объединенных Наций получает и направляет всем государствам текст оговорок, сделанных государствами при ратификации или присоединении.

2. Не допускаются оговорки, несовместимые с целями и задачами настоящей Конвенции.

3. Оговорки могут быть сняты в любое время с помощью уведомления Генерального секретаря Организации Объединенных Наций, который затем уведомляет об этом все государства.

Статья 13

1. Любое государство-участник может отменить настоящую Конвенцию путем письменного уведомления Генерального секретаря Организации Объединенных Наций.

Статья 14

1. Генеральный секретарь Организации Объединенных Наций назначается депозитарием настоящей Конвенции.

Статья 15

1. Оригинал настоящей Конвенции, тексты которой на русском, английском, испанском, китайском и французском языках являются равноправными, сдается на хранение Генеральному секретарю Организации Объединенных Наций.

2. В подтверждение чего нижеподписавшиеся уполномоченные представители, должным образом уполномоченные своими правительствами, подписали настоящую Конвенцию¹.

Протокол N 1 к Конвенции “Защита прав суррогатного лица”

1. В отношении суррогатного лица распространяются требования по защите прав, установленные в отношении физического или

¹ Айрапетян А.С. “Миграционная политика Республики Армения: теоретические и прикладные проблемы конституционно-правового регулирования”: докторская диссертация. – С. 391-396.

юридического лица настолько, насколько они могут быть применимы в отношении суррогатного лица.

2. По мере развития института защиты прав суррогатного лица возможно также создание специализированных судов, занимающихся только делами, в которых хотя бы одной из сторон является ИИ.

Заключение

1. ИИ становится все более важной частью современного общества, проникая в различные сферы жизни и бизнеса.

2. Вопросы юридической ответственности ИИ становятся все более актуальными, поскольку ИИ начинает принимать решения и выполнять действия, которые могут влиять на права и интересы физических и юридических лиц.

3. Существует несколько подходов к определению юридической ответственности ИИ, включая строгую ответственность разработчиков, ответственность операторов и пользователей ИИ-систем, идею автономной ответственности ИИ и даже возможность признания ИИ субъектом права.

4. Регулирование ИИ и установление стандартов для его юридической ответственности представляют собой сложную задачу, требующую сотрудничества между государством и обществом.

5. Важно продолжать исследования в этой области, разрабатывать правовые нормы и механизмы, которые позволят обеспечить справедливую и сбалансированную юридическую ответственность ИИ.

Выводы

Резюмируя вышеизложенное, мы приходим к выводу, что:

1. Юридическая ответственность ИИ – сложная и эволюционирующая область права, которая требует дальнейшего исследования и разработки.

2. Введение четких правовых норм и стандартов для ИИ необходимо для обеспечения прав и интересов как физических, так и юридических лиц.

3. Разработчики и операторы, а также пользователи ИИ-систем должны быть осведомлены о своих обязанностях и ответственности при разработке и использовании ИИ.

4. Регулирование ИИ должно учитывать различные сферы применения – от транспорта и юриспруденции до медицины и разрабатывать соответствующие нормы для каждой из них.

5. Общество и соответствующие государственные органы должны активно участвовать в формировании политики и регулирования ИИ, чтобы обеспечить баланс между инновациями и безопасностью.

Список источников

Айрапетян А. С. “Миграционная политика Республики Армения: теоретические и прикладные проблемы конституционно-правового регулирования”: докторская диссертация. - С. 390-396.

2. **Нагородская В. Б.** “Новые технологии (блокчейн/искусственный интеллект) на службе права”. Научно-методическое пособие. - М., 2022.

<https://www.labirint.ru/books/673406/>

3. **Липчанская М. А.** “Реализация конституционных социальных прав и свобод с использованием искусственного интеллекта”: монография. - М., 2022.

<https://www.labirint.ru/books/845503/>

4. “Проект рекомендации об этических аспектах искусственного интеллекта” UNESCO. General Conference, 41st, 2021.

https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000378931_rus

5. “Руководящие принципы по этике для надежного искусственного интеллекта (Ethics Guidelines for Trustworthy AI)”, Ethics guidelines for trustworthy AI. European Commission, the High-Level Expert Group on AI. EU EC 8.04.2019.

<https://digital-strategy.ec.europa.eu/en/library/ethics-guidelines-trustworthy-ai>

6. “Укрепление доверия к человекоориентированному искусственному интеллекту” (Building Trust in Human-Centric Artificial Intelligence). EU EC 8.04.2019.

<https://digital-strategy.ec.europa.eu/en/library/communication-building-trust-human-centric-artificial-intelligence>

7. Стратегия развития искусственного интеллекта в США (U.S. National AI Research and Development Strategic Plan) 2023. Доклад специального комитета по искусственному интеллекту Национального совета по науке и технологиям.

<https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2023/05/National-Artificial-Intelligence-Research-and-Development-Strategic-Plan-2023-Update.pdf>

8. “Принципы работы с искусственным интеллектом (Asilomar AI Principles)”. Асиломарская конференция США, 2017.

<https://futureoflife.org/open-letter/ai-principles-russian/>

9. “Белая книга Европейской комиссии по искусственному интеллекту White Paper on Artificial Intelligence: A European approach to excellence and trust”. Brussels, 2020.

https://commission.europa.eu/publications/white-paper-artificial-intelligence-european-approach-excellence-and-trust_en

10. Общая Директива ЕС о защите данных (General Data Protection Regulation, GDPR) (2016/679). General Data Protection Regulation, GDPR; Постановление (Европейский Союз) 2016/679).

<https://gdpr-text.com/ru/>

11. Рекомендация ОЭСР по искусственному интеллекту (OECD Principles on Artificial Intelligence Recommendation of the Council on Artificial Intelligence) OECD, 2019.

<https://legalinstruments.oecd.org/en/instruments/oecd-legal-0449>

12. “Кодекс этики искусственного интеллекта”. М., 2021. Международный форум “Этика искусственного интеллекта: начало доверия”.

<https://www.aiethic.ru/code>

13. Указ Президента Российской Федерации от 10 октября 2019 года № 490 “О развитии искусственного интеллекта в Российской Федерации”.

14. Распоряжение Правительства Российской Федерации от 19 августа 2020 года № 2129-р “Об утверждении Концепции развития регулирования отношений в сфере технологий искусственного интеллекта и робототехники на период до 2024 г.”

15. “Закон об искусственном интеллекте”. EU EC 14.06.2023.

16. Смертельная авария Tesla Model X произошла из-за ошибки автопилота и невнимательности водителя.

<https://habr.com/ru/news/490078/>

17. Суд США решил, что искусственный интеллект не может значиться изобретателем в патенте.

<https://3dnews.ru/1048314/sud-ssha-reshil-iskusstvenniy-intellekt-ne-moget-znachitsya-izobretatelem-v-patente>

18. Ответственность искусственного интеллекта в правовом поле.

<https://dgtlaw.ru/analytic/otvetstvennost-iskusstvennogo-intellekta-v-pravovom-pole>

19. Китай вводит 24 новых правила регулирования ИИ. Среди них обязательные ярлыки и регистрация алгоритмов.

<https://www.cnews.ru/news/top/2023-08-15-kitaj-vvodit-24-novyh-pravila>

20. Европейский парламент утвердил первый в мире проект закона об искусственном интеллекте.

<https://www.rfi.fr/ru/%D0%B5%D0%B2%D1%80%D0%BE%D0%BF%D0%B0/20230615-%D0%B5%D0%B2%D1%80%D0%BE%D0%BF%D0%B5%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9-%D0%BF%D0%B0%D1%80%D0%BB%D0%B0%D0%BC%D0%B5%D0%BD%D1%82-%D1%83%D1%82%D0%B2%D0%B5%D1%80%D0%B4%D0%B8%D0%BB-%D0%BF%D0%B5%D1%80%D0%B2%D1%8B%D0%B9-%D0%B2-%D0%BC%D0%B8%D1%80%D0%B5-%D0%BF%D1%80%D0%BE%D0%B5%D0%BA%D1%82-%D0%B7%D0%B0%D0%BA%D0%BE%D0%BD%D0%B0-%D0%BE%D0%B1-%D0%B8%D1%81%D0%BA%D1%83%D1%81%D1%81%D1%82%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D0%BC-%D0%B8%D0%BD%D1%82%D0%B5%D0%BB%D0%BB%D0%B5%D0%BA%D1%82%D0%B5>

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ

Ամփոփագիր

Ներածություն. Ամեն տարի AI-ն ավելի է ինտեգրվում մարդկային կյանքի տարբեր ոլորտներում, ինչպիսիք են իրավունքը և բժշկությունը, գիտությունը և կրթությունը, ֆինանսները և բանկային գործունեությունը, արտադրությունը և արդյունաբերությունը, տրանսպորտը և այլն: Բնականաբար, տարբեր հարցեր են առաջանում արհեստական ինտելեկտի օգտագործման անվտանգության և իրավական հետևանքների վերաբերյալ:

Նպատակը. Հիմնական նպատակն է բացահայտել արհեստական ինտելեկտի իրավական պատասխանատվության որոշման հետ կապված խնդիրները, որոնք առաջանում են AI գործողությունների ինքնավարության արդյունքում, այսինքն՝ որոշումներ կայացնելն առանց մարդու միջամտության, ինչպես նաև այն դեպքերում, երբ մարդու միջամտությունը կարող է չունենալ ուղղակի կապ AI աշխատանքի հետևանքների հետ, AI գործողությունների և դրանց հետևանքների միջև պատճառահետևանքային կապերի, AI-ի օգտագործման ժամանակ իրավախախտումների սուբյեկտների որոշման դեպքերում: Առաջարկել լուծումներ հայտնաբերված խնդիրների համար:

Մեթոդներ. Մեր հետազոտության շրջանակներում իրականացվել է արհեստական ինտելեկտի հետ կապված գործող օրենսդրական և այլ ակտերի, ինչպես նաև արհեստական ինտելեկտի իրավական պատասխանատվության որոշ դեպքերի վերլուծություն: Օգտագործվել են նկարագրության և մեկնաբանման համեմատական իրավական, էմպիրիկ մեթոդներ: Այս մեթոդները հնարավորություն են տվել բացահայտել արհեստական ինտելեկտի իրավական պատասխանատվության առկա խնդիրները:

Արդյունքներ. Հոդվածում շարադրված դրույթների վերլուծության հիման վրա հիմնավորվում է AI իրավասուբյեկտության և պատասխանատվության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը, ներկայացված է «Արհեստական բանականության իրավաբանական անձի ճանաչման մասին» միջազգային կոնվենցիայի նախագիծը և տրված են AI ինչպես ընդհանուր, այնպես էլ իրավական պատասխանատվության սահմանումները:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՊԱՏԱՐՎԱԿ 3(11)2023

Եզրակացություններ. Անհրաժեշտ է մշակել AI-ի իրավական կարգավորման համապատասխան իրավական նորմեր և չափորոշիչներ: Հարկ է նշել, որ պետական մարմինները համապատասխան նոր կարգավորումներ ընդունելիս կամ փոփոխություններ կատարելիս պետք է հաշվի առնեն նաև նոր տեխնոլոգիաների զարգացման հետ կապված իրավունքի ոլորտում առկա փոփոխությունները:

Հիմնաբաներ. արհեստական բանականություն, պատասխանատվություն, իրավական պատասխանատվություն, համակարգերի ինքնավարություն, պատասխանատվության անորոշություն, պատճառահետևանքային կապ, իրավախախտման սուբյեկտ, փոխնակ անձ, գենիդ:

SOME ASPECTS OF THE LEGAL RESPONSIBILITY OF ARTIFICIAL INTELLIGENCE

Annotation

Every year AI becomes more and more integrated into various areas of human life, such as law and medicine, science and education, finance and banking, manufacturing and industry, transport, etc. Naturally, various issues arise related to the security and legal consequences of using AI.

Aim: The main goal is to identify problems with the definition of the AI, arising as a result of the autonomy of AI actions, that is, decision-making without human interference, as well as in cases where human interference may not have a direct connection with the consequences of AI work, determining cause-and-effect relationships between AI actions and their consequences, subjects of offenses when using AI. The article is also aimed at proposing solutions to the identified problems.

Methods: Within the framework of our research, an analysis of existing legislative and other acts related to artificial intelligence, as well as some cases of legal liability of artificial intelligence, was carried out. Comparative legal, empirical methods of description and interpretation were used. This method allowed us to identify the existing problems of legal liability of artificial intelligence.

Results: Based on the analysis of the provisions set out in the article, the necessity of legal regulation of relations related to the legal personality and

responsibility of AI is substantiated, the draft international convention "On the recognition of the legal personality of artificial intelligence" is presented and definitions of both general and legal responsibility of AI are given.

Conclusions: It is necessary to develop appropriate legal norms and standards for the legal regulation of AI. It should be noted that state bodies, when adopting appropriate new regulations or when making changes thereto, should also take into account the current transformations in the field of law related to the development of new technologies.

Keywords: artificial intelligence, responsibility, legal responsibility, autonomy of systems, blurring of responsibility, causal relationship, subject of offenses, surrogate person, genoid.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 11.10.2023 թ., պրվել է գրախոսության 13.10.2023 թ., ընդունվել է պատգարության 18.10.2023 թ.:



DOI: 10.59560/18291155-2023.3-67

ԱՐՏԱԿ ԴԱՁԱՐՅԱՆ

*ՀՀ Սահմանադրական դատարանի
նախագահի օգնական,
հրավարանական գիտությունների
թեկնածու*

**ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ ԽԱՌԸ ՏԻՊԻ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ
ՍՈՒՔՅԵԿՏԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄԸ
ԵՎ ԴՐԱՆ ՀԱԿԱՌԱԿ ԸՆԹԱՑՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ (ՎԵՐԱՔՆԵԻՉ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱԼԱՆՔԻ (ԴՐԱ
ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ) ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)**

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվում են քրեական դատավարությունում մեղադրյալի՝ օբյեկտի կարգավիճակից դուրս գալու, նրա շարունակական սուբյեկտայնացման հարցերը և դրանով պայմանավորված՝ քրեական դատավարության տիպային վերափոխումները, խառը դատավարությունում մի շարք սկզբունքների կենսագործումը:

Հոդվածում քննարկվում են քրեական դատավարության՝ մայրցամաքային «խառը» դատավարության տիպին անցմամբ պայմանավորված՝ քրեական դատավարությունում ծնունդ առած և ինկվիզիցիոն դատավարության կազմակերպման սկզբունքներին ուղիղ հակադիր՝ անմիջականության, բանավորության, մրցակցության, հրապարակայնության սկզբունքների ծագումնաբանական հիմքերը և դրանց գործառնական

3(111)2023
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
67

նշանակությունը՝ ընդգծելով սկզբունքների կարևոր դերը ժամանակակից մայրցամաքային քրեադատավարական համակարգում:

Հոդվածում վերլուծվում են օրենսդրական կարգավորումները և բացահայտվում այս սկզբունքների կենսագործվածությունը մեղադրյալին կալանավորելու (կալանքի ժամկետը երկարաձգելու) միջնորդության՝ առաջին ատյանի դատարանում իրականացվող քննության շրջանակներում:

Բացի այդ, աշխատանքում քննարկվում է առաջին ատյանի դատարանի կողմից նշված միջնորդության արդյունքում կայացված որոշման՝ վերաքննիչ դատարանի կողմից հատուկ վերանայման շրջանակներում իրականացվող դատական քննության շրջանակներում նշված սկզբունքների կենսագործման հարցն օրենսդրական մակարդակում, ինչպես նաև բացահայտվում են օրենսդրական կարգավորումների հետևանքով ձևավորված իրավակիրառ պրակտիկայի խնդրահարույց կողմերը:

Հիմնաբառեր. գրավոր ընթացակարգ, կալանավորում, անձնական ազատության իրավունք, վերանայում, կալանավորման իրավաչափության վիճարկում, մեղադրյալ, քրեական դատավարության օբյեկտ, քրեական դատավարության սուբյեկտ:

Ներածություն

«Քրեական դատավարության նոր օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) հայկական քրեական դատավարությունում վարույթի գրավոր ընթացակարգի էլ ավելի մեծ հնարավորություններ նախատեսվեցին. եթե քրեական դատավարության նախկին օրենսգրքով (1998 թ. ընդունված) գրավոր ընթացակարգերով վարույթը չէր տարածվում անձի անձնական ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման միջնորդությունների քննության արդյունքում առաջին ատյանի դատարանների որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը «Վերաքննիչ դատարանում վերանայելու (ստուգելու) վարույթի վրա, ապա Օրենսգրքով այն տարածվեց նաև այդ վարույթների վրա՝ գրավոր ընթացակարգը սահմանելով իբրև հատուկ վերանայման կառուցակարգով վարույթի *ընդհանուր ձև*»:

Հոդվածում ներկայացվելու են քրեական դատավարությունում մեղադրյալի՝ օբյեկտի կարգավիճակից դուրս գալու, նրա շարունակական

սուբյեկտայնացման հարցերը և դրանով պայմանավորված՝ քրեական դատավարության տիպային վերափոխումները, խառը դատավարությունում մի շարք սկզբունքների կենսագործումը: Այս լույսի ներքո քննարկվելու են գրավոր ընթացակարգի կիրարկման նման ընդլայնված ներդրման իրավաչափության հարցերը՝ անձի անձնական ազատության, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների լույսի ներքո՝ հաշվի առնելով քրեական դատավարության՝ ինկվիզիցիոն տիպից մայրցամաքային «խառը» տիպին անցման, մայրցամաքային քրեական դատավարության անմիջակա-նության, բանավորության, մրցակցության և հրապարակայնության դա-տական վարույթի սկզբունքների ծագումնաբանական հիմքերը և «խառը» դատավարությունում այդ դատական վարույթի այդ սկզբունքների գոր-ծառնական նշանակությունը:

1. Մեղադրյալի՝ սուբյեկտայնացումը մայրցամաքային քրեական դատավարությունում

1.1. Մարդու և նրա արժանապատվության արժևորման կապը մեղա-դրյալի սուբյեկտայնացման հետ

Մարդկային արժանապատվությունը պահանջում է առաջին հերթին այն, որ պետությունը բոլոր մարդկանց լուրջ վերաբերվի՝ իբրև անձերի²: Իսկ մարդկանց լուրջ վերաբերվել՝ իբրև անձեր ընդունվելուց բխում է, որ պետք է բացառվի (1) մարդու՝ իբրև *սուբյեկտ* հանդես գալու *որակական հնարավորության բացառումը* և (2) *մարդու՝ բացարձակ (կատարյալ) օբյեկտի վերածումը*³:

Համանման մոտեցումներ արտահայտվել են ոչ միայն արտասահմանյան, այլև հայկական⁴ գրականության մեջ, նման մոտեցումներ արտացոլում են

¹ Մեղադրյալ տերմինը օգտագործվում է պայմանական՝ նկատի ունենալով *հանցագործության մեջ մեղադրվող (կասկածվող, քրեական հետապնդման ենթարկվող) անձին*:

² Տե՛ս, օրինակ, **Alexy R.** Human Dignity And Proportionality Analysis / Espaço Jurídico Journal of Law [EJLL], 16(esp), Vol. 16 (2015), էջ 90:

³ Տե՛ս **Alexy R.**, նշվ. աշխ., էջ 93:

⁴ Այս առնչությամբ, օրինակ, տեղին է մեջբերել սահմանադրագետ Ա. Մանասյանի հետևյալ դատողությունը. «...սահմանադրական կարգավորումները հանգեցրին մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների առնչությամբ սկզբունքորեն նոր ընկալման, որի շրջանակներում մարդը որևէ պարագայում չի կարող դիտարկվել որպես միջոց, գործիք պետական իշխանության ձեռքում, այլ հանդես է գալիս որպես իր

գտել տարբեր երկրների բարձր դատարանների իրավական դիրքորոշումներում¹: Այս առնչությամբ, օրինակ, պերճախոս են Չեխիայի սահմանադրական դատարանի որոշման մեջ տեղ գտած շեշտադրումները, որ մարդկային արժանապատվությունը խախտվում է այն դեպքում, երբ պետական իշխանությունը որոշակի անձի դնում է օբյեկտի դերի մեջ, երբ վերջինս դառնում է բացարձակապես իբրև միջոց և վերածվում փոխադարձ փոխարինելի ապրանքի²:

Մարդուն, նրա արժանապատվությունը պետության կողմից արժևորելը, որպես հետևանք և մարդուն՝ իբրև անձ ընդունել-վերաբերվելու պահանջի տարածումը քրեական դատավարության վրա, ինքնաբերաբար հանգեցնում է քրեական դատավարությունում անձի, կոնկրետ դեպքում՝ մեղադրյալի, **սուբյեկտայնացման**. վերջինս քրեական դատավարությունում նման պայմաններում պետք է հանդես գա ոչ թե հիմնականում իբրև օբյեկտի, այլ՝ իբրև քրեական դատավարության սուբյեկտի կարգավիճակով:

Այլ խոսքով՝ քրեական դատավարությունում անձի՝ **օբյեկտից սուբյեկտի վերածումը ուղիղ համեմատական է անձի և նրա արժանապատվության պետության կողմից արժևորման հետ**. Եթե անձը, նրա արժանապատվությունը չի արժևորվում, անձը (մեղադրյալը) քրեական դատավարության օբյեկտ է դիտարկվում (հոչակվում), իսկ երբ տեղ է գտնում այդպիսի արժևորում, վերջինս արդեն քրեական դատավարությունում սկսում է հանդես գալ իբրև **սուբյեկտ**:

1.2. Մեղադրյալը՝ իբրև ինկվիզիցիոն դատավարության օբյեկտ

անկրկնելի բնության մեջ ինքնանպատակ, ինքնարժեքություն», տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործական հետազոտություն)/ **Գ.Բ. Դանիելյան, Վ.Ն. Այվազյան, Ա.Ա. Մանասյան**: Ընդհ. Խմբ. Գ. Դանիելյանի- Եր.: Հայրապետ հրատ., 2015, էջ 112: Այլ՝ համաչափության սկզբունքի համատեքստում, օրինակ, Ք. Ալեքսանյանը հարցի առնչությամբ նշել է. «...մարդկային արժանապատվությունը գործում է որպես «սահմանափակումների անհաղթահարելի սահմանափակում», որը համաչափության սկզբունքի համարժեքության գնահատման փուլում բացառում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների այնպիսի սահմանափակումները, որոնց դեպքում մարդը պետության կողմից օգտագործվում է որպես միջոց, գործիք» (ընդգծումը՝ Ա.Ղ.), տե՛ս **Ալեքսանյան Ք.**, Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը//Պետություն և իրավունք, 92 No. 1 (2022), էջ 45:

¹ Տե՛ս, օրինակ, Չեխիայի Սահմանադրական դատարանի 2009/08/18 - I. ՍՏ 557/09, վճռի 18-19-րդ կետերը, հասանելի ըստ՝ https://www.usoud.cz/fileadmin/user_upload/ustavni_soud/www/Decisions/pdf/1-557-09.pdf (վերջին մուտքը՝ 05.05.2023 թ.):

² Տե՛ս, նշվ. վճռի, 18-րդ կետը:

ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(111)2023

Ինվկիզիցիոն դատավարությունը քրեական դատավարության պատմական այն տիպն էր, որը կայացել և գործարկվում էր մի պայմաններում, որտեղ պետության կողմից իրենց արժևորումը չէին ստեցել ո՛չ անձը, ո՛չ էլ նրա արժանապատվությունը:

Ըստ այդմ՝ այսօրեղ, դատավարության այս տիպում, մեղադրյալը հանդես էր գալիս իբրև միջոց, գործիք, օբյեկտ՝ քրեական դատավարության գերնպատակին՝ ճշմարտության բացահայտմանը հասնելու համար:

Այս առնչությամբ տեղին է հիշատակել Ն. Պոլյանսկու հետևյալ խոսքերը. «Այսպես կոչված ոստիկանական պետությունում հպատակների իրավունքների բացակայությունը բնութագրում է նրանց բոլոր հարաբերությունները պետական իշխանության հետ: Քրեական արդարադատության ոլորտում այն դրսևորվում է դատարանում մեղադրյալի իրավունքների բացակայության մեջ: Դատարանի խնդիրն է բացահայտել ճշմարտությունը (...). դրա համար նա մեղադրյալի իրավունքների բացակայության պայմաններում կարող է օգտագործել բոլոր տեսակի միջոցները, անկախ թե դրանք որքան ծանր են մեղադրյալի համար. մեղադրյալն ինքը դիտարկվում է որպես միջոց, որին դատարանն իր հայեցողությամբ կարող է օգտագործել նույն ճշմարտությունը բացահայտելու նպատակին հասնելու համար»¹:

Եվ ըստ այդմ՝ 16-րդ, 17-րդ և նույնիսկ 18-րդ դարի տեսաբանների մեծամասնությունը խոշտանգումների կիրառումը դիտարկում էր իբրև անհրաժեշտ միջոց «չխոստովանող հանցագործների համառությունը հաղթահարելու և ճշմատությունը բացահայտելու համար»²:

«Բայց օրենքը,- ինվկիզիցիոն դատավարության վերաբերությամբ գրում էր Մ. Չելցովը,- մեղադրյալին զրկում էր դատարանում պաշտպան ունենալու և հաճախ անգամ՝ դատավորների առջև բանավոր ինքնապաշտպանության իրավունքից: Օրենքը նրան չէր տալիս նաև հրապարակայնության երաշխիք: Վարույթը սկզբից մինչև վերջ մնում էր գաղտնի և գրավոր, գործն ըստ էության լուծող դատավորները լսում էին ոչ թե մեղադրյալի կենդանի ցուցմունքները, այլ երկար արձանագրությունները...»³:

¹ Տե՛ս **Полянский Н.Н.** Уголовный процесс. Уголовный суд, его устройство и деятельность: лекции. - Москва, 1911. - էջ 70:

² Տե՛ս **Чельцов-Бебутов М.А.** Обвиняемый и его показания в советском уголовном процессе. - М., 1947. - էջ 6:

³ Տե՛ս **Чельцов-Бебутов М.А.** նշվ. աշխ., էջ 7:

Այսպիսի ինկվիզիցիոն դատավարության տիպում մեղադրյալը դիտարկվում էր իբրև **օբյեկտ**, որպես **միջոց**՝ առավելապես իբրև ապացույցի աղբյուր¹՝ ճշմարտությունը բացահայտելու նպատակին հասնելու համար: Վերջինս գրկված էր տարրական իրավունքներից, ըստ այդմ նաև՝ նման դատավարության տիպում բացակայում էին մեղադրյալի իրավունքների պաշտպանության մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ դատավարության սկզբունքների տեսքով ամրագրված երաշխիքները: Այս դատավարության տիպում վարույթն ամբողջությամբ **գաղտնի էր, գրավոր, ոչ հրապարակային**, և ելնելով այն հանգամանքից, որ ինկվիզիցիոն դատավարությունը ամբողջությամբ մերժում էր մեղադրյալի՝ իբրև սուբյեկտի առկայությունը, դատավարական գործառույթների տարբերակումը և ըստ այդմ՝ քրեական վարույթում կողմերի առկայությունը, ապա այդ դատավարությունն իր հերթին նաև **ոչ մրցակցային էր**²:

1.3. Մեղադրյալի՝ խառը դատավարության սուբյեկտի վերածումը և մայրցամաքային դատավարության արմատական վերափոխումները (խառը դատավարության հաստատումը)

Մարդու, նրա արժանապատվության արժևորումն իր հերթին չէր կարող ուղիղ ազդեցություն չթողնել դատավարական տիպի վերափոխման վրա. քրեական դատավարության ինկվիզիցիոն տիպից Եվրոպա մայրցամաքը (բացառությամբ Մեծ Բրիտանիայի) այդ արժևորմանը զուգահեռ անցում էր կատարում դեպի դատավարության նոր մի տիպ:

Մայրցամաքում ինկվիզիցիոն դատավարության աստիճանական վերացումը և դրա փոխարինումը «խառը» դատավարությամբ, ըստ էության, սկսվեց Ֆրանսիական Մեծ հեղափոխությամբ, և ամրապնդվեց 1808 թ. Նապոլեոնյան քրեական դատավարության կանոնադրությամբ³:

1789 թ. Ֆրանսիայում ընդունված Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին հռչակագիրը⁴, որում ուղիղ արդեն մարդը և նրա իրավունքները (վեր)արժևորում էին ստացել, որում մարդու

¹ Տե՛ս **Weigend T.** Learning about the charges: the suspect’s right to information// Europe In Crisis: Crime, Criminal Justice, And The Way Forward. Essays In Honour Of Nestor Courakis, 2017, էջ 938:

² Մանրամասն տե՛ս Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. **Л.В. Головки.** - М.: Статут, 2017. - էջ 133-134:

³ Մանրամասն տե՛ս **Vogler R.** A world view of criminal justice, Ashgate Publishing, 2005, էջ 45-61:

⁴ https://avalon.law.yale.edu/18th_century/rightsof.asp

իրավունքներին անտեղյակությունը, դրանց նկատմամբ արհամարհանքը կամ անտեսումը դիտարկվում էր իբրև «աղետների և կառավարությունների ապականման միակ պատճառ» (Նախաբան), որում հոչակվում էր, որ մարդիկ ծնվում և մնում են ազատ ու հավասար իրավունքներում (1-ին հոդված), որում իբրև յուրաքանչյուր քաղաքական միության նպատակ էր հոչակվում մարդու բնական և անօտարելի իրավունքների ապահովումը, իսկ իբրև այդպիսին դիտարկվում էին ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը և ճնշմանը դիմադրությունը (2-րդ հոդված), որում ամրագրվում էր անմեղության կանխավարկածը (9-րդ հոդված) և միաժամանակ ուղիղ արգելվում էր անձին մեղադրելը, ձերբակալելը կամ կալանավորելը այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, և պատժելի էին հոչակվում այն անձանց արարքները, ովքեր հայցում, տալիս, կատարում կամ ստիպում էին կատարել կամայականության վրա հիմնված հրամաններ (7-րդ հոդված), այդ պայմաններում արդեն ինկվիզիցիոն դատավարության փոխարինումը սկզբնապես Ֆրանսիայում, ապա նաև ամբողջ Եվրոպայում (բացառությամբ Մեծ Բրիտանիայի) դառնում էր ժամանակի հարց:

Իր հերթին ինկվիզիցիոն դատավարությունը վերափոխելու խնդիրն իր լուծումը գտավ 1808 թ. Ֆրանսիայի քրեական դատավարության կանոնադրությունում:

Մայրցամաքային քրեական դատավարությունում ինկվիզիցիոն դատավարության տիպից «խառը» տիպի դատավարության անցման կարևորագույն առանձնահատկություններից մեկը մեղադրյալի՝ դատավարության **օբյեկտի կարգավիճակից դուրս գալն էր և նրա՝ սուբյեկտի կարգավիճակի ձեռքբերումը, և այդ կարգավիճակի շարունակական ամրապնդումը**¹. դատավարության այս տիպում արդեն ճանաչվում են դատավարությունում նրա ինքնուրույն՝ մասնավոր շահերը, և նա իր այդ շահերի բավարարման համար օժտվում է որոշակի իրավունքներով, որոնց իրացմամբ էլ կարողանում է ազդեցություն ունենալ վարույթի ընթացքի վրա:

Օրինակ, մեղադրյալի՝ «խառը» դատավարության **սուբյեկտի** կարգավիճակի կարևորագույն բաղադրատարրերից է *դատարանի առջև կանգնելու և լսված լինելու իրավունքի* առկայությունը, որը բացակայում էր

¹ Նրա սուբյեկտայնացումը մեկ ակնթարթային գործողություն չէր, այն շարունակական գործընթաց է, որն ընթացքի մեջ է մինչ օրս:

ինկվիզիցին դատավարության օբյեկտի՝ հանցագործության մեջ մեղադրվող անձի պարագայում¹:

Բացի այդ, «խառը» դատավարության տիպում ամրագրվեցին մի շարք սկզբունքներ, որոնք, ուղիղ հակադիր լինելով նախորդի՝ ինկվիզիցիոն դատավարության սկզբունքներին, ինքնին հանցագործության մեջ մեղադրվողի (կասկածվող, քրեական հետապնդման ենթարկվող) (դատավարության սուբյեկտի) իրավունքների բաղադրատարրեր են կամ այդ իրավունքների ու օրինական շահերի ապահովման երաշխիքներ:

Մայրցամաքային քրեական դատավարությունում ինկվիզիցիոնից «խառը» տիպի դատավարության **անցումը բնորոշող կարևորագույն այդ վերափոխներից է** ինկվիզիցիոն դատավարությանը ներհատուկ **գաղտնի, գրավոր** քննության արդյունքները դատական որոշմամբ հաստատելով² և այդ կերպ գաղտնի քննության արդյունքները դատական որոշման ձևափոխող (տրանսֆորմացնող) **մուրեցումից հրաժարումը:**

Այս առումով, եթե ինկվիզիցիոն դատավարությանը հատուկ մոտեցմամբ դատարանը որոշում էր կայացնում՝ հենվելով գրավոր նյութերի հիման վրա, ուստիև՝ նման պայմաններում դատական քննության **բանավորության** անհրաժեշտությունը (դատարանը չէր լսում գործը)³ բացակայում էր և ըստ այդմ՝ դատարանը լուծում էր գործը գրավոր նյութերի, ապացույցների **ոչ անմիջական** հետազոտման հիման վրա, ապա անցումը դեպի մայրցամաքային «խառը» դատավարությունը կազմակերպվեց դատական վարույթների (որպես կանոն) տրամագծորեն հակառակ սկզբունքների հիման վրա. այն կառուցվեց **հրապարակայնության** (Սահմանադրության 63-րդ հոդված, Օրենսգրքի 28-րդ հոդված), **բանա-**

¹ Մեղադրյալի՝ դատավարության սուբյեկտ լինելն անհրաժեշտ այն նախադրյալն է, որի առկայության պայմաններում հնարավոր է դառնում քրեական դատավարության դատական վարույթները կազմակերպել մրցակցության սկզբունքի հիման վրա: Առանց հակադիր կողմերի և նրանց կողմից իրականացվող գործառույթների տարանջատման մրցակցությունը քրեական դատավարությունում անհնար է: Իսկ կողմերի առկայության համար անհրաժեշտ էր, նախևառաջ, պաշտպանության կողմի առանցքային մասնակցի՝ հանցագործության մեջ մեղադրվողի (կասկածյալ, մեղադրյալ, քրեական հետապնդման ենթարկվող անձ)՝ քրեական դատավարության օբյեկտից սուբյեկտի վերածում:

² Стіву Купс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. - М.: Статут, 2017. - էջ 134, նաև՝ Ryan A. (2014) Towards a System of European Criminal Justice. 1st edn. Taylor and Francis. (3.3.1 Մրցակցային և ինկվիզիցիոն մոդելների հատվածը) Հասանելի է, ըստ՝ <https://www.perlego.com/book/1664857/towards-a-system-of-european-criminal-justice-the-problem-of-admissibility-of-evidence-pdf> (վերջին մուտքը՝ 7 հուլիսի 2023 թ.):

³ Стіву նշվ. աշխ., էջ 881:

վորության (Օրենսգրքի 268-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասեր), **անմիջականության** (Օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մաս), **մրցակցության** (Օրենսգրքի 21-րդ հոդված) սկզբունքների հիման վրա¹:

Ինկվիզիցիոն քրեական դատավարության **գրավորությանը** եկավ հակադրվելու խառը դատավարության դատական վարույթների **բանավորությունը**. այն իր հերթին, հանդիսացավ մի կողմից դատական վարույթի հրապարակայնության իրացման նախադրյալ (նախապայման), մյուս կողմից՝ նաև անմիջականության, երրորդ կողմից՝ մրցակցության կենսագործման երաշխիք:

Այս առումով քրեադատավարագիտության դասականները նշում են (օրինակ՝ Հ.Գլազեր²), որ հրապարակայնությունն առանց բանավորության որևէ նշանակություն չունի³:

Անգամ հարյուրամյակ հետո այս պարզորոշ դիրքորոշումը շարունակում է պահպանվել դատավարական գիտությունում:

Ժամանակակիցները, շարունակելով պնդել, որ առանց բանավորության դատավարության հրապարակայնության սկզբունքը կորցնում է իր իմաստը, այն փաստարկում են պարզ օրինակով, որ «(...) դահլիճում գտնվող հանրությունը չի հասկանա, թե ինչ է կատարվում, եթե, օրինակ, կողմերն ու դատարանը սկսեն լուռ փոխանակել որոշ փաստաթղթեր»⁴:

Դատավարության այսպիսի վերափոխումը՝ «խառը» դատավարության **բանավորությամբ** ապահովվող **հրապարակայնությունը**, իր հերթին կարևորագույն բազմակի նշանակություն սկսեց կատարել. այն մի կողմից սկսեց դատավարության այդ տիպում ապահովել դատարանի (դատավարության) նկատմամբ հասարակական վերահսկողությունը՝ դատարանին

¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 138: Այս մասին մանրամասն տե՛ս **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - С.-Петербург: Типография товарищества "Общественная польза", 1912. - էջ 95-96:

² Ավստրիայի 1873 թ. քրեական դատավարության կանոնադրության նախագծի հեղինակ:

³ Տե՛ս **Глазер Ю.** Руководство по уголовному процессу, Т. 1 (пер. А. Лихачева). - СПб, 1884. - էջ 199:

⁴ Տե՛ս Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. **Л.В. Головки.** - М.: Статут, 2017. - էջ 876:

(Այստեղ, սակայն, տեղին է նշել, որ դատական քննության հրապարակայնությունը չպետք է դիտարկվել միայն իբրև դատական նիստին հանրության ներկայության հնարավորության ապահովման համատեքստում. հրապարակայնության կարևոր բաղադրատարր է նաև դատական ակտի (որոշման, դատավճռի) հանրությանը հասանելի դարձնելը, որը կարող է իրացվել ոչ բանավորության միջոցով՝ դատական ակտի հրապարակմամբ, տե՛ս, *mutatis mutandis*, Pretto And Others V. Italy (զանգատ թիվ 7984/77) 1983 թ. դեկտեմբերի 8-ի վճիռը, § 27:

ավելի զգոն դարձնելով իր գործառույթների իրականացման կապակցությամբ¹, դատարանի կողմից օրինականության պահպանման տեսակետով, մյուս կողմից՝ այն, ապահովելով հանրության անմիջական ներկայությունը քրեական դատավարությանը, դատարանի հանդեպ հանրային վստահության ամրապնդման, դրա բարձրացման համար կարևոր միջոց դարձավ², միևնույն ժամանակ հանդիսանալով նաև անձի արդար դատաքննության հիմնական իրավունքի բաղադրատարր (Սահմանադրության 63-րդ հոդված):

Մեկ այլ հարթությունում այն ուղղվեց դատական վարույթի՝ **հանրության շրջականերում** որոշակի դաստիարակչական դերի կատարմանը (հենց այս նկատառումներից ելնելով է, որ 16 տարին չլրացած վարույթի մասնակից կամ վկա չհանդիսացող անձանց մուտքը, որպես կանոն, չի թույլատրվում դռնբաց դատական վարույթին (Օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մաս):

Քրեական դատավարության դատական վարույթների ոչ պակաս կարևոր վերափոխման բերեց նաև ինկվիզիցիոն դատավարության գործի (վարույթի) նյութերի, ապացույցների **ոչ անմիջական** հետազոտման սկզբունքից անցումը դեպի խառը դատավարության գործի (վարույթի) նյութերի, ապացույցների հետազոտման **անմիջականության** սկզբունքին³:

¹ Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն իր որոշումներում ևս այդպիսի դիրքորոշում է արտահայտել. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ», 11 ապրիլի 2012 թ. ՍԴՈ-1020 որոշման 9-րդ կետ:

² Այս առումով տեղին է հիշատակել Պոետոն և այլոք ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ վճռում տեղ գտած այն դիրքորոշումը, որ «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության հրապարակային բնույթը պաշտպանում է դատավարության կողմերին հասարակության վերահսկողությունից դուրս արդարադատության գաղտնի իրականացումից: Այն ծառայում է ինչպես ստորադաս, այնպես էլ վերադաս ատյանի դատարանների նկատմամբ հասարակության վստահության պաշտպանության ապահովման միջոց: Արդարադատության իրականացումը թափանցիկ դարձնելով՝ այն նպաստում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին, այն է՝ դատաքննության արդարությանը, որի երաշխավորումը յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է», տե՛ս Pretto and Others v. Italy 1983 թ. դեկտեմբերի 8-ի վճիռը, § 21:

³ ՄԻԵԴ-ն իր որոշումներում նույնկերպ դատական վարույթի անմիջականությունը կարևոր երաշխիք է դիտարկել՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իմաստով նկատելով, որ քրեական դատավարությունում անմիջականության սկզբունքը կարևոր երաշխիք է, որի շրջանակներում դատավորի՝ վկայի վարքագծին և հավաստիությանն առնչվող նկատառումները մեղադրյալի համար էական հետևանքներ կարող են առաջացնել, տե՛ս **Beraru v. Romania** (գանգատ թիվ. 40107/04), 2014 թ. մարտի 18-ի վճիռը, § 64:

Թեև որոշ գիտնականներ, կարծես, նույնացնում էին «խառը» դատավարության դատական վարույթների երկու այս միմյանց խիստ մոտ սկզբունքները՝ դատական վարույթի **բանավորությունը** և **անմիջականությունը**՝ նկատելով, որ բանավորությամբ ապահովվում է անմիջականությունը, իսկ անմիջականությունն իրացվում է բանավորության միջոցով: Այնուամենայնիվ, այդ երկու սկզբունքը, առնվազն մեր ժամանակակից

Մեկ այլ՝ *Cutean v. Romania* գործով ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել հենց անմիջականության սկզբունքի խախտման հետևանքով: Վճռում ՄԻԵԴ-ը մի շարք կարևոր դիրքորոշումներ է ձևավորել անմիջականության սկզբունքի վերաբերությամբ՝ նշելով. «(...)Դատարանը հիշեցնում է, որ անմիջականության սկզբունքի համաձայն՝ քրեական գործով որոշումը պետք է ընդունվի այն դատավորների կողմից, ովքեր մասնակցել են դատաքննության և ապացույցների հավաքման ողջ ընթացքին (*Mellors v. the United Kingdom* (dec.), No. 57836/00, 30/01/2003): Սակայն վերոնշյալը չի կարող դիտարկվել որպես դատաքննության ընթացքում դատական կազմի ցանկացած փոփոխության արգելք (*P.K. v. Finland*): Կարող են ի հայտ գալ այնպիսի ակնհայտ վարչական կամ դատավարական հանգամանքներ, որոնք անհնարին կդարձնեն դատավորի հետագա մասնակցությունը դատաքննությանը: Կարող են միջոցներ ձեռնարկվել, որպեսզի գործի լուսնն իրականացնող դատավորներն ունենան պատշաճ պատկերացում ապացույցների և պնդումների մասին: Օրինակ՝ սղագրերի տրամադրման միջոցով, ինչը կբացառի վկայի ցուցմունքների հավաստիությանը վերաբերող որևէ կասկած, ինչպես նաև կարևոր պնդումների և վկաներին լսելու համար նոր դատարանի առջև կրկնակի լուսններ կազմակերպելը: (...) 63.Դատարանը նշում է, որ անվիճելի է այն փաստը, որ դատարանի՝ դիմումատուի գործը քննող սկզբնական կազմն առաջին ատյանում դատաքննության ընթացքում փոփոխվել է: Ավելին, վճիռը կայացրած դատավորը դիմումատուին ուղղակիորեն չի լսել: Եվ վերանայող դատարանները, պահպանելով դիմումատուի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, նույնպես ուղղակիորեն չեն լսել դիմումատուին և վկաներին: (...) 66. Դատարանը նշում է, որ առաջին ատյանի դատավորին, ով, ի վերջո, դիմողին մեղավոր է ճանաչել, **ենթադրյալ հանցագործության հատկանիշների գնահատում է իրականացրել**, ինչի պարագայում դիմումատուին ուղիղ և անմիջական լսելը համարվում է **ավելի կարևոր**՝ առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայող դատարանները նույնպես անմիջականորեն չեն լսել դիմումատուին և վկաներին: (...) 69. Դատարանը գտնում է, որ մեղադրյալի վերջին խոսքի իրավունքը չի կարելի նույնացնել դատաքննության ընթացքում վերջինիս լսված լինելու իրավունքի հետ: (...) 71.Դատարանին հայտնի է, որ որոշ հանգամանքների առկայության պարագայում վերադաս կամ բարձրագույն դատարանը կարող է հատուցել (վերականգնել) առաջին ատյանի կողմից դատաքննության ընթացքում թույլ տրված սխալները (...) **Սույն գործում Դատարանը նշում է, որ վերջին ատյանների դատարանները ոչ միայն ուժի մեջ են թողել առաջին ատյանի որոշումը, այլև սեփական որոշումները հիմնավորել են առաջին ատյանի դատարանին ներկայացված ապացույցների հիման վրա՝ առանց վերջիններիս անմիջական ուսումնասիրման:**(...) 72. Այսպիսով, Դատարանը եզրակացնում է, որ **առաջին ատյանի դատարանի կազմի փոփոխությունը և վերանայող դատարանների՝ դիմողին և վկաներին լսելուց հետագա հրաժարումը հավասարազոր է դիմումատուին արդար դատաքննության իրավունքից զրկելուն:** 73. Հետևապես տեղ է գտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում» (ընդգծումները՝ Հեղ.), տե՛ս *Cutean v. Romania* (գանգատ թիվ 53150/12) 2014 թ. դեկտեմբերի 2 վճիռը, §61-73:

ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ՈՒՍՏՈՒՄ 3(111)2023
 ◆ ՏԵՂԵԿՎԵԾԻ
 ◆ ՍԵՆՏԵՆՆԱԿՐԱԿԱՆ ՈՒՍՏՈՒՄ

տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում, ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում է հնարավոր լինում միմյանցից տարանջատել¹:

«Խառը» դատավարության վերափոխմամբ դատական վարույթի անմիջականությունը տարածվեց դատարանի նկատմամբ՝ այդպես ապահովելով դատարանի՝ իր **ներքին համոզմունքի հիման** վրա որոշում կայացնելու հնարավորությունը² որպես արդյունք այդպես երաշխիքներ ստեղծելով նյութական (օբյեկտիվ) ճշմարտության բացահայտման համար³:

Խնդիրն այն է, որ ինկվիզիցիոն քրեական դատավարության կարևորագույն բաղադրատարրերից էր «ապացույցների ձևական (ֆորմալ) տեսությունը», որով դատարանն ապացույցներն ազատ գնահատելու հնարավորությունից զրկված էր. բոլոր ապացույցները նախապես ունեին հստակեցված «իրավաբանական ուժ» և դրանց միջև կար հստակ «հիերարխիա» (այստեղից էլ մեղադրյալի ինքնախոստովանական ցուցմունքը՝ «ապացույցների թագուհի» համարվելու մոտեցումը). ինկվիզիտոր-դատավորին մնում էր ոչ թե գնահատել, այլ **«հաշվել ապացույցները»**: «Խառը» դատավարության ներդրմամբ տեղ գտավ հրաժարում «ապացույցների ձևական (ֆորմալ)» տեսությունից. այն փոխարինվեց **ապացույցների ազատ գնահատման տեսությամբ**, որի կարևորագույն տարրերից էր ապացույցների՝ ներքին համոզմունքի հիման վրա գնահատումը՝ այդպիսով ապահովելով ոչ թե ձևական, այլ մայրցամաքային «խառը» դատավարությանը ներհատուկ նյութական (օբյեկտիվ) ճշմարտության բացահայտման հնարավորությունը:

Անմիջականության սկզբունքով որոշում կայացնողը՝ դատարանը, «մոտեցվեց» այն նյութերին և ապացույցներին, որոնց հիման վրա կայացվելու էր որոշումը:

¹ Օրինակ՝ հեռավար դատաքննության իրականացմամբ թեև կարելի է ապահովել դատական վարույթի բանավորությունը, այնուամենայնիվ, շեղում է տրվում անմիջականության սկզբունքից:

² Տե՛ս **Ղազարյան Ա.**, Մինչդատական վարույթի կազմակերպման մոդելները (պատմական և համեմատախրավական վերլուծություն), Երևան, «Թասկ», 2019, էջ 21, 33:

³ Այս առումով տեղին է մեջբերել ՀՀ Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, որ. «Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» (Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշման 14-րդ կետ):

Բացի այդ, **անմիջականության սկզբունքը**, նյութերով և ապացույցներով փոխանցվող տեղեկության միջնորդավորվածությունը վերացնելով, սկսեց խառը դատավարության տիպում կատարել նաև տեղեկության միջնորդավորված փոխանցումից տեղ գտնող տեղեկատվության կորստի, խզվածքների առաջացման, տարրնկալման երևույթները բացառելու դեր՝ այդպիսով իսկ հանդես գալով որպես քրեական դատավարությունում նյութական (օբյեկտիվ) ճշմարտության բացահայտման երաշխիք:

Ընդ որում՝ սա գիտակցված մոտեցում է եղել անմիջականության սկզբունքի ներդրման պահից և ոչ թե ժամանակի ընթացքում բացահայտվել է նշված սկզբունքի կիրարկմամբ:

Վերոգրյալի վառ վկայությունն են դեռևս հարյուրամյակներ առաջ ինկվիզիցիոն դատավարության **ոչ անմիջականությանը** փոխարինելու եկած խառը դատավարության անմիջականության սկզբունքի վերաբերությամբ ասված հետևյալ տողերը.

«Այն տպավորությունները, որոնք առաջացնում են այդպիսի արձանագրված ապացույցները, կարող են խեղաթյուրվել բազմաթիվ հանգամանքների միջոցով (այն, ինչ մեկ անգամ արձանագրվում է, կարող է տարբեր կերպ ընկալվել ինչպես հարցաքննվողի, այնպես էլ նրա պատասխանները ձայնագրող անձի կողմից, և, վերջապես, դրանք կարդացող անձի կողմից): Ժամանակակից քրեական դատավարությունը ողջամիտ և օգտակար արձագանք է դրսևորում նշված անհարմարությունների դեմ (...) Նոր դատավարությունը դատավճիռ կայացնող դատարանին վերադարձրեց այն առաջնակարգ կարգավիճակը, որը նախկինում զբաղեցնում էր քննություն կատարող դատավորը (քննիչ-դատավորը՝ Հեղ.), և վերականգնեց բանավորությունն ու անմիջականությունը, որոնք լայն չափերով կիրառվում էին քննիչ-դատավորի մոտ (...) Այստեղից էլ պահանջ առաջացավ, որ ամբաստանյալի մեղավորության հարցը լուծող դատավորն ինքը լսի այն ցուցմունքները, որոնցից նա պետք է նյութ քաղի գործի վիճակի մասին պատկերացում կազմելու համար, ինքը տեսնի այն փաստաթղթերն ու իրերը, որոնք գործով ապացույցներ են և, որ մինչ այդ կատարված գրավոր նյութերը չեն կարող կազմել դատավճռի հիմքը, այլ

միայն կարող են ապացույցների անմիջական ներկայացման համար հիմքեր հանդիսանալ»¹:

Եթե «խառը» դատավարության դատական վարույթի **անմիջականության** սկզբունքի վերոնշյալ նշանակությունն առավելապես արտահայտվում էր որոշում կայացնող դատարանի համար կարևորության, անհրաժեշտության դիտանկյունով՝ որոշումները ներքին համոզմունքի հիման վրա կայացնելը և նյութական (օբյեկտիվ) ճշմարտության բացահայտման սկզբունքի կենսագործումը, այնուամենայնիվ, քրեական դատավարության դատական վարույթներում **անմիջականության սկզբունքի նշանակությունը միայն այդ կողմով չի սահմանափակվում**:

Այս սկզբունքը կարևոր երաշխիք է «խառը» դատավարության հանցանքի կատարման մեջ մեղադրվող (քրեական հետապնդման ենթարկվող) **սուբյեկտի՝** մեղադրյալի (քրեական հետապնդման ենթարկվող անձի), իր իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության համար. դա թույլ է տալիս վերջինիս **անմիջականորեն մասնակից դառնալ** ամբողջ ապացուցողական նյութի (գործի նյութերի, փաստական տվյալների, ապացույցների) հետազոտմանն ու արդյունավետ կերպով *վիճարկել* կամ *դիրքորոշում* կամ *կարծիք հայտնել* դրանց վերա-

¹ Տե՛ս **Глазер Ю.**, նշվ. աշխ., էջ 201: Համանման կարևորություն է տրվել սկզբունքին նաև ռուսական մինչհեղափոխական (մինչհոկտեմբերյան հեղափոխությունը) գրականության մեջ: Ականավոր դատավարագետ Ի. Ֆոյնիցկին այս առնչությամբ գրում էր. «Գրավորությունը, որպես դատավարության միջոց (դատավարության միջնորդավորվածությունը), հսկայական թերություններ է ներկայացնում գործերն ըստ էության քննելու հարցում: Դիտարկմանը մատչելի, սակայն ճշգրիտ նկարագրությանը ոչ ենթակա ամբողջ նյութն այդպիսով փախչում է դատարանի տեսադաշտից, օրինակ՝ վկայի դեմքի արտահայտությունը, ցուցմունքի ժամանակ նրա տոնայնությունը, նրա պահվածքը (...) դատական նյութը գրավորությամբ սահմանափակելով դատական քննություն է բերում ֆորմալիզմ և չորություն, ինչը չափազանց վնասակար է գործի համար: Ոչ մի գրավոր պաշտպանություն, ոչ մի գրավոր մեղադրանք՝ անկախ թողնված տպավորության խորությունից և ինտենսիվությունից, չի կարող համեմատվել կենդանի բառի հետ» Տե՛ս **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - С.-Петербург: Типография товарищества "Общественная польза", 1912. - էջ 94: Անհրաժեշտ է նաև նկատել, որ դատական վարույթի դատարանի կողմից հարցաքննվողի պահվածքը, շարժումներ, ընդհանուր առմամբ, վարքագիծը տեսնելու ու այն գնահատելու հնարավորությունը նաև ոչ մայրցամաքային անգլիական իրավունքում էր դիտարկվում իբրև ապացույցների ճշգրտության ու հավաստիության ապահովման միջոցներից մեկը: Եվ, ի թիվս այլնի, նաև հենց այդ միջոցի բացակայությամբ է, որ անգլիական իրավունքում հիմնավորվում է ասեկոսների վրա հիմնված ցուցմունքների (ուրիշի խոսքի վրա հիմնված) արգելքի կանոնը (քանի որ ասեկոսների (ուրիշի խոսքի վրա հիմնված) ցուցմունքը, ի թիվս այլնի, բացառում է դատարանի կողմից նաև ցուցմունք տվողի վարքագծի ուսումնասիրության հնարավորությունը), տե՛ս **Spencer J.** Hearsay Evidence in Criminal Proceedings. 2nd edn. Bloomsbury Publishing. Hart, 2014, էջ 9-10:

բերությամբ. նյութի, որի հիման վրա դատարանը կայացնելու է իր որոշումը:

Երրորդ հարթությունում, որը պակաս կարևոր չէ արդարադատության ընդհանուր նպատակների կենսագործման համատեքստում, դատական վարույթի **անմիջականությամբ** ապահովվում է դատավարության դաստիարակչական ազդեցությունն արդեն հենց հանցագործության մեջ մեղադրվող (քրեական հետապնդման ենթարկվող) անձի վրա¹:

Բացի այդ, ինկվիզիցիոն դատավարության ոչ մրցակցային քննությանը, մեղադրյալի սուբյեկտայնացմանը զուգահեռ, փոխարինելու եկավ խառը դատավարության դատական վարույթի **մրցակցության** սկզբունքը:

Կողմերի և նրանց գործառույթների տարանջատվածությունը, նրանց իրավահավասարությունը և անաչառ երրորդ կողմի (դատարան) առկայությունն այն սկզբնական հենքն էր, որի վրա կարող էր կազմակերպվել մրցակցային դատավարությունը, որն իր հերթին առանցքային և նույնչափ կարևոր երաշխիք է պաշտպանության կողմի մասնակցի՝ մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ապահովման համար:

1.4. Միջանկյալ եզրահանգումներ

Ժամանակի ընթացքում մարդու, նրա արժանապատվության (վեր)արժևորումը առանցքային նշանակություն ունեցավ մայրցամաքային քրեական դատավարության ինկվիզիցիոն տիպի վերացման և «խառը» տիպի դատավարության անցման հարցում:

Մարդու, նրա արժանապատվության (վեր)արժևորման պայմաններում, այլևս անհնար է(ր) մեղադրյալի՝ դատավարության **օբյեկտի** կարգավիճակում մնալը, ուստի և ինկվիզիցիոն դատավարության շարունակական գոյությունը:

Քրեական դատավարության ինկվիզիցիոն տիպից անցումը դեպի մայրցամաքային «խառը» տիպի դատավարության ուղեկցվեց դատավարության

¹ Հենց այս հաշվառմամբ է, որ մինչ 2019 թ. օրինակ, Ֆրանսիայում պատժի կարգադրագրերի (penal order) ինստիտուտը չէր տարածվում նաև կրկնակի իրավախախտների (repeat offenders) նկատմամբ՝ նշելով, որ պատժի կարգադրագրերի գրավոր բնույթը թույլ չի տա դատավորներին խաղալ իրենց դաստիարակչական (տեքստում՝ pedagogical՝ բառացի մանկավարժական - Հեղ.) դերը՝ իրենց որոշման մասին ամբաստանյալին անձամբ հաղորդելով (Bulletin officiel du Ministère de la Justice, 2004 մեջբերումն ըստ՝ **Enescu R.** Penal Orders for Misdemeanours and Felonies in France: A Procedural Economy at the Expense of the Defence? <https://dialnet.unirioja.es/descarga/articulo/8418920.pdf> (վերջին մուտքը՝ 28.06.23 թ .):

մի շարք առանցքային, էական վերափոխումներով և առաջին հերթին մեղադրյալի՝ **դատավարության սուբյեկտի կարգավիճակ ձեռք բերելով:**

Դրանով պայմանավորված, և ի ապահովումն նաև մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի, **խառը դատավարությունում ամրագրվեցին մի շարք սկզբունքներ, որոնք ուղիղ հակադիր էին ինկվիզիցիոն դատավարության կազմակերպման սկզբունքներին:**

Ինկվիզիցիոն քրեական դատավարության սկզբունքներին ուղիղ հակադիր, «խառը» դատավարության դատական վարույթի հրապարակայնության, անմիջականության, բանավորության, մրցակցության սկզբունքները, մեղադրյալի սուբյեկտայնացմամբ՝ այժմ դիտարկվում են նրա (անձի) արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրեր, որոնք նաև հանդիսանալով նրա իրավունքների *արդյունավետ դատական պաշտպանության* (Սահմանադրության 61-րդ հոդված) երաշխիքներ, ուղղված են դատարանի կողմից նյութական (օբյեկտիվ) ճշմարտության բացահայտմանը, որոշումները ներքին համոզմունքի հիման վրա կայացնելու հնարավորության ապահովմանը և որպես արդյունք նաև՝ նրա նկատմամբ իրականացվող վարույթի ընդհանուր արդարության ապահովմանը:

2. Մեղադրյալի՝ որպես քրեական դատավարության սուբյեկտի կարգավիճակի շարունակական ամրապնդումը ինկվիզիցիոն սկզբի վրա կառուցված խառը դատավարության նախնական (մինչդատական) քննությունում

2.1. Ընդհանուր խորապատկերը

Թեև «խառը» դատավարությունն իր կառուցվածքով, ըստ էության, ձևական առումով իրենից ներկայացնում է(ր) դատավարության ինկվիզիցիոն և մրցակցային հիմքերի վրա կառուցված երկու մասերի՝ նախնական (պայմանական «մինչդատական») և հիմնական (դատական)՝ քննության (վարույթի) «արհեստական» միասնություն (որից առաջինը՝ նախնական քննությունը, կազմակերպվում է ինկվիզիցիոն, իսկ դա-

¹ Այս տերմինն օգտագործվում է հայկական քրեադատավարական իրավունքում կայացված նշանակությամբ: Նույն ժամանակ, անհրաժեշտ է կրկնել, որ համեմատախրավական հարթության մեջ մայրցամաքային քրեադատավարական իրավունքում կան երկրներ, որտեղ նախնական քննությունը նույնպես դատական է:

ՍԱԿՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(11)2023

տական քննությունը՝ մրցակցային դատավարության սկզբերի վրա)¹, այնուամենայնիվ անգամ խառը դատավարության իր բնույթով ինկվիզիցիոն նախնական քննությունում մեղադրյալն արդեն **դուրս է(ր) եկել դատավարության օբյեկտի կարգավիճակից**:

Նախնական քննությունում վերջինս չուներ (և անգամ ներկայումս չունի) քրեական հետաանդման մարմնի (դատախազի) չափ լայն իրավունքներ և այդպիսով իսկ բացակայում էր այդ սուբյեկտների միջև հավասարությունը:

Սակայն արդեն 1800-ականներին խառը դատավարություն որդեգրած առաջին ազգային օրենսգրքերով դատավարության տվյալ փուլում մեղադրյալն արդեն դիտարկվում էր իբրև դատավարության **սուբյեկտ**. վարույթի այդ մասում ճանաչվում էին վերջինիս մասնավոր շահերը՝ որպես արդյունք նաև նրա, թեև սակավ, բայց որոշակի իրավունքներով այդ շահերի պաշտպանության ապահովման հնարավորությունը:

Այս առումով, օրինակ, ցարական Ռուսաստանի քրեական դատավարության 1864 թ. կանոնադրությամբ նախնական քննության ընթացքում

¹ Այս առնչությամբ Մոսկվայի պետական համալսարանի դատավարագետները, խոսելով խառը դատավարության «հիմնահոր»՝ 1808 թ. նապոլեոնյան քրեական դատավարության կանոնադրության մասին, գրում են. «Արդյունքում, առանց չափազանցման, ընդունվեց հանճարեղ որոշում, որն ազդեցություն ունեցավ քրեական դատավարության ամբողջ հետագա զարգացման վրա...Օրենսգրքի հեղինակները հստակ ինստիտուցիոնալ սահման անցկացրեցին նախնական քննության և դատական քննության միջև, որն այսօր ակնհայտ է թվում, սակայն այն ժամանակ ոչ ոքի դեռ հայտնի չէր:

Այսպես ծնվեց հայտնի «խառը համակարգը (systeme mixte)», որի հիմնական իմաստը կայանում էր նրանում, որ նախնական քննությունը պետք է ենթարկվեր ինկվիզիցիոն, իսկ դատական քննությունը՝ մրցակցային-մեղադրական հիմքերին...» տե՛ս, Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. - М.: Статут, 2017. - էջ138:

Այս առումով պատահական չեն հենց «մինչդատական վարույթի» (այս տերմինն օգտագործվում է խիստ պայմանական՝ ի նկատի ունենալով մինչ գործի ըստ էության դատական քննությունն ընկած վարույթի հատվածը, քանի որ մինչ օրս էլ խառը դատավարության տիպին պատկանող մի շարք երկրներում, օրինակ, նույն Ֆրանսիայում նախնական քննությունը դատական է): Նապոլեոնյան կանոնադրության դրոյթների առնչությամբ գիտության մեջ տեղ գտած այն խոսքերը, որ «նապոլեոնյան քրեական դատավարության օրենսգրքն իրենից ներկայացնում է վերադարձ դեպի 1670 թ. Քրեական Օրդոնանսի հետախուզական հիմքերին» (Ն. Պոլյանսկի) ((տե՛ս **Полянский Н.Н.** Вопросы теории советского уголовного процесса / Под ред. Карева Д.С. - М.: Изд-во Моск. ун-та, 1956. - էջ 35).), կամ «...Լյուդովիկոս XIV-ի իրավունքը 1808 թ. Կանոնադրության անվան տակ դեռևս թագավորում է Ֆրանսիայում» (Ժ. Գառոն) (Ժ.Ռ. Գառոնից մեջբերումն արված է ըստ՝ **Чельцов-Бебутов М.А.** Курс уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах. - СПб.: Равена, Альфа, 1995. - С. 484-485:), և այն արձանագրումները, որ Լյուդովիկոս XIV-ի «Օրդոնանսի որոշ դրոյթներ գրեթե բառացի վերարտադրվում են 1808 թ. քրեական դատավարության կանոնադրությունում» (տե՛ս Курс уголовного процесса, նշվ. աշխ., էջ 138):

մեղադրյալն օժտված էր քննիչին բացարկելու (Կանոնադրության 273-րդ, 600-րդ հոդվածներ), տարատեսակ քննչական գործողություններին որոշ վերապահումներով ներկա լինելու, դրանք բողոքարկելու (Կանոնադրության 316-րդ, 359-րդ, 456-րդ հոդվածներ), վկաներին հարցաքննությանը մասնակցելու, իր դեմ տված ցուցմունքները հերքելու, վկային նոր հարցեր տալու համար քննիչին միջնորդելու, հայտարարություններ և դիտողություններ անելու (Կանոնադրության 448-րդ, 449-րդ, 466-րդ 468-րդ, 469-րդ հոդվածներ), մինչդաստական վարույթի ընթացքում կազմված արձանագրությունների, կայացված որոշումների պատճենները ստանալու (Կանոնադրության 475-րդ հոդված) և նախաքննության վերջում գործի նյութերին ծանոթանալու, քննիչին նոր հանգամանքներ հետազոտելու համար միջնորդություններ ներկայացնելու (Կանոնադրության 477-րդ հոդված) իրավունքներով:

Նշված իրավունքները մեղադրյալին վերապահելը հստակ ընդգծում է վերջինիս սուբյեկտայնությունը:

Մյուս կողմից, սակայն, այդ իրավունքները դեռ բավարար չէին մեղադրյալի շահերի արդյունավետ պաշտպանության համար. օրինակ՝ դեռևս ցարական քրեական դատավարության կանոնադրությամբ նախնական քննության փուլում մեղադրյալը չուներ այնպիսի առանցքային իրավունք, ինչպիսին, օրինակ, պաշտպան ունենալն էր¹:

Ըստ այդմ, կար և շարունակում է վառ մնալ խառը դատավարության ինկվիզիցիոն սկզբի վրա կառուցված մասի՝ նախնական քննության մասում մեղադրյալի՝ իր կարգավիճակի շարունակական ամրապնդման անհրաժեշտություն, այդ թվում և՛ իրավունքների ընդլայնման և դրանց արդյունավետ իրականացման երաշխիքների ստեղծման անհրաժեշտությունը:

Այդ անհրաժեշտությամբ պայմանավորված էլ, չնայած ինկվիզիցիոն ազդեցությունը կրող ազգային համակարգերի համառ դիմադրությանը, թե՛ մայրցամաքային ավանդույթները կրող Արևմտյան Եվրոպայի

¹ Այս առումով և այս լույսի ներքո է որ պետք է հասկանալ դեռևս հարյուր տարի առաջ ականավոր գիտնական Ս. Պոզնիշևի այն դիտարկումները, որ մեղադրյալի «...իրավունքները դեռ նախնական քննության ընթացքում մեղադրյալին չեն դարձնում կ ո ղ մ, այլ նրա համար ստեղծում են **որոշակի կարգավիճակ, որոնք հիշեցնում են կողմի կարգավիճակը**» (թավ ընդգծումներն իմն են՝ Ա.Դ.), տե՛ս **Познышев С.В.** Элементарный учебник русского уголовного процесса / [Соч.] С.В. Познышева, проф. Имп. Моск. ун-та. - [Москва]: Г.А. Леман, 1913. - էջ 242-243:

երկրների, թե՛ խորհրդային¹ (հետխորհրդային) քրեադատավարական համակարգերում առկա է **միտում** մեղադրյալի՝ «նախնական» քննության փուլում կարգավիճակի շարունակական ամրապնդման: Վերջինս շարունակում է հարստանալ նոր իրավունքներով՝ այդպիսով իսկ ամրապնդելով դատավարական կարգավիճակ: Այդ գործընթացն արդյունքում, ըստ էության, դատավարության այդ մասում մեղադրյալին արդեն դուրս էր բերում իր «պասիվ» կարգավիճակից, նրան վերածելով դատավարության «ակտիվ» սուբյեկտի՝ որպես արդյունք հանգեցնելով իր բնույթով ինկվիզիցիոն «նախնական» քննության որոշակի մրցակցայնացմանը:

Ընդ որում՝ այդ միտումը, ընդգծվելով հենց 1800-ականներից, շարունակվում է մինչ օրս:

Այդպիսի գործընթացի սկիզբը մեկնարկող ցուցիչներից կարելի է համարել, օրինակ, 1890-ականների երկրորդ կեսին Ֆրանսիական քրեական դատավարության նախնական քննության հեղափոխական փոփոխությունները հանրահայտ «Կոնստանսյան ռեֆորմներով»: Փոփոխություններ, որոնց շնորհիվ 1897 թ. ի վեր ֆրանսիական դատավարության նախնական քննությունում թույլատրվեց մեղադրյալի հարցաքննությանը փաստաբանի (պաշտպան) ներկայությունը և ամրագրվեց վերջինիս՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը²:

¹ 1960-ականների օրենսգրքերով մեղադրյալի իրավունքները, ի համեմատ 1920-ականների կարգավորումների, էլ ավելի ընդլայնվեցին: Նրա պաշտպան ունենալու իրավունքը նախատեսվեց մինչդատական վարույթի վերջում՝ նախաքննության ավարտի մասին մեղադրյալին հայտնելու և գործի ամբողջ վարույթը, ծանոթանալու համար, մեղադրյալին ներկայացնելու պահից (ՀԽՍՀ 1961 թ. քր.դատ.օր. 42-րդ հոդվածի առաջին պարբերություն): Նույն հոդվածով հետագայում նախատեսվեց նաև՝ դատախազի որոշմամբ՝ մեղադրանք առաջադրելու պահից պաշտպան ունենալու հնարավորություն: Բացի այդ, որոշակի խոցելի խումբ մեղադրյալների համար պաշտպան ունենալու իրավունքը հստակ արդեն ամրագրվեց մեղադրանքի ներկայացման պահից (ՀԽՍՀ 1961 թ. քր.դատ.օր. 43-րդ հոդվածի 2-րդ պարբերություն): Մեղադրյալի շահերի վերընկալումները հանգեցրին որոշակի այլ փոփոխությունների. նա ստացավ արդարացման դատավճիռը բողոքարկելու իրավունք (ՀԽՍՀ 1961 թ. քր.դատ.օր. 323-րդ հոդվածի 6-րդ պարբերություն), իսկ ոչ արդարացնող մի շարք հիմքերով (վաղեմության ժամկետների անցման, համաներման կամ ներում շնորհելու հիմքով) քրեական հետապնդումը դադարեցնելու և/կամ գործի վարույթը կարճելու դեմ առարկելու իրավունք, որպիսի պայմաններում նախատեսվում էր վարույթի ընդհանուր կարգով շարունակության կարգ (ՀԽՍՀ 1961 թ. քր.դատ.օր. 5-րդ հոդվածի վերջին պարբերություն, 205-րդ հոդվածի 3-րդ պարբերություն):

² Այս մասին և Եվրոպայում մեղադրյալի կարգավիճակի շարունակական ամրապնդման, որպես արդյունք՝ դատավարության նախնական փուլերի «մրցակցայնացման» միտումների մասին մանրամասն տե՛ս **Vogler R.**, նշվ. աշխ., էջ 155-177:

Մյուս կողմից, ամրագրելով նախնական քննության փուլում մեղադրյալի փաստաբանի (պաշտպանի) մուտքը՝ հարցաքննությանը փաստաբանի (պաշտպանի) ներկայությունը, դեռ մեկ հարյուրամյակ էր պետք և ՄԻԵԴ անընդհատ մեծացող ճնշում՝ որպեսզի քրեական հետապնդման տակ գտնվող անձի՝ փաստաբան (պաշտպան) ունենալու իրավունքը հնարավոր համարվեր նաև ոստիկանական հետաքննության փուլում՝ *ձերբակալվածին ուտիկանական (առաջին) հարցաքննության ժամանակ*: Ֆրանսիայում օրենսդրական համապատասխան փոփոխությունները կատարվեցին միայն 2011 թ., նույն թվականին այդպիսի փոփոխություններ տեղ գտան նաև Բելգիայում, դրանից մեկ տարի առաջ՝ Շոտլանդիայում 2010 թ. (այն էլ Մեծ Բրիտանիայի գերագույն դատարանի ակտիվ ջանքերով):² Այլ երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, թեև իրավիճակը մի փոքր այլ էր և ամրագրված էր կասկածյալի՝ փաստաբան ունենալու իրավունքը (այդ թվում ոստիկանական հարցաքննության ժամանակ), սակայն այդ իրավունքի իրացմամբ մեղադրյալի շահերի պաշտպանության արդյունավետությունն իր հերթին նվազ էր. մինչ 2017 թ. փաստաբանն ուներ այդպիսի հարցաքննությանը ներկա լինելու, բայց ոչ մասնակցելու և հարցեր տալու իրավունք³:

2.2. Խառը դատավարության դատական վարույթի կազմակերպման սկզբունքների ներմուծումը քրեական վարույթի նախնական («մինչդատական») քննություն

Մայրցամաքային նախնական (պայմանական «մինչդատական») քննության մասում մեղադրյալին իբրև դատավարության սուբյեկտ դիտարկելը, նրա իրավունքներն ու օրինական շահերը ճանաչելն իր հերթին հանգեցրեց կարևոր մի փոփոխության. **առաջ եկավ դատավարության այդ մասում սուբյեկտի իրավունքների և ազատությունների երաշխավորման անհրաժեշտությունը**:

¹ St’u Navone and Others v Monaco (զանգաստներ թիվ. 62880/11, 62892/11 and 62899/11) 2013 թ. հոկտեմբերի 24 վճիռը, §79:
² Մանրամասն տե՛ս **Giannoulououlos, D.** Strasbourg Jurisprudence, Law Reform and Comparative Law: A Tale of the Right to Custodial Legal Assistance in Five Countries//Human Rights Law Review, 2016, 16, էջ 103-129:
³ **Weigend, T.** Jurisprudence of the European Court of Human Rights on Suspects’ Rights and its Influence on National Legal Systems, էջ 13, հասանելի հղումը՝ [\(PDF\) ECtHR Jurisprudence on Suspects’ Rights \(researchgate.net\)](#) (վերջին մուտքը 05.06.2023):

Եթե երաշխավորող **սուբյեկտի**, անառարկելի է, այդպիսի դերում լավագույնս կարող է(ր) հանդես գալ անկախ մարմինը՝ **դատարանը**, ապա երաշխավորման **մեթոդները** բազմազան են:

Եթե ֆրանսիական համակարգում «նախնական քննության» փուլում այդ երաշխավորությունը իրացվում է(ր) դատական իշխանության ներկայացուցչի (քննիչ-դատավորի) կողմից քննության իրականացմամբ¹, ապա մայրցամաքային համակարգի այն երկրներում, որոնք հրաժարվեցին նախաքննությունից և/կամ քննիչ-դատավոր ինստիտուտից, այդ երաշխավորությունն իրականացվում էր ոստիկանական գործունեության վրա «հատվածական» դատական վերահսկողություն ստեղծելով և տարածելով: Ավելին, անգամ նախաքննությունը և քննիչ-դատավորի ինստիտուտը պահպանած ֆրանսիական դատավարությունում՝ դրա ոստիկանական հետաքննության փուլում, ոստիկանական գործունեության լեգիտիմացման և անձի իրավունքների ու օրինական շահերի երաշխավորման համար ընտրվեց հենց այդ «հատվածական» դատական վերահսկողության մեթոդը:²

Իր հերթին մինչդատական քննության և, մասնավորապես, ոստիկանական քննության լեգիտիմացման և անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման նպատակով մայրցամաքային դատական համակարգ ներմուծված «հատվածական» դատական վերահսկողությունը հանգեցրեց մեկ այլ հետևանքի. դատական վերահսկողության այս վարույթներ,³ և մասնավորապես, անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման հարցերի դատական վերահսկողության վարույթ սկսեցին աստիճանաբար «մուտք գործել» «խառը» դատավարության հիմնական (դատական) վարույթի վերը ներկայացված անմիջականության, բանավորության, մրցակցության, հրապարակայնության սկզբունքները:

¹ Անձի անձնական ազատության սահմանափակման հարցերը Ֆրանսիայում լուծում է ոչ թե քննիչ դատավորը, այլ ինստիտուտցիոնալ առումով դրանից տարբերվող մասնագիտացված դատարանը՝ ազատությունների և կալանավորման հարցերով դատարանը:

² Այս մասին մանրամասն տե՛ս **Головко Л.В.** Постсоветская теория судебного контроля в досудебных стадиях уголовного процесса: попытка концептуального переосмысления // Государство и право. – 2013. – № 9. – էջ 17–32:

³ Բնականաբար խոսքը գնում է այնտեղ, որտեղ տրամաբանորեն գոնե հնարավոր է այդ սկզբունքների գործունեությունը, և ասվածը չի ներառում, օրինակ, այնպիսի դեպքեր, ինչպիսին են տարատեսակ գաղտնի քննչական գործողություններ իրականացնելու դատական վերահսկողության և համանման այլ դեպքերը:

2.3. Անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման հարցերի ՄԻԵԴ ձևավորած իրավաբանությունը

Անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման հարցերի վերաբերյալ ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ անգամ եթե իրականացվող դատավարությունում ոչ միշտ է անհրաժեշտ ապահովել նույն երաշխիքները, ինչ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում քրեական կամ քաղաքացիական դատավարությունում տրամադրվող երաշխիքներն են, այնուամենայնիվ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում իրականացվող դատավարությունը պետք է ունենա դատական բնույթ և ապահովի ազատագրկման տվյալ տեսակին հարիր **երաշխիքներ**¹:

Այս համատեքստում, ի թիվս այլնի, ՄԻԵԴ-ը նկատել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում իրականացվող դատավարությունը միշտ պետք է լինի **մրցակցային** և պետք է երաշխավորի կողմերի միջև **«զենքերի հավասարությունը»**²:

Ընդ որում՝ ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ այն մրցակցության և կողմերի միջև «զենքերի հավասարության» շեղում է արձանագրում նաև այն դեպքերում, երբ կալանավորման որոշման վերանայումն իրականացվել է կողմերի բացակայությամբ, գրավոր ձևով, դատարանի կողմից իր աշխատասենյակում (in camera), որում մեղադրյալը, իր ազատությունից զրկումը վիճարկելով, **զրկված է եղել դատախազի կողմից իր բողոքի վերաբերությամբ ներկայացված առարկությունների (դիտարկումների) մասին մեկնաբանություններ անելու հնարավորությունից**³:

Ընդ որում՝ ՄԻԵԴ-ը դատախազի կողմից մեղադրյալի բողոքի վերաբերությամբ ներկայացված առարկությունների (դիտարկումների) մասին մեկնաբանություններ անելու հնարավորության բացակայությունն ինքնին դիտարկել է իբրև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում՝ ընդգծելով նման դեպքերում այդպիսի վարույթի

¹ Տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ A. and others v. The United Kingdom (զանգատ թիվ 3455/05) 2009 թ. փետրվարի 19 Մեծ Պալատի վճիռը, § 203:

² Տե՛ս ՄԻԵԴ A. and others v. The United Kingdom (զանգատ թիվ 3455/05) 2009 թ. փետրվարի 19 Մեծ Պալատի վճիռը, § 204, նաև՝ Nikolova v. Bulgaria (Գանգատ թիվ 31195/96) 1999 թ. մարտի 25-ի Մեծ Պալատի վճիռը § 58

³ Տե՛ս Nikolova v. Bulgaria (Գանգատ թիվ 31195/96) 1999 թ. մարտի 25-ի Մեծ Պալատի վճիռը, § 63:

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(111)2023

համար մրցակցության և «զենքերի հավասարության» սկզբունքից շեղումը¹: ՄԻԵԴ-ը նաև ազատությունից զրկված անձի՝ ազատության զրկումը վերացնելու միջնորդությանը (խնդրանքին) հակադիր կողմի ներկայացրած առարկությունները մեկնաբանելու հնարավորությունից զրկված լինելն է անգամ դիտարկել իբրև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում՝ «զենքերի հավասարության» և դատավարության ոչ մրցակցայնության հիմնավորմամբ²:

2.4. Անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման հարցերի ՀՀ Սահմանադրական դատարանի իրավաբանությունը

¹ Տե՛ս ÇATAL v. TURKEY (գանգատ թիվ 26808/08), 2012 թ. ապրիլի 17 վճիռը, § 43-45:

Ընդ որում՝ այս դիրքորոշումը ՄԻԵԴ-ը հետևողականորեն կենսագործել է իր որոշումներում, այն վերահաստատել 2023 թ. մայիսի 23-ին կայացրած (տողերս գրելու պահին դեռևս ոչ վերջնական) վճռում: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրականացվող վարույթները սկզբունքորեն պետք է նաև հնարավորինս բավարարեն արդար դատաքննության հիմնական պահանջներին, ինչպիսին է մրցակցային դատավարությունը՝ նկատելով, որ ազգային օրենսդրությունը կարող է բավարարել այս պահանջը տարբեր ձևերով, սակայն, ինչ մեթոդ էլ որ ընտրվի, ամեն դեպքում պետք է ապահովի, որ մյուս կողմը **տեղյակ կլինի, որ ներկայացվել են դիտարկումներ և այդ դիտարկումները մեկնաբանելու իրական հնարավորություն ունենա**, տե՛ս Yilmaz Aydemir v. Türkiye (գանգատ թիվ 61808/19), 2023 թ. մայիսի 23-ի վճիռը, § 38: **ՄԻԵԴ-ը, անդրադառնալով թուրքական կառավարության առարկությունների դիտարկումներին, նկատում է, որ կառավարությունը, հեղինակելով թուրքական սահմանադրական դատարանի մեկնաբանության այդ տրամաբանությանը, գտել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտումը բացակայում է, քանի որ դատախազի առարկությունները (դիտարկումները) չեն պարունակել որևէ նոր փաստ կամ փաստարկ, որի մասին դիմումատուին հայտնի չի եղել նախորդիվ, և, հեղինակաբար՝ դիմումատուին չի հիմնավորել՝ ինչպես է նա անբարենպաստ վիճակում հայտնվել դատախազի համապատասխան առարկությունները (դիտարկումները) իրեն չտրամադրելու պատճառով: Այս առնչությամբ ՄԻԵԴ-ը, վերահաստատելով նախորդ գործերով արտահայտած իր դիրքորոշումները, նշել է, որ ի սկզբանե գտնում է, որ ո՛չ վարույթն իրականացնող ազգային դատարանը, ո՛չ էլ ՄԻԵԴ-ը չպետք է գնահատեն դատավարության կողմերից որևէ մեկի ներկայացրած առարկությունների (դիտարկումների) բովանդակությունը և այդ գնահատման արդյունքներով պայմանավորեն առարկությունների (դիտարկումների) կողմերի միջև փոխանակման հնարավորությունը: ՄԻԵԴ-ը շեշտադրել է, որ կալանավորվածն ինքը կամ նրա փաստաբանը պետք է գնահատեն, թե արդյոք դատախազի առարկությունները (դիտարկումները) արժանի են արձագանքի, թե՛ ոչ, տե՛ս նշվ. վճիռը, § 42:**

² Տե՛ս Sanchez-Reisse v. Switzerland (Գանգատ թիվ 9862/82) 1986 թ. հոկտեմբերի 21 վճիռը, § 51-52: Անհրաժեշտ է արձանագրել, որ ՄԻԵԴ-ը Քննարկվող հարցի համատեքստում անձին՝ իրեն ազատ արձակելու միջնորդությանը (խնդրանքին) հակադիր կողմի կարծիքին **գրավոր մեկնաբանություններ ներկայացելու հնարավորությունը** դիտարկել է իբրև պատշաճ միջոց, Տե՛ս Sanchez-Reisse v. Switzerland (Գանգատ թիվ 9862/82) 1986 թ. հոկտեմբերի 21 վճիռը, § 51:

Անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման հարցերին ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներով:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանը, արձանագրելով, որ կարևոր է համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ անձի լսվելու (անձամբ պաշտպանվելու) իրավունքի իրացումն ինչպես առաջին աստիճանի դատարանում, **այնպես էլ դատական բողոքարկման (ստուգման) հետագա ընթացակարգերում**, իր որոշումներից մեկում նկատել է, որ. «(...) ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ **չի կարող բացառել անձի՝ անձամբ պաշտպանվելու իրավունքը**, եթե առկա է վերջինիս կողմից հստակ արտահայտված համապատասխան ցանկություն (դատավարական միջնորդություն)» (ՍԴՈ-1295 որոշման 6-րդ կետ):

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1295 որոշման մեջ նշել է, որ *առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով՝ արդարադատական պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որպեսզի կասկածյալը կամ մեղադրյալը ցանկության դեպքում չզրկվեն լսվելու իրենց իրավունքից:*

Մեկ այլ՝ ՍԴՈ-1421 որոշման մեջ, Սահմանադրական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «(...) անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակում նախատեսող քրեատավարական ցանկացած ընթացակարգի սահմանադրականությունը կախված է ոչ միայն այդ իրավունքի սահմանափակման իրավաչափության հիշյալ չափորոշիչների պահպանման նկատմամբ դատական վերահսկողության պատշաճ և արդյունավետ իրականացումից, այլ նաև անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի երաշխավորումից» (ՍԴՈ-1421 որոշման 4.1.-ին կետ):

Ըստ նախկին (1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված) քրեական դատավարության օրենսգրքի՝ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի նախաձեռնությամբ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց (չ)ընտրելու կամ կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր

(չ)լինելու հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը, անձի լաված լինելու իրավունքի իրացման և դրան թղթակցող դատարանի կողմերի կարծիքը լսելու պարտականությունը շեշտադրվելով, նշել է, որ. «(...) **անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակումն իրավաչափ է միայն դատարանի որոշմամբ, որն ընդունվել է դատական նիստում՝ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքի հիմքերի և հիմնավորումների համակողմանի և անաչառ քննության, այդ թվում՝ մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի՝ իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորության առկայության դեպքում**» (ՍԴՈ-1421 որոշման 4.1.-ին կետ):

Արդեն մեկ այլ՝ ՍԴՈ-1453 որոշման շրջանակներում արձանագրելով, որ վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ներառյալ՝ համապատասխան դատական ակտի իրավաչափության պատշաճ գնահատումը, նույնպես պետք է երաշխավորվեն՝ այդ ատյանների գործառույթների առանձնահատկությունների հաշվառմամբ (ՍԴՈ-1453 որոշման 5.7-րդ կետ), Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը ենթադրում է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովում, ապա վերաքննիչ և վճռաբեկ ատյանների խնդիրն է՝ Սահմանադրությամբ սահմանված գործառույթների և օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում երաշխավորել մինչդատական վարույթի նկատմամբ առաջին ատյանի դատարանի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ իրենց հերթին ապահովելով այն վիճարկող՝ **վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացրած անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը**» (ընդգծումը՝ Հեղ.) (ՍԴՈ-1453 որոշման 5.9-րդ կետ):

2.5. Միջանկյալ եզրահանգումներ

Ողջ վերոգրյալի լույսի ներքո կարելի է փաստել, որ «խառը» դատավարության նախնական (պայմանական «մինչդատական») քննության մասը, թեև ընդհանուր առմամբ կառուցված է(ր) ինկվիզիցիոն սկզբի հիման վրա, այնուամենայնիվ, դատավարության այդ փուլում արդեն,

ելնելով մարդու, նրա արժանապատվության վերարժևորումից, մեղադրյալը հանդիսանում է քրեական դատավարության լիիրավ սուբյեկտ:

Ճանաչվում են վերջինիս մասնավոր շահերը, դրանց ապահովման նպատակով նա օժտված է մի շարք իրավունքներով, վարույթի այդ մասում կազմակերպվում են մի շարք երաշխիքներ իր իրավունքների ու օրինական շահերի ապահովման համար:

Ընդ որում՝ «խառը» դատավարության սկզբնավորման հարյուրամյակից՝ 1800-ականներից ի վեր, մեղադրյալը ժամանակի և տարածության մեջ շարունակում է ամրապնդել իր դատավարական կարգավիճակը: Համեմատաիրավական հարթության մեջ ընդգծվում է վերջինիս իրավունքների ընդլայնման, ըստ այդմ՝ կարգավիճակի ամրապնդման հստակ միտումը:

Այս միտումի արտահայտությունն է մեղադրյալի իրավունքների ու ազատությունների երաշխավորումը «մինչդարական» քննության մասում՝ ոստիկանական հեղաքննության փուլում ստեղծված դարական վերահսկողությունը:

*«Մինչդարական» վարույթի այդ նոր ստեղծված դարական վերահսկողությունը, այնտեղ, որտեղ հնարավոր է և այն հարցերի քննության վարույթում, որոնք իրավունքների ամենաինտենսիվ միջամտություն են ենթադրում, սկսեց աստիճանաբար «ընդունել» խառը դատավարության **հիմնական** (դարական) վարույթի անմիջականության, բանավորության, մրցակցության, հրապարակայնության սկզբունքները:*

Այսպիսով, թեև խառը դատավարության դատական վարույթի այդ սկզբունքները սկզբնապես կազմակերպվել էին **քրեական դատավարության քրեաիրավական վեճը լուծող հիմնական** (դատական (գործն ըստ էության լուծող)) քննության վրա տարածման համար, այնուամենայնիվ, ժամանակակից իրավական պետություններում, մարդու, նրա արժանապատվության և հիմնական իրավունքների և ազատությունների հարգման, պաշտպանության և արդյունավետ իրացման գաղափարից, դատական վարույթի նշյալ սկզբունքները որոշակիորեն տարածվեցին նաև քրեական դատավարության շրջանակներում անձի իրավունքները սահմանափակող դատական երաշխիքների վարույթի և, մասնավորապես, անձնական ազատությունը սահմանափակող կալանքի կիրառ-

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(11)2023

ման կամ դրա երկարաձգման միջնորդությունների քննության դատական վարույթների վրա:

3. Քրեական դատավարության օրենսգրքով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության՝ առաջին արյանի դատարանում՝ իրականացվող քննության շրջանակներում անմիջականության, բանավորության, մրցակցության և հրապարակայնության սկզբունքների կենսագործվածությունը

Հայկական քրեադատավարական իրավունքը, հետևելով մայրցամաքային խառը դատավարության համընդհանուր միտումին, ի երաշխավորումն մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ապահովման, սույն հոդվածի 1-ին մասում ներկայացված խառը դատավարության դատական վարույթի կազմակերպման նշյալ սկզբունքները որոշակիորեն ամրագրեց նաև կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության դատական վարույթը կանոնակարգող Օրենսգրքի հոդվածներում:

Այսպես, Օրենսգրքի 21-րդ հոդվածը, կանոնակարգելով կողմերի հավասարությունը և մրցակցության սկզբունքը, նշված հոդվածի 1-ին մասով սահմանում է, որ դատարանում վարույթն իրականացվում է կողմերի հավասարության և մրցակցության հիման վրա: Այդ սկզբունքը տարածելի է նաև վերոնշյալ դատական վարույթների նկատմամբ²: *Կողմերի հավասարության և մրցակցության քրեադատավարական սկզբունքի ուժով* դատարանը, պահպանելով անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է բոլոր ապացույցները ներկայացնելու և համակողմանի հետազոտելու համար անհրաժեշտ պայմաններ, իսկ կողմերն օժտված են իրենց դիրքորոշումը ներ-

¹ Ներկայացված վերլուծությունները հավասարապես վերաբերելի են խնդրո առարկա հարցերի քննության կապակցությամբ ինչպես առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների, այնպես էլ մասնագիտացված համապատասխան դատարանի կողմից իրականացվող վարույթներին:

² Օրենսգրքի 21-րդ հոդվածի նույն մասում սահմանվում են այս սկզբունքից շեղվելու դեպքերը, որոնք, սակայն, չեն ներառում ո՛չ խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքների, այդ թվում՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման միջնորդության հիման վրա դատական վարույթը, ո՛չ էլ դրանց արդյունքում կայացված որոշման վերանայման՝ հատուկ վերանայման կառուցակարգերը (Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մաս, Օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մաս):

կայացնելու և պաշտպանելու հավասար հնարավորություններով (Օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր): Բացի այդ, նշված սկզբունքի ուժով դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ (Օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մաս):

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության վարույթում ապահովվում է մեղադրյալի՝ դատարանի առջև կանգնելու և լսվելու հրավունքը, նշված վարույթին մեղադրյալն ունի ներկա գտնվելու հրավունք (ասվածը բխում է Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ և 264-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դրույթներից), և դատական վարույթը, բացառությամբ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերի¹, հրականացվում է մեղադրյալի պարտադիր մասնակցությամբ. **ընդ որում՝** մեղադրյալի ներկայության ապահովման պարտականությունը կրում է միջնորդությունը հարուցած պաշտոնատար անձը (Օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մաս):

Օրենսդիրը, սահմանելով, որ նշված հարցով դատական նիստը նշանակվում է հնարավոր ամենակարճ ժամկետում, միևնույն ժամանակ, սակայն, մեղադրյալի անձնական ազատության հրավունքի արդյունավետ դատական պաշտպանության նկատառումներից ելնելով, սահմանել է կանոնակարգում, ըստ որի՝ դատական նիստի ժամանակը որոշելիս պետք

¹ Մեղադրյալի գտնվելու վայրը հայտնի չլինելու կամ ՀՀ սահմաններից դուրս գտնվելու դեպքերի, իսկ կալանքի ժամկետը երկարաձգելու վարույթի մասով նաև՝ մեղադրյալի կողմից դատալսումներին մասնակցելու հրավունքից հրաժարված լինելու դեպքում (երբ պահպանվել են օրենքով նախատեսված այլ պայմանները) (Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մաս): Ընդ որում՝ այս առումով կարևոր է նկատել, որ եթե խոսքը գնում է առաջին երկու դեպքի մասին, այսինքն՝ այն դեպքերի, երբ բացակայում է մեղադրյալի՝ դատալսումներին մասնակցելու հրավունքից հրաժարումը, և կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կայացվել է առանց մեղադրյալի մասնակցության, ապա մեղադրյալին Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո կալանավորելուց հետո վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում այդ անձին ներկայացնել իրավասու դատարան՝ նրա նկատմամբ կիրառված կալանքի հարցը վերստին քննարկելու համար, որի դեպքում արդեն ներկայացված մեղադրյալի կալանավորման հարցը քննարկվում և լուծվում է Օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով սահմանված կանոնների պահպանմամբ (Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մաս): Հետևաբար՝ կալանքի կիրառման միջնորդության դատական վարույթի դատալսումներին մասնակցելու հրավունքից հրաժարված չլինելու պայմաններում օրենսդիրն այնպիսի կանոնակարգումներ է սահմանել, որպեսզի ապահովվի այդ վարույթին մեղադրյալի անմիջական մասնակցությունը:

ՍԱՀՄԱՆԱՎՈՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(111)2023
94

է հաշվի առնվի նաև միջնորդությանը և կից նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ձևավորելու համար պաշտպանության կողմին ողջամտորեն անհրաժեշտ ժամանակը, իսկ վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո միջնորդության և կից նյութերի մեկ օրինակն անհապաղ պետք է հանձնվի մեղադրյալին (*Օրենսգրքի* 285-րդ հոդվածի 8-րդ մաս): *Այդ դատական նիստերի ընթացքում մեղադրյալն ունի բացառություն փախու, բացառություն ներկայացնող կողմին հարցեր փախու, (Օրենսգրքի 287-րդ հոդվածի 5-րդ մաս) և դատարան վարույթի առարկային վերաբերող լրացուցիչ նյութեր ներկայացնելու իրավունք (Օրենսգրքի 287-րդ հոդվածի 6-րդ մաս), Դատական նիստն իրականացվում է բանավոր ընթացակարգով (Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մաս):*

Ավելին, *Օրենսգրքի* 264-րդ հոդվածի 1-3-րդ մասերի և *Օրենսգրքի* 268-րդ հոդվածի 1-3-րդ մասերից բխում է, որ այդ վարույթում դատական նիստի ընթացակարգում իր որոշակի կենսագործումն է ստացել անմիջականության սկզբունքը. Այդ դրույթների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ օրենսդիրը սահմանել է կարգ, ըստ որի՝ բոլոր ապացույցները և վարույթի այլ նյութերը դատական նիստում ենթակա են անմիջական հետազոտման դատարանի և դատական վարույթի մասնակիցների կողմից, իսկ դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն դատական նիստում հետազոտված ապացույցները:

Բացի այդ (ի տարբերություն քրեական դատավարության նախորդ օրենսգրքի մոտեցման¹)՝ Օրենսգրքը *կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության հիման վրա հնարավոր է համարել փարածել դատական վարույթի հրապարակայնությունը՝ (կողմի միջնորդության դեպքում, որի պայմաններում դատարանը կարող է դատական նիստից առաջ կամ դրա ընթացքում որոշում կայացնել դատական նիստը դռնբաց անցկացնելու մասին (Օրենսգրքի 287-րդ հոդվածի 4-րդ մաս)):*

Այսպիսով՝ օրենսդիրը, հետևելով համեմատախրավական ընդհանուր միտումին և ելնելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման և պաշտպանության պահանջից (Սահմանադրության 3-րդ

¹ Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարել դատավարական հարկադրանքի միջոց (այդ թվում՝ կալանավորում) կիրառելու մասին միջնորդությունները դռնփակ դատական նիստում քննելու կարգը, տե՛ս ՍԴԴ-1295 որոշման 6-րդ կետ:

հողվածի 2-րդ մաս), և մասնավորապես, ի ապահովումն Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված անձնական ազատության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության, անձի արդար դատաքննության իրավունքից բխող սկզբունքները՝ անմիջականության, բանավորության և մրցակցության սկզբունքների գործողությունը **տարածել է նաև**, իսկ հրապարակայնության սկզբունքի կենսագործումը **հնարավոր է համարել (չի բացառել)**¹ նաև անձի անձնական ազատության իրավունքի՝ կալանավորման (դրա ժամկետի երկարաձգման) միջոցով սահմանափակելու միջնորդության քննարկման՝ առաջին ատյանի դատարանում իրականացվող դատական վարույթի վրա:

4. Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման միջնորդության քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության՝ վերաքննիչ դատարանի կողմից հատուկ վերանայման կառուցակարգով ստուգման շրջանակներում սկզբունքների կենսագործվածությունը

Օրենսգրքով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության շրջանակներում առաջին ատյանի դատարանում իրականացվող դատական վարույթի երաշխիքների վերաբերյալ ներկայացված վերլուծությունը հիմք ընդունելով՝ անհրաժեշտ է նաև քննարկել նշված հարցի(երի) քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշման օրինականության և հիմնավորվածության՝ վերաքննիչ դատարանի կողմից հատուկ վերանայման կառուցակարգի շրջանակներում իրականացվող դատական վարույթում՝ անմիջականության, բանավորության, մրցակցության և հրապարակայնության սկզբունքների կենսագործվածությունը, այդ լույսի ներքո պատասխանել հարցին՝ արդյո՞ք առկա են օրենսդրական կառուցակարգեր, որոնք երաշխավորում են նշված դատական ակտերի վերանայման շրջանակներում անձնական ազատությունից զրկված անձի՝ իր ազատությունից զրկման իրավաչափության արդյունվետ վիճարկումը²:

¹ Խոսքն այս դեպքում հրապարակայնության՝ դատական նիստին հանրության ներկայության հնարավորության ապահովման բաղադրատարրի մասին է:
² Ասվածը հատկապես կարևոր է ՄԻԵԴ ձևավորած այն դիրքորոշման համատեքստում, ըստ որի՝ թեև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը Պայմանավորվող պետություններին չի

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(11)2023

Օրենսդիրը կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման հատուկ վերանայման կարգով բողոքարկվելու որոշման օրինականության և հիմնավորվածության՝ վերաքննիչ դատարանի կողմից հատուկ վերանայման կառուցակարգի շրջանակներում իրականացվող դատական վարույթի համար նախատեսել է այդ հարցերի վերանայման **գրավոր ձև**, իսկ **դատարանի նախաձեռնությամբ**՝ նաև հնարավորություն է վերապահել դատական ակտի վերանայումն իրականացնել **բանավոր** ընթացակարգով (Օրենսգրքի 391-րդ հոդվածի 3-րդ մաս, 264-րդ հոդվածի 3-5-րդ մասեր):

Ընդ որում անհրաժեշտ է շեշտադրել, որ թեև օրենսդիրը կողմերի հավասարության և մրցակցության քրեադատավարական սկզբունքից որևէ շեղում չի նախատեսել հատուկ վերանայման հիմնական ձևի՝ գրավոր ձևի համար (Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մաս), այնուամենայնիվ, ի տարբերություն հատուկ վերանայման բանավոր ընթացակարգի՝ գրավոր ընթացակարգի դեպքում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները **լիարժեք չեն կենսագործվում**, որի հետևանքով, կախված դատական ակտը բողոքարկող սուբյեկտից՝ մեղադրյալը կարող է հայտնվել **անհավասար վիճակում՝ ի համեմատ իր հակադիր մեղադրանքի կողմի**:

Այսպես՝ Օրենսգրքով թեև նախատեսվում է հատուկ վերանայման բողոքի պատասխանը դատական վարույթի մասնակիցներին համապատասխան վերադաս դատարանի կողմից ուղարկելու պահանջ (Օրենսգրքի 357-րդ հոդվածի 3-րդ մաս), այնուամենայնիվ, գրավոր ընթացակարգի շրջանակներում հատուկ վերանայման բողոքի քննության դեպքում Օրենսգրքում բացակայում է մեղադրյալի բերած հատուկ վերանայման բողոքին պատասխան ներկայացվելու դեպքում (որը, ի դեպ, բովանդակում է բողոքի հիմքի, այն հաստատող փաստերի, ինչպես նաև պահանջի վերաբերյալ դիրքորոշումը և այն հիմնավորող հակադիր կողմի փաստարկները (Օրենսգրքի 357-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ)),

պարտավորեցնում կալանքի օրինականության քննության համար երկրորդ իրավասու ատյան նախատեսել, սակայն նման համակարգ ունեցող պետությունը **պարտավոր է վերաքննիչ ատյանում կալանավորված անձանց սկզբունքորեն ընձեռել նույն իրավունքները**, ինչ առաջին ատյանի դատարանում, տե՛ս, օրինակ, Toth v. Austria (գանգատ թիվ 11894/85) 1991 թ. դեկտեմբերի 12-ի վճիռը, § 84:

մեղադրյալի կողմից հակադիր կողմի փաստարկումների վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու, դրանց արձագանքելու, հակափաստարկ ներկայացնելու, դրանք վիճարկելու հնարավորությունը:

Այսինքն՝ ստացվում է, որ կախված իրավիճակից, մասնավորապես՝ բոլոր այն դեպքերում, երբ հատուկ վերանայման բողոքը բերվի մեղադրյալի կողմից իրեն կալանավորելու (կալանքի ժամկետը երկարաձգելու) առաջին ատյանի դատարանի որոշման դեմ, ապա նման դեպքում օրենսդրական առկա կառուցակարգերի շրջանակներում **չի ապահովվում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքից բխող՝ մեղադրյալի՝ իր դեմ բերվող հակադիր դիրքորոշման դեմ արտահայտվելու, դրանց արձագանքելու, հակափաստարկ ներկայացնելու, դրանք վիճարկելու իրավունքը:**

Ի հակադրություն գրավոր ընթացակարգով իրականացվող վերանայման՝ հատուկ վերանայման բողոքի բանավոր ընթացակարգի շրջանակներում, մեղադրյալի՝ կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքից բխող (ՄԻԵԴ տերմինաբանությամբ՝ «զենքերի հավասարության»)՝ իր բողոքի դեմ բերվող հակադիր կողմի պատասխանի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու, դրանց արձագանքելու, հակափաստարկ ներկայացնելու, դրանք վիճարկելու մեղադրյալի իրավունքի իրացումը հնարավոր կլինի ապահովել, դատարանների կողմից Օրենսգրքի 360-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված դատարանի՝ մեղադրյալին (վարույթի մասնակիցներին) հարցեր տալու լիազորությամբ և մեղադրյալի պատասխանի միջոցով: Բացի այդ, մեղադրյալի (դատավարության մյուս մասնակիցների)՝ դատական նիստին ներկայացած վարույթի մասնակիցներին (դատարանի թույլտվությամբ) հարցեր տալու իրավունքը ևս Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի և Սահմանադրության 61-րդ հոդվածին համահունչ մեկնաբանվելու դեպքում բանավոր ընթացակարգի շրջանակներում մեղադրյալին իր հարցեր տալու իրավունքի իրացմամբ (ինչպես նաև հակադիր կողմի, դատարանի տված հարցերին պատասխանելու միջոցով) հնարավորություն կունենա արդյունավետ կերպով վիճարկել իր ազատությունից զրկումը՝ ապահովելով հարցեր տալով և դրանց պատասխանելով բողոքի դեմ հակադիր կողմի ներկայացրած պատասխանի վերաբերյալ մեղադրյալի դիրքորոշում

արտահայտելու, դրան արձագանքելու, հակափաստարկ ներկայացնելու, պատախանը վիճարկելու իրավունքի իրացումը:

Բացի այդ, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության վերաքննիչ դատարանի կողմից հատուկ վերանայման կառուցակարգի շրջանակներում իրականացվող դատական վարույթը գրավոր ընթացակարգով իրականացնելիս, ինքնակնհայտ է, որ բանավարության և անմիջականության սկզբունքները ևս չեն կենսագործվում, ընդ որում՝ այս դեպքում արդեն ամբողջ ծավալով:

Այս համատեքստում պետք է նկատել, որ թեև Օրենսգիրքը հատուկ վերանայման սահմանները սահմանափակում է բողոքում նշված հիմքով և այն հաստատող փաստերով (Օրենսգրքի 359-րդ հոդվածի 4-րդ մաս), իսկ հատուկ վերանայման շրջանակներում դատական ակտ կայացնելիս սահմանում պահանջ առ այն, որ դատարանը պետք է հիմնվի միայն ստորադաս դատարանում հետազոտված ապացույցների կամ նյութերի և վարույթի մասնակիցների արած պնդումների վրա (Օրենսգրքի 359-րդ հոդվածի 5-րդ մաս), *ինքնին չի նշանակում, որ վերանայող վերադաս դատարանը՝ քննարկվող դեպքում՝ վերաքննիչ դատարանը, զրկված է փաստեր գնահատելու հնարավորությունից:*

Ընդհակառակը՝ քննարկվող հարցի համատեքստում վիճարկվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրենից ենթադրում է նաև փաստերի գնատրահում, որպիսի դեպքում վերաքննիչ դատարանի՝ փաստերի վերաբերյալ գնահատականի օբյեկտիվության և ներքին համոզմունքի ձևավորման կարևոր երաշխիք է դատական վարույթի բանավորությունն ու անմիջականությունը (տե՛ս սույն հոդվածի նախորդ հարվածները): Բացի այդ, հաշվի առնելով, որ առաջին ատյանի դատարանն անձին կալանավորելու (կալանքի ժամկետը երկարաձգելու) միջնորդության քննարկման դեպքում հաշվի է առնում խափանման միջոցի տեսակն ընտրելիս մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները (Օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մաս), այդ թվում՝ մեղադրյալի անձը՝ **անձնական հատկանիշները, որի մասին պատկերացում ձևավորելու** վրա առաջին ատյանի դատարանի և ըստ այդմ՝ նրա

կայացրած որոշման վրա ազդեցություն կարող է ունենալ դատական նիստին, որպես կանոն¹, **մեղադրյալի ներկայությունը**, ապա հատուկ վերանայումը գրավոր ընթացակարգով իրականացնելու պայմաններում վերաքննիչ դատարանը զրկված է լինելու մեղադրյալի անձի **գնահատականի վրա ազդող՝ անմիջականորեն վերջինիս տեսնելու հնարավորությունից**²:

¹ Բացառությունների մասին նշվել է վերևում:

² Այս առնչությամբ կարևոր է ՄԻԵԴ-ի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում ձևավորված նախադեպային իրավունքի վերլուծությունը, որը վերաբերելի մասով կարող է նաև անհրաժեշտ լինել սույն գործի քննարկման շրջանակներում, երբ **բանավոր լուսմների անցկացումը ՄԻԵԴ-ն անհրաժեշտ է համարել**.

1) երբ անհրաժեշտություն կա գնահատելու, **թե արդյոք փաստերը ճիշտ են հաստատվել իշխանությունների կողմից** (*լրե՛ս Malhous v. The Czech Republic (գանգաբա թիվ 33071/96) 2001 թ. հուլիսի 12-ի Մեծ Պալատի վճիռը*, § 60),

2) երբ հանգամանքները պահանջում են, որ **դատարանը ձևավորի իր սեփական տպավորությունը դատավարության կողմերի մասին՝** նրանց իրավունք տալով բացատրել իրենց անձնական իրավիճակը՝ իրենց անունից կամ ներկայացուցչի միջոցով (տե՛ս *Göç v. Turkey (գանգաբա թիվ 36590/97) 2002 թ. հուլիսի 11-ի Մեծ պալատի վճիռը*, §51):

Եվ հակառակը՝ ՄԻԵԴ-ը գործի գրավոր ընթացակարգը համատեղելի է դիտարկել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ.

1) երբ չկան փաստերի արժանահավատության կամ վիճարկվող փաստերի հարցեր, որոնք չեն կարող պատշաճ կերպով լուծվել գործի նյութերի և կողմերի գրավոր բացատրությունների (written observations) հիման վրա (տե՛ս *Döry v. Sweden (գանգաբա թիվ 28394/95) 2002 թ. նոյեմբերի 12-ի վճիռը*, §37)).

2) ահմանափակ շրջանակի զուտ իրավական հարցեր շրջափող գործերում (տե՛ս *Affaire Şimşek c. Turquie (գանգաբա թիվ 5488/05) 2012 թ. փետրվարի 28-ի վճիռը*, §31).

3) այն դեպքերում, երբ գործն էապես առնչվում է խիստ տեխնիկական խնդիրների (ՄԻԵԴ-ը, օրինակ, իբրև այդպիսին է գնահատել սոցիալական ապահովության նպաստների հետ կապված վեճերը և նկատել, որ դրանք կարող են քննվել առավելապես գրավոր, քան բանավոր փաստարկներով)(տե՛ս *Döry v. Sweden (գանգաբա թիվ 28394/95) 2002 թ. նոյեմբերի 12-ի վճիռը* § 41.):

Անհրաժեշտ է նաև նկատել, որ ՄԻԵԴ-ը վերաքննիչ դատարանի կողմից գրավոր ընթացակարգով կալանավորման օրինականության վերանայումը չի համարել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում, տե՛ս *Batiashvili v. Georgia (գանգաբա թիվ 8284/07) 2019 թ. հոկտեմբերի 10 վճիռ*, § 68, *Saghinadze and others v. Georgia (Գանգաբա թիվ 18768/05) 2010 թ. մայիսի 27 §149*: Այս առումով նաև ՄԻԵԴ-ը, նշելով, որ Կոնվենցիան չի պահանջում, որ կալանավորված անձը լավի ամեն անգամ, երբ նա բողոքարկում է իր կալանքը երկարացնելու որոշումը, այնուամենայնիվ, պետք է հնարավորություն ունենա իրացնելու իր լավելու իրավունքը ողջամիտ պարբերականությամբ: ՄԻԵԴ-ը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի դատավարական երաշխիքները հարգվում են նաև այն հանգամանքներում, երբ կալանավորված անձն արդեն ներկա է եղել առաջին ատյանի դատարանում, որը որոշում է կայացրել նրա՝ ազատ արձակման միջնորդության վերաբերյալ, սակայն այնուհետև չի ներկայացրել երկրորդ ատյանի դատարանում իրականացվող բողոքարկման վարույթներին, տե՛ս *Çatal v. Turkey (գանգաբա թիվ 26808/08) 2012 թ. ապրիլի 17-ի վճիռը*, § 33-34:

Սակայն, կարծում ենք, ՄԻԵԴ-ի բերված դիրքորոշումների ճիշտ ընկալման համար կարևոր է ուշադրություն դարձնել այն առանցքային հանգամանքի վրա, որ այդ դեպքերում մեղադրյալները վիճարկել են կալանավորման օրինականությունը՝ գտնվելով

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրահանգել, որ այս հարցերի վերաբերությամբ հատուկ վերանայման դատական վարույթում անմիջականության և բանավորության սկզբունքների կենսագործված չլինելը նվազեցնում է մի կողմից մեղադրյալի՝ իր ազատությունից զրկումն արդյունավետ վիճարկելու հնարավորությունները (ի համեմատ բանավոր ընթացակարգի), մյուս կողմից՝ «դատարանից մեղադրյալին հեռացնելը» կարող է նաև բացասաբար անդրադառնալ դատարանի՝ փաստերը գնահատելու և ներքին համոզմունքի հիման վրա որոշում կայացնելու գործընթացի վրա:

Եվ, վերջապես, վերոնշյալ հարցերի վերաբերյալ գրավոր ընթացակարգով հատուկ վերանայումն ինքնին եթե ոչ բացառելու, ապա էապես սահմանափակելու է այդպիսի վարույթի հրապարակայնության հնարավորությունը. գրավոր բնույթով պայմանավորված՝ ինքնին անհնար է դառնում հասարակության ներկայությունը դատավարությանը, որը երաշխիքային առումով և հետընթաց է՝ ի համեմատ հատուկ վերանայումը բանավոր ընթացակարգով իրականացնելու դեպքի:

5. Եզրահանգումներ

Ժամանակի ընթացքում մարդու, նրա արժանապատվության (վեր)արժևորումը առանցքային նշանակություն ունեցավ մայրցամաքային քրեական դատավարության ինկվիզիցիոն տիպի վերացման և «խառը» տիպի դատավարությանն անցման հարցում: Այդպիսի անցման առանցքային տարբերակիչ հատկանիշներից էր մեղադրյալի՝ դատավարության օբյեկտի կարգավիճակից դուրս գալը և քրեական դատավարության սուբյեկտ դիտարկվելը:

«Խառը» դատավարության նախնական (պայմանական «մինչդատական») քննությունը (մասը) թեև ընդհանուր առմամբ կառուցված է(ր) ինկվիզիցիոն սկիզբի հիման վրա, այնուամենայնիվ, դատավարության

անազատության մեջ: Օրենսգրքի կարգավորումներով հնարավոր է հակառակը, երբ առաջին ատյանի դատարանի որոշմամբ մերժվի անձին կալանավորելը (կալանքի ժամկետի երկարաձգումը), սակայն այդ որոշման դեմ դատախազի կողմից բերվի հատուկ վերանայման վերաքննիչ բողոք, և մեղադրյալը, գտնվելով ազատության մեջ, կալանավորվի գրավոր ընթացակարգով իրականացված հատուկ վերանայման շրջանակներում կայացված դատական ակտի հիման վրա:

այդ փուլում արդեն, ելնելով մարդու, նրա արժանապատվության վերարժևորումից, մեղադրյալը հանդես է գալիս իբրև քրեական դատավարության լիիրավ սուբյեկտ:

Դատավարության այս փուլում ճանաչվում են վերջինիս մասնավոր շահերը, դրանց ապահովման նպատակով նա օժտված է մի շարք իրավունքներով, վարույթի այդ մասում կազմակերպվում են մի շարք երաշխիքներ իր իրավունքների ու օրինական շահերի ապահովման համար: Ավելին՝ թեև խառը դատավարության դատական վարույթի այդ սկզբունքները սկզբնապես կազմակերպվել էին քրեական դատավարության քրեաիրավական վեճը լուծող հիմնական (դատական (գործն ըստ էության լուծող) քննության վրա կենսագործման համար, այնուամենայնիվ, ժամանակակից իրավական պետություններում, մարդու, նրա արժանապատվության և հիմնական իրավունքների և ազատությունների հարգման, պաշտպանության և արդյունավետ իրացման գաղափարից դատական վարույթի նշյալ սկզբունքները որոշակիորեն տարածվեցին նաև քրեական դատավարության շրջանակներում անձի իրավունքները սահմանափակող դատական երաշխիքների վարույթի և մասնավորապես՝ անձնական ազատությունը սահմանափակող կալանքի կիրառման կամ դրա երկարաձգման միջնորդությունների քննության դատական վարույթների վրա:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(11)2023

◆ ՏԵՂԵԿՎԱԾ

◆ Այդ սկզբունքների (որոշ չափով) տարածումը քրեական վարույթի նախնական (մինչդատական) քննության (մասի) վրա իր հերթին մեղադրյալի կարգավիճակի շարունակական ամրապնդման համընդհանուր միտումի ցուցիչներից է:

◆ Ի հակառակ դրան, Օրենսգրքի կարգավորումները որոշակիորեն շեղվում են համընդհանուր այդ միտումից՝ հեղինակագ գրանցելով մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ապահովման երաշխիքների հարցում:

Կատարված հետազոտությունը վկայում է, որ Օրենսգրքով գրավոր ընթացակարգի շրջանակներում հատուկ վերանայման բողոքի քննության դեպքում մեղադրյալի հատուկ վերանայման բողոքի պատասխանին հակադիր կողմի պատասխանի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու, դրանց արձագանքելու, հակափաստարկ ներկայացնելու, դրանք վիճարկելու հնարավորության բացակայությունը՝ զուգակցված նշված վարույթի շրջանակներում անմիջականության, բանավորության սկզբունքների

կենսագործված չլինելով, իսկ հրապակայնության սկզբունքի՝ էլ ավելի սահմափակ ծավալով կենսագործվելու հնարավորությամբ՝ ի համեմատ բանավոր ընթացակարգով դատալսումների, կարող է նվազեցնելով ազատությունից զրկված անձի՝ իրեն ազատությունից զրկման իրավա-
չափությունը վիճարկելու երաշխիքները (Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մաս)՝ անձնական ազատության իրավունքի սահմանա-
փակման դատական պաշտպանությունը դարձնել ոչ արդյունավետ (Սահմանադրության 61-րդ հոդված):

Ընդ որում՝ այս համարեքստում պետք է հաշվի առնել նաև այն, որ Օրենսգրքով նախատեսված կարգավորումներով հնարավոր է դառնում առաջին արյանի դատարանի կողմից խնդրո առարկա միջնորդու-
թյունները մերժելու որոշման բողոքարկումը վերաքննիչ դատարանում՝ հատուկ վերանայման կարգով, որպիսի պայմաններում՝ վերաքննիչ
դատարանի կողմից դատական ակտի հատուկ վերանայման արդյունքում կայացվող որոշմամբ, ազատության մեջ գտնվող մեղադրյալի իրավունք-
ներին միջամտությունը կիրականացվի այն նույն ծավալով, ինչ առաջին արյանի դատարանի՝ անձին կալանավորելու (կալանքի ժամկետը երկարաձգելու) որոշմամբ տեղ գտնող միջամտությունն է:

Ի միտն ունենալով այս կարևոր հանգամանքը՝ անձնական ազա-
տության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության համար անհրաժեշտ է, որ ապահովվի այն երաշխիքների նույն ծավալը, ինչ առա-
ջին արյանի դատարանում անձի նկատմամբ կալանք կիրառելու, դրա ժամկետի երկարաձման միջնորդության քննության շրջանակներում է
ապահովվում, եթե մեղադրյալը չի հրաժարվում հավելյալ այդ երաշխիք-
ներից:

Այս համարեքստում դատարանների կողմից Օրենսգրքի՝ գրավոր ընթացակարգ սահմանող նորմերին տրվող այն մեկնաբանությունները, որոնց պայմաններում, ըստ էության, դատարանների համար ստեղծվում է անսահման հայեցողություն գրավոր ընթացակարգով հատուկ վերանայ-
ման դատական վարույթ իրականացնելու՝ առանց գործի բացառիկ հանգամանքների, ինչպես նաև հատուկ վերանայման վարույթը բանավոր ընթացակարգով անցնացնելու մեղադրյալի (պաշտպանության կողմի) միջնորդությունները հաշվի առնելու, խնդրահարույց է Սահմանադրության

27-րդ հոդվածի 5-րդ մասի և Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված՝ անձի հիմնական իրավունքների համապեքստում:

Անհրաժեշտ է շեշտադրել, որ դատարանների՝ օրենքով վերապահված հայեցողության շրջանակներն անսահման չեն, և հայեցողության թույլատրելի սահմաններն ուղղակիորեն կապակցված են անձանց հիմնական իրավունքների հետ: Դատարանները, ելնելով իրենց՝ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության գործառույթային առաքելությունից, միաժամանակ Սահմանադրությամբ սահմանափակված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով (Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մաս), ունեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման և պաշտպանության պարտականություն (Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մաս), որից էլ բխում է, որ վերջիններին՝ օրենքով նախատեսված հայեցողական լիազորությունների սահմանները պետք է սահմանափակված լինեն այնչափ, որ չվրանգեն որևէ հիմնական իրավունք, այդ թվում՝ չհանգեցնեն հիմնական իրավունքի ոչ արդյունավետ պաշտպանության:

Այս համապեքստում առկա վիճակագրական տվյալները ևս վկայում են, որ ազատությունից զրկված անձի՝ իրեն ազատությունից զրկման իրավաչափությունն արդյունավետ վիճարկելու խնդիրն իրականում ունի ոչ թե դրվագային, այլ համակարգային բնույթ:

Ելնելով ողջ վերոգրյալից՝ անհրաժեշտ է, որ մինչև հստակ օրենսդրական փոփոխությունները, առկա կարգավորումների պայմաններում, դատական պրակտիկան ընթանա այն ուղղությամբ, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումների դեմ բերվող հատուկ վերանայման վերաքննիչ բողոքը քննելիս միայն բացառիկ հանգամանքների առկայության և մեղադրյալի՝ բանավոր ընթացակարգով բողոքի վերանայման միջնորդության բացակայության դեպքում միայն դատարանները դրսևորեն Օրենսգրքով նախատեսված իրենց հայեցողությունը՝ վերանայման գրավոր կամ բանավոր ընթացակարգը որոշելու հարցում՝ այլ դեպքերում վարույթն իրականացնելով բանավոր ընթացակարգով:

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(11)2023

Օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկ

1. **Ալեքսանյան Բ.** Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը // Պետություն և իրավունք, 92, No. 1, 2022:
2. **Ղազարյան Ա.** Մինչդատական վարույթի կազմակերպման մոդելները (պատմական և համեմատաիրավական վերլուծություն), Երևան, «Թասկ», 2019:
3. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն) / **Գ.Բ. Դանիելյան, Վ.Ն. Այվազյան, Ա.Ա. Մանասյան:** Ընդհ. Խմբ. Գ. Դանիելյանի, Եր.: Հայրապետ հրատ., 2015:
4. **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - С.-Петербург: Типография товарищества "Общественная польза", 1912.
5. **Глазер Ю.** Руководство по уголовному процессу, Т.1 (пер. А. Лихачева). - СПб, 1884.
6. **Головко Л.В.** Постсоветская теория судебного контроля в досудебных стадиях уголовного процесса: попытка концептуального переосмысления // Государство и право. – 2013. – № 9.
7. Избранные решения Федерального Конституционного Суда Германии. Фонд Конрада Аденауэра в Российской Федерации. – Москва: Инфотропик Медиа, 2018.
8. Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. **Л.В. Головки.** - М.: Статут, 2017.
9. **Полянский Н.Н.** Вопросы теории советского уголовного процесса / Под ред. **Карева Д.С.** - М.: Изд-во Моск. ун-та, 1956.
10. **Полянский НН.** Уголовный процесс. Уголовный суд, его устройство и деятельность: Лекции, Москва, 1911.
11. **Познышев С.В.** Элементарный учебник русского уголовного процесса / [Соч.] С.В. Познышева, проф. Имп. Моск. ун-та. - [Москва] : Г.А. Леман, 1913.
12. **Чельцов-Бebutov М.А.** Обвиняемый и его показания в советском уголовном процессе. - М., 1947.
13. **Alexy R.** Human Dignity And Proportionality Analysis / Espaço Jurídico Journal of Law [EJL], 16(esp), Vol. 16, 2015.

14. **Giannouloupoulos D.** Strasbourg Jurisprudence, Law Reform and Comparative Law: A Tale of the Right to Custodial Legal Assistance in Five Countries//Human Rights Law Review, 2016.

15. **Ryan A.** (2014) Towards a System of European Criminal Justice. 1st edn. Taylor and Francis. (3.3.1 Մրցակցային և ինկվիզիցիոն մոդելների հասկանալի է, ըստ՝ <https://www.perlego.com/book/1664857/towards-a-system-of-european-criminal-justice-the-problem-of-admissibility-of-evidence-pdf> (վերջին մուտքը՝ 7 հուլիսի 2023 թ.):

16. **Vogler R.** A world view of criminal justice, Ashgate Publishing, 2005:

17. **Weigend T.** Learning about the charges: the suspect’s right to information// Europe In Crisis: Crime, Criminal Justice, And The Way Forward. Essays In Honour Of Nestor Courakis, 2017.

18. **Weigend T.** Jurisprudence of the European Court of Human Rights on Suspects’ Rights and its Influence on National Legal Systems, էջ 13, հասանելի հղումը՝ [\(PDF\) ECtHR Jurisprudence on Suspects' Rights \(researchgate.net\)](#) (վերջին մուտքը 05.06.2023).

19. **Enescu R.** Penal Orders for Misdemeanours and Felonies in France: A Procedural Economy at the Expense of the Defence? <https://dialnet.unirioja.es/descarga/articulo/8418920.pdf> (վերջին մուտքը 28.06.23 թ.).

20. **Spencer J.** Hearsay Evidence in Criminal Proceedings. 2nd edn. Bloomsbury Publishing. Hart, 2014.

◊ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ

21. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-1020 որոշում,

22. ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թ. սեպտեմբերի 2-ի ՍԴՈ-1295 որոշում,

23. ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թ. հունիսի 26-ի ՍԴՈ-1421 որոշում,

24. ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 16-ի ՍԴՈ-1453 որոշում,

25. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թ. փետրվարի 12-ի ԵԲՐԴ/0632/01/08 որոշում:

3(111)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

26. Pretto And Others v. Italy (զանգաստ թիվ 7984/77) 1983 թ. դեկտեմբերի 8-ի վճիռ,
27. Beraru v. Romania (զանգաստ թիվ 40107/04), 2014 թ. մարտի 18-ի վճիռ,
28. Cutean v. Romania (զանգաստ թիվ 53150/12) 2014 թ. դեկտեմբերի 2 վճիռ,
29. Colozza v. Italy (զանգաստ թիվ 9024/80) 1985 թ. փետրվարի 12ի վճիռ,
30. Khuzhin and Others v. Russia (զանգաստ թիվ 13470/02), 2008 թ. հոկտեմբերի 23 վճիռ,
31. Toth v. Austria (զանգաստ թիվ 11894/85) 1991 թ. դեկտեմբերի 12-ի վճիռ,
32. A. and others v. The United Kingdom (զանգաստ թիվ 3455/05) 2009 թ. փետրվարի 19-ի Մեծ Պալատի վճիռ,
33. Nikolova v. Bulgaria (զանգաստ թիվ 31195/96) 1999 թ. մարտի 25-ի Մեծ Պալատի վճիռ,
34. Navone and Others v. Monaco (զանգաստներ թիվ 62880/11, 62892/11 and 62899/11) 2013 թ. հոկտեմբերի 24-ի վճիռ,
35. Çatal v. TURKEY (զանգաստ թիվ 26808/08), 2012 թ. ապրիլի 17-ի վճիռ,
36. Yilmaz Aydemir v. Türkiye (զանգաստ թիվ 61808/19), 2023 թ. մայիսի 23-ի վճիռ,
37. Sanchez-Reisse v. Switzerland (զանգաստ թիվ 9862/82) 1986 թ. հոկտեմբերի 21-ի վճիռ,
38. Malhous v. The Czech Republic (զանգաստ թիվ 33071/96) 2001 թ. հուլիսի 12-ի Մեծ Պալատի վճիռ,
39. Göç v. Turkey (զանգաստ թիվ 36590/97) 2002 թ. հուլիսի 11-ի Մեծ պալատի վճիռ,
40. Döry v. Sweden (զանգաստ թիվ 28394/95) 2002 թ. նոյեմբերի 12-ի վճիռ,
41. Affaire Şimşek c. Turquie (զանգաստ թիվ 5488/05) 2012 թ. փետրվարի 28-ի վճիռ,
42. Batiashvili v. Georgia (զանգաստ թիվ 8284/07) 2019 թ. հոկտեմբերի 10-ի վճիռ,
43. Saghinadze and others v. Georgia (զանգաստ թիվ 18768/05) 2010 թ. մայիսի 27-ի վճիռ,

- Այլ երկրների Սահմանադրական դատարանների որոշումներ
44. Չեխիայի Սահմանադրական դատարանի 2009/08/18 - I. ÚS 557/09, վճռի 18-19-րդ կետերը, հասանելի ըստ՝
https://www.usoud.cz/fileadmin/user_upload/ustavni_soud_www/Decisions/pdf/1-557-09.pdf (վերջին մուտքը՝ 05.05.2023 թ.)
Այլ՝
45. https://avalon.law.yale.edu/18th_century/rightsof.asp

ОБЩАЯ ТЕНДЕНЦИЯ СУБЪЕКТИВИЗАЦИИ
ОБВИНЯЕМОГО В КОНТИНЕНТАЛЬНОМ УГОЛОВНОМ
ПРОЦЕССЕ СМЕШАННОГО ТИПА И ПРОТЕКАЮЩИЕ В
ПРОТИВОПОЛОЖНОМ ЕЙ НАПРАВЛЕНИИ АРМЯНСКИЕ
ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ РАЗВИТИЯ (В СВЕТЕ ПЕРЕСМОТРА
РЕШЕНИЙ, ПРИНЯТЫХ ПО ИТОГАМ РАССМОТРЕНИЯ
ХОДАТАЙСТВ О ЗАКЛЮЧЕНИИ ПОД СТРАЖУ (ЕГО
ПРОДЛЕНИЯ) В АПЕЛЛЯЦИОННОМ СУДЕ)

Аннотация

В статье представлены вопросы выхода обвиняемого из статуса объекта уголовного процесса и его продолжительной **субъективизации**, а также обусловленные этим типовые преобразования уголовного судопроизводства, реализация ряда принципов в смешанном судопроизводстве.

В статье рассматриваются генеалогические основания принципов непосредственности, устности, состязательности и гласности, которые появились в уголовном судопроизводстве в связи с переходом к континентальному «смешанному» типу судопроизводства и являются прямой противоположностью принципам организации следственного процесса, и их практическое значение, подчеркивая важную роль

принципов в современной континентальной системе уголовного процесса.

В статье анализируются законодательные регулирования и раскрывается практическое применение данных принципов в рамках рассмотрения ходатайства о заключении обвиняемого под стражу (продлении срока содержания под стражей) в суде первой инстанции.

Кроме того, в работе рассматривается вопрос реализации указанных принципов на законодательном уровне в рамках судебного пересмотра решения суда первой инстанции судом апелляционной инстанции, а также раскрываются проблемы правоприменительной практики, возникшие вследствие законодательных регулирований.

Ключевые слова: письменный процесс, заключение под стражу, право на личную свободу, пересмотр, оспаривание законности заключения под стражу, обвиняемый, объект уголовного судопроизводства, субъект уголовного судопроизводства.

**THE GENERAL TENDENCY OF SUBJECTIVISATION OF THE
ACCUSED IN CONTINENTAL MIXED CRIMINAL PROCEEDINGS
AND CONTRADICTORY ARMENIAN LEGISLATIVE
DEVELOPMENTS (IN THE LIGHT OF THE REVIEW OF DECISIONS
TAKEN FOLLOWING THE EXAMINATION OF APPLICATIONS
FOR REMAND IN CUSTODY (ITS PROLONGATION) IN THE
COURT OF APPEAL)**

Annotation

The article presents the issues of the defendant's withdrawal from the status of the object of criminal proceedings and its prolonged subjectivisation, as well as the resulting typical transformation of criminal proceedings and the implementation of a number of principles in mixed proceedings.

The article examines the genealogical foundations of the principles of immediacy, oral, adversarial and public proceedings, which were born in criminal proceedings in connection with the transition to the continental "mixed" type of proceedings and are in direct contrast to the principles of organization of the investigative process. The article highlights the importance of their functional value, emphasizing the role of principles in the modern continental system of criminal procedure.

The article analyzes the legal norms and reveals the practical application of these principles in the consideration of the petition for the detention of the accused (extension of custody) in the court of first instance.

In addition, the work examines the implementation of these principles at the legislative level in the framework of judicial review of the decision of the court of first instance, by the court of appeal, as well as reveals the problematic aspects of legal practice, formed as a result of the legislative norms.

Keywords: written process, detention, right to liberty, judicial review, challenging the legality of detention, the accused, the object of criminal proceedings, the subject of criminal proceedings.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 30.06.2023 թ., պրվել է գրախոսության 18.10.2023 թ., ընդունվել է տպագրության 25.10.2023 թ.:

DOI: 10.59560/18291155-2023.3-111



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ Սահմանադրական դատարանի
նախագահի խորհրդական,
Հայ-ռուսական համալսարանի դոցենտ,
իրավունքի մագիստրոս,
քաղաքական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ¹**

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է իրավունքի հասկացության ծագումնաբանության համատեքստում իրավունքի էության բացահայտմանը: Ուսումնասիրելով իրավունքի հասկացության ծագումնաբանությունը՝ հետազոտության ընթացքում առանձին ուշադրություն է դարձվել ժամանակակից պայմաններում իրավունքի հասկացության սահմանումներին: Վերլուծելով իրավունք բառի ծագումնաբանության առանձնահատկությունները՝ փաստվել է, որ մի շարք լեզուներով իրավունքը, անգամ բառօգտագործման տեսանկյունից, ունի միևնույն իմաստը:

Հիմնաբառեր. իրավունք, իրավունքի էություն, իրավունքի հասկացություն, սոցիալական կարգավորիչ, իրավական կարգավորում:

Սովորույթը, բարոյականությունը, իրավունքը, քաղաքականությունը և այլն, որպես սոցիալական կարևորագույն կարգավորիչներ, անկյունաքարային նշանակություն ունեն հասարակության ընդհանուր համակեցության կանոնների ձևավորման և պահպանման հարցում: Դարեր ի վեր

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E006):

3(111)2023
◆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ
◆ ՍՏԵՆԵԿՎԻԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
111

հանդիսանալով հասարակությունը ցնցումներից զերծ պահելու կարևորագույն գործիքներ՝ դրանք ոչ միայն փոխլրացրել են մեկը մյուսին, այլ նաև՝ հաջորդել են միմյանց: Ընդունված է համարել, որ սոցիալական կարգավորիչների շարքում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն հենց իրավունքն և քաղաքականությունը, քանզի հասարակական զարգացման, բարդացման և շերտավորման արդյունք են: Այսինքն, հասարակական հարաբերությունների բարդացման, ճյուղավորման արդյունքում, չմերժելով նախկինում ձևավորված և գործող սոցիալական կարգավորիչների գոյությունը՝ և՛ իրավունքը, և՛ քաղաքականությունը առաջացել են որպես բարդացող հարաբերությունների հիմնական կարգավորիչներ: Վերոշարադրյալի տրամաբանությունը կայանում է նրանում, որ նախկինում գործող ավանդույթները, սովորույթները և հասարակական հարաբերությունների այլ կարգավորիչները չէին կարողանում կարգավորել նոր իրողությունների պայմաններում գործող հասարակական հարաբերությունները, ինչն էլ անհրաժեշտություն էր առաջացրել ձևավորել մի նոր գործիքակազմ, որն ի զորու կլիներ կարգավորել հասարակական բարդացող և ճյուղավորվող հարաբերությունները: Հանդիսանալով հասարակական հարաբերությունների հիմնական և անկյունաքարային նշանակություն ունեցող կարգավորիչներ՝ իրավունքը և քաղաքականությունը հաճախ են մրցակցության մեջ մտնում: Իրավաբան և քաղաքագետ գիտնականների բանավեճը հիմնականում կայանում է նրանում, թե այս երկու կարգավորիչներից որն է մյուսով պայմանավորված: Սկզբում առաջացել է իրավունքը, թե՛ քաղաքականությունը, իրավունքն է քաղաքականության հիմքը, թե՛ քաղաքականությունը՝ իրավունքի:

Այս առումով հարկ է ընդգծել, որ հանդիսանալով հատկապես ժամանակակից հասարակությունների կարևորագույն ինստիտուտներից մեկն ու անկյունաքարային նշանակություն ունեցող սոցիալական կարգավորիչը՝ իրավունքը, միևնույնն է, տարիների ընթացքում կկորցնե՞ր իր՝ հասարակական համերաշխության երաշխավորի կարգավորիչ հատկությունն ու սոցիալական նշանակությունը, եթե հասարակական հարաբերությունների բարդացմանն ու շերտավորմանը զուգահեռ չսպասվե՞ր իրավունքի ընկալման միանմանությունը: Այսինքն՝ իրավունքի գոյությանը զուգահեռ՝

քաղաքականությանն է պատկանում ժամանակին համընթաց իրավունքի միանման սահմանման և ընկալման ապահովման առաքելությունը:

Հասարակության բնականոն գոյատևման և զարգացման ընթացքում իրավունքի էությունն ու նշանակությունը լիովին պատկերացնելու համար անհրաժեշտ է բացահայտել իրավունքի հասկացության ծագումնաբանությունը և էությունը:

Չնայած իրավունքի անընդհատ զարգացման և արդիականացման հանգամանքին, առ այսօր գոյություն չունի իրավունքի համընդհանուր ընկալում: Անտիկ շրջանում ձևավորված հասկացության վերաբերյալ ժամանակակից իրավաբանական գրականության մեջ ձևակերպվել են «իրավունքի» տասնյակ-հարյուրավոր սահմանումներ, իսկ պետություններին չի հաջողվել համապատասխան քաղաքականության արդյունքում իրավունքի նկատմամբ ձևավորել համընդհանուր մեկ մոտեցում: Ընդհանուր առմամբ չձևավորելով և չունենալով իրավունքի սահմանման միատեսակ մոտեցում՝ իրավաբան գիտնականները, տարբեր ժամանակների մտածողներն ու փիլիսոփաները բաժանվում են երկու մեծ խմբի, որոնցից մի մասը բնական (չգրված) իրավունքի ջատագավն ու կողմնակիցն է, մյուս մասը՝ պոզիտիվ (գրված) իրավունքի: Ընդ որում, բնական իրավունքի կողմնակիցներն ու, մասնավորապես, դրա հիմնադիրներից Հուգո Գրոցիոսը ընդգծում էր, որ փոփոխվող պոզիտիվիստական իրավունքից բացի (այսինքն՝ քաղաքականությամբ պայմանավորված իրավունքից բացի), որը մարդկանց կամքի արդյունքում ստեղծված երևույթ է, գոյություն ունի հավերժ բնական իրավունք, որը որևէ մեկի կողմից որևէ փոփոխման ենթակա չէ¹:

Ընդհանուր առմամբ, հատկապես վերջին տարիներին իրավունքը շատ է հղլովվում ժամանակակից հասարակությունների խոսույթում: Թե՛ կենցաղում, թե՛ առօրյայում, թե՛ մասնագիտական գրականության մեջ մենք հանդիպում ենք իրավունքի հասկացության տարատեսակ սահմանումների, որոնք ունեն և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ նշանակություն: Երբեմն իրավունքի մեկնաբանությունը որևէ առնչություն չի ունենում անգամ իրավունքի բուն էության հետ:

¹ Гроций Г. О праве войны и мира, 1625 г. // Макуев Р. Х. Теория государства и права. – Москва: Юристъ, 2006. – С. 220.

Մասնագիտական գրականության մեջ իրավունքի սահմանումները ևս իրարից տարբերվում են: Օրինակ՝ Ա. Ղամբարյանի և Մ. Մուրադյանի խմբագրությամբ հրատարակված «Պետության և իրավունքի տեսության» ուսումնական ձեռնարկում իրավունքը սահմանվում է հետևյալ կերպ. «Իրավունքը երկրի բնակչության համամարդկային և անհատական շահերն արտահայտող, հանրային իշխանության կողմից սահմանված և պետական հարկադրանքով ապահովված, հասարակական հարաբերությունները կարգավորող համապարտադիր նորմերի համակարգ է, որին հատուկ է ձևական որոշակիությունը¹»: Այս սահմանման համաձայն՝ իրավունքը քաղաքականության ծնունդ է, քանի որ մի շարք այլ հատկանիշներին զուգահեռ՝ իրավունք կարող է համարվել միմիայն այն երևույթը, որը սահմանվում է բացառապես հանրային իշխանության կողմից: Մեկ այլ գիտնական, Ռ. Մուխանը իր «իրավագիտություն» դասագրքում իրավունքի ձևավորումը կապում է պետության հետ, այսինքն՝ ըստ նրա՝ պետությունը և իրավունքը առաջացել են միաժամանակ, քանզի պետությունը համախմբում է ոչ միայն ազգականներին կամ որոշակի խմբերին, այլ կոնկրետ տարածքի վրա ապրող ողջ բնակչությունը, իսկ գոյություն ունեցող ավանդույթները բոլորի հարաբերությունները կարգավորելու համար այլևս բավարար չէին²: Մեկ այլ գիտնական՝ Ռ.Լ. Խաչատուրովը, «Իրավաբանական հանրագիտարանում» իրավունքը սահմանում է հետևյալ կերպ. «Իրավունքը պետության կողմից հաստատված կամ սանկցավորված (թույլատրված, արտոնված – առանձնացվել է հեղինակի կողմից) ընդհանուր համապարտադիր սոցիալական նորմերի համակարգ է, որը կարգավորում է մարդկանց ու խմբերի, պետական և հասարակական մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների գործողությունները, վարքն ու հարաբերությունները: Իրավունքի կարևորագույն հատկանիշներն են՝ նորմատիվ բնույթը, համապարտադիրությունն ու համընդհանուրությունը, նորմերի հստակությունը, որոշակիությունը և անանձնականությունը, նույնական իրավիճակներում տարբեր մարդկանց նկատմամբ հավասար մասշտաբի կիրառումը³»: Իսկ ահա մեկ այլ ռուսազգի գիտնական Վ.Մ. Սիրիխը, էլ ավելի ընդլայնելով

¹ Պետության և իրավունքի տեսություն, խմբագրությամբ՝ Ա. Ղամբարյանի և Մ. Մուրադյանի, էջ 227:

² Մուխան Ռ.Տ., Իրավագիտություն, դասագիրք, երրորդ հրատ, Մոսկվա, 2013թ. էջ 36:

³ [Хачатуров Р.Л. Юридическая энциклопедия / Под общей редакцией д.ю.н., проф. С. Ш. Чагикяна. - Ер., 2017. - С. 641-642.](#)

«իրավունք» սահմանելու լիազորությամբ օժտված սուբյեկտների շրջանակը, իրավունքը սահմանում է հետևյալ կերպ. «Իրավունքը պետության կողմից սահմանված կամ բնակչության կամ ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների կողմից սահմանված կարգով ընդունված կանոնների համակարգ է»¹: Ընդ որում, հեղինակը սա դիտում է որպես իրավունքի և մյուս բոլոր սոցիալական նորմերի միջև հիմնարար տարբերություն՝ փաստելով, որ պետությունը միակ սոցիալական սուբյեկտն է, որն իրավասու է ընդունել, փոփոխել կամ չեղարկել իրավական նորմերը: Ներկայացված սահմանումները, չնայած միմյանցից տարբերվող մեկնաբանություններին, ընդհանուր առմամբ գալիս են հաստատելու այն կանխավարկածը, որ ժամանակակից իրավաբանական գրականության մեջ, մասնագետների մեծ մասը հակված են իրավունքը դիտարկելու ոչ թե որպես բնական, այլ՝ որպես պետության կողմից սահմանված երևույթ: Բնական և պոզիտիվ իրավունքների տարբերությունների և նմանությունների առումով հարկ է առանձնացնել Գ.Վ. Մալցևի մոտեցումը, համաձայն որի՝ «Բնական բարձրագույն իրավունքը մարմնավորում է բարության և արդարության բոլոր արժեքները, իսկ օրենսդրի կողմից ստեղծված դրական իրավունքն իմաստ ունի և արդարացված է միայն այնքանով, որքանով դա բարություն անելու և արդարություն կերտելու մարդկանց գործնական ունակության արդյունքն է՝ չնայած գայթակղություններին և չարի մուտք ուժերին, բռնությանը և կամայականությանը...»²: Համաձայն այս մոտեցման՝ թե՛ բնական իրավունքի, թե՛ պոզիտիվ իրավունքի գերնպատակը բարիք շնորհելն ու արդարություն սահմանելն է, որով էլ փորձ է արվում բացահայտել իրավունքի էությունը: Այս համատեքստում արդարացի է նշել նաև, որ ժամանակակից պայմաններում նկատվում է պոզիտիվ (գրված) և բնական (չգրված) իրավունքների միաձուլում, որը դրսևորվում է իրենց ժողովրդավարական և իրավական հոչակած ժամանակակից պետությունների սահմանադրություններում մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ամրագրմամբ:

Իրավունքի էությունը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև իրավունք եզրույթի ստուգաբանությունը: Տարբեր ժողովուրդների լեզվամտածողության համատեքստում անհրաժեշտ է

¹ Сырых В.М. Теория государства и права. - М.: Юридический дом «Юстицинформ», 2006. - С. 102-103.

² Мальцев Г.В. Познание права: от юридического позитивизма к новому пониманию права // Теория государства и права / Под ред. Манова Г. Н. - М., 1995. - 336 С.

հասկանալ, թե ինչ նշանակություն, իմաստ և փիլիսոփայություն է դրվել, առհասարակ, «իրավունք» երևույթը հենց իրավունք բառով անվանելիս:

Այսպես, համաձայն Ս. Մալխասյանցի Հայերէն բացատրական բառարանի՝ «իրավունքը» այն է, ինչը արդար և իրավ է¹, իսկ «իրավը», որը հանդիսանում է «իրավունք»-ի արմատը, համաձայն Է. Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանի՝ նշանակում է. իրոք, իրապես, իսկապես, իրավամբ, արդարև, արդարացիորեն, իսկական, արդար²: Շատ պարզ և մակերեսային ուսումնասիրությունն անգամ ցույց է տալիս, որ գրեթե բոլոր լեզուներով «իրավունք» բառն ունի միևնույն իմաստն ու նշանակությունը: Մասնավորապես՝ ռուսերեն *право*, լատիներեն *ius*, ֆրանսերեն *le droit*, գերմաներեն *das Recht*, անգլերեն *law*, ինչպես նաև մի շարք այլ լեզուներում, այդ թվում իսլամական, «իրավունքը» մեկնաբանվում է իբրև արդար և ճշմարիտ: Իրավունք բառի ծագումնաբանության դիտարկումը տարբեր ազգերի ու ժողովուրդների լեզվամտածողության համատեքստում հստակ ի ցույց է դնում, որ բոլոր լեզուներով, անկախ այդ ժողովուրդների միջև գոյություն ունեցող ցանկացած տեսակի տարբերություններից և վերջինների մենթալիտետից, «իրավունք»-ը ընկալվում է առաջնահերթ, որպես արդարություն: Այս նմանությունը, բնավ, չի կարող պատահական լինել, և «իրավունքի» նման մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ իրավունքի առաքելությունը ցանկացած տեսակի շեղումներից հասարակությունը դեպի ճշմարիտն ու արդարությունը ետ բերելն է: Այս համատեքստում բավական է միայն հիշատակել հին հռոմեացի խոշորագույն փիլիսոփա Ցելսին, ըստ որի՝ «իրավունքը» բարու և արդարության արվեստ է³: Այս մոտեցմանն է համապատասխանում նաև «իրավունքի» աճառյանական մեկնաբանությունը, համաձայն որի՝ «իրավունքը» մի շարք այլ նշանակություններին զուգահեռ արդարություն է նշանակում⁴:

¹ Մալխասյանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍԲ Պետական Հրատարակչություն, Երեւան, 1944թ, էջ՝ 174:

² Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ՝ 507:

³ Дождев Д.В. Толкование и применение права: Между искусством и наукой // Труды Института государства и права РАН. - 4/2016. - С. 62

⁴ Աճառյան Հ., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հրայա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երեւան, 1972, էջ՝ 361:

Իրավունքի՝ կամայական շեղումներից հասարակությունը դեպի ճշմարիտն ու արդարությունը ետ բերելու գաղափարը նկատվում է նաև մեծագույն մտածողներից մեկի՝ Ցիցերոնի մոտ, որը իրավունքը կապում էր բնության և մարդու բնական վիճակի հետ: Ըստ նրա՝ «Ճշմարիտ օրենքը (Իրավունքը – առանձնացվել է հեղինակի կողմից) բնությանը համահունչ վիճակն է, որը տարածվում է բոլոր մարդկանց վրա, մշտական, հավերժական, որը պարտականության կատարման կոչ է անում՝ պատվիրելով. արգելելով, հանցանքից վախեցնելով...: ...Նման օրենքի ամբողջական կամ մասնակի վերացման առաջարկը սրբապղծություն է: Այն ինչ-որ կերպ սահմանափակելու գործողությունը թույլատրելի չէ, այն ամբողջությամբ չեղարկելն անհնար է, և մենք ո՛չ սենատի որոշմամբ, ո՛չ էլ ժողովրդի որոշմամբ ազատվել այդ օրենքից չենք կարող: ...Բոլոր ազգերի վրա կտարածվի մեկ հավերժական և անփոփոխ օրենք, ընդ որում, կլինի մեկ ընդհանուր ուսուցիչ և տիրակալ բոլոր մարդկանց համար՝ Աստվածը, Արարիչը, դատավորը, օրենքի հեղինակը: Նա, ով չի հնազանդվում նրան, ինքն իրենից փախած կլինի և, արհամարհելով մարդկային բնությունը՝ դրանով իսկ կրելով ամենամեծ պատիժը... »¹:

Այս մոտեցումը կարծես թե ամփոփում է իրավունքի թե՛ պոզիտիվիստական, թե՛ բնաիրավական մոտեցումները՝ բացահայտելով իրավունքի էությունը և կապելով դրա առաջացման և գործարկման նախադրյալները արդարության վիճակի պահպանման հետ. այն հիմնավորում է մարդու բնական վիճակով: Ասվածից հստակ ընդգծվում է, որ իրավ և արդար է համարվում այն, ինչն ի բնե ստեղծվել և գոյություն ունի, իսկ իրավունքի բացարձակ առաքելությունը բնական տարատեսակ շեղումները վերացնելն ու բնական առաջնային վիճակին բերելն է:

¹ **Цицерон М.Т.** Диалоги (О государстве - о законах), Академия наук СССР, Литературные памятники. - М.: Наука, 1966. - С. 20.

Օգտագործված գրականության ցանկ

1. **Гроций Г.** О праве войны и мира, 1625 г. // Макуев Р. Х. Теория государства и права. – Москва: Юристь, 2006. – С. 220.
2. Պետության և իրավունքի տեսություն, խմբագրությամբ՝ Ա. Ղամբարյանի և Մ. Մուրադյանի, էջ 227:
3. **Մուխան Ռ.Տ.** Իրավագիտություն, դասագիրք, Երրորդ հրատ, Մոսկվա 2013 թ. էջ 36:
4. **Хачатуров Р.Л.** Юридическая энциклопедия / Под общей редакцией д.ю.н. проф. С. Ш. Цагикяна. – Ер., 2017. – С. 641-642.
5. **Сырых В.М.** Теория государства и права. – М.: Юридический дом «Юстицинформ», 2006. – С. 102-103.
6. **Мальцев Г.В.** Познание права: от юридического позитивизма к новому пониманию права // Теория государства и права / Под ред. Манова Г. Н. – М., 1995. – 336 с.
7. **Մալխասեանց Ա.,** Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, Երեւան, 1944թ, էջ՝ 174:
8. **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 507:
9. **Дождев Д.В.** Толкование и применение права: Между искусством и наукой // Труды Института Государства и права РАН. – 4/2016. – С. 62.
10. **Աճառյան Հ.** Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երեւան, 1972, էջ՝ 361:
11. **Цицерон М.Т.** Диалоги (О государстве - о законах) // Академия наук СССР, Литературные памятники. – М.: Наука, 1966. – С. 20.

СУЩНОСТЬ ПРАВА В КОНТЕКСТЕ ГЕНЕАЛОГИИ ПОНЯТИЯ ПРАВА

Аннотация

Статья посвящена раскрытию сущности права в контексте генеалогии понятия права. В ходе исследования генеалогии понятия права особое внимание уделено определению понятия права в современных условиях. Анализируя особенности этимологии слова

право, констатировано, что закон имеет одинаковое значение в ряде языков даже с точки зрения словоупотребления.

Ключевые слова: право, сущность права, понятие права, социальный регулятор, правовое регулирование.

THE ESSENCE OF LAW IN THE CONTEXT OF THE GENEALOGY OF THE CONCEPT OF LAW

Annotation

The article is devoted to revealing the essence of law in the context of the genealogy of the concept of law. Studying the genealogy of the concept of law, during the study, special attention was paid to the definition of the concept of law in modern conditions. Analyzing the features of the etymology of the word law, it was stated that law has the same meaning in a number of languages, even from the point of view of word usage.

Keywords: Law, essence of law, concept of law, social regulator, legal regulation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 10.10.2023 թ., տրվել է գրախոսության 11.10.2023 թ., ընդունվել է տպագրության 13.10.2023 թ.:

DOI: 10.59560/18291155-2023.3-120



ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱԻԴԱ

ՀՀ Սահմանադրական դատարանի
իրավախորհրդատրական վարչության
պետի պարտականությունները
կատարող, ի.գ.թ.



ԱՂԱԲԵԿՅԱՆ ՖԵՆՅԱ

ՀՀ Սահմանադրական դատարանի
իրավախորհրդատրական վարչության
փորձագիտական-վերլուծական բաժնի
առաջատար մասնագետ,
ՀՌՀ միջազգային և եվրոպական իրավունքի
ամբիոնի 1-ին կուրսի մագիստրանտ

**ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ՈՒԺԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ամփոփագիր

Ուսումնասիրությունն ուղղված է Սահմանադիր ուժի էության և նշանակության վերհանմանն ու դոկտրինալ վերլուծմանը՝ սահմանադրական իրավունքի պատմաքաղաքական զարգացման առանձնահատկությունների համատեքստում:

Հեղինակները նպատակադրվում են տարանջատել Սահմանադիր և սահմանված ուժերը և ցուցադրել վերջիններիս ձևավորման ու կենսագործման իրավաքաղաքական առանձնահատկությունները: Հեղինակները գտնում են, որ սահմանված ուժը բխում է Սահմանադիր ուժից, որի միակ

կրողը ժողովուրդն է: Հեղինակները գտնում են, որ Սահմանադիր ուժի բնույթը պայմանավորված է այն ազգային արժեքներով, սկզբունքներով և հիմնարար նպատակներով, որոնց կրողը ժողովուրդն է: Հեղինակների կողմից, հատկապես, ընդգծվում է Սահմանադիր ուժի քաղաքական ներուժը, որը հասունացման որոշակի փուլում և, հատկապես, պատմա-քաղաքական ճգնաժամային զարգացումների պարագայում անխուսափելիորեն գտնում է իր պոզիտիվ-իրավական արտահայտությունը:

Հեղինակների դիտարկմամբ՝ Սահմանադիր ուժի կողմից հաստատագրված արժեքներն ու սկզբունքները անհաղաթահարելի են և օժտված են բացարձակ իրավական իմպերատիվությամբ և ուղենիշային նշանակություն ունեն ողջ իրավակարգի համար: Այդ հիմնարար դրույթները գերակա են ինչպես ներպետական իրավունքի, այնպես էլ միջազգային իրավունքի նկատմամբ և վերջիններս պետք է ընկալվեն, մեկնաբանվեն և կիրառվեն բացառապես սահմանադրի կողմից պետականահաստատ փաստաթղթերում հաստատագրված հիմնարար սկզբունքներին, արժեքներին ու համազգային նպատակներին համահունչ: Սահմանադիր ուժի ինքնարտահայտման արդյունքում ամրագրված հիմնադրույթներին և սահմանադրի սահմանադրական ինքնությանը հակասող ոչ մի արարք թե՛ ներպետական, թե՛ միջազգային-իրավական ռեյիտեֆում չի կարող հավակնել սահմանադրական որակմանը:

Վերոգրյալին հեղինակները հանգում են տեսական փորձի և, մասնավորապես՝ Հայոց պետականության ձևավորման առանցքային և վերաբերելի փորձի փոխկապակցված վերլուծությամբ:

Ուսումնասիրությունը խարսխված է իրավահամեմատական և պատմաիրավական մեթոդների գործարկման վրա:

Հիմնաբառեր. Սահմանադիր ուժ, սահմանված ուժ, Սահմանադիր, սահմանադրական ինքնություն, սահմանադրական մշակույթ, պետականաստեղծ փաստաթղթեր:

1. Սահմանադիր ուժի հասկացությունն ու դոկտրինալ նկարագիրը

Սահմանադրական իրավունքի գիտության զարգացման համատեքստում արժեքանական նշանակություն ունի «Սահմանադիր», «սահմանադրություն» «սահմանադրականություն» հասկացությունների նշանակության վերհանումն ու գիտական հոլովույթում վերջիններիս հստակեցումը:

Եթե «Սահմանադիր» հասկացությունը մեկնաբանենք սուկ բառակազմության տեսանկյունից, ապա վերջինս կնշանակի «սահման դնող»: Հարց է առաջանում. ու՞մ կողմից, ու՞մ նկատմամբ և ի՞նչ սահման է դրվում: Այս հարցերի պատասխանները գտնելու նպատակով նախ՝ անդրադառնանք «Սահմանադիր» բառի՝ բառարաններում պարունակվող ստուգաբանական նշանակությանը.

- սահման դնող, կարգ՝ օրենք սահմանող¹,
- կարգ, կանոն, չափ դնող²,
- որևէ բանի հիմնադրման՝ սահմանման՝ կազմակերպման ծառայող³:

«Սահմանադրություն» բառին հույժ հետաքրքիր բացատրություն է տալիս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը. **«որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին»:**

Գ. Հարությունյանը նշում է. «*«Տեսչութիւն վերին» արտահայտությունը փոխյրացնելով նման «որոշման» սահմանային ու գերակա բնույթը, հատուկ ընդգծում է դրա հիմքում ընկած անփոփոխելի «ի վերուստ տրված» արժեքների առկայությունը*⁴ :

Գտնում ենք, որ հենց այս՝ ի վերուստ տրված, գերակա արժեքներով է պայմանավորված Սահմանադիր ուժի արժեքանական նշանակությունը:

Սահմանադրական իրավունքի ժամանակակից գիտության մեջ Սահմանադիր եզրույթն ընկալվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ իմաստով՝ Սահմանադիրը Սահմանադրությունն ընդունած սուբյեկտն է (constituted power, բառացի՝ սահմանված ուժ). սույն տեսակետը լայն տարածում ունի լեզիզմի մեջ, հատկապես՝ Կելզենի «Մաքուր իրավունք»-ի դոկտրինում, որտեղ իրավունքը նորմերի աստիճանակարգային համակարգ է՝ «մաքուր» տարաբնույթ գաղափարախոսություններից: Իրավական նորմի

¹ **Ստեփան Մալխասեանց**, «Հայերէն բացատրական բառարան», Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, Երեւան, 1945, էջեր 174-175:

² **Սիմոն Գաբամաճեան**, «Նոր բառգիրք հայերէն լեզուի»: Տպագրութիւն Ռ. Սազաեան, Կ. Պոլիս, 1910, էջ 1176: **Գնէլ արքեպիսկոպոս Ճերէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան**, «Հայ լեզուի նոր բառարան»: Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէլյուք, 1992, էջ 771: **Պետրոս Վարդ. Ճիզմէճեան**, «Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան»: Տպարան Անի, Հալէպ, 1957, էջ 1259:

³ **Էդուարդ Բագրատի Աղայան**, «Արդի հայերենի բացատրական բառարան», հատոր 2: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 1271:

⁴ **Գագիկ Հարությունյան**, «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները», - Եր., Նժար, 2005, էջ 13:

ողջ արժեքն ու իմաստը նրա՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմից աստիճանակարգային ենթակայության մեջ է, որի բարձրագույն կետը Սահմանադրությունն է: Սույն պատկերացման համաձայն՝ բոլոր նորմերը բխում են Հիմնական նորմից (Սահմանադրությունից), իսկ այն հարցը, թե ինչ ուժից է բխում վերջինս՝ Կելզենի համար որևէ իրավական նշանակություն չունի: Պոզիտիվիզմի մեկ այլ կարկառուն ներկայացուցիչ Կարլ Շմիթը գտնում էր, որ Սահմանադիր ուժը քաղաքական, մետաֆիզիկական կամ աստվածաբանական կոնցեպտ է և իրավական նշանակությամբ օժտված չէ¹:

Սահմանադիր ուժի լայն ընկալման համաձայն՝ այն ժողովրդի սահմանադրական մշակույթով պայմանավորված, ազգային արժեքների և հիմնարար գաղափարադրոյթների վրա խարսխված կենդանի իրավունքի ուժն է (constituent power, բառացի՝ Սահմանադիր ուժ), որից բխում է ողջ իրավակարգի գործունեությունը:

Սահմանադիր ուժի բացահայտումն ու գիտամեթոդաբանականան վերլուծումը սկիզբ է առել դեռևս 18-րդ դարում, ինչի համար առիթ էին հանդիսացել ժողովրդական լայն շերտերի քաղաքական կամքի կտրուկ դրսևորումները: Մասնավորապես, եվրոպական երկրներում տեղի ունեցած հեղափոխությունները, որոնց արդյունքում ձևավորված պետաիրավական փորձն իր անջնջելի հետքն է թողել սահմանադրական իրավունքի զարգացման ողջ պատմության վրա: Սակայն, մինչ այդ, դոկտորինի ձևավորումը սկսվել էր դեռ 16-17-րդ դարերում կալվինիզմի դպրոցում: Կալվինիստ իրավաբանները պնդում էին, որ ցանկացած քաղաքական ռեժիմի պայմաններում առկա է երկակի սուվերենիտետ. **անձնային ինքնիշխանություն (majestas personalis)**, որի կրողը կառավարողն էր, և **իրական ինքնիշխանություն (majestas realis)**, որի կրող էր համարվում ժողովուրդը²:

Սույն մտքի հետագա զարգացումն ավարտվեց Սահմանադիր ուժի (constituent power) և սահմանված ուժի (constituted power) տարանջատ-

¹ Martin Loughlin «On Constituent Power»// Dowdle, Michael W. and Wilkinson, Michael A., (eds.) Constitutionalism beyond Liberalism. Cambridge, UK: Cambridge University Press, 2017.

² Տե՛ս 6-րդ հղումը:

մամբ¹: Ընդ որում, առաջինը ներկայացնում է այն ուժը, որն օժտում է կառավարող սուբյեկտին իշխանությամբ:

Սահմանդիր ուժի դոկտրինը սահմանադրական իրավունքի գիտության մեջ իր առաջնային կայացումը գտավ Լուսավորության դարաշրջանում և, մասնավորապես՝ Ֆրանսիական հեղափոխության արդյունքում: Այն սնվում է Լուսավորության այն երկու հիմնական գաղափարադրոյթներով, ըստ որոնց՝ քաղաքական ուժի հիմնական աղբյուրը ժողովուրդն է, իսկ Սահմանադրությունը, որպես ստեղծվող փաստաթուղթ՝ ածանցյալ է ժողովրդական ինքնիշխանության ուժից: Այլ կերպ՝ Սահմանադրությունը ժողովրդի Սահմանադիր ուժի իրացման արտահայտությունն է: Այս տեսության համաձայն՝ հասարակության նյութական ուժը վերափոխվում է քաղաքականի, իսկ ամբողջը վերածվում է ժողովրդի (<եղ. - այսինքն, ձևավորվում է constituent power), որից և բխում է կառավարման համակարգի ուժը (constituted power):

Սահմանադիր ուժն օժտված է մեծ քաղաքական ներուժով և պատմական զարգացման կոնկրետ փուլում որքան խորն է արտահայտվում այդ ներուժը, այնքան խորն է իրավական հարթությունում վերջինիս թողած ազդեցությունը: <Ետևաբար՝ Սահմանադիր ուժի էության բացահայտումը միշտ պետք է ուղեկցվի իրավունքի և պետության զարգացման պատմության համակարգային ուսումնասիրմամբ, որպեսզի ըստ արժանվույն վերհանվեն ժողովրդի սահմանադրաիրավական ինքնությունը պայմանավորող հիմնարար արժեքներն ու գաղափարադրոյթները:

Ճիշտ է, Սահմանադիր ուժի կայացումը՝ որպես սահմանադրաիրավական դոկտրին, տեղ գտավ գերազանցապես ֆրանսիական հեղափոխությունից հետո, սակայն մինչ այդ անգլիական իրավունքի դոկտրինում արդեն իսկ մշակվել էին Սահմանադիր ուժի ընկալման և մեկնաբանման որոշ մոտեցումներ:

Այսպես, 18-րդ դարի Մեծ Բրիտանիայում տեսաբանների շրջանում «սահմանդիր ուժ» հասկացությունն օգտագործվում էր հոգնակի թվով՝ constituent powers (սահմանդիր ուժեր)՝ նկատի ունենալով Բրիտանիայի

¹ Սահմանադիր (constituent) և սահմանված (constituted) ուժերի գիտական տարանջատման գաղափարի ջատագովը Էմմանուել Սիյենն է: Մանրամասն տե՛ս “How to think beyond sovereignty: On Sieyes and constituent power”, Lucia Rubinelli, European Journal of Political Theory, 2019, Vol. 18(1) 47–67:

Ժողովրդի բոլոր ներկայացուցիչներին, ովքեր սահմադիր ուժի կրողներ են, ինչը և օժտում է վերջիններին օրենսդիր մարմնի նկատմամբ գերիշխանությամբ: Դեռ 1770 թ.-ին Ջունիուսը նշում էր, որ Համայնքների պալատը կրում է ժողովրդի կամքի մեկնաբանման ու այն Թագին ներկայացնելու պարտականությունը: Եթե ժողովրդի կամքը ձևախեղվում էր, ապա, ինքնըստինքյան, պետական մարմնի իշխանության լեգիտիմությունը հայտնվում էր հարցականի տակ: Ջունիուսը տարանջատում էր «Սահմանադիր» և «ներկայացուցիչ մարմին» հասկացությունները՝ նշելով, որ վերջինս օժտված չէ սկզբնական ուժով (original power), այլ օժտված է ժողովրդի կողմից իրեն դեղեգացված իշխանությամբ: Հետագայում Թոմաս Օլդֆիլդը գրեց. **«Սահմանադիր իշխանությունն ամփոփված է յուրաքանչյուր անգլիացու մեջ՝ արքայազնից մինչև հողագործ (...)»**¹:

Բրիտանական սահմանադրական իրավունքի դոկտրինում տեղ ուներ այն մոտեցումը, ըստ որի՝ Սահմանադիր ուժի սուբյեկտ է հանդիսանում Միացյալ Թագավորության գահակալը, ում կողմից և շնորհված էին գաղութների սահմանադրությունները: Հետագայում, Ջոն Լոքի և այլոց կողմից զարգացվեց այն գաղափարը, ըստ որի Սահմանադիր ուժը կայանում է ժողովրդի՝ ընդդիմանալու իրավունքի մեջ, այն ընկալմամբ, որ ժողովրդի՝ նոր սահմանադրական կարգ ստեղծելու իրավունքը գլուխ է բարձրացնում հատկապես պետական լրջագույն ճնշումների պարագայում²:

Պարզ է, որ նման մտայնության ձևավորման վրա մեծ ազդեցություն է գործել պետության և իրավունքի առաջացման հայրիշխանական մոտեցումը, որը լայնորեն տարածված էր Մեծ Բրիտանիայում: Սահմանադիր ուժի ընկալման այս տրամաբանության մեջ նշմարելի է նաև պետության և իրավունքի առաջացման աստվածաբանական տեսության այն գաղափարը, համաձայն որի՝ Աստծո կողմից մարդկությանը շնորհված երկու սրերից մեկը խորհրդանշում է եկեղեցական իշխանությունը, մյուսը՝ միապետի իշխանությունը: Այսպես՝ այս տեսության համաձայն՝ միապետի

¹ «Five Conceptions of Constituent Power», Joel Colón-Ríosx. Victoria University of Wellington Legal Research Papers, Volume 7 Issue №31, 2017, paper № 127/2017. URL= <http://surl.li/leijq>

² Տե՛ս 9-րդ հղումը, էջ 3-4:

իշխանությունը Աստուծուց է շնորհված, և այդ իսկ պատճառով նա է հանդիսանում Սահմանադիր ուժի միակ աղբյուր¹:

Սահմանադիր ուժի սահմանդրական իրավունքի գիտության մեջ իր դրկտորինալ զարգացումը գտավ հատկապես XVIII-XIXդդ. Ֆրանսիական և եվրոպական այլ երկրներում տեղի ունեցած հեղափոխությունից հետո:

Սահմանադիր ուժի կայացումը փոխկապակցված է սոցիոլոգիական, քաղաքագիտական, տնտեսական, հոգեբանական-մշակութային զարգացման բազմաթիվ ազդակների հետ, որոնք ուղեկցում են Ժողովրդի՝ որպես պատմաքաղաքական սուբյեկտի կայացմանն ու նրա քաղաքական կամքի ձևավորմանը, ինչպես նաև դրա արտաքին իրավական արտացոլմանը: Այս առանձնահատկությունների համատեքստում ձևավորվում է կայուն արժեքների համակարգ, ինչն ածանցյալ է Ժողովրդի էթնոհոգեբանական նկարագրից: Պետականորեն կազմակերպված ցանկացած հասարակություն օժտված է իրավաքաղաքական վարքի ի վերուստ տրված կանոններով, որոնք տվյալ Ժողովրդի պետաիրավական արժեհամակարգի առանցքն են կազմում: Հարկ ենք համարում նշել, որ չնայած այն հանգամանքին, որ այս սկզբունքները դինամիկ զարգացման մեջ են գտնվում և պատմաքաղաքական տարբեր զարգացումներին յուրովի են արձագանքում՝ գտնելով իրենց ձևական-իրավական ինքնարտահայտությունը, սակայն իրենց բուն էությունը հարակայուն և անփոփոխ է: Ինչպես նշվել է 1735 թվականին «Ջենթլմենս մեգազին» լրագրում հրապարակված հոդվածներից մեկում. «(...) լեզալ (պոզիտիվ-իրավական առումով, հեղ.) Սահմանադրությունը (...) միշտ պետք է ստորադաս լինի Աստուծուց տրված Երևույթների բնական Սահմանադրության նկատմամբ»²: Իրականում հենց այս բանաձևն է ապահովում պոզիտիվ Սահմանադրության լեգիտիմությունը. պետաիրավական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումն իրականացնող պետականահաստատ իրավաքաղաքական ակտերը պետք է խարսխվեն Ժողովրդի

¹ Տե՛ս **Полдников Д.Ю.** Двух мечей теория // Православная энциклопедия. - М., 2006. Т. 14. - С. 270-271:

² Տե՛ս 9-րդ հղումը, *The London Magazine or Gentleman's Monthly Intelligencer*, Vol. 3, Craftsman, Sept. 7, No. 427 (1734) at 539-540. For a similar idea in the context of a history of the Roman State published in London in 1781, see Thomas Bever, *The History of the Legal Polity of the Roman State: And the Rise, Progress and Extent of the Roman Laws* (London: Printed for W. Strahan; and T. Caldwell, 1781) at 406.

կենսագոյի հիմնարար սկզբունքների և արժեքների վրա: Հակառակ պարագայում, ինչպես բազմիցս ցույց է տվել իրավակարգերի փլուզման պատմական փորձը, հասարակական իրողությունից վերացարկված իրավակարգը երկար կյանք չի ունենում:

Սահմանադիր ուժը (constituent power) ձևավորվում է դարերի ընթացքում և պայմանավորված է տվյալ ժողովրդի պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններով: Սահմանադիր ուժը ձևավորվում, զարգանում և վերափոխվում է ազգի զարգացմանը զուգընթաց և գերազանցապես պայմանավորված է նրա էթնոգենետիկական նկարագրով և էթնոհոգեբանական վարքագծով: Այս ուժը ձևավորվում է հասարակական գիտակցության մեջ և հիմք է հանդիսանում պետականաստեղծման ողջ գործընթացի, այդ թվում նաև՝ Սահմանադրության ընդունման համար: Սահմանադրության ընդունումը Սահմանադիր ուժի արտացոլման եղանակներից մեկն է, որի միջոցով Սահմանադիրը հաստատագրում է այն գործիքակազմը, որի միջոցով իրենց կենսագործումն են գտնելու հասարակական գիտակցության մեջ արմատավորված պետաիրավական հիմնական արժեքները, սկզբունքներն ու նպատակները: Վերջիններս անմիջականորեն պայմանավորված են ժողովրդի դիմագծով, գենետիկ հիշողությամբ փոխանցվող պատմական փորձով և կախված չեն սահմանված ուժի կամարտահայտությունից:

Սահմանադիր ուժի միակ կրողը ժողովուրդն է: Սահմանադիր ուժը «բնակվում է» ժողովրդի ենթագիտակցության մեջ և գտնում իր իրավաքաղաքական կենսագործումը պետաիրավական կյանքի կարևորագույն ոլորտներում, հատկապես՝ **պետականահաստատ իրավաքաղաքական ակտերի ընդունման գործում:** Այսպես, **Հայ ժողովուրդը, որպես պետականաստեղծ սուբյեկտ, հանդիսանում է Սահմանադիր ուժի կրող:** Պետականաստեղծման ջիղը մեր ժողովրդի էության բնորոշիչներից է, հայ ազգային սկզբունքներից, ինչի մասին, ի թիվս այլնի, վկայում է պետականության վերականգնման համար մղված հայ ժողովրդի բազմադարյա պայքարը: Որպես Սահմանադիր՝ հայ ժողովուրդը ազգային արժեքների, նպատակների և հիմնարար սկզբունքների կերտողն ու կրողն է, և, հետևաբար՝ անկախ պետականության կազմակերպման ձևից, այդ

արժեքները հարակայուն են: Պատմական փորձը, այդ թվում նաև՝ հայոց պատմությունը, բազմիցս ցույց են տվել, որ անկախ հասարկության պետական կազմավորման ճկից, նույնիսկ նույն Սահմանադիր սուբյեկտի կողմից ստեղծված տարբեր պետական կազմավորումների միջև իրավահաջորդության հաստատման փաստից անկախ՝ Սահմանադիր ուժի արժեքանական էությունը պայմանավորող հիմնադրույթները չեն վերանում. նրանք գտնվում են դինամիկ զարգացման մեջ և կախված պատմաքաղաքական զարգացման կոնկրետ ժամանակաշրջանի բազմաբնույթ առանձնահատկություններից՝ վերափոխվում են, սակայն երբեք չեն անհետանում: Վերոնշյալը պայմանավորվում է նրանով, որ **պետականաստեղծ սուբյեկտը նույն ժողովուրդն է՝ իր պատմական անցյալով, ազգային արժեքներով և առանձնահատկություններով, էթնոհոգեբանական վարքագծով, մշակութային, տնտեսական, տնտեսական զարգացման յուրահատկություններով:** Վերոգրյալը վերահաստատվում է նաև պատմական իրողությամբ առ այն, որ, հատկապես, գերտերությունների դեպքում պետական շահերի հիմնական ուղղությունները չեն փոխվում. գուցե փոխվում են դրանք իրագործելու ուղիներն ու գործիքակազմերը, սակայն հիմնական շահերն ու սկզբունքները մնում են անփոփոխ: Չշեղվելով մեր ուսումնասիրության առարկայից՝ նշենք, որ նշվածը մեծամասամբ պատմագիտության և քաղաքագիտության ուսումնասիրման առարկա է, սակայն սահմանադրական իրավունքի գիտության տեսանկյունից ենթակա է ուսումնասիրման՝ պետաիրավական զարգացման առանձնահատկություններին վերաբերելի մասով: Այսպես՝ Հայաստանի առաջին և երրորդ հանրապետությունների միջև իրավահաջորդություն չի հաստատվել, սակայն որպես այդպիսին երկու հանրապետությունների պետականաստեղծ սուբյեկտը մեկն է՝ **Հայ ժողովուրդը**, ով պետականության հիմնարար սկզբունքների և համազգային նպատակների միակ կրողն է, այն միակ լեգիտիմ ուժը, որից բխում է պետականության սահմանադրական ինքնությունը: Նշվածի մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ **Հայաստանի անկախության մասին հռչակագրի նախաբանում ամրագրված է Հայաստանի առաջին հանրապետության ժողովրդավարական ավանդույթները շարունակելու պատգամը, որը Հայաստանի երրորդ հանրապետության համար նույնպես պետականահաստատ նշանակություն ունի:**

Սահմանադիր ուժի ինքնաարտահայտումը սովորաբար տեղ է գտնում պատմաքաղաքական ճգնաժամերի ընթացքում. ինչպիսիք են, օրինակ՝ հեղափոխությունները, հին իրավակարգից նորին անցման ժամանակաշրջանները և այլն: Այս պրոցեսների արդյունքում Սահմանադիր ուժը, ինքնաարտահայտվելով քաղաքական և իրավական հարթություններում, ուրվագծում է նոր իրավակարգի հիմքերը¹:

Հատկանշական է Սահմանադիր ուժի գործարկման ֆենոմենը հնից նոր իրավակարգին անցման ժամանակահատվածում. նոր պետականության և նոր իրավակարգի սահմանադրական հենքը ուղենշելիս Սահմանադիր ուժը հաշվի չի նստում նախկին (մեռած) իրավակարգի հիմունքների հետ, և Սահմանադիր ուժի գործունեությունն ու լեգիտիմությունը չեն կարող որոշվել մեռած իրավունքի չափանիշներով: Հին իրավակարգից նորին անցում կատարելու պարագայում, երբ նախկին իրավակարգի հիմունքները դադարում են գործուն լինելուց և այլևս չեն համապատասխանում հասարակության վերափոխված և վերադասավորված արժեհամակարգին, օբյեկտիվորեն սկսվում են ձևավորվել նոր իրավակարգի հիմքերը, որոնք իրենց արտացոլումն են գտնում ինչպես փաստացի տեղի ունեցող քաղաքական գործընթացներում, այնպես էլ հասունացման որոշակի աստիճանի հասնելուն պես՝ անցումային շրջանի իրավաքաղաքական փաստաթղթերում:

Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը 1951 թվականին *Südweststaat* գործում նշել է, որ սահմանադրական իրավունքում գոյություն ունեն այնպիսի հիմնական սկզբունքներ, որոնք նախասահմանադրական իրավունքի արտացոլանքն են, ինչի ուժով այդ սկզբունքները պարտադիր են Սահմանադրի համար և մնացյալ նորմերի համար հանդիսանում են սահմանադրականության չափանիշ: Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը նաև նշում է, որ նշվածը վերաբերում է նաև Սահմանադրության նորմերին, քանի որ նախասահմանադրական իրավունքի նորմ-սկզբունքները հանդես են գալիս որպես

¹ Նկարագրված գործընթացների ուսումնասիրման գործում նշանակալի է քաղաքական սիներգետիկայի դերը, վերջինս կարիք ունի համակարգային ուսումնասիրման՝ իրավական գործընթացների վրա ունեցած ազդեցության վերհանման համար:

բոլոր իրավանորմերի նկատմամբ գերակայող «բարձրագույն սկզբունքների և հիմնարար որոշումների անքակտելի վերապահում»¹:

Այդպիսի սկզբունքներ պարունակող ակտերը շատ հաճախ ընդունվում են տվյալ ժամանակահատվածում առավելագույն լեգիտիմությամբ օժտված մարմնի կողմից, մինչդեռ վերջինս այդ ակտերի ընդունման համար պոզիտիվ իրավունքով, որպես կանոն, լիազորված չէ: Սակայն, դա ոչ մի կերպ չի կարող վիճարկել այդ ակտերի սահմանադրականությունը, քանի որ վերջիններս անմիջականորեն պայմանավորված են հասարակական հարաբերությունների նյութական և գաղափարաբանական պայմաններով և բխում են նոր իրավակարգի արժեքանությունից: Գ. Հարությունյանը նշում է. «(...) Սահմանադրության արժեքանությունն արժեքների այն համակարգն է, որն ընկած է սահմանադրական իրավակարգավորումների հիմքում: Հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը տեղի է ունենում կենսագոյի հիմնարար արժեքների իմաստավորման ու դրանց շուրջ հասարակական համաձայնության հենքի վրա»²: **Միայն այս արժեքների վրա խարսխված իրավակարգն է օժտվում ճշմարիտ և պետականապահպանության տեսանկյունից՝ կայուն գործունեությամբ:**

Անցումային ժամանակաշրջաններին բնորոշ է իրավունքի երկակիությունը, նոր իրավակարգի «ոգին» և հնի «տառը» բախվելով առաջացնում են բազմաթիվ կոլիզիաներ: Օրինակ՝ նշվածը տեղ գտավ ԽՍՀՄ փլուզման ժամանակահատվածում, երբ խորհրդային հանրապետություններում անցում էր կատարվում հին (խորհրդային) իրավակարգից նոր իրավակարգին: Սակայն, մինչ նոր իրավակարգը կձևավորվեր՝ սկիզբ առավ պոզիտիվ սահմանադրական իրավունքի տեսանկյունից անոմալ իրավական երևույթ. հին և նոր իրավունքների երկակիությունը հանգեցրեց հին (ձևականորեն գործող) իրավակարգից վերացարկված՝ անցումային շրջանի իրավակարգի ձևավորմանը, որն ուղեկցվեց *ultra vires* (լիազորություններից դուրս) ակտերի ընդունմամբ, որոնք կարգավորում էին նոր իրավակարգի կարևորագույն հասարակական հարաբերությունները մինչ նոր կարգերի վերջնական կենսագործումն ու

¹ Избранные решения Федерального Конституционного Суда Германии. Фонд Конрада Аденауэра в Российской Федерации. – Москва: “Инфотропик Медиа”, 2018. – С. 14.

² Տե՛ս 5-րդ հղումը:

Սահմանադրության ընդունումը: Այս ակտերը, ի թիվս այլնի, պարունակում էին կոլիզիոն նորմեր՝ հին և նոր օրենքների միջև առաջացող կոլիզիաները լուծելու նպատակով: Այսպես՝ 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո՝ 1990 թ.-ի դեկտեմբերի 25-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը¹, ըստ որի՝ մինչև Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունումը դադարեցվում էր գործող սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին: Այս և նմանատիպ ակտերն իրենց համակարգային միասնության մեջ կազմավորեցին անցումային շրջանի իրավակարգը, որը հող հանդիսացավ հետագայում նոր իրավակարգի կազմավորման համար: Հին օրենքների գործարկումը շարունակվեց մինչև նոր իրավակարգի վերջնական ձևավորումը: Վերոգրյալն արվում էր իրավական ռեփեֆում որոշակի կայունություն ապահովելու և կարևորագույն հասարակական հարաբերությունները կարգավորելու համար: Այնուամենայնիվ, հնի և նորի այս «պայքարում» հաղթանակը միշտ պատկանում է նորին:

Ամփոփելով վերոշարադրյալը և ամբողջացնելով Սահմանադիր և սահմանված ուժերի հարաբերակցության տեսական վերլուծությունը՝ նշենք, որ ի տարբերություն սահմանված ուժի՝ Սահմանադիր ուժը բացարձակ է և ենթակա չէ ո՛չ սահմանափակման, ո՛չ կարգավորման՝ իրավական մեթոդներով: Ի տարբերություն Սահմանադիր ուժի՝ սահմանված ուժն ինքնին սահմանափակված է հենց Սահմանադրության ու պետականահաստատ այլ փաստաթղթերում արտահայտված Սահմանադրի կամքով:

2. Սահմանադիր ուժի կանխորոշիչ դերը ներպետական իրավունքի ձևավորման և զարգացման գործում

¹ ՀՀ Սահմանադրական օրենքը «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին, 25.12.1990 թ.: URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=71>

Սահմանադիր ուժն ուղղված է պետաիրավական կյանքում ազգային սահմանադրական ինքնության կենսագործմանը: Սահմանադրական ինքնությունը, լինելով ածանցյալ ազգային ինքնությունից, ձևավորվում է ազգային արժեքների, ավանդույթների և նպատակների համակարգի հիման վրա: Պետության և ժողովրդի սահմանադրական ինքնությունը պայմանավորում է վերջիններիս սահմանադրական բնույթը, ուրվագծում է իրավակարգի արժեքային ռելիեֆը: Սահմանադրական ինքնությունն ուսումնասիրման առարկա է հանդիսանում թե՛ քաղաքագիտության, թե՛ փիլիսոփայության, թե՛ սոցիոլոգիայի, թե՛ իրավագիտության համար. նշված բոլոր գործընթացներում սահմանադրական ինքնությունը յուրովի է ինքնաարտահայտվում: Իրավունքի սահմաններում սահմանադրական ինքնությունը արտահայտվում և ձևականացվում է սահմանադրաիրավական հիմնարար փաստաթղթերում՝ գտնելով իր պոզիտիվ-իրավական ամրագրումը: Այս գործընթացին միշտ նախորդում են քաղաքական լրջագույն գործընթացներ, որոնք հանգեցնում են հասարակական կարգի վերափոխումների և վերաարժևորումների, որոնք հասունացման որոշակի մակարդակում համապատասխան ազդեցություն են գործում նաև պոզիտիվ իրավունքում սահմանադրական կարգի բնորոշման վրա:

Սահմանադրական իրավունքը զարգանում է՝ արտացոլելով հասարակական կարգի վրա ներազդող քաղաքական լրջագույն գործընթացները՝ սերտորեն կապվելով պետության և իրավունքի պատմական զարգացման հետ: Սահմանադրական իրավունքի զարգացման օրինաչափությունների ուսումնասիրումն ու վերլուծումը՝ վերացարկված պատմաքաղաքական գործընթացների զարգացման և վերջիններիս քաղաքագիտական նույնականացման գործընթացների ուսումնասիրումից, մեղմ ասած, իրատեսական չէ: Այդ իսկ պատճառով, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության ձևավորման սահմանադրագիտական առանձնահատկություններին՝ հարկ ենք համարում վերհանել պետականաստեղծ այդ գործընթացի՝ սույն ուսումնասիրության տեսանկյունից առանցքային օրինաչափությունները: Այսպես՝ ԽՍՀՄ փլուզման ժամանակահատվածում Հայ ժողովուրդը, որպես Սահմանադիր ուժի կրող, իր պետականաստեղծ կամքն արտահայտեց 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված **Հայաստանի անկախության մասին հռչակագրում՝ հաստատագրելով**

հայ պետականության սահմանադրական ինքնության առանցքային գաղափարահեն արժեքները: Հայաստանի անկախությունը հռչակվեց Արցախյան պայքարի բովում և ԽՍՀՄ փլուզման բեկումնային ժամանակահատվածում: Պատմաքաղաքական հենց այս գործընթացներին զուգահեռ սկսեց ձևավորվել Հայաստանի Հանրապետության իրավակարգի հենքը:

Այսպես՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ազդարարեց Հայաստանի անկախությունը և հիմք դրեց նորաստեղծ պետականության իրավակարգի կառուցմանը: Անկախության հռչակագրի ընդունմանը նախորդել էր պետականագիտության տեսանկյունից մեկ այլ արժեքավոր իրավական ակտի ընդունում, որը հիմնարար դերակատարում ունեցավ Հայաստանի անկախության հաստատման գործում: 1989 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել էր «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումը¹, որը հիմք հանդիսացավ Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունման համար, ինչի մասին վկայում է Հռչակագրի նախաբանը: Ըստ վերջինիս՝ Հայաստանի անկախությունը հռչակվում է՝ *հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա և զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները*: 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումը հիմնարար սահմանադրական փաստաթուղթ է, որը հիմք է հանդիսացել Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունման համար և լիարժեքորեն կիրառելի է սահմանադրական արդարադատության շրջանակներում,

¹ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, 01.12.1989 թ.: URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3153>

քանի որ հենց այդ փաստաթղթով է սկսվել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության սահմանադրական բնորոշումը:

Այս մասին վկայում են նաև անցումային իրավակարգի մի շարք այլ ակտեր: Այսպես՝ 1992 թվականի հուլիսի 8-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին»¹, որում՝ *հիմնվելով միջազգային իրավունքի հիմնադրույթների, ազգերի ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների վրա,*

հայտնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և նրա ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու վճռականությունը,

հավաստելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնահարցի քաղաքական լուծման ուղուն իր հավատարմությունը,

նշելով, որ կապաշտպանի Արցախի հարցի այն լուծումը, որը կընդունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, անընդունելի համարելով մի շարք միջազգային փաստաթղթերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես Ադրբեջանի մաս ամրագրելու փորձերը՝ ՀՀ Գերագույն խորհուրդը որոշեց.

1. Հետևողականորեն սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը:

2. Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում:

Վերոնշյալն ուղղակիորեն հաստատագրում է այն, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության սահմանադրաիրավական բնորոշումը անքակտելիորեն փոխկապակցված է Արցախի (Լեռնային Ղարաբաղի) ինքնորոշման իրավունքի կենսագործման հետ: Եվ Արցախի ինքնորոշման իրավունքի դեմ ուղղված ցանկացած արարք՝ թե՛ ներպետական, թե՛ վերպետական հարթություններում, անհամատեղելի է

¹ ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին, 08.07.1992 թ.: URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3278>

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3 (11) 2023

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի և հայ ազգային սահմանադրական ինքնության հետ: Հանուն Արցախի հայ ժողովրդի պայքարը Հայաստանի երրորդ հանրապետության հիմնարար սահմանադրական նպատակներից է, որով պայմանավորվում է մեր պետականության ինքնիշխանության արժեքանությունը, որից հրաժարվելն օբյեկտիվորեն անհնար է, քանի որ այդ արժեքի կրողը Հայ Սահմանադիրն է՝ Հայ ժողովուրդը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության գետենիկ կապը անխզելի է, քանի որ երկու հանրապետություններն էլ սկիզբ են առել նույն աղբյուրից, նույն քաղաքական գործընթացների արդյունքում, երկուսն էլ ստեղծված են նույն Սահմանադրի՝ Հայ ժողովրդի կողմից, երկուսն էլ վերջինիս պետականաստեղծ ներուժի կենսագործման անմիջական արդյունք են, երկուսի սահմանադրական կարգն էլ խարսխված է նույն արժեքների, սկզբունքների և համազգային նպատակների վրա և մեր երկու պետությունների սահմանադրական ինքնությունը մեկն է և միասնական է: Հայաստանի Հանրապետության հիմնարար սահմանադրական ակտերում գետեղված կարգավորումներից բխում է, որ Արցախի ինքնորոշման իրավունքի դեմ ուղղված ցանկացած գործընթաց և արարք ուղղակիորեն հակասում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանն ու սահմանադրական կարգի անխախտելիությանը, ինչը խարսխվում է Արցախյան գոյապայքարի հայանպաստ լուծման և պատմական արդարության կյանքի կոչման սրբազան նպատակի վրա:

Սահմանադիր ուժի կենսագործման առանձնահատկություններից է նաև այն, որ վերջինս օբյեկտիվորեն չի կարող ստեղծել գործող իրավակարգի դադարեցման, վերացման միջոցներ: Իրավակարգերի «ինքնասպանություն» նախատեսող իրավական միջոցները չեն կարող ամրագրվել: Վերոնշյալի լույսի ներքո հարկ ենք համարում անդադառնալ մեկ այլ կարևոր հանգամանքի. Սահմանադրի կողմից կայացված որոշումները չեն կարող բեկանվել որևիցե մարմնի՝ Սահմանադրի կամքը չարտահայտող ակտով: Նշվածը վերաբերելի է, ի թիվս այլնի, նաև Արցախի Հանրապետության Նախագահի 2023 թ. սեպտեմբերի 28-ի

հրամանագրին, որով փորձ է արվում սանկցավորել Արցախի Հանրապետության ոչնչացմանն ուղղված գործընթացները:

Վերամիավորման մասին որոշումը Հայաստանի երրորդ հանրապետության հիմնարար փաստաթղթերից է, որի հիման վրա հետագայում գործարկվեց սահմանադրական իրավունքի դոկտրինին հայտնի, այսպես կոչված, «մատրյոշկայի էֆեկտը», ըստ որի՝ պետության հիմնարար սահմանադրական փաստաթղթերը, փոխկապակցված լինելով, կազմում են պետության սահմանադրական հիմնարար փաստաթղթերի փաթեթը: Սովորաբար, «մատրյոշկայի էֆեկտի» գործարկումը տեղ է գտնում այդ ակտերի նախաբանների միջոցով, ինչը, ահավասիկ, տեղի է ունեցել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական փաթեթի ձևավորման գործում: Այսպես՝ ՀՀ պետականաստեղծ փաստաթղթերի շարքը, ինչպես նշվեց, չի սահմանափակվում Սահմանադրությամբ. Հայաստանի Հանրապետության հիմնարար փաստաթղթերն են 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումը, որի հիման վրա ընդունվել է Հայաստանի անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագիրը, որը, իր հերթին, հիմք է հանդիսացել ՀՀ Սահմանադրության ընդունման համար, ինչի մասին ուղղակիորեն նշված է Հռչակագրի 12-րդ կետում, և ինչը նաև արձանագրված է Սահմանադրության նախաբանում: Այս հիմնարար փաստաթղթերը միմյանց հետ կապված են նախաբաններում զետեղված հղումների միջոցով և իրենց միասնության մեջ արտացոլում են պետության **սահմանադրաիրավական արժեքանության հիմքը**: Վերոգրյալի տրամաբանությունից բխում է, որ փաթեթը կազմող ակտերը պետք է ընկալվեն իրենց գաղափարական միասնության մեջ¹: Այսպես՝ **ՀՀ Սահմանադրության ոչ մի նորմ չի կարող մեկնաբանվել և առավել ևս կիրառվել՝ վերացարկված Հայաստանի անկախության մասին հռչակագրի՝ հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համագալին նպատակները սահմանող նորմերից:**

¹ Մանրամասն տե՛ս **Агабекян Ф.О.** "Синергетика переходного кризиса и феномен Малой Конституции в период распада СССР" // Конституционный Суд РА: Вестник. - 2(110)2023. - С. 134-193:

Հայաստանի անկախության հռչակագրի հիման վրա ընդունվեցին մի շարք ակտեր, որոնք, հանդիսանալով անցումային իրավակարգի մաս, զետեղեցին այնպիսի իրավադրույթներ, որոնք ուղենշեցին նոր իրավակարգի ձևավորման առանցքային ուղղություններն ու շեշտադրեցին Սահմանադրի կամքը՝ պետաիրավական կարևորագույն հարաբերությունների կարգավորման գործում:

Անդրադառնալով մեր պետականության սահմանադրական ինքնությունը կանխորոշող մեկ այլ հանգամանքի՝ Հռչակագրի նախաբանում նշված 1917-1920 թթ. գոյություն ունեցած Առաջին հանրապետության ժողովրդավարական ավանդույթներին, նշենք, որ սա ևս հիմնարար նշանակությունի ունի պետականաստեղծ գործընթացի համար: Այս դրույթն արտացոլում է Հայաստանի առաջին և երրորդ հանրապետությունների միջև գոյություն ունեցող արժեքաբանական կապը, ինչն անխզելի և անհաղթահարելի է, քանի որ պետականաստեղծ, պետականության միակ կրող հանդիսացող սուբյեկտը նույնն է՝ Հայ ժողովուրդը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ իրավակարգերի գործունությունը ամբողջությամբ կախված է նրանից, թե իրավակարգի գործող հիմունքները որքանով են համապատասխանում հասարակական գիտակցության մեջ արմատավորված պետաիրավական արժեքանությանը:

Գտնում ենք, որ սահմանդիր ուժի ճշմարիտ արտացոլումն իրավակարգի հիմունքները հաստատագրող իրավական ակտերում, ինչպես նաև վերջիններիս կյանքի կոչումը պետականապահպանության երաշխիքներից է: Պետականության գաղափարաբանության մաս են կազմում ազգային արժեքներն ու հիմնարար նպատակները, որոնք իրավակարգի հենքում են դրվում՝ կանխորոշելով պետականության՝ գաղափարաբանական իմաստով ինքնությունն ու սահմանները: Վերադառնալով սկզբում՝ Սահմանադիր բառի նշանակության բացահայտման ժամանակ բարձրացված այն հարցերին, թե ով և ինչ է սահմանում՝ եզրափակենք, որ **Սահմանադիր ուժի կրող Հայ ժողովուրդը սահմանում է Հայոց պետականության ինքնությունը՝ կանխորոշելով այն հիմնարար սկզբունքները, արժեքներն ու նպատակները, որոնք մեր պետական քաղաքականության հրամայականը պիտի դառնան:**

Այս առումով, Սահմանադրությունը Սահմանադիր ուժի խորհրդանիշային արտացոլանքն է: Սահմանադրությունը խորհրդանշում է հասարա-

կական ուժերի միջև կայացած փոխհամաձայնությունը, արտացոլում այն հիմնական արժեքների և նպատակների համակարգը, որոնց պահպանմանն ու կենսագործմանն են ուղղված սահմանադրական գործիքակազմերը: Այստեղ մեծ է սահմանադրական սիմվոլիզի դերը. Սահմանադրությունը, լինելով Ժողովրդի պետականաստեղծ քաղաքական կամքի դրսևորում, սահմանադրական սիմվոլիզմի համակարգի կենտրոնական դերակատարն է և բանաձևում է Ժողովրդի սահմանադրական ինքնությունը: Գտնում ենք, որ Սահմանադրությունը, Անկախության հռչակագիրը և պետականահաստատ այլ փաստաթղթերը, ինքնին լինելով ձևական սահմանադրական իրավունքի գլխավոր փաստաթղթերից, օբյեկտիվորեն չեն կարող արտացոլել Ժողովրդի, այն է՝ Սահմանադրի ինքնությունը պայմանավորող բոլոր արժեքներն ու հիմնարար գաղափարադրույթները. վերջիններիս վերհանումը գերազանցապես պետք է տեղ գտնի իրավափիլիսոփայական հարթությունում՝ ազգային իրավական մտքի զարգացման և պետաիրական ինստիտուտների կայացման պատմությունը համակարգային վերլուծության ենթարկելով: Հաշվի առնելով ներպետական իրավական համակարգի պոզիտիվիզացվածությունը և վերջինիս բնորոշ իրավական մշակույթը, ինչպես նաև ազգային-իրավական ինքնության դեմ ուղղված այն մարտահրավերները, որոնց հաճախ մատնվում են իրավական համակարգերը՝ կարծում ենք, որ պետականահաստատ փաստաթղթերը առնվազն պետք է զսպող գործիքակազմեր նախատեսեն՝ հիմնարար ազգային արժեքների, սկզբունքների և նպատակների իրավական պաշտպանության երաշխավորման համար, այդ թվում նաև՝ վերջիններիս պոզիտիվ ամրագրվածության բացակայության պայմաններում: Քանի որ ոչ թե պոզիտիվ իրավունքում ամրագրված լինելն է նշանավորում ազգային իրավական մտքի հիմնարար սկզբունքներն ու արժեքները, այլ իրենց ի բնե, «ի վերուստ տրված» այդօրինակ որակը և ազդեցությունը պետաիրավական համակարգի ձևավորման և կայացման վրա: Այնուամենայնիվ, ինչքան էլ այդ սկզբունքներն ու արժեքները օբյեկտիվորեն գործեն հասարակական իրավագիտակցության գիտակցական ու ենթագիտակցական շերտերում, միևնույն է, սահմանադրական իրավունքի զարգացման ժամանակակից միտումներն ու վերջիններիս ուղեկցող մարտահրավերները վկայում են այն մասին, որ

ներպետական սահմանադրաիրավական համակարգերը պետք է նախատեսեն ինքնապաշտպանական մեխանիզմներ, որպեսզի կասեցվեն սահմանադրական ինքնության և ազգային դիմագծի թիրախավորման փորձերը, որոնք շատ հաճախ տեղ են գտնում հենց իրավական գլոբալիզացիայի շղարշի ներքո: Ինչպես նաև, հարկ ենք համարում նշել, որ այստեղ երիցս մեծ է ոչ այնքան պոզիտիվ իրավունքի, որքան իրավական մշակույթի գործոնը: Միայն բարձր իրավագիտակցության և զարգացած սահմանադրական մշակույթի պայմաններում է հնարավոր վերոնշյալ արժեքների սահմանադրաիրավական նշանակության վերհանումն ու սահմանադրաիրավական երաշխավորումը:

Գ. Հարությունյանը նշում է. «Սահմանադրական մշակույթի հիմնական տարրերն են հասարակական համակեցության բանական իմաստավորումը, կենսագոյի հիմնարար արժեքների առկայությունը, դրանց շուրջ հասարակական համաձայնությունը, վերջինիս վերարտադրումն ապրելակերպի ու գործելակերպի կանոնների ու համապարտադիր վարքագծի նորմերի միջոցով, դրանց որոշակի համակարգված իրավական բնույթ հաղորդելն ու դրանց նկատմամբ հասարակական որոշակի վերաբերմունքը: (...) Իրավական արժեքանության (աքսիոլոգիայի) տեսանկյունից սահմանադրական մշակույթի ի հայտ գալը պայմանավորված է նրանով, թե որքանով են «Սահմանադիր» հարաբերություններն իրավականորեն արժևորվում, դառնում վարքագծի համընդունելի կանոն»¹:

Պոզիտիվիզմի նեղ կապանքները երբեք թույլ չեն տա իրավունքի նմանօրինակ զարգացում, այդ իսկ պատճառով գտնում ենք, որ գործող համակարգի արժեքային կատարելագործումը պետք է ընթանա իրավական կրթության որակական բարելավմանը և իրավագիտակցության բոլոր տեսակների բարձրացմանը զուգընթաց: Այս համատեքստում հարկ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել այն, որ նույնիսկ պոզիտիվ-իրավական մեխանիզմների առկայության պարագայում դժվար կլինի վերոնշյալ արժեքների սահմանադրաիրավական երաշխավորումը, եթե սահմանադրական համապատասխան մշակույթ ձևավորված չլինի ինչպես հասարակական գիտակցության, այնպես էլ պետաիշխանական մարմինների գործելաոճում:

¹ Տե՛ս 5-րդ հղումը, էջեր 20-21:

Ժամանակակից սահմանադրական իրավունքի զարգացման միտումները վկայում են, որ սահմանադրաիրավական կարգավորումները տեղ ունեն ոչ միայն օրենքի տառի սահմաններում, այլ նաև, ի շնորհիվ ձևավորված քաղաքական և իրավական մշակույթի՝ օրենքից դուրս (extra legem) և օրենքին հակառակ (contra legem) իրավակարգավորման շրջանակներում¹: Սահմանադրական իրավունքը, լինելով ամենազաղափարականացվածն ու իրավունքի բոլոր ճյուղերից ամենամոտը իրավունքի փիլիսոփայությանը՝ իր զարգացման ընթացքում հենվում է ոչ այնքան սահմանված ուժի կամաարտահայտության, որքան Սահմանադիր ուժի կողմից հաստատագրվող արժեքային հրամայականների վրա: Չենք վարանի փաստել, որ **հայ ազգային սահմանադրական ինքնության պահպանությունը երբեմն կախված է բարձրագույն դատական ատյանների, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի՝ պոզիտիվիզմի կապանքները խզելու պատրաստակամությունից, քանի որ Սահմանադրական արդարադատության առաքելությունը անհնար է պարփակել պոզիտիվ իրավունքով, երբեմն խիզախություն է անհրաժեշտ հանուն ազգային իրավունքի արժեհամակարգի պահպանման և հիմնվելով պետականության սահմանադրական արժեքանության վրա՝ վեր կանգնել պոզիտիվ իրավունքից և հանդես գալ որպես հիրավի իրավունքի փիլիսոփայության Դատարան:**

Հասարակական հարաբերությունների ճշմարիտ սահմանադրականացում հնարավոր է միայն այն իրավակարգերում, որտեղ պոզիտիվ իրավունքի հիմունքները համապատասխանում և բխում են հասարակական իրավագիտակցության մեջ արմատավորված կենդանի իրավունքից, արտացոլում են հասարակական ուժերի իրական հարաբերակցությունն ու ուղղված են «կենսագոյի հիմնարար արժեքների իմաստավորմանը», որոնք աղբյուր են հանդիսանում Սահմանադիր ուժի համար: Այն պոզիտիվ-իրավական կարգավորումները, որոնք չեն համապատասխանում կամ պատմաքաղաքական զարգացման որևէ փուլում դադարում են համապատասխանել նշված արժեքներին՝ հավակնում են «մեռած

¹ Մանրամասն տե՛ս **Ղամբարյան Ա.**, «Սահմանադրական իրավունքի զարգացումը contra constitutionem», Հայաստանի Եվրոպական համալսարան 12(02), 2021: **Ղամբարյան Ա.**, «Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացում», Գիտական Արցախ, N3(10), 2021, էջեր 86-97:

իրավունք» որակմանը: Նշենք, որ վերոշարադրյալ օրինաչափությունը մարդկության պատմության ընթացքում բազմաթիվ անգամներ ոտնահարվել է. մասնավորապես, բռնապետությունների և կայսրությունների ձևավորումը գրեթե միշտ ուղեկցվել է հպատակեցված ազգերի և պետությունների դիմագծի համահարթեցման փորձերով, սակայն պատմական փորձը վկայում է այն մասին, որ բռնապետությունների նմանաբնույթ քաղաքականությունները գրեթե միշտ պարտությամբ են պսակվել, քանի որ արժեքային հարթությունում հակասությունների սրումը միշտ ավարտվել է իրավակարգերի փլուզմամբ:

Սահմանադրական հիմնարար ակտերն իրավացիորեն օժտված են գաղափարական մեծ պոտենցիալով՝ արտացոլելով պետական քաղաքականության գաղափարախոսական հենքը: Սահմանադրական իրավունքի տեսանկյունից գաղափարախոսական արժեքավոր աղբյուր է Սահմանադրության նախաբանը և պետականաստեղծ հռչակագրերը: Վերջիններս սովորաբար ամրագրում են այն գերագույն նպատակներն ու սկզբունքները, որոնցով պայմանավորվում է պետականության գոյաբանական առաքելությունը: Հենց այս նորմերում է արտահայտվում Սահմանադիր ուժի էությունը: Այդ սկզբունքներն ամրագրող նորմերի անփոփոխելիությունն ու անհաղթահարելիությունն իրենց օբյեկտիվ յուրահատկությունն է, ոչ թե սահմանված ուժի կամարտահայտությունը: Դատական և օրենսդիր իշխանության մարմինները կարող են իրավական ակտերում վերոնշյալ սկզբունքների այդօրինակ հատկությունն արձանագրել, ինչը ողջունելի է և պետականանպաստ, սակայն նույնիսկ նմանօրինակ պոզիտիվ-իրավական ամրագրումների բացակայությունն ի վիճակի չէ ժխտելու հիմնարար արժեքների և սկզբունքների անփոփոխելիությունը:

Սահմանադրաիրավական նորմերի մեկնաբանման համար ելակետային նշանակություն ունեն դրանց հիմքում ընկած *պատրմական, իրավափիլիսոփայական, ազգային ինքնորոշման, պետականաշինության, համամարդկային արժեքների վերաբերյալ ընկալումներն ու գաղափարները*, որոնք ամփոփված են Սահմանադրության նախաբանի շրջանակներում: Սահմանադրության նախաբանն ուրույն սահմանադրաիրավական արժեք է և սահմանադրի կամքի մեկնաբանման առանցքային գործիք: Լինելով Սահմանադրության օրգանական բաղադրատարրը և

հանդիսանալով Սահմանադրության անփոփոխելի դրույթ (ՍԴՈ-1590, 29.04.2021թ.)՝ Սահմանադրության նախաբանը բովանդակում է աշխարհայացքային հստակ կողմնորոշիչներ, որոնք ամրագրում են հայոց պետականության հասարակա-քաղաքական, արժեքաբանական հենքը, համազգային նպատակները, դրանց ձգտելու և հասնելու միջոցներն ու մոտեցումները, հստակեցնում սահմանադրաիրավական նորմերի մեկնաբանման գաղափարախոսական ուղղվածությունը:

Իբրև ակունք ունենալով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներն և համազգային նպատակները՝ Սահմանադրության նախաբանը կանխորոշում է սահմանադրաիրավական նորմերի հիմքում ընկած ելակետերն ու ուրվագծերը, որոնք անխզելիորեն խարսխված են Հայաստանի անկախության մասին հռչակագրով ամրագրված հանրային իշխանության մարմինների սուբստանցիոնալ պարտավորությունների, ազգային արժեքների և սահմանադրական անանց երաշխիքների վրա:

Սահմանադրության նախաբանը՝ որպես Սահմանադրության նորմերի նպատակային մեկնաբանման ուղենիշ, նախկինում ևս վկայակոչվել է Սահմանադրական դատարանի որոշումներում: Այսպես.

Սահմանադրական դատարանը 2003 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-412 որոշմամբ կարևորել է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի ամրապնդման և Սահմանադրության նախաբանում ամրագրված՝ քաղաքացիական համերաշխության հաստատման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը իր՝ 2010 թվականի հունվարի 12-ի ՍԴՈ-850 որոշման մեջ նշում է. «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի Հանրապետության հիմնարար արժեքներին»:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

տանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին»¹: Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը վերաբերելի է հայ պետականության հիմնարար բոլոր սկզբունքներին և համազգային նպատակներին, որոնք հաստատագրված են Հայաստանի անկախության մասին հռչակագրում և Սահմանադրության նախաբանում:

Սույն որոշումն ակնառու օրինակ է առ այն, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական նորմերի նյութական զարգացման միջոցով պոզիտիվ-իրավական պաշտպանության երաշխիքներ ստեղծեց վերոնշյալ սկզբունքների և նպատակների համար: Նմանատիպ նախադեպերով բարձր դատարանները բնորոշում են պետականության սահմանադրական ինքնությունը և պետական քաղաքականության՝ վերջինիս հետ համադրման իմպերատիվ պահանջ ստեղծել և պայմանավորել դրանով այդ քաղաքականության արդյունքների սահմանադրականությունը:

Նշվածը պետք է տեղ գտնի բոլոր այն դեպքերում, երբ որևէ վտանգ կա թիրախավորելու պետականության սահմանադրական ինքնությունը. լինի դա ներպետական, թե վերպետական հարթություններում: *Իրավական ինտեգրացիոն ոչ մի գործընթաց, ոչ մի միջազգային պայմանագիր, այլ կերպ՝ արտահայտված ոչ մի դիրքորոշում, որը հակասում է հայկական պետականության սահմանադրական ինքնությանը՝ հակասելով հիմնարար փաստաթղթերում ամրագրված սկզբունքներին և նպատակներին, չի կարող սահմանադրական համարվել:* Պետությունը՝ հանձինս պետական մարմինների և պաշտոնատար անձանց, ներպետական և միջազգային հարթություններում իրավաստեղծ և իրավակիրառ գործունեություն իրականացնելիս պետք է առաջնորդվի Սահմանադրության նախաբանում և Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված սկզբունքներով և արժեքներով: **Սահմանադրաիրավական և ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել և կիրառվել՝ ի հակասություն հայ**

¹ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՑՅՈՒՐԻԿՄ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀՀ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀՀ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=56033>

սահմանադրական ինքնությունը պայմանավորող պետականաստեղծ դրույթների: Վերնշյալ հիմնարար սկզբունքներն ու նպատակները պետաիրավական հավերժական արժեքներ են, որոնք իրենց բնույթով վերնորմատիվ են և օբյեկտիվորեն անհաղթահարելի. պոզիտիվ-իրավական ներազդեցության ոչ մի միջոց չի կարող սպառել նրանց պետականահաստատ ներուժը: Նմանատիպ փորձերը սահմանադրականության տեսանկյունից խիստ դատապարտելի և հակաիրավական են: Եվ, առհասարակ, **Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ոչ մի պարագայում չի կարող նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք ի բնե կարող են հակասություն ունենալ դրա նախաբանում ամփոփված արժեքագաղափարական հիմունքների հետ, կամ մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ խեղաթյուրեն դրանց բուն էությունը:**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրական օրենքը «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին, 25.12.1990 թ., URL: https://www.arlis.am/Document_View.aspx?DocID=71
2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, 01.12.1989 թ.:
URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3153>
3. ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին, 08.07.1992 թ., URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3278>
4. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը 2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «ՀՀ և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «ՀՀ և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում

ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով,

URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=56033>

5. **Գագիկ Հարությունյան**, «Սահմանադրականության արդի մարտահրավերները», URL: <https://goo.su/JsEs1n>

6. **Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան**, «Հայ լեզուի նոր բառարան»: Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէյրութ, 1992, 1163 էջ:

7. **Էդուարդ Բագրատի Աղայան**, «Արդի հայերենի բացատրական բառարան», հատոր երկրորդ: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 1271:

8. **Պետրոս Վարդ. Ճիզմէճեան**, «Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան», հատոր երկրորդ: Տպարան Անի, Հալէպ, 1957, 1460 էջ:

9. “How to think beyond sovereignty: On Sieyes and constituent power”, Lucia Rubinelli, European Journal of Political Theory, 2019, Vol. 18(1) 47–67,

10. **Գագիկ Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, - Եր., Նժար, 2005, 672 էջ:

11. **Սիմոն Գաբամանեան**, «Նոր բառգիրք հայերէն լեզուի»: Տպագրութիւն Ռ. Սագաեան, Կ. Պօլիս, 1910, 1398 էջ:

12. **Ստեփան Մալխասեանց**, «Հայերէն բացատրական բառարան», Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, Երեւան, 1945, 174-175 էջեր:

13. «Five Conceptions of Constituent Power», Joel Colón-Ríosx. Victoria University of Wellington Legal Research Papers, Volume 7 Issue №31, 2017, paper № 127/2017, URL= <http://surl.li/leijq>

14. Constitutionalism beyond Liberalism. Cambridge, UK: Cambridge University Press, 2017.

15. Martin Loughlin “On Constituent Power”// Dowdle, Michael W. and Wilkinson, Michael A., (eds.).

16. The London Magazine or Gentleman’s Monthly Intelligencer, Vol. 3, Craftsman, Sept. 7, No. 427 (1734) at 539-540. For a similar idea in the context of a history of the Roman State published in London in 1781.

17. **Thomas Bever**, The History of the Legal Polity of the Roman State: And the Rise, Progress and Extent of the Roman Laws (London: Printed for W. Strahan; and T. Caldwell, 1781) at 406.

18. Избранные решения Федерального Конституционного Суда Германии. Фонд Конрада Аденауэра в Российской Федерации. – Москва: “Инфотропик Медиа”, 2018. – С. 14.

19. **Полдников Д.Ю.** Двух мечей теория // Православная энциклопедия. - М., 2006. Т. 14. - С. 270-271.

ХАРАКТЕРИСТИКА УЧРЕДИТЕЛЬНОЙ ВЛАСТИ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО ПРАВА

Аннотация

Исследование направлено на выявление и проведение доктринального анализа сущности и значения Учредительной власти в контексте специфических особенностей историко-правового развития конституционного права.

Авторы намереваются разграничить Учредительную и учрежденную власти и показать политико-правовые особенности формирования и претворения в жизнь последних. Авторы находят, что учрежденная власть вытекает из Учредительной власти, единственным носителем которого является Народ. Авторы полагают, что сущность Учредительной власти обуславливается теми национальными ценностями, принципами и основополагающими целями, носителем которых является Народ. Авторами особенно подчеркивается политический потенциал Учредительной власти, которая на определенном этапе развития и, особенно, в условиях историко-правовых кризисных развитий неизбежно находит свое позитивно-правовое выражение.

По наблюдениям авторов, ценности и принципы, предопределенные Учредительной властью, непреодолимы и наделены абсолютной правовой императивностью и обладают ориентирующим значением для всего правопорядка. Эти основополагающие положения главенствуют в отношении как внутригосударственного права, так и международного права и должны пониматься, толковаться и применяться исключительно в духе основополагающих принципов, ценностей и национальных целей, предустановленных Учредительной властью в государствообразующих документах. Никакие деяния, противоречащие основополагающим положениям, установленным в результате самовыражения

Учредительной власти, и конституционной идентичности Учредителя как во внутригосударственно-правовом, так и в международно-правовом рельефе не могут претендовать на конституционность.

К вышеизложенному авторы приходят посредством взаимосвязанного анализа теоретического и, в частности, ключевого и относимого опыта формирования Армянской государственности.

Исследование зиждется на сравнительно-правовом и историко-правовом методах.

Ключевые слова: Учредительная власть, учрежденная власть, конституционный учредитель, конституционная идентичность, конституционная культура, государствообразующие документы.

CHARACTERISTICS OF THE CONSTITUENT POWER IN THE CONTEXT OF THE DEVELOPMENT OF ARMENIAN NATIONAL LAW

Annotation

The study is aimed at identifying and doctrinal analysis of the essence and significance of the Constituent Power in the context of the specific features of the historical and legal development of constitutional law.

The authors intend to distinguish between the Constituent and constituted powers, and show the political and legal features of the formation and implementation of the latter. The authors find that constituted power flows from the Constituent Power, the only bearer of which is the People. The authors believe that the essence of the Constituent Power is determined by those national values, principles and fundamental goals, the bearer of which is the People. The authors especially emphasize the political potential of the Constituent Power, which at a certain stage of maturation and, especially, in the conditions of historical and legal crisis developments, inevitably finds its positive legal expression.

According to the authors' observation, the values and principles predetermined by the Constituent Power are irresistible and endowed with absolute legal imperativeness and have guiding significance for the entire legal order. These fundamental provisions prevail in relation to both domestic law and international law and must be understood, interpreted and applied exclusively in the spirit of the fundamental principles, values and national objectives predetermined by the Constituent Power in state-forming documents. No acts that contradict the fundamental provisions established as a result of self-expression of the Constituent Power, and the constitutional identity of the Founder, both in domestic and international legal relief, can claim constitutionality.

The authors arrive at the above through an interrelated analysis of the theoretical and, in particular, the key and relevant experience of the formation of Armenian statehood.

The research is based on comparative legal and historical legal methods.

Keywords: Constituent Power, constituted power, constitutional founder, constitutional identity, constitutional culture, state-forming documents.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.10.2023 թ., տրվել է գրախոսության 06.10.2023 թ., ընդունվել է պատգարության 10.10.2023 թ.:



DOI: 10.59560/18291155-2023.3-149

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

*Начальник Научно-исследовательского
центра прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз
Национальной академии наук
Республики Армения,
преподаватель Международного
университета Евразия,
кандидат юридических наук, доцент*

О ВОПРОСЕ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНСТИТУТА ОСВОБОЖДЕНИЯ ОТ АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

В правоприменительной практике иногда возникают проблемы с применением норм института освобождения от административной ответственности. Одним из факторов, обуславливающих указанную ситуацию, является то, что в Республике Армения данная проблема до сих пор на научном уровне не была изучена. Исходя из этого, автором был проведен анализ норм Кодекса об административных правонарушениях Республики Армения (далее - Кодекс), образующих институт освобождения от административной ответственности. Результаты исследования показывают, что регулирование указанного института имеет недостатки и пробелы, имеются неактуальные регламентации. В частности, одно из оснований освобождения от административной ответственности – передача материалов относительно административного правонарушения на рассмотрение товарищеского суда, общественной организации или трудового коллектива давно не применяется, другое основание – освобождение от ответственности лица, подвергнувшегося трафикингу или эксплуатации людей, фактически является не условием освобождения от ответственности, а обстоятель-

ством, исключающим ответственность и т.д. Также установлено, что неполноценно регламентированы основания освобождения от административной ответственности. Исходя из указанного, автор поставил перед собой цель представить предложения по исправлению недостатков регулирования и восполнению пробелов, связанных с институтом освобождения от административной ответственности. В частности, автор предлагает признать утратившими силу неактуальные нормы, прокомментировать соответствующие понятия, внести в Кодекс необходимые дополнения.

Ключевые слова: освобождение от административной ответственности, административное правонарушение.

Введение

Освобождение от административной ответственности является одним из институтов административного права. Законодатель предусмотрел обсуждаемый институт исходя из того, что необязательно заканчивать производство по делу об административном правонарушении назначением административного взыскания. При этом законодатель определил основания, при которых, хотя наличие состава административного правонарушения и доказано, применение меры административной ответственности нецелесообразно.

Следует заметить, что регламентация указанного института имеет недостатки и пробелы. Исходя из сказанного, целью данного исследования является обоснование необходимости совершенствования института освобождения от административной ответственности. Для обеспечения заявленной цели в качестве исследовательской задачи определено проведение анализа института освобождения от административной ответственности и формулирование предложений по совершенствованию его правового регулирования.

Актуальность исследования обусловлена тем, что правоприменительные субъекты часто нуждаются в комментариях¹,

¹ См. **Իսրայելյան Գ.Վ.**, Թազավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում սահմանված սահմանափակումների պահպանման ուղղությամբ <<

которые позволяют правомерно и эффективно применять рассматриваемый институт, а также отсутствием научных исследований по обсуждаемой проблеме в Республике Армения.

Определение и виды освобождения от административной ответственности.

Освобождение от административной ответственности является институтом административного права, предоставляющим возможность органам, осуществляющим производство по делам об административных правонарушениях, не налагать административное взыскание при наличии условий, предусмотренных Кодексом.

Из указанного определения следует:

- 1) вопрос об освобождении от административной ответственности может возникнуть только в случае, когда лицо совершило проступок;
- 2) от административной ответственности вправе освободить органы, осуществляющие производство - административный суд или административный орган;
- 3) освобождение от административной ответственности выражается в неналожении административного взыскания;
- 4) освобождение от административной ответственности возможно только при наличии предусмотренных Кодексом оснований, не тождественных обстоятельствам, исключающим производство по делу об административном правонарушении¹.

Следовательно:

1. Не может быть и речи о привлечении к административной ответственности и об освобождении от нее в тех случаях, когда в совершенном деянии отсутствуют признаки правонарушения, либо деяние совершено при обстоятельствах, исключающих административную ответственность (крайняя необходимость или необходимая оборона), либо при обстоятельствах, исключающих произ-

նստիկանության կողմից իրականացվող վարչարարության արդյունավետության բարձրացման որոշ հարցեր // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (5), 2021. – С. 67.

¹ См. Никифоров Е.А., Сидоров Е.Т. Некоторые проблемы применения норм института освобождения от административной ответственности // Юридическая наука и правоохранительная практика. - N 4 (42), 2017. – С. 156-157; Իսրայելյան Գ.Վ., Վարչական իրավունք (Ընդհանուր դրույթներ): Քրեատոմատիա: Երևան, Հեղ. իրատ., 2022, - С. 62-64.

водство, например, смерть субъекта, который являлся фигурантом административного производства.

2. Освобождение от административной ответственности не может быть применено, если не доказан факт совершения лицом правонарушения¹.

Кодекс предусматривает следующие виды освобождения от административной ответственности:

1. Передача материалов относительно административного правонарушения на рассмотрение товарищеского суда, общественной организации или трудового коллектива.

Статья 20 Кодекса предусматривает, что “лицо, совершившее административное правонарушение, освобождается от административной ответственности, и материалы передаются на рассмотрение товарищеского суда, общественной организации или трудового коллектива, если с учетом характера совершенного правонарушения и личности правонарушителя в отношении него целесообразно применение меры общественного воздействия.

Материалы относительно лиц, освобожденных от административной ответственности за совершение правонарушений, предусмотренных статьями 126, 129, 133, 159, 163, 174-177 Кодекса, на основаниях, указанных в части первой настоящей статьи, могут быть переданы также на рассмотрение комиссии по борьбе с пьянством, созданной на предприятии, в учреждении, организации и их структурных подразделениях.

Администрация, комиссия по борьбе с пьянством, созданная на предприятии, в учреждении, организации и их структурных подразделениях, товарищеский суд или общественная организация обязаны в десятидневный срок со дня получения материалов сообщить в направивший материалы орган (должностному лицу) о мерах общественного воздействия, примененных в отношении лиц,

¹ См.: **Купеева Л.Ч.** Актуальные проблемы правового регулирования освобождения от административной ответственности // Вестник университета имени Кутафина. - N 1, 2018. - С. 183-184.

совершивших предусмотренные статьями 53, 126, 129, 133, 159, 163, 165, 172, 174-177 Кодекса административные правонарушения”.

Данный вид освобождения от административной ответственности широко применялся в СССР. В современной правоприменительной практике институт освобождения от ответственности на этом основании не реализуется. Несмотря на то, что данная норма формально действует, фактически она давно утратила актуальность (комиссии по борьбе с пьянством, товарищеские суды ныне не существуют, а общественные организации не правомочны применять меры общественного воздействия).

2. Возможность освобождения от административной ответственности при малозначительности правонарушения.

Статья 21 Кодекса предусматривает, что “если совершенное административное правонарушение малозначительно, орган (должностное лицо), уполномоченный (уполномоченное) на решение дела, может освободить нарушителя от административной ответственности и ограничиться устным замечанием.

В случаях, когда нарушение правила дорожного движения было зафиксировано посредством видео- или фотосъемки, установленный частью первой настоящей статьи порядок может применяться также в ходе процедуры обжалования в порядке подчиненности.”.

Кодекс не трактует понятие "малозначительность правонарушения", вследствие чего наблюдаются сложности применения освобождения от ответственности на данном основании. Следует отметить, что некоторые комментарии по обсуждаемому вопросу сформулированы в решении Кассационного суда РА от 13.05.2022 по административному делу № ՎԴ/11707/05/17. Так:

1. Административное правонарушение за несоблюдение требований разметки “Сплошная линия” (в том числе “Стоп-линия”) имеет меньшее значение в случае, если два передних или боковых колеса транспортного средства не пересекли разметку полностью, вследствие чего отсутствует препятствие для других участников дорожного движения или явный риск возникновения аварийной ситуации, а также если правонарушение

было неизбежно совершено вследствие действий или бездействия другого участника дорожного движения.

2. Административное правонарушение, направленное на несоблюдение требований дорожных знаков, имеет меньшее значение в случае, если правонарушение неизбежно было совершено вследствие действий или бездействия другого участника дорожного движения.

3. Административное правонарушение за несоблюдение требований разметки, разделяющей встречные потоки транспортных средств, имеет меньшее значение в случае, если ни одно из колес транспортного средства не пересекло разметку полностью, вследствие чего отсутствует препятствие для других участников дорожного движения или явный риск возникновения аварийной ситуации, а также если правонарушение было неизбежно совершено вследствие действий или бездействия другого участника дорожного движения.

Считаем, что частных комментариев малозначительности правонарушения касательно отдельных проступков на уровне судебных актов недостаточно. Есть необходимость регламентации данного вопроса на уровне закона.

3. Освобождение от ответственности лица, подвергшегося трафикингу или эксплуатации людей.

Статья 21.1. Кодекса предусматривает, что “лицо, подвергшееся трафикингу или эксплуатации людей, освобождается от административной ответственности за правонарушение, которое совершило принудительно, в процессе совершенного в отношении него трафикинга или эксплуатации людей”.

Анализ данной нормы показывает, что при совершении лицом, пострадавшим от трафикинга или эксплуатации людей, деяния по принуждению волевой признак как составляющий элемент вины отсутствует. Следовательно, в данном случае отсутствует юридический состав правонарушения, и лицо не подлежит ответственности, вследствие чего и речи не может идти об освобождении от ответственности. Пункт 1 статьи 247 Кодекса в качестве основания прекращения производства по делам об административных правонарушениях устанавливает отсутствие

факта или состава правонарушения. Таким образом, в данном случае мы имеем дело не с основанием освобождения от административной ответственности, а с прекращением производства.

4. Амнистия.

Статья 21.2. Кодекса предусматривает: “Лицо, совершившее административное правонарушение, по закону “Об амнистии”, принятому Национальным Собранием, может быть полностью или частично освобождено от административной ответственности, а лицо, подвергнутое административному взысканию, может быть полностью или частично освобождено как от основного, так и от дополнительного административного взыскания.”.

Согласно статье 117 Конституции Республики Армения Национальное Собрание по предложению Правительства большинством голосов от общего числа депутатов может принять закон об амнистии.

Анализ вышеуказанных правовых норм и юридической литературы позволяет сделать следующие выводы:

1) амнистия – это закон, вид нормативного правового акта, который принимается законодателем по предложению высшего органа исполнительной власти, как правило, в связи с определенными знаменательными событиями (например, день независимости);

2) амнистия распространяется на неопределенный круг лиц;

3) по амнистии возможно полное либо частичное освобождение:

а) от административной ответственности;

б) как от основного, так и от дополнительного административного взыскания;

4) нормативный правовой акт об амнистии реализуется в виде индивидуального акта, т.е. путем принятия административного акта¹.

Результаты нашего исследования также свидетельствуют о следующем:

1. Непосредственно не регламентирован вопрос об освобождении от ответственности на основании истечения срока давности. Правовая

¹ См. **Իսրայելյան Գ.Վ., Հարությունյան Ա.Ս.**, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Ոստումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան, Ա.Ս. Հարությունյան – Եր: Հեղ. հրատ., 2022. – С. 228-229.

предпосылка для освобождения от ответственности на этом основании предусмотрена. Так, статья 37 Кодекса определяет сроки, по истечении которых административное взыскание не может быть назначено. Однако в перечне оснований не предусмотрено основание освобождения от административной ответственности в результате пропуска срока давности.

2. В Кодексе отсутствует основание освобождения от ответственности в случае примирения потерпевшего и правонарушителя. На практике бывают случаи, когда указанные лица приходят к согласию, мирятся, потерпевший не имеет претензий к нарушителю.

3. Законодатель проигнорировал возможность принятия административного акта об освобождении от административной ответственности по результатам рассмотрения дела. Так, статьей 282 Кодекса предусмотрено два вида постановлений, выносимых по окончании производства по делу об административном правонарушении:

- о назначении административного взыскания;
- о прекращении производства по делу.

Рекомендации по совершенствованию института освобождения от административной ответственности.

Из вышеизложенного анализа следует, что институт освобождения от административной ответственности нуждается в изменениях и дополнениях. Для решения указанных проблем мы предлагаем:

1. Признать утратившей силу статью 20 Кодекса, которая в качестве вида (основания) освобождения от административной ответственности предусматривает передачу материалов относительно административного правонарушения на рассмотрение товарищеского суда, общественной организации или трудового коллектива, поскольку, как уже было отмечено, она давно утратила свою актуальность.

2. В статье 21 Кодекса, которая предусматривает возможность освобождения от административной ответственности при малозначительности правонарушения, прокомментировать понятие “малозначительность правонарушения”. Предлагаем следующую формулировку: “Незначительным правонарушением является деяние,

которое хотя формально содержит состав административного правонарушения, однако с учетом характера совершенного правонарушения и роли правонарушителя, размера ущерба и характера последствий, не причинило значительный ущерб охраняемым общественным отношениям”.

3. Признать утратившей силу статью 21.1 Кодекса, которая предусматривает освобождение от ответственности лица, подвергшегося трафикингу или эксплуатации людей, так как данное обстоятельство по сути не является основанием освобождения от ответственности, а основанием прекращения производства.

4. В качестве основания освобождения от ответственности предусмотреть истечение срока давности, которое, как уже отмечалось, непосредственно не предусмотрено.

Предлагаем внести в Кодекс следующее дополнение:

“Статья 21.3. Освобождение от административной ответственности в связи с истечением срока давности

Лицо освобождается от административной ответственности по истечении сроков, установленных статьей 37 Кодекса”.

5. В качестве основания освобождения от ответственности предусмотреть примирение потерпевшего и нарушителя, так как на практике бывают случаи, когда потерпевший не имеет претензий к нарушителю, а соответствующее основание для освобождения от ответственности не предусмотрено.

Таким образом, предлагаем внести в Кодекс следующее дополнение:

“Статья 21.4. Освобождение от административной ответственности в результате примирения потерпевшего и лица, совершившего административное правонарушение

Лицо, впервые совершившее административное правонарушение, с учетом обстоятельств дела может быть освобождено от административной ответственности при наличии взаимного соглашения о примирении с потерпевшим, основанного на самостоятельном и свободном волеизъявлении”.

Полагаем, что на этом основании лицо может быть освобождено от ответственности при наличии следующих условий:

- 1) лицо совершило проступок впервые либо не совершило новое административное правонарушение в течение года со дня назначения административного взыскания;
- 2) с потерпевшим было достигнуто взаимное соглашение о примирении, основанное на самостоятельном и свободном волеизъявлении.

Соглашение может считаться:

- самостоятельным, если отсутствовало чье-либо вмешательство;
- свободным, если было достигнуто без принуждения другого лица;
- обоюдным, если было достигнуто между потерпевшим и лицом, совершившим проступок;

3) должны быть учтены все обстоятельства дела, например отсутствие обстоятельств, отягчающих ответственность. Следовательно, считаем, что освобождение от ответственности по данному основанию должно быть дискреционным полномочием соответствующего органа.

6. В части 1 статьи 282 Кодекса в качестве вида постановления, выносимого по окончании производства по делу об административном правонарушении, предусмотреть постановление об освобождении от административной ответственности, поскольку, как указывалось выше, производство по делу может быть закончено также освобождением от административной ответственности.

Заключение.

Результаты нашего исследования показали, что:

1. Регулирование института освобождения от административной ответственности имеет недостатки и пробелы, следовательно, нуждается в совершенствовании. В частности, имеется основание для освобождения от административной ответственности (передача материалов относительно административного правонарушения на рассмотрение товарищеского суда, общественной организации или трудового коллектива), которое давно не актуально, другое основание (освобождение от ответственности лица, подвергшегося трафикингу или эксплуатации людей) фактически

является не условием освобождения от ответственности, а обстоятельством, исключающим ответственность, и т.д.

2. Существующие регламентации не позволяют эффективно реализовать указанный институт административного права.

3. Исходя из изложенного, нами прокомментирована проблема освобождения от административной ответственности в соответствии с действующими правовыми нормами и представлены рекомендации по совершенствованию правового регулирования.

Список использованных нормативно-правовых актов и литературы

1. Конституция Республики Армения (с изменениями от 06.12.2015 г.). Правовая информационная система. ՀՀՊՏ 2015.12.21.

2. Кодекс об административных правонарушениях Республики Армения, принят 06.12.1985 г. (с изменениями и дополнениями от 26.06.2023 г.). Правовая информационная система. ՀՄՄՀԳՄՏ 1985/23.

3. Решение Кассационного суда РА от 13.05.2022 г. по административному делу № ՎԴ/11707/05/17.

4. **Купеева Л.Ч.** Актуальные проблемы правового регулирования освобождения от административной ответственности // Вестник университета имени Кутафина. - N. 1, 2018. - С. 181-185.

5. **Никифоров Е.А., Сидоров Э.Т.** Некоторые проблемы применения норм института освобождения от административной ответственности // Юридическая наука и правоохранительная практика. - N. 4 (42), 2017. - С. 153-160.

6. **Իսրայելյան Գ.Վ.**, Թագավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում սահմանված սահմանափակումների պահպանման ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող վարչարարության արդյունավետության բարձրացման որոշ հարցեր // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (5), 2021, էջեր 65-74:

7. **Իսրայելյան Գ.Վ., Հարությունյան Ա.Ս.**, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Ոսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան, Ա.Ս. Հարությունյան – Եր: Հեղ. հրատ., 2022. - 280 էջ:

8. **Իսրայելյան Գ.Վ.**, Վարչական իրավունք (Ընդհանուր դրույթներ): Քրեստոմատիա: Երևան: Հեղ. հրատ., 2022. - 204 էջ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Ամփոփագիր

Իրավակիրառական պրակտիկայում երբեմն խնդիրներ են առաջանում վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի նորմերը կիրառելիս: Դրան նպաստող գործոններից է այն, որ խնդրո առարկան Հայաստանի Հանրապետությունում գիտական հետազոտության առարկա մինչ այժմ չի դարձել: Նշվածից ելնելով՝ հեղինակի կողմից իրականացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը ձևավորող նորմերի վերլուծություն: Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որը նշված ինստիտուտի կարգավորումներն ունեն թերություններ և բացեր, առկա են ժամանակավրեպ նորմեր: Մասնավորապես, հետազոտության արդյունքում պարզվել է վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերից մեկը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելը վաղուց արդիական չէ, մեկ այլ հիմքը՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին պատասխանատվությունից ազատելը, իրականում պատասխանատվությունը բացառող հանգամանք է: Պարզվել է նաև այն, որ վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ամբողջական չեն կանոնակարգված: Նշվածից ելնելով՝ հեղինակը նպատակադրվել է ներկայացնել վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին առնչվող կարգավորման թերությունները շտկելու և բացերը լրացնելու առաջարկություններ: Մասնավորապես, առաջարկվել է ուժը կորցրած ճանաչել

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(111)2023

արդիականությունը կորցրած նորմերը, մեկնաբանել համապատասխան հասկացությունները, Օրենսգրքում կատարել անհրաժեշտ լրացումներ:

Հիմնաբառեր. վարչական պատասխանատվությունից ազատելը, վարչական իրավախախտում:

ON THE ISSUE OF IMPROVING THE INSTITUTION OF EXEMPTION FROM ADMINISTRATIVE RESPONSIBILITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

In law enforcement practice, sometimes there are problems with the application of the norms of the institution of exemption from administrative responsibility. One of the factors contributing to this is that this problem has not been studied at the scientific level in the Republic of Armenia so far. Based on this, the author analyzed the norms of the Code of Administrative Offenses of the Republic of Armenia (hereinafter - the Code), which form the institution of exemption from administrative responsibility. The results of the study show that the regulation of this institution has shortcomings and gaps, there are not relevant norms. In particular, one of the grounds for exemption from administrative liability is the transfer of materials concerning an administrative offense to a comrades court, a public organization or a labor collective, has not been applied for a long time, another reason is the exemption from liability of a person who has been trafficked or exploited by people, in fact, is not a condition for exemption from liability, but a circumstance excluding liability, etc. It is also established that the grounds for exemption from administrative responsibility are insufficiently regulated. Based on the above, the author has set himself the goal of presenting proposals to correct the shortcomings of regulation and fill in the gaps associated with the institution of exemption from administrative responsibility. In particular, the author proposes to invalidate non-current norms, comment on the relevant concepts, and make appropriate additions to the Code.

Keywords: exemption from administrative responsibility, administrative offense.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 04.10.2023 թ., փրվել է գրախոսության 04.10.2023 թ., ընդունվել է փպագրության 13.10.2023 թ.:

давностного срока. В частности, распространение давностного срока к виндикационному иску привело к подмене последнего негативным, в результате чего происходит смешение вещно-правовых способов защиты. Автор также рассматривает целесообразность предлагаемых в науке вариантов разрешения поднятой проблемы в виде согласования сроков исковой давности и узукапии.

Ключевые слова: виндикационный иск, срок исковой давности, право собственности, недвижимость, владение.

Гражданским кодексом Армении установлен общий трехлетний срок исковой давности, и на основании возражения ответчика о пропуске давностного срока (*exceptio temporis*) суд отказывает в предоставлении принудительной защиты прав истца. Истечение срока исковой давности ослабляет защиту нарушенного права, но не влечет прекращение самого субъективного гражданского права¹. Ю.К. Толстой отмечал, что исковая давность “играет активную стимулирующую роль, которая состоит в том, чтобы дисциплинировать участников гражданского оборота, бороться с расхлябанностью, способствовать наиболее рациональному использованию всех объектов собственности”².

Вытекающие из обязательства права, которые не подлежат судебной защите или в защите которых было отказано в связи с пропуском исковой давности, являются натуральными правами³. Д.И. Мейер писал, что “право судебной защиты сопутствует всякому праву, входит в состав самого понятия о праве – право без судебной защиты не право”⁴. Считаем, что позиция Мейера актуальна для рассмотрения вопроса применимости срока исковой давности к виндикационному иску относительно недвижимого имущества, так как отказ в иске об истребовании

¹ Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации [Электронное издание. Редакция 1.0] / отв. ред. А.Г. Карапетов. – М.: “М-Логос”, 2018. – С. 426.

² Толстой Ю.К. Содержание и гражданско-правовая защита права собственности в СССР. – Л., 1955. – С. 190.

³ Основные положения гражданского права: постатейный комментарий к статьям 1–16.1 Гражданского кодекса Российской Федерации [Электронное издание. Редакция 1.0] / отв. ред. А.Г. Карапетов. – С. 892.

⁴ Мейер Д.И. Русское гражданское право. – М., 1997. – С. 237.

недвижимости из чужого незаконного владения приводит к фактическому “прекращению” собственности, так как собственность без владения бессмысленна. Подобная ситуация создает правовую неопределенность: с одной стороны, сохраняется право собственности истца, который вправе распоряжаться вещью, а с другой стороны, владение остается у лица, который не имеет права владеть вещью. В связи с этим в рамках настоящей статьи будет рассмотрен вопрос применимости трехлетнего срока исковой давности к искам о виндикации недвижимого имущества зарегистрированным собственником от незаконного владельца.

Армянское законодательство не ограничивает сроком исковой давности *inter alia* негаторный иск. Согласно статье 344 Гражданского кодекса РА исковая давность не распространяется на требования собственника или иного владельца об устранении всяких нарушений его права, хотя бы эти нарушения и не были соединены с лишением владения (статья 277). Давностный срок *de lege lata* применим к виндикационному иску, в том числе к иску об истребовании недвижимости из чужого незаконного владения. Более того, применение срока исковой давности к виндикационному иску признал также Кассационный суд РА. В частности, определением от 27.12.2017 г. по делу ԵԱԲԴ/3750/02/14 суд отметил следующее: “Если бы воля законодателя была направлена на исключение применения срока исковой давности к требованиям об устранении всех видов нарушений права собственника, то не было бы необходимости специально выделять в обсуждаемой норме (статья 344 Гражданского кодекса РА – Г.С.) нарушения, не связанные с лишением владения (то есть законодатель специально не отметил бы в скобках статью 277 Гражданского кодекса – Г.С.) ... следовательно, к требованиям собственника или законного владельца об устранении нарушений (виндикационные иски), связанных с лишением владения, применяется срок исковой давности”.

В науке вопрос исковой давности по виндикации недвижимости рассматривается в совокупности с институтом приобретательной давности, преследуя цель устранить возможность возникновения периода

неопределенности прав на недвижимое имущество, нахождения вещи в подвешенном состоянии. Согласно статье 187 Гражданского кодекса РА для признания права собственности в силу приобретательной давности необходимо добросовестное, открытое и непрерывное владение недвижимостью как своим собственным в течение десяти лет.

Некоторые предпосылки согласования сроков защиты прав на недвижимое имущество и сроков приобретения права собственности на недвижимость можно наблюдать в следующей позиции Кассационного суда РА. В частности, обращаясь к условию добросовестности владения давностным владельцем, Кассационный суд в определении от 05.04.2013 г. по делу ԵՇԴ/0987/02/09 отметил, что «существенное значение имеет не только отношение фактического владельца к вещи, но и поведение и отношение зарегистрированного собственника к владению его имуществом третьим лицом. Десятилетний срок является сроком, в течение которого действия зарегистрированного собственника могут повлиять на вопрос добросовестности владения узупапиентом вещью как своей собственной, так как в смысле статьи 187 Гражданского кодекса РА только фактическое владение вещью не является основанием признания права собственности за владеющим. ... Поведение и отношение зарегистрированного собственника недвижимого имущества к владению его имуществом третьим лицом без оснований, предусмотренных законом или договором, значимы также с точки зрения статьи 280 Гражданского кодекса РА (статья про отказ от права собственности – Г.С.), так как данная статья в качестве основания отказа от права собственности рассматривает не только наличие письменного документа, но и действия (бездействия) собственника. *Действия зарегистрированного собственника недвижимости, направленные на защиту права собственности, должны осуществляться в течение срока, определенного в статье 187 Гражданского кодекса РА* (курсив наш – Г.С.), до представления фактическим владельцем требования о признании права собственности на основании приобретательной давности».

Можно ли на основании изложенной позиции сделать вывод о том, что Кассационный суд продлил срок защиты прав на недвижимое

имущество до десяти лет, одновременно не конкретизируя, каким именно способом защиты должен воспользоваться собственник? С учетом того, что определение Кассационного суда относится к компоненту добросовестности владения для приобретения права собственности по давности владения, Кассационный суд указал критерии, при наличии которых давностный владелец не может считаться добросовестным. Кассационный суд не обратился к вопросу успешной защиты права собственности, а только лишь реализация правомочий права собственности или совершение зарегистрированным собственником в течение десятилетнего срока действий, направленных на защиту своих прав, свидетельствуют о недобросовестном давностном владении, о том, что собственник не отказался от права собственности, следовательно, при таких условиях давностный владелец не может приобрести право собственности в силу приобретательной давности. Но этой позицией Суд не исключил возможность возникновения периода неопределенности прав на недвижимое имущество. Безусловно, позиция Кассационного суда непоследовательна, так как последний проигнорировал действие короткого срока для защиты права собственности путем представления виндикационного иска. А позиция суда в изложенном деле о том, что *“действия зарегистрированного собственника недвижимости, направленные на защиту права собственности, должны осуществляться в течение срока, определенного в статье 187 Гражданского кодекса РА”*, не свидетельствует о продлении срока исковой давности до десяти лет с учетом также того, что вопрос срока исковой давности к виндикации недвижимости не был предметом рассмотрения судом в рассматриваемом деле.

Следует признать, что трехлетний срок исковой давности является весьма коротким сроком для защиты прав на недвижимое имущество. Для сравнения следует отметить, что согласно статье 902 Германского гражданского уложения притязания, вытекающие из зарегистрированных прав (в том числе виндикационный иск), не подлежат исковой давности. В праве Франции в результате законодательных изменений в 2008 г. был установлен тридцатилетний срок исковой давности для защиты вещных

прав на недвижимость, но Кассационный суд Франции не поддержал подход законодателя, отмечая, что право собственности не подвержено давности, “право собственности не утрачивается его неосуществлением”¹.

Однозначным является то, что право собственности не ограничено сроками, и даже отказ в иске о виндикации недвижимости не является основанием прекращения права собственности. В статье 279 Гражданского кодекса РА перечислены основания прекращения права собственности по принципу *numerus clausus*, и в данном перечне не предусмотрено прекращение права собственности в связи с отказом в виндикационном иске на основании пропуска срока исковой давности. Нет никаких политико-правовых соображений в пользу допущения формирования неопределенности или прекращения права собственности в связи с пропуском короткого давностного срока в условиях действия регистрационной системы прав на недвижимое имущество с высокой публичной достоверностью. Ограничением бессрочности нельзя считать ни истечение исковой давности, ни завладение по давности, поскольку эти сроки текут после оставления вещи собственником, а сам срок права собственности никак не может быть ограничен².

Весьма обоснованно А.В. Егоров и А.М. Ерохова отмечают, что применение трехлетнего срока исковой давности к виндикационному иксу “приводит к ситуациям, когда владелец недвижимости собственником не стал, так как он, например, недобросовестен, но истребовать у него вещь собственник не сможет, так как он пропустил срок исковой давности и суд ему откажет в виндикационном иске (при том что в мотивировочной части будет констатировано, что собственником действительно является истец). Дальше имущество выбывает из оборота, и ситуация может разрешиться только антиправовым путем – либо владелец каким-то образом попадет в Реестр

¹ Court of Cassation, Civil, Civil Chamber 3, July 7, 2015, 14-14.684 [Электронный ресурс]: <https://www.legifrance.gouv.fr/juri/id/JURITEXT000030876344> (См. **Церковников М.А.** Об исковой давности по виндикационному иску // Закон. - 2018. - № 12. - С. 84.)

² **Скловский К. И.** Собственность в гражданском праве: учебное пособие для вузов / К. И. Скловский. – 5-е изд., перераб. и доп. – Москва: Издательство “Юрайт”, 2023. – С. 281 – (Высшее образование). – ISBN 978-5-534-13090-4. – Текст: электронный // Образовательная платформа Юрайт [сайт]. – URL: <https://urait.ru/bcode/516910> (дата обращения: 22.12.2022).

на место собственника, либо, что более вероятно, собственник силой захватит вещь у владельца”¹.

Но следует отметить, что в армянской судебной практике часто происходит подмена виндикационного иска негаторным, с помощью чего суды обходят законодательное регулирование об ограничении виндикационного иска коротким трехлетним давностным сроком. При том что истечение данного срока и наличие решения суда об отказе в виндикации в связи с применением исковой давности не являются основанием возникновения собственности у фактического владельца. Более того, спорным является также возможность признания права собственности за давностным владельцем в связи с истечением десятилетнего срока, так как для приобретения права собственности по давности владения *inter alia* должен быть добросовестным, что, помимо прочего, предполагает владение вещью как своей собственной. Очевидно, что при наличии собственника, который не отказался от своего имущества, более того, предпринимает действия по восстановлению своего владения, владелец не может считаться добросовестным, так как последний осознает, что незаконно владеет чужим имуществом. А незаконное длительное владение является захватом чужого имущество, и было бы странно, если бы законодатель предоставлял такому захватчику право собственности.

К. Габузян считает, что для судов проблематичной является квалификация того или иного требования относительно недвижимого имущества в качестве виндикационного или негаторного, от чего зависит и вопрос применения срока исковой давности². В частности, автор ссылается на следующие дела. В рамках дела ՇԴ/0911/02/18 суд квалифицировал иск о выселении ответчиков, которые фактически владели недвижимым имуществом, как негаторный и не применил срок исковой давности, удовлетворив его. А в рамках дела ՇԴ/0069/02/18 суд

¹ Егоров А.В., Ерохова М.А., Ширвиндт А.М. Обобщение применения арбитражными судами норм ГК РФ о вещно-правовых способах защиты права // Вестник гражданского права. - 2007. - № 4 (авторы раздела III – Егоров А.В., Ерохова М.А.).

² Քրիստինե Գաբուզյան, Հայցային վաղեմության ժամկետի կիրառությունը նեգատոր և վիճակագրի հայցերի նկատմամբ // Պետություն և իրավունք: Եր: 2020, թիվ 3 (88), էջ 23:

состоянии. Неопределенность может прекратиться лишь приобретением ответчиком права собственности в силу приобретательной давности, что также является проблематичным, о чем речь пойдет далее.

В науке встречались предложения установить одинаковые сроки исковой давности по виндикации и приобретательной давности¹. В советской литературе встречались позиции относительно того, что после пропуска собственником срока исковой давности по виндикационному иску вещь становится бесхозной. Б.Б. Черепяхин отмечает, что “бесхозность этих вещей после пропуска собственником срока исковой давности по виндикационному иску мотивируется тем, что раз собственник потерял право на иск, то вещь тем самым будто бы становится бесхозной, потому что право бывшего собственника должно считаться прекратившимся и, поскольку приобретательной давности у нас нет, никто этого права не приобрел”². В условиях действия регистрационной системы прав на недвижимое имущество подобное решение проблемы неприменимо.

В качестве решения проблемы применения короткого трехлетнего давностного срока к виндикационному иску недвижимости К. Габузян предлагает установить срок, равный сроку, по которому давностный владелец может достичь признания права собственности. Более того, в связи с тем, что расчет этих сроков может не совпадать, так как для добросовестного владельца срок течет с момента владения, а для собственника срок исковой давности течет с момента, когда последний узнал о нарушении, автор предлагает установить десятилетний объективный давностный срок защиты прав собственника. Десятилетний срок исковой давности, по мнению К. Габузян, должен течь с момента перехода вещи во владение ответчика – давностного владельца, и по истечении данного срока “будет исключена защита прав собственника”³.

Казалось бы, решение установления равных сроков для виндикации недвижимости и приобретения права собственности узукапиентом

¹ Генкин Д.М. Право собственности в СССР. – М., 1961. – С. 215.

² Черепяхин Б.Б. Приобретение права собственности по давности владения. Труды по гражданскому праву. [Электронный ресурс]: <http://civil.consultant.ru/elib/books/22/>

³ Բրիստինե Գաբուզյան, նյւն տեղում, էջ 31:

является удачным, но считаем, данная позиция также несовершенна. В частности, истечение условно установленного срока исковой давности, который равен сроку приобретения права собственности по давности, автоматически не создает основания для давностного владельца добиться признания права собственности. В частности, кроме владения вещью на протяжении определенного законом времени, необходимо наличие также иных критериев, *inter alia* владелец должен владеть вещью добросовестно и как своей собственной. В связи с этим следует согласиться с мнением Д.В. Мурзина о том, что “такой владелец (незаконный владелец – Г.С.) все равно не будет признаваться давностным владельцем, поскольку он является заведомо недобросовестным (знает о том, что имущество имеет собственника). Поэтому, например, арендатор, во владении которого остается имущество при отказе собственнику в удовлетворении иска о возврате имущества, по действующему законодательству никогда не сможет стать собственником имущества по давности владения”¹. А.В. Егоров и А.М. Ерохова также считают, что “с учетом действующих правил о приобретательной давности ... если владелец не является добросовестным, он никогда не станет собственником, а невладельчий собственник не сможет вернуть себе владения без правонарушения (самовольного захвата и т.п.)”².

В доктрине гражданского права существуют различные конструкции согласования сроков исковой давности по виндикации вещи и приобретения права собственности по давности владения. Варианты сочетания данных сроков детально изложены в докторской диссертационной работе Д.В. Мурзина, который выделяет следующие варианты: а) исковая и приобретательная давности могут начать течь одновременно; б) приобретательная давность начинает течь раньше, чем исковая (по-видимому, наиболее распространенный вариант); в) приобретательная давность начнет течь позднее, чем исковая (редкие

¹ Мурзин Д.В. Виндикационная модель защиты абсолютных имущественных прав в российском гражданском праве: докторская диссертация ... д. ю. н. - Москва, 2022. - С. 62

² Егоров А.В., Ерохова М.А., Ширвиндт А.М. Обобщение применения арбитражными судами норм ГК РФ о вещно-правовых способах защиты права // Вестник гражданского права. - 2007. - № 4 (авторы раздела III – Егоров А.В., Ерохова М.А.).

случаи, когда первоначальное незаконное владение не отвечает признакам владения давностного, но у правопреемников эти признаки появляются)¹.

С учетом действующих условий возникновения у узупаиента права собственности в силу давности владения ни один из изложенных вариантов параллельного течения сроков не может обеспечить стабильность и определенность оборота недвижимости, так как кроме критерия фактического владения в течение длительного времени необходимо наличие иных условий, необходимых для приобретения права собственности в силу приобретательной давности. Поэтому не исключается наступление периода неопределенности в отношении прав на заданное имущество. В связи с этим для устранения подобной неопределенности любая конструкция согласования срока исковой давности и срока приобретательной давности требует переосмысления института приобретательной давности. Переосмысление данного института, в числе прочего, должно выражаться в отказе от критериев добросовестности и владения вещью как своей собственной. Но считаем, что в условиях действия в Армении регистрационной системы прав на недвижимое имущество, которая имеет высокую публичную достоверность, следует предусмотреть больше гарантий в пользу защиты прав зарегистрированного собственника, следовательно, следует сохранить действующую концепцию института приобретательной давности.

Например, в Англии давностный владелец может приобрести право собственности при наличии двух условий: фактического владения и намерения владеть (*corpus* и *animus*), продолжающихся на протяжении определенного срока. В частности, нет требования добросовестного владения узупаиентом. В связи с этим Палата лордов по делу *J. A. Pye (Oxford) Ltd v. Graham [2003]*² отметила, что узупаиент не должен

¹ Мурзин Д.В. Виндикационная модель защиты абсолютных имущественных прав в российском гражданском праве: докторская диссертация ... д. ю. н. - Москва, 2022. - С. 65.

² Супруги Грэм (Graham) занимали участок на основании договора об использовании земли под пастбище (grazing agreement), после истечения срока действия договора об использовании земли под пастбище собственник отказался заключить договор на новый срок. Несмотря на получение требования об освобождении земельного участка по истечении срока действия договора 1983 года, супруги Грэм по-прежнему продолжали владеть им и использовать его под пастбище. Не было сделано никаких требований об освобождении земельного участка или об уплате стоимости использования участка под пастбище. Владельцы добились признания права собственности по

доказывать владение вещью как собственник, необходимо лишь фактическое владение и намерение владеть вещью, которое выражается в устранении всех третьих лиц, в том числе собственника, от доступа к вещи. Таким образом, давностный владелец может претендовать на получение права собственности после истечения двенадцатилетнего срока исковой давности, в течение которого собственник вправе истребовать недвижимость от фактического владельца¹. Более того, по упомянутому делу собственник подал жалобу в Европейский суд по правам человека, который посчитал, что вмешательство в право собственника является оправданным и английское право предусмотрело пропорциональные меры ограничения права собственности².

По законодательству Финляндии не предусмотрена возможность приобретения права собственности на недвижимое имущество третьего лица только фактическим владением, а зарегистрированный собственник вправе без временных ограничений истребовать имущество из незаконного владения³.

Кроме указанных вариантов устранения противоречивого регулирования, которое допускает формирование “голого” права собственности, также предлагается нераспространение исковой давности на виндикационные требования. Как уже было указано, такого подхода придерживается немецкое законодательство относительно виндикации недвижимости. В качестве обоснования неприменения давностного срока к искам об истребовании вещи из чужого незаконного владения Р. Циммерман пишет: “Виндикационный иск представляет собой притязание, предназначенное для того, чтобы дать полный эффект абсолютному праву собственности. Поэтому он не должен затрагиваться исковой давностью, а скорее должен исчезать вместе с самим этим

приобретательной давности, а против требования собственника представили возражение о пропуске двенадцатилетнего срока давности.

¹ Protection of Immovables in European Legal Systems (The Common Core of European Private Law) (p. iv). Cambridge University Press. Kindle Edition. 2015. - С. 306.

² Постановление ЕСПЧ от 30.08.2007 "Дело "Джей.Эй. Пай (Оксфорд) Лтд." (J.A. Pye (Oxford) Ltd) и "Джей.Эй. Пай (Оксфорд) Ленд Лтд." (J.A. Pye (Oxford) Land Ltd) против Соединенного Королевства" (жалоба N 44302/02).

³ Protection of Immovables in European Legal Systems (The Common Core of European Private Law) (p. iv). Cambridge University Press. Kindle Edition. 2015. - С. 309.

абсолютным правом. Иначе мы столкнулись бы с правовой конструкцией *dominium sine re* ("собственность без вещи") и ее нежелательным последствием: существовало бы некое лицо, которое является собственником какого-либо объекта, но не в состоянии защитить свое право против любого, кто окажется владельцем этого объекта"¹. За отказ от применения срока исковой давности к виндикации выступает также М.А. Церковников, отмечая, что "даже уравнивание исковой давности со сроками приобретательной давности... не даст нужного эффекта: эти сроки считаются по-разному, текут при разных условиях"².

Считаем, что оптимальным решением проблемы применения срока исковой давности к виндикации недвижимости является *de lege ferenda* исключение давностных сроков по виндикации недвижимости. С учетом обеспечения стабильности и определенности прав на недвижимое имущество и провозглашения конституционных гарантий защиты частной собственности право собственности на недвижимое имущество зарегистрированного собственника и возможность защиты его права должны сохраняться до того момента, пока право собственности не прекратилось по основаниям, предусмотренным законом.

Список использованной литературы

1. **Գաբրիելյան Բ.Ա.** Հայցային վաղեմության ժամկետի կիրառությունը նեգատոր և վինդիկացիոն հայցերի նկատմամբ | Պետություն և իրավունք: Եր: 2020, թիվ 3 (88), էջ 19-31.
2. **Генкин Д.М.** Право собственности в СССР. - М.: Госюриздат, 1961. - 223 с.

¹ **Циммерман Р.** Новый немецкий закон о давности и глава XIV Принципов Европейского контрактного права. В кн.: Цивилистические исследования: Ежегодник гражданского права. Выпуск третий / Под ред. Б.Л. Хаскельберга, Д.О. Тузова. - М.: «Статут», 2007. - С. 502.

² См.: **Церковников М.А.** Об исковой давности по виндикационному иску // Закон. - 2018. - № 12. - С. 85.

ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՒՐԻՇԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ՀԵՏ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ՀԱՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածի ուսումնասիրման առարկան է անշարժ գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու (վինդիկացիոն) հայցի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառման խնդիրը, որը կայանում է նրանում, որ եռամյա վաղեմության ժամկետի կիրառումը զրկում է սեփականատիրոջը իր իրավունքների դատական պաշտպանությունից, սակայն չի դադարեցնում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Մինչդեռ վինդիկացիոն հայցը հայցային վաղեմության լրանալու հիմքով մերժելու դեպքում պատասխանողը շարունակում է ապօրինի տիրապետել հայցվորին պատկանող գույքը, ինչի հետևանքով ձևավորվում է *dominium sine re*: Նման դեպքերում խնդրահարույց է նաև տիրապետողի կողմից ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագումը, քանի որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունք ձեռք բերելու համար տիրապետողը ոչ միայն պետք է 10 տարի տիրապետի գույքը, այլ պետք է այն տիրապետի բարեխիղճ և որպես իր սեփականը, ինչը տեսականորեն շատ դժվար է ապացուցել ուրիշի գույքը ներխուժած անձի կողմից, ումից գույքի սեփականատերը ժամանակին հետ է պահանջել գույքը: Հայցային վաղեմության կիրառման արդյունքում ծագում է գույքի նկատմամբ իրավունքների անորոշության ժամանակահատված, և հոդվածում ուսումնասիրվում է դատարանների կողմից ձևավորված հայցային վաղեմության ժամկետի վինդիկացիոն հայցի նկատմամբ կիրառումը շրջանցելու գործիքները: Մասնավորապես, խոսքը գնում է վինդիկացիոն հայցը նեգատոր հայցով «փոխարինելու» մասին: Հեղինակը նաև քննարկում է բարձրացված խնդրի լուծման վերաբերյալ գիտության մեջ տեղ գտած առաջարկները, որոնք հանգում են հայցային վաղեմության և ձեռքբերման վաղեմության ժամկետների հավասարեցմանը, ինչպես նաև առաջարկվում է խնդրի լուծման հեղինակի տարբերակը:

Հիմնաբառեր. վինդիկացիոն հայց, հայցային վաղեմության ժամկետ, սեփականության իրավունք, անշարժ գույք, տիրապետում:

ՍԱՀՄԱՆԱՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3 (11) 2023

APPLICATION OF LIMITATION PERIOD TO REI VINDICATIO OF IMMOVABLE PROPERTY IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The present article addresses the issue of applying a three-year limitation period to claims for the recovery possession of immovable property. The problem lies in the fact that the expiration of the short three-year period does not terminate the right of ownership to the property. As a result, when a vindication lawsuit is dismissed due to the expiration of the limitation period, the defendant continues to possess the property unlawfully, leading to *dominium sine re*. Furthermore, the acquisition of ownership after 10 years of possession due to acquisitive prescription poses difficulties. The acquirer must not only possess the property but also possess it in good faith and as their own, which is practically impossible for the "usurper" of someone else's property, from whom they previously demanded the property as the rightful owner. Thus, a period of uncertainty arises regarding property rights, and the article examines the established practice of Armenian courts concerning mechanisms to circumvent the three-year limitation period. In particular, the extension of the limitation period to the rei vindicatio claim has resulted in its substitution with a negatory claim, leading to a confusion of proprietary remedies. The author also discusses the feasibility of proposed scientific approaches to resolving the raised issue by harmonizing the limitation periods and acquisitive prescription.

Keywords: rei vindicatio, limitation period, right to property, immovable property, possession.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 04.10.2023 թ., պրվել է գրախոսության 04.10.2023 թ., ընդունվել է տպագրության 13.10.2023 թ.:

DOI: 10.59560/18291155-2023.3-180



ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ Եվրոպական համալսարանի
իրավագիտության և
միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի իրավագիտության
ամբիոնի հայցորդ*

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփագիր

Խորհրդային կարգերի փլուզումից հետո մեր երկրում սկսվեց հարուստ փորձ ունեցող այլ պետություններից տարաբնույթ իրավական ինստիտուտների տեղայնացման գործընթացը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ 3(111)2023

- ◆ Գաղտնիք չէր, որ նոր անկախացած Հայաստանը սեփական իրավական ռեսուրսներով չէր կարող լուծել երկրում օրեցօր խորացող և առաջնային լուծում պահանջող հարցերը: Մինչդեռ նույն ժամանակահատվածում արևմտյան մի շարք երկրներ արդեն ունեին գիտագործական երկարամյա և արդյունավետ իրավական համակարգ, որը նոր անկախացող երկրները պետք է հնարավորինս շուտ տեղայնացնեին՝ մարտահրավերներին դիմագրավելու և ժողովրդավարական պետությանը հարիկ կառավարման համակարգ ունենալու համար: Սակայն արտերկրի իրավական մշակույթը տեղայնացնելու գործընթացը պետք է զգուշությամբ կատարվեր, անհրաժեշտաբար պետք է նկատի առնվեին տվյալ երկրի ազգային, մշակութային, կրոնական, պատմական առանձնահատկությունները: Ինքնին հասկանալի է, որ օտարերկրյա ինստիտուտների գործելաճի մեխանիկական ներդրումը հղի է մի շարք բացասական հետևանքներով:

Սույն հոդվածում կատարվել է հայեցողական վարչական ակտերի նկատմամբ վարչական ընթացակարգային նորմերի սահմանափակ կիրառելիության մասին եզրահանգում, հատկապես հայեցողության այնպիսի տեսակների մասին, ինչպիսիք են «իրավական անորոշ հասկացողությունները» և «հայեցողական ընտրությունը» (երբ վերջինս ենթադրում է փաստացի հանգամանքների բովանդակալից գնահատականը): Նման իրավիճակից ելքը դատական հսկողության արդիականացումն է, դրա առարկայի ընդլայնումը, ինչպես նաև դատական ստուգման խորությունը՝ կախված հայեցողության տեսակներից և իրավաչափության (համաչափության) սկզբունքի ակտիվ կիրառումից:

Հիմնաբառեր. վարչական ակտ, հայեցողություն, դատական ստուգում, ընթացակարգ, նախադեպ, բողոքարկում, դատական հսկողություն, օրենսդրական բաց:

Ժամանակակից իրավաընկալման ձևավորման էպիկենտրոն են եղել Եվրոպան և Հյուսիսային Ամերիկան: Նշենք նաև, որ թեև Ռուսաստանը հարուստ իրավական մշակույթ ունեցող երկիր չէ, այնուամենայնիվ հասցրել է կուտակել լուրջ գիտագործնական նյութ, որը կարելի է օգտագործել ու մշակելով ներդնել ՀՀ վարչաիրավական պրակտիկայում:

19-րդ դարի կեսին իրավագետ Լ. Հումբոլդտը, իսկ ավելի ուշ Բ. Չիչերինն ու այլ իրավագետներ վերլուծել են բոլոր գործերին պետության միջամտության սահմանները՝ թույլատրելով միայն վերահսկողությունն ու այլ միջոցները բացառապես ընդհանուր ու մասնավոր շահերի պաշտպանության նպատակներով¹:

Ռուս գիտնական Գ.Ֆ. Շերշենևիչը հայեցողությունը դիտարկում էր որպես պետական իշխանության՝ իրավունքի ձևերի սահմանման հնարավորությունը: Կառավարման մարմիններին օրենքների կատարելագործման կամ դրանց լրացման նպատակով պետական իշխանությանը կարող է տրվել վարքագծի ընդհանուր կանոնների մշակման հնարավորություն: Վարչական այդպիսի կարգադրությունները «ուժ են ստանում» ոչ թե անմիջական կառավարման մարմիններում, այլ իշխանության մարմիններից բխող թույլտվություններում: Դրանց անվանում են *վարչական հրահանգներ* (կարգադրություն): Կարգադրությունը պետք է տրվի իրավասու մարմնի

¹ Чичерин Б.Н. Избранные труды. - СПб, М., 1998. - С. 255.

կողմից օրենսդրությանը համապատասխան և հանրությանը հայտնի միջոցներով: Ի տարբերություն դրան՝ վարչական միջոցները գործածվում են որոշակի դեպքերում օրենքի կիրառման ժամանակ¹:

Դիտարկելով պետական կառավարման մարմինների իրավասությունները որպես պետական իշխանության մարմինների ու կառավարվող օբյեկտների միջև տեղի ունեցող հարաբերություններ՝ Բ.Մ. Լազարևը դրանք կապում էր կառավարչական գործառույթների հետ: Իրավունքներն ու պարտականություններն արտահայտում են պետական մարմնի իրավունակությունը: Մինչդեռ իշխանական որոշակի լիազորությունները կարող են և՛ նեղացվել, և՛ ընդլայնվել²:

Հիմքում ունենալով կառավարումն ու կարգավորումը՝ օրենքը դառնում է վարչական հայեցողության հիմնական բնորոշումը: Միայն օրենքն է սահմանում դրա նպատակները, սահմանները, բնույթը և ծավալը³:

Բայց օրենքը չի կարող կարգավորել կյանքի բոլոր հարցերը: Անընդհատ ծագող որոշակի իրավիճակների, խնդիրների, հարցերի լուծման համար անհրաժեշտ են իրավական ճկուն մեխանիզմներ: Եվ վարչական հայեցողությունը կոչված է հենց այսպիսի արձագանքման ապահովմանը:

Դրանց ինքնուրույն ու դինամիկ լինելը անհրաժեշտ է, սակայն հայեցողությունը նպատակահարմարության և օրինականության հարաբերակցության հիմնախնդրի կամային կողմն է⁴:

Ռուսաստանի Դաշնության դատաիրավական պրակտիկան վարչական իրավախախտումների գործերով դատական վարույթում առանձնացնում է վարչական և դատական հայեցողության հետևյալ հատկանիշները.

1. Հայեցողությունը պետք է իրականացվի միայն գործող օրենքի շրջանակներում: Դատավորը, վարչական մարմնի պաշտոնատար անձը խստորեն սահմանափակված են իրավունքով: Բավականին հաճախ կոնկրետ որոշման մեջ նրանց ընտրության ազատության ընձեռումը բխում է իրավունքի նորմի կառուցվածքի այնպիսի տարրերից, ինչպիսիք են դիսպոզիցիան և սանկցիան:

2. Հայեցողությունն իրականացվում է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության նպատակներին համապատասխան,

¹ **Лазарев Б.М.** Компетенция органов управления. - М., 1972. - С. 11.

² **Алехин А.П.** Административное право Российской Федерации. - М., 1997. - С. 263.

³ **Лазарев Б.М.** Компетенция органов управления. - М., 1972. - С. 92.

⁴ **Лазарев Б.М.** Компетенция органов управления. - М., 1972. - С. 92.

որոնց վերաբերում են «անձի պաշտպանությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանությունը, քաղաքացիների առողջության պահպանությունը, ազգաբնակչության պաշտպանությունը, միջավայրի, պետական իշխանության իրականացման կարգի, հասարակական կարգի և հասարակական անվտանգության, սեփականության պաշտպանությունը, ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև վարչական իրավախախտումների նախազգուշացումը» (ըստ ՌԴ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 1.2-րդ հոդվածի):

3. Հայեցողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, այսինքն՝ վարչական դատավարության նորմերով կարգավորված դատավարական գործունեության և դրա արդյունքների փաստաթղթային կարգով ամրագրելու միջոցով¹:

4. Կայացվող որոշման ընտրությունը դատավորի, վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից սահմանափակված է նրանց վերապահված իրավասություններով: Այսպես, օրինակ՝ սահմանելով վարչական պատիժների տեսակների ցանկը, օրենսդիրը միաժամանակ սահմանել է դատավորների և վարչական մարմինների պաշտոնատար անձանց իրավասություններն ըստ իրենց նշանակության: Ընդ որում՝ եթե դատավորներն իրավասու են նշանակելու վարչական իրավախախտումների համար սահմանված պատիժներից ցանկացածը, ապա պաշտոնատար անձինք իրավասու են այն նշանակելու վարչական իրավախախտում կատարած անձին՝ նախազգուշացման կամ վարչական տուգանքի տեսքով: Մասնավորապես՝ ներքին գործերի (ոստիկանության) մարմինների պաշտոնատար անձը իրավասու է լուծել ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 20.1-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը, այն է՝ «Մանր խուլիգանություն»: Սակայն քանի որ տվյալ հոդվածի սանկցիան նախատեսում է այլընտրանքային երկու պատիժներից մեկի նշանակման հնարավորություն (վարչական տույժի կամ վարչական կալանքի), ապա ներքին գործերի մարմնի պաշտոնատար անձն իրավասու է նշանակելու վարչական տուգանքը, քանի որ վարչական կալանքի նշանակումը հնարավոր է միայն դատարանի միջոցով:

¹ **Абушенко Д.Б.** Судебное усмотрение в гражданском и арбитражном процессе. - М., 2002. - С. 39.

Եվ իրոք, եթե որևէ մարմնի պաշտոնակատար անձ կարող է վարչական որոշակի իրավաստիտման համար նշանակել վարչական կալանք, իսկ «կալանքն» ինքնին ընդունված է փոխկապակցել դատական ակտի հետ, ապա տեղի կունենա իշխանական լիազորությունների անհարկի կրկնություն, ինչպես նաև անհիմն միջամտություն, որը դրական չի կարող ազդել ո՛չ վարչական մարմինների և ո՛չ դատարանի գործունեության նկատմամբ վստահության բարձրացման հարցում: Բացի այդ, դատարանը պարտավոր է քննել ու գտնել բավարար հիմքեր՝ ապացուցելու նշանակվող կալանքի արդարացիությունն ու համաչափությունը, մինչդեռ վարչական մարմնի պաշտոնյան, ելնելով իր մասնագիտական հմտություններից, հնարավոր է, որ չկարողանա գնահատել գործն ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի: Սա է խնդիրը, ըստ որի՝ լիովին համաձայն ենք ՌԴ-ում գործող այս նեղ գործի շրջանակներում ձևավորված իրավական պրակտիկային:

5. Հատկանշական է, որ մի քանի այլընտրանքային որոշումներից մեկի կայացումը պայմանավորված է դատավորի, վարչական մարմնի պաշտոնատար անձի աշխարհայացքով, փորձով և մասնագիտական գիտելիքներով: Հայեցողությամբ որոշման կայացումն իրականացվում է նշված անձանց անձնական համոզմունքին համապատասխան (այսինքն՝ սուբյեկտիվ գործոնն անհնար է բացառել, իսկ դրա ազդեցության հետևանքների նվազեցմանը նպաստում է բարձրագույն ատյանների կողմից տվյալ որոշումների վերանայումը, ինչպես նաև որոշման կամ վճռի առավելագույնս փաստարկված շարադրումը)¹:

6. Հայեցողությունն իրավակիրառ գործունեության ինքնուրույն ասպեկտ է (իրավական, տրամաբանական, հոգեբանական, պատմական, փիլիսոփայական): Ինչպես նշում է Վ.Վ. Դենիսենկոն, «վարչական և դատավարական հայեցողությունը իրական է և գոյություն ունի դատական և վարչաիրավական գործունեության մեջ: Դրա հետ մեկտեղ, վարչական հայեցողության հետ համեմատած, դատական հայեցողության գործողության ոլորտը առավել լայն է, քանի որ այն դրսևորվում է թե՛ հանրային և թե՛ մասնավոր իրավունքում»²:

¹ **Антропов В.Г.** Правоприменительное усмотрение: понятие и формирование (логико-семантический аспект): автореф. дис. канд. юрид. наук. - Волгоград, 1995. - С. 14.

² **Барак А.** Судейское усмотрение. - М. 1999. - С. 15.

Ուստի այս բոլոր կետերի հաշվառմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով դատավարության մեջ վարչական և դատական հայեցողության բացահայտման ժամանակակից մոտեցումների վերլուծությունը հնարավորություն է տալիս այն դիտարկելու հետևյալ առանցքներում.

1. *Հայեցողությունը դատավորի, վարչական մարմնի պաշտոնատար անձի իրավասությունն է:* Տվյալ իրավասությունը կայանում է նրանում, որ հայեցողությունը կարող է օգտագործվել վարչական տույժի տեսակի ընտրության ժամանակ, երբ նախատեսված է հիմնական և հիմնական ու լրացուցիչ տույժի տեսակի ընտրության հնարավորություն, օրինակ՝ վարչական տուգանքի և վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում տույժ տեսակների միջև ընտրության դեպքում, ինչպես նաև վարչական տուգանքի չափի որոշման ժամանակ /առավելագույն և նվազագույն/:

2. *Հայեցողությունը դրսևորվում է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ դատարանում ըստ էության քննվող գործի շրջանակներում:* Այսպես, վարչական կամ դատական հայեցողությունը վերաբերում է միայն գործի ըստ էության քննության դեպքին, ինչը նշանակում է, որ դատավորը, վարչական մարմնի պաշտոնատար անձը որոշում կայացնելիս իրավունք ունեն մի քանի օրինական, այլընտրանքային որոշումներից ընտրելու որևէ մեկը: Դա նաև նշանակում է, որ հայեցողությունը միևնույն չափով հիմնված է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական հարցերի լուծման վրա:

3. *Հայեցողությունը՝ որպես իրավունքի նորմի մեկնաբանություն, դրսևորվում է օրենքով սահմանված սահմաններում:* Կոնկրետ գործի դեպքում իրավունքի նորմեր կիրառելիս դատավորը, վարչական մարմնի պաշտոնատար անձը տալիս են դրան սեփական մեկնաբանությունը, կայացվելիք որոշումը կիրառում են օրենքով իրենց ընձեռված հայեցողության զգալի ազատության սահմաններում: Իհարկե Վ.Վ. Դենիսենկոն միաժամանակ շեշտում է, որ իրավակիրառ գործունեության մեջ կարող են տեղի ունենալ սխալներ, և դատական պրակտիկայում դատավորների՝ առաջին ատյանում նյութական իրավունքի նորմի մեկնաբանության մեջ թույլ տված սխալները հնարավորություն են տալիս

այնդելու, որ անհրաժեշտ է դատական պրակտիկայի իրավադրույթները դիտարկել որպես դատական հայեցողության աղբյուր¹:

Մեր կարծիքով՝ սա որոշակիորեն բացահայտում է հայեցողական լիազորությունների եվրոպական ուսմունքի նշանակությունը, այն է՝ պաշտոնատար անձանց սպառիչ ցանկեր և սահմանափակ գործառույթներ տալով՝ առավելագույնս կրճատել հայեցողության իրականացման հնարավորությունն ու սահմանները: Եվ եթե նման սպառիչ ցանկերն ու սահմանված գործառույթները դատական պրակտիկայի արդյունքում ամրագրված իրողություններ լինեն, հայեցողության շրջանակը կսահմանափակվի նախադեպային իրավունքով: Այսինքն՝ վարչական հայեցողության դատական հսկողության պրակտիկան հանգում է արդեն առկա որոշումների և նախադեպերի օգտագործումից չջեղվող հայեցողության իրացմանը: Ինչ խոսք, սա բավականին արդյունավետ կարող է լինել: Հարցը միայն այն է, որ դատական պրակտիկան համալրված լինի ճիշտ, օրինաչափ և հանրային շահի վրա հիմնված որոշումներով: Սա իրավունքի խնդիրներից մեկն է ոչ միայն ներկայում, այլև ապագայում:

Հայեցողության շուրջ հարցեր են առաջանում նաև այն դեպքերում, երբ օրենսդիրը այս կամ այն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություններ է ընձեռում մի քանի սուբյեկտների: Հայեցողության հետ կապված էական խնդիրներից մեկն այն է, որ ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը չի սահմանում, թե վարչական իրավախախտման վերաբերյալ գործ ստացող մարմինը կամ պաշտոնատար անձը որ դեպքերում և ինչ հիմքերով կարող է այն փոխանցել դատավորի քննությանը: Այդպիսի գործերից են, օրինակ, սահմանված չափորոշիչներով և կանոններով նախատեսված հրդեհային անվտանգության պայմանների խախտումը, որը, ըստ ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 20.4-րդ հոդվածի 1-ին մասի, հանգեցնում է վարչական պատասխանատվության և այլն:

Ամփոփելով ՌԴ-ում գործող վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով դատական հսկողության դատական պրակտիկան՝

¹ **Бойко Д.В.** Виды правоприменительного усмотрения // “Юристы-Правоведь”. - Ростов-на-Дону., 2010, № 1. - С. 8-12.

կարելի է եզրահանգել, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերում կիրառվող վարչական և դատական հայեցողությունը դատավորին ինչպես նաև վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձին, օրենքով ընձեռված իրավունքն ու պարտականությունն է վարչական իրավախախտման վերաբերյալ կոնկրետ գործի առնչությամբ մի քանի օրինական և նպատակահարմար որոշումներից առավել համապատասխանը ընտրելու համար, ընդ որում՝ այդ ընտրությունը պետք է հիմնված լինի վերջինիս աշխարհայացքի, մասնագիտական փորձի և հանգամանքի վրա, իրականացվի ընթացակարգային ձևին համապատասխան և ելնի անձի, հասարակության և պետության շահերից¹:

Գործառույթների, իրավասությունների, իրավունքների ու պարտականությունների կարգավորման մեջ դեռևս շատ բացեր կան: Այդ պատճառով անհրաժեշտ են օրենքներում դիտարկվող բոլոր տեսակի վարչական որոշումների ճիշտ հիմնավորումները և ընդունումը՝ ինքնուրույն, երբեմն համաձայնեցումից հետո կամ համատեղ: Դա պետք է վերաբերի ոչ միայն իրավական ակտերի տեսքով ընդունվող որոշումներին, այլև բանավոր հանձնարարականներին ու հրամաններին: Քանի որ վերջիններս չափազանց շատ են, ուստի, կարծում ենք, օգտակար կլինի, եթե խիստ շրջանակներ սահմանվեն բանավոր հրամաններ տալու և դրանք ամրագրելու, գրանցելու և պատասխանատվության միջոցներ սահմանելու վերաբերյալ:

Վարչական հայեցողությունը պետական կառավարման, կարգավորման ու վերահսկողության մտավոր-իրավական հիմնաքարն է: Դրա բովանդակության և կիրառման հիմքերի դինամիկան որոշվում է պետական գործերի մեծ ծավալով, իրավիճակների, հիմնախնդիրների ու առաջադրանքների փոփոխականությամբ: Վարչական հայեցողության օրենսդրական հիմքերի ապահովումն ու դրա տեսակների և հիմնավորումների ամրագրումը վերջինիս արդյունավետության և ժողովրդավարության երաշխիքն են:

Ինչպիսի՞ն են վարչական հայեցողության կանոնակարգմանն առնչվող ձեռքբերումները ռուսաստանյան իրավակարգում:

¹ **Аверина Н.А., Козлоба Л.С.** Административное и судебное усмотрение в производстве по делам об административных правонарушениях // «Молодой ученый». – 2013. – №11. – С. 513:

Վերջին տասնամյակում ռուսաստանյան վարչաիրավական պրակտիկայում փորձ է արվում ձևավորելու հանրային կառավարման գործունեության ընթացակարգային հիմքեր եթե ոչ վարչարարության կարգավորող օրենքների, ապա ծայրահեղ դեպքում գործադիր իշխանության մարմինների կանոնակարգերի ընդունման ճանապարհով: Նմանատիպ գործողությունները զերծ չեն կառուցողական հիմքից, այդ թվում՝ վարչական հայեցողության իրավաբանորեն սահմանափակման հիմնախնդրի համատեքստում: Օգտվելով գերմանական տերմինաբանությունից՝ նշենք, որ վարչական կանոնակարգերի վարչական ընթացակարգերը թույլ են տալիս գոնե որոշ չափով «կապակցել հայեցողությամբ որոշումները՝ իրավասու մարմիններին պարտադրելով գործելու» համապատասխան իրավական փաստական հանգամանքների (օրինակ՝ դիմումների) առկայության պարագայում և արգելելով դրանց անգործությունը համապատասխան իրավական փաստական հանգամանքների բացակայության պայմաններում, որոնք դիմումն անհետևանք թողելու հիմք են (վարչական ընթացակարգի կասեցում):

ՍԱՀՄԱՆԱՐՈՎՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(11)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Նույնը կարելի է ասել նաև «հայեցողությամբ ընտրության» մասնակի իրավականացման մասին. եթե վարչական ընթացակարգային նորմերը վերաբերում են իրավաբանական փաստերի բովանդակալից գնահատումից զուրկ ոչ բարդ որոշումներին, ապա այստեղ կապակցումը համապատասխանություն է ստեղծում դիմումի բավարարման ձևական մերժումների սպառնիչ հիմքերի սահմանման հետ (ոչ իրավասու սուբյեկտի դիմումը, իրավասու սուբյեկտի դիմումը, իրավասու սուբյեկտի դիմումը ոչ իրավասու մարմին, անհրաժեշտ տեղեկություններ չներկայացնելն այն դեպքում, երբ դրանք ներկայացնելու պարտավորությունը դիմողին է և այլն):

Իբրև օրինակ ներկայացնենք Հատուկ տնտեսական գոտիների կառավարման դաշնային գործակալության վարչական կանոնակարգերից մեկը¹: Համաձայն այդ կանոնակարգի 2.8-րդ կետի՝ համապատասխան պետական ծառայություն տրամադրելու մերժման հիմքերի թվին են դասվում տեխնիկական գործունեության իրականացման համաձայնության եզրակացության դիմումին կից ներկայացվող գործողության ծրագրի անհամապատասխանությունը գործադիր իշխանության լիազոր

¹ Приказ Минэкономразвития РФ от 30 октября 2007 г. № 368 // Бюллетень нормативных актов федеральных органов исполнительной власти. - 2008. - № 9.

մարմինների կողմից սահմանված գործունեության ծրագրերի գնահատման չափանիշներին: Վերջիններս ամրագրված են ինքնուրույն նորմատիվ ակտով¹ և ներառում են գործունեության ծրագրով նախատեսված նախագծի համապատասխանությունը հատուկ տնտեսական գոտիներ ստեղծելու նպատակներին, դրանց հեռանկարային զարգացման ծրագրին, նախագծի ֆինանսական կայունության աստիճանին, ներառում են նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը, մարքեթինգային քաղաքականության մշակվածության աստիճանը, դրական սոցիալ-տնտեսական արդյունքի ձեռքբերումը՝ կապված նախագծի իրականացման հետ, և այլն:

Վարչական հայեցողության վերաբեյալ ռուսաստանյան երկրորդ միտումը հակակոռուպցիոն հատուկ նորմերի ընդունումն է, որոնք, ըստ ռուս օրենսդրի՝ ամենայն հավանականությամբ կոչված են վերացնելու վարչական հայեցողությունը: Համաձայն 2009 թ. հուլիսի 19-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության մասին» թիվ 172-Ֆ3 դաշնային օրենքի 1-ին հոդվածի՝ «կոռուպցիայի համար նպաստավոր են համարվում նորմատիվ իրավական ակտերի (դրանց նախագծերի) այն դրույթները, որոնք իրավակիրառ մարմնի համար սահմանում են հայեցողության չհիմնավորված լայն շրջանակներ կամ ընդհանուր կանոններից բացառությունների իրականացման չհիմնավորված հնարավորություններ: Կոռուպցիոն ռիսկեր ունեն նաև այն դրույթները, որոնք քաղաքացիների ու կազմակերպությունների համար անորոշ, դժվար իրագործելի և (կամ) ծանրաբեռնող պահանջներ են պարունակում և դրանով իսկ պայմաններ են ստեղծում կոռուպցիայի դրսևորման համար»²: ՌԴ կառավարության համապատասխան որոշումը թվարկում է կոռուպցիա ծնող գործոնները, որոնց թվին են դասվում.

1. *Հայեցողական լիազորությունների լայն շրջանակը*. Որոշման կայացման ժամկետների, պայմանների կամ հիմքերի բացակայությունը կամ դրանց անորոշությունը, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) կրկնվող լիազորությունների առկայությունը,

¹ Приказ Минэкономразвития России от 2 ноября 2012 г. № 712 // Рос. газета, 31 դեկտեմբերի 2012 թ.:

² Рос. газета. 22 հուլիսի, 2009 թ.:

2. լիազորության սահմանումը՝ «իրավասու եմ» ձևակերպմամբ. Քաղաքացիների ու կազմակերպությունների հանդեպ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) գործողությունների իրականացման հնարավորության դիսպոզիտիվ սահմանումը,

3. իրավունքների ծավալի ընտրողական փոփոխությունը. պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) հայեցողությամբ քաղաքացիների ու կազմակերպությունների համար ընդհանուր կարգից բացառությունների չհիմնավորված սահմանման հնարավորությունը,

4. ենթաօրենսդրական նորմաստեղծման գործընթացի չափից դուրս ազատությունը. Նախնական նորմատիվ իրավական ակտն ընդունված պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությանը մուտք գործելու հնարավորություն ընձեռող ենթաօրենսդրական ակտերի ընդունմանը հանգեցնող բլանկետային և հղումային նորմերի առկայությունը,

5. լիազորության սահմաններից դուրս իրավական ակտի ընդունումը. Պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) լիազորությունների խախտումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման գործընթացում,

6. օրենսդրական բացերի համայրումը ենթաօրենսդրական ակտերի միջոցով՝ համապատասխան լիզորությունների օրենսդրորեն պատվիրական բացակայության պայմաններում. Ենթաօրենսդրական ակտում վարքագծի համապատասխիր կանոնների սահմանումը օրենքի բացակայության պայմաններում,

7. վարչական ընթացակարգերի բացակայությունը կամ դրանց ոչ լիարժեքությունը. Պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) կողմից որոշակի գործողություններ իրականացնելու կարգի կամ դրա բաղադրատարրերից որևէ մեկի բացակայությունը¹:

¹ Постановление Правительства РФ от 26 февраля 2010 г., № 96// «Рос. газета», 5 մարտի 2010 թ.: Առավել մանրամասն տե՛ս **Давыдов К.В.** Судебный контроль за дискреционными административными актами РФ, правовые проблемы и пути решения // «Актуальные вопросы публичного права». - М., 2014, № 4. - С. 4-18:

Մի կողմից՝ բերված օրենսդրական դրույթները խելամիտ են թվում և արժանի են հարգանքի: Մյուս կողմից՝ օրենսդրի՝ հայեցողության դեմ առաջին հերթին իրավական ակտերով պայքարելու գաղափարը ուստոպիստական է: Դժվար չէ նկատել, որ «հակակոռուպցիոն նորմերը» լի են անհասկանալի իրավական հասկացություններով, այսինքն՝ իրենց սահմանամաբ ենթադրում են իրավակիրառ մարմնի հայեցողական գործողությունները: Ուստի առանց հսկողության խիստ ուսմունքի ո՛չ վարչական ընթացակարգերը, ո՛չ նյութական «հակահայեցողական» նորմերը պարզապես չեն աշխատի:

Այսպես, ՌԴ Գերագույն դատարանի ստուգման առարկա էին հակահրդեհային անվտանգության ոլորտում վերստուգիչ գործառույթների իրականացման վարչական կանոնակարգի դրույթները: Կանոնակարգի վիճելի նորմը, որը խախտումների դեպքում պաշտոնատար անձին իրավունք էր վերապահում տալ գրավոր հրաման և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ, ուղղակիորեն ամրագրեց տեսուչի՝ նմանատիպ խախտումների վերացման ժամկետներն ինքնուրույն որոշելու լիազորությունը: ՌԴ Գերագույն դատարանը հաստատեց, որ տվյալ հայեցողությունը չի նշանակում կամայականություն, քանի որ համաձայն օրենսդրության պահանջների՝ նշված ժամկետների հաշվարկման համար ձևակերպված է համապատասխան չափորոշիչ, դրանք պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով տեխնիկական կանոնակարգերի պահանջների խախտման բնույթը¹: Դատարանի դիրքորոշումը, որը այդ «թույլ ձևակերպված» նորմերը համարեց բավարար, թույլ է տալիս հետևություն անել հանրային կառավարման սուբյեկտների՝ վարչական ընթացակարգերի շրջանակներում հայեցողական որոշումներ կայացնելու բարձր ինքնուրույնության գնահատման մասին: Կարելի է կանխատեսել, որ հայեցողության սույն ձևի նկատմամբ դատական հսկողության խորությունը կլինի շատ քիչ, ինչն ընդհանուր առմամբ տրամաբանական է:

Իսկ անորոշ իրավական հասկացությունների հանդեպ ռուս օրենսդրին ունի բացասական դիրքորոշում: Դատարաններին կոչ է անում «մաքրել» դրանք նորմերի՝ որպես կոռուպցիա ծնող գործոնների վերահսկման

¹ Решение Верховного Суда РФ от 30 июля 2012 г. по делу № АКПИ12-1012. Доступ из справ.-правовой системы «КонсультантПлюс».

շրջանակներում: Իհարկե, իրավական անորոշ հասկացողություններն իրավական կարգավորման հատկանշական գործիք են, և միշտ չէ, որ տեղին են: Օրինակ՝ Թաթարստանի Հանրապետության արդարադատության նախարարության հաստատած՝ «Թաթարստանի Հանրապետություն» անվանումն իրավաբանական անձանց կողմից օգտագործելու տեսանկյունից թույլտվության տրամադրման պետական ծառայության իրականացումն ամրագրող վարչական կանոնակարգը բովանդակում է պետական ծառայություն չտրամադրելու հետևյալ հիմքերը: Իրավաբանական անձի գործունեության ոլորտի բնույթը, դրա մասշտաբները չունեն հանրապետության ու դրա քաղաքացիների համար էական նշանակություն, համապատասխան ոլորտում կամ Թաթարստանի Հանրապետության շուկաներում կամ միջազգային շուկայում կազմակերպության զբաղեցրած դիրքը զգալի չէ, իրավաբանական անձի կողմից արտադրվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) տեսակները յուրահատուկ չեն, այսինքն՝ բնորոշ չեն միայն Թաթարստանի Հանրապետությանը: Ընդհանուր իրավասության դատարանները հակակոռուպցիոն օրենսդրության տեսանկյունից այդպիսի ոչ ֆորմալ ձևակերպված հասկացություններն արդարացիորեն սահմանեցին խոցելի և ճանաչեցին առ ոչինչ¹: Սակայն եթե հայտնի դեպքերում նման գնահատականներին պետք է համաձայնել, ապա բոլոր անորոշ իրավական հասկացությունների հանդեպ կանխակալ վերաբերմունքը՝ որպես կոռուպցիա ծնող գործոնների անհնար է պատկերացնել: Այսպիսի տրամաբանությունը հանգեցնում է արսուրդի: Ըստ էության, հակակոռուպցիոն օրենսդրության դրույթները կարելի է ճանաչել առ ոչինչ հենց դրանց անորոշության պատճառով: Տրամաբանական փակուղուց դուրս գալու կառուցողական ելքը պետք է դառնա իրավական անորոշ հասկացությունների լուռ «օրինականացումը»՝ ոչ այնքան վարչական ընթացակարգերի, որքան դրանց հիման վրա ընդունված վարչական ակտերի խորացված միաժամանակյա դատական վերահսկողության միջոցով:

¹ Об оставлении без изменения решения Верховного Суда Республики Татарстан от 17.05. 2011 г., которым было удовлетворено заявление о признании противоречащими федеральному законодательству и недействующими отдельных положений Административного регламента, утв. Приказом Министерства юстиции Республики Татарстан от 17.01.2011 № 1-02/3: Определение Верховного Суда РФ от 20 июля 2011 г. № 11- Г11-23. Доступ из справ.-правовой системы «Консультант Плюс».

Ամփոփելով նշենք, որ ռուսաստանյան վարչական իրավունքը ինչպես վարչական ընթացակարգերի կարգավորման, այնպես էլ հայեցողության «իրավական կապակցվածության» հարցերում գտնվում է ձևավորման փուլում: Այսինքն՝ վարչական ընթացակարգային նորմերը չեն կարող բավարար չափով լուծել բարդ վարչական որոշումներին վերաբերող խնդիրները: Կարելի է տարբեր կերպ վերաբերվել նորմաստեղծ գործունեությունից դեպի իրավակիրարկում անցում կատարելու և դրանից բխող «նոր վարչական ընթացակարգերի» վերաբերյալ տեսությունների՝ գլոբալ տեղաշարժերին, սակայն վարչական հայեցողության դեպքում այս եզրահանգումը բավական ճշգրիտ է:

Ձևավորված փակուղու հաղթահարման կարևորագույն միջոցներից մեկը հանրային վարչարարության նկատմամբ դատական արդիակա- նացված հսկողությունն է: Դատական պրակտիկան և առանց այդ էլ զգալիորեն արդիականացվող իրավական նորմերն աստիճանաբար «զուտ օրինականության» ստուգումից անցում են կատարում վարչական իրավունքի և վարչական ընթացակարգերի այլ սկզբունքներին՝ նպատակահարմարությանը, խելամտությանը, հիմնավորվածությանը: Դրանց կիրարկման անմիջական գործիք է դառնում համամասնության (համաչափության)՝ իրավաչափության սկզբունքը:

Ընդ որում՝ ռուսական դատական պրակտիկան զարգանում է եվրոպական իրավակարգերի զարգացման նմանությամբ: Դրան զուգահեռ՝ փորձեր են կատարվում հայեցողությունը նվազեցնելու ուղղությամբ, օրինակ՝ կոռուպցիայի հակազդման շրջանակներում համապատասխան իրավական նորմերի սահմանումն ու առանձին դատական պրակտիկաների (նախադեպերի) զարգացումները: Այստեղ ևս վարչական ընթացակարգերի զարգացումը զուգակցվում է դատական վերահսկողության զարգացման հետ, իսկ ռուսաստանյան իրավունքը կանգնած է զգալի փոփոխությունների իրականացման շեմին:

Անցում կատարելով եվրոպական վարչական իրավունքին՝ նշենք, որ ըստ որոշ ուսումնասիրողների՝ վարչական հայեցողության կանոնա- կարգումն ու դրա նկատմամբ դատական հսկողությունը ժամանակակից եվրոպական վարչական իրավունքի ամենակարևոր ու ամենաբարդ

¹ Barnes J. Towards a third generation of administrative procedure // Comparative Administrative Law/ S. Rose-Ackerman, P. L. Lindseh, Northampton, 2010, P. 336-356.

խնդիրներից են¹: Այնուամենայնիվ, հայեցողության՝ վարչական կամայականության վերաճման խնդիրը և նման աղավաղումը կանխարգելող իրավական երաշխիքների սահմանումը վաղուց են մտահոգում ոչ միայն Եվրոպայի, այլև աշխարհի վարչական իրավունքի մասնագետներին² :

Ներկայումս ելնելով դատական և վարչաիրավական համակարգերում գործերի ծավալից և դրանք խելամիտ լուծելու բարդությունից, առկա իրավական մեխանիզմների անբավարարությունից ու անհնարինությունից՝ խնդիրների լուծումը միայն հանրային վարչարարության և վարչական ընթացակարգային նորմերի վրա թողնելը կորցնում է արդյունավետությունը: Հակառակը, դրանց բարդացմանը զուգահեռ՝ պետք է բարելավվի և խստացվի նաև դատական հսկողությունը: Եվ այստեղ էլ նշմարվում է նորմաստեղծական ու իրավակիրառման միջև սահմանների հատումը (այսինքն՝ ոչ միայն հանրային վարչարարությունն է «հակակշռում»)՝ ընդունելով բարդ վարչական ակտեր, այլև դատական որոշումներն ավելի խորն են սկսում թափանցել իրավական համակարգ), աճում է իրավական սկզբունքների դերը (կառավարչական գործողությունների ձևերը գնահատելիս հատկապես դատարաններն են դնում վերջակետը և հաճախ առաջնորդվում են ոչ միայն ու ոչ այնքան որոշակի նորմերով, որքան իրավունքի սկզբունքներով: Հետազոտելով արտասահմանյան փորձը՝ նկատում ենք, որ շատ ավելի դյուրին է ստուգել այն հանգամանքը, թե համապատասխանում է արդյոք հայեցողական վարչական ակտը այս կամ այն սկզբունքին, քան փնտրել, թե որ նորմի հիման վրա է այն կայացվել կամ ինչ նորմ է դրանով խախտվել: Ի վերջո, հենց հայեցողական որոշումների գնահատումն է առավել սրել պահանջարկը ոչ միայն իրացնելու ձևական-իրավաբանական երկակի՝ «օրինական կամ անօրինական» մոտեցումը, այլև դիալեկտիկ տրամաբանության վրա հիմնված գնահատականների սանդղակով շարժվելը, որում այս կամ այն պահանջների խախտումը դեռ չի նշանակում a priori (կանխակալ)՝ իրավաբանական ուժ չունեցող: Այսինքն՝ հնարավոր է՝ վարչական մարմինն իր հայեցողությամբ կատարել է որոշակի անթույլատրելի գործողություն, որը չի հանգեցրել անօրի-

¹ **Kunnecke M.** Tradition and Change in Administrative Law. An Anglo-German Comparison, 2007, P. 73. **Redecker K. von Oertzen H. J.** Verwaltungsgerichtsordnung. Vorwort, 1997.

² **Alder J.** General Principles of Constitutional and Administrative Law. Fourth Edition. 2002, P. 98, Administrative Law and Governance in Asia, Comparative perspectives. 2009, P. 373.

նականության, սակայն խախտվել են ընթացակարգային որոշ դրույթներ, ապա այդ ձևական զանցակազմով նրա որոշումը չեղյալ հայտարարելը նույնպես կլինի ոչ նպատակահարմար: Ստացվում է՝ դատարանը ոչ միայն վերահսկիչ, այլև օժանդակ գործառույթ է կատարում, քանի որ «չոր» ընթացակարգային նորմերին կուրորեն հետևելը չի երաշխավորի դատարանների կառավարչական որոշումների օրինականացումը¹:

Այժմ փորձենք հիմնավորել վերը նշված տեսակետները: Նախ անդրադառնանք Ֆրանսիայի փորձին (վարչական ակտը օրինականորեն իրականացնելու փորձ առաջին անգամ այստեղ է կատարվել): Ա.Ի. Ելիստրատովի դիպուկ նկատմամբ՝ «հենց հանրային իրավունքի զարգացման նոր միտումներն են վարչական ակտի օրինական նպատակի գաղափարը: Դատավորը, որը կոչված է օրենքի նպատակի մեկնաբանությանը, անխուսափելիորեն վեր է բարձրանում օրենքի բանաձևերից դեպի այն հանրային շահերը, որոնց պետք է ծառայի նա: Եվ վարչական ակտի համապատասխանությունը հանրային ծառայության խնդիրներին դառնում է նրա համար ակտի իրավաչափության որոշման բարձրագույն չափանիշը: Այդ չափանիշը գտնելու համար քաղաքացու և իշխանության միջև կանգնած դատավորը օրենքը պետք է հանգեցնի հասարակության բարեկեցության սեփական հասկացողությանը, համաձայնեցնի այն սեփական իրավագիտակցության հետ»²:

Իհարկե, պարզորոշ է դառնում, որ Ֆրանսիայում այսպիսի միտման առաջխաղացումը նշանակում էր վարչական արդարադատության տարածումը վարչական հայեցողության կամ հայեցողական իշխանության վրա: Հարկ է նշել, որ վարչական իրավունքի ֆրանսիական ուսմունքը վարչական գործունեությունը ոչ միայն մեկնաբանում է որպես օրենքի վրա խիստ հիմնված և դրանից բխող գործունեություն, այլև հիմք է ընդունում սահմանադրականության և օրինականության սկզբունքները, որը նշանակում է համապատասխանություն պոզիտիվ իրավունքի բոլոր նորմերին, այդ թվում՝ դատարանի որոշումներին: Վարչակազմի լիազորությունները խստորեն սահմանանշված են, սակայն դրանց շրջանակ-

¹ **Давыдов К.В.** Судебный контроль за дискреционными административными актами: европейский опыт. Новосибирск, 2014 (Материалы I Всероссийской научно-практической конференции студентов и молодых ученых «Современные проблемы административного судопроизводства и административного процесса»). - С. 6.

² **Елистратов А.И.** Основные начала административного права, 2-е изд., 1917, - С. 157.

ներում վերջինս իրավասու է գործելու ինքնուրույն: Ընդ որում՝ այս ոլորտում Ֆրանսիան է առաջին անգամ ներմուծել այնպիսի չափանիշ, ինչպիսին է հանրային շահը, քանի որ վարչարարությունը կամ, այլ կերպ ասած, վարչական մարմինների գործունեությունը ծառայում է հասարակությանը: Սա է հենց վարչական ակտերի ընդունման և նյութաիրավական ակտերի կատարման գլխավոր չափանիշն ու երաշխիքը ¹:

Այսպիսով, համապատասխան վարչական ակտերի ստուգման հիմնական իրավական հիմք են հանդիսացել լիազորությունների չարաշահմանը վերաբերող հայցերը: Բանն այն է, որ դիմումատու վեճերից մեկի դեպքում նպատակ էր հետապնդում ապացուցելու ոչ թե իր սուբյեկտիվ իրավունքների խախտումը, այլ վիճարկվող ակտի անհամապատասխանությունը գործող օրենսդրությանը, վարչական իրավունքի նորմին:

Նշենք, որ դատական փորձն առանձնացնում է վիճարկվող որոշման վերացման մի քանի հիմքեր: Եվ եթե դրանց մեծամասնությունը սովորական է ժամանակակից աչքի համար (վարույթի կամ ընթացակարգի թերացում, պաշտոնատար անձի կամ մարմնի անձեռնահասություն (կոպետենտության պակաս), նյութական իրավունքի նորմերի խախտում², ապա դրանցից առնվազն մեկը՝ իշխանության չարաշահումը մինչ օրս էլ բավականին արտասովոր է: Հենց «իշխանությունից շեղում»-ն է առավել ցայտուն արտահայտում տվյալ վարչական ակտերի ստուգման ուղղության նորույթը, որով հետազոտվում է օրինական նպատակից շեղվելու փաստացի առարկան և օբյեկտը: Ֆրանսիայի իրավական պրակտիկայում աղմուկ հանած գործեր են եղել, օրինակ, գործարանի փակումը՝ սանիտարական կանոնների խախտման հիմքով, մինչդեռ այդ փակումն իրականում ուներ պետական գործարանին անցանկալի մրցակցից ազատելու միտում: Կամ՝ քաղաքապետը պաշտոնատար անձին հեռացնում է աշխատանքից այն պատճառաբանությամբ, որ վերջինս արձանագրություն էր կազմել այն գինետան սեփականատիրոջ դեմ, որտեղ հավաքվում էին քաղաքապետի քաղաքական համակիրները: Մեկ այլ դեպքում արգելվել էր լողափում հանվել-հագնվելը բարոյական նորմերը պահպանելու հիմնավորմամբ: Իրականում այդ արգելքի

¹ Гунель М. Введение в публичное право (пер. с франц.). - М., 1995. - С. 169.

² Административное право зарубежных стран. - М., 2003. - С. 283-284.

նպատակն այն էր, որ լողացողներն օգտվեն տեղի վճարովի հանդերձախցերից: Թերևս պարզ է, թե այսպիսի դեպքերում որքան են ընդլայնում այն վարչական ակտերի դատական ստուգման սահմանները, որն իրականացնում է ոչ թե օրենսդիրը, այլ իրավակիրառը, այս դեպքում՝ դատարանը: Խոսքը դեռ ձևական օրինականության մասին է, բայց իրականում լիազոր մարմինը վարչական ակտն արդեն դիտարկում է նպատակահարմարության տեսանկյունից, որը, իհարկե, պետք է նրան օժտի գնահատողական առավել լայն գործառնությունով: Հենց այս առումով ուսանելի է Ֆրանսիայի իրավական պրակտիկայում և ուսունքում վարչական հայեցողական ակտերին առնչվող հարցերի վերլուծությունը:

Ֆրանսիայի այս գործելակերպի առաջին իսկ օրվանից շատ իրավագետներ անդրադարձան հայեցողական ակտերի կիրառման խնդրին: Մասնավորապես Լորան Դյուգին հայտարարեց, որ «այլևս չկան և չեն կարող լինել կառավարման հայեցողական ակտեր»¹: Սակայն ժամանակակից գրականության մեջ նշվում է, որ Ֆրանսիայում գործնական իշխանության չարաշահման դեպքեր պարունակող հայեցողական ակտերի վերացումը խիստ հազվադեպ է, քանի որ հենց պրակտիկայում պարզ է դարձել, որ դատական մարմինը բախվում է մի բարդ խնդրի. ինչպե՞ս ապացուցել վիճարկվող որոշման նպատակի անօրինականությունը²: Այսպիսով, ենթադրվում էր, որ վերը նշված փորձը պետք է հանգեցնե՞ր անթերի արդյունքների՝ հարստացնելով նաև դատական պրակտիկան արդարադատության նպատակներին հասնելուն ուղղված նոր գործերով (պետք է տարածեր վարչական արդարադատությունը վարչական հայեցողական ակտերի ոլորտի վրա): Սակայն այդ փորձն այնքան էլ արդյունավետ չեղավ:

Նկարագրված գործելակերպը դատական և վարչական մարմիններին կարող է ծառայել գործիքաշարի և վերլուծական մոտեցման ու հայեցողական գործողությունների նպատակների մեկնաբանության տեսանկյունից, աջակցել դրական պրակտիկայի ձևավորմանը:

Քննարկվող ժամանակահատվածում վերը նշված գաղափարը զարգացում ապրեց նաև Գերմանիայում: Հարկ է նշել, որ մինչև Գոգենցուլլերների բացարձակ մենիշխանության վերջը Գերմանիայի

¹ Duguit L. Les transformations du droit public, 1913, P. 267.

² Административное право зарубежных стран. – М. - С. 199-200.

իրավական ուսմունքը և դատական պրակտիկան մերժում էին հայեցողական ակտերի ստուգման հնարավորությունը: Ապա նաև դատական համակարգը կաթվածահար վիճակում հայտնվեց նացիստական կամայականության հետևանքով:

Միայն 20-րդ դարի կեսից սկսած՝ Գերմանիան վերցնում է Ֆրանսիայի կառավարչական գործունեությունը դատական ստուգման ենթարկելու փորձը ոչ միայն ձևական (պարզագույն վարության և նյութական) չափանիշներին դրանց համապատասխանության տեսանկյունից, այլև այնպիսի հարցերի, որոնք առաջին հայացքից դժվար ձևակերպելի էին թվում¹:

Եվ այստեղ կարևորվում է իրավական գործերի՝ *համաշափության սկզբունքի* դերը, որը ներառում է ակտի նպատակի հայեցակարգը՝ ձևավորելով ավարտուն ինստիտուտ: Իրավակիրառման նշված սկզբունքը հիմնվում է ձեռնարկվող իրավական միջոցների և նպատակի հարաբերության վրա, իսկ սա ֆորմալ իրավաբանական երևույթների իրավական ստուգման ճանապահին պետք է համարվի երկրորդ քայլը: Նաև՝ հենց Գերմանիայում է սկսել ձևավորվել հայեցողության այնպիսի ինքնուրույն տեսությունը, որում պայմանականության որոշ մասնաբաժնով կարելի է առանձնացել հետևյալ տարրերը՝ հայեցողության ձևերը՝ վարչական ակտերի դատական վերանայման հիմքերը և դատական հսկողության ինտենսիվությունը կամ խտությունը:

Այսպես, ԳԴՀ-ի 1976 թ. ՎԱ օրենքի 40-րդ պարագրաֆն ամրագրում է հետևյալ կանոնը. եթե վարչական մարմինն իրավասու է գործել սեփական հայեցողությամբ, ապա սույն իրավունքը պարտավոր է իրագործել տրամադրված լիազորությունների իրագործման նպատակով և պահպանել հայեցողական գործունեության՝ օրենքով հաստատված սահմանները²: 2004թ. ընդունված ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ հոդվածը («Հայեցողական լիազորությունները սահմանափակվելը») ամրագրում է մի կողմից՝ հայեցողական լիազորության հասկացությունը («օրենքով վարչական մարմինն վերապահված իրավունք՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը»), մյուս կողմից՝ պարունակում է

¹ Рихтер И., Шупперт Г. Судебная практика по административному праву. - М., 2000. - С. 80.

² «Сборник законодательных актов по административным процедурам», Алматы, 2013. - С. 172.

ընդհանուր դեկլարատիվ նորմ, որը գրեթե բառացիորեն վերարտադրված է ԳԴՀ-ի 1976 թ. ՎԱ օրենքի 40-րդ պարագրաֆում («Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչական իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ»):

Երկրորդ, վարչարարության վերաբերյալ օրենքները հայեցողական վարչական ակտերի հանդեպ կարող են սահմանել լրացուցիչ պահանջներ: Որպես օրինակ կարելի է բերել 1999 թ. Վրաստանի ընդունված վարչական օրենսգրքի 53-րդ հոդվածը («Վարչական իրավական ակտի հիմնավորումը»): Եթե 53-րդ հոդվածի 1-ին մասով գործող «սովորական» վարչական ակտերի առնչությամբ գործում է ընդհանուր նորմ («գրավոր տեսքով տրված անհատական վարչական իրավական ակտը պետք է պարունակի գրավոր հիմնավորում»), ապա 4-րդ մասը պարունակում է հատուկ կանոն. «Եթե վարչական մարմինը վարչական իրավական ակտի ընդունման ժամանակ գործել է հայեցողական լիազորության սահմաններում, գրավոր հիմնավորման մեջ մատնանշվում են վարչական իրավական ակտի ընդունման գործում էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները»: Այս դեպքում արդեն ակնհայտ է ընդհանուր դրույթների որոշակիացումը: Բայց այստեղ հարց է ծագում՝ որո՞նք են վրացական վարչական օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված նորմերի խախտման հետևանքները: Եվ եթե վրացական օրենսդրությունը չունի դրա պատասխանը, ապա, օրինակ, իտալական իրավակարգում կարելի է գտնել մի հետաքրքրաշարժ գիտափորձ: Ինչպես նշում է Դ. Դը Պրետիսը (Daria de Pretis), եթե սկզբում վարչական ակտերի շահադրդման ընդհանուր պահանջը որոշ չափով հարթում էր պարտավորեցնող ու հայեցողական ակտերի իրավական ռեժիմների միջև եղած տարբերությունը, ապա 2005 թ. վարչարարության վերաբերյալ իտալական օրենքի փոփոխությունից հետո իրավիճակը փոխվեց: Ներկայում հիմնավորման պահանջների խախտումն էական է համարվում միայն հայեցողական ակտերի դեպքում (նշանակում է՝ դրանց առ ոչինչ

ճանաչելու համար): Մինչդեռ «սովորական» ծանրաբեռնող վարչական ակտի առումով նման թերությունը կասկածի տակ չի դնում դրա օրինական լինելու հանգամանքը¹:

Այնուամենայնիվ, օրենսդրի նմանատիպ քայլը նույնպես թույլ չի տալիս հետևություն անել հայեցողական վարչական ակտերի մշակման ու ընդունման վարչական ընթացակարգային նորմերի ինքնուրույն առանձնահատկության մասին: Կարծում ենք՝ այստեղ կարելի է բերել վարչական հայեցողության ընդգրկման հարցում ոլորտը կարգավորող օրենքների փորձերի երրորդ կողմը. Առանձնահատուկ վարչական ընթացակարգային նորմեր, որոնք հրապարակության, թափանցիկության և ոչ իշխանական սուբյեկտների ներգրավման վերաբերյալ ավելի մեծ պահանջներ են ներկայացնում: Օրինակ՝ ԳԴՀ-ի 1976 թ. «Վարչական վարույթի մասին» օրենքի 63-71-րդ պարագրաֆները նվիրված են «ձևական ընթացակարգերին», իսկ 72-78-րդ պարագրաֆները՝ պլանների հաստատման ընթացակարգերին²: Հասարակական կարծիքի և փորձագիտական գնահատականների վրա հիմնված նման ընթացակարգերն անշուշտ առաջընթացային քայլեր են: Սակայն այստեղ ևս բաց է մնում մի այլ կոշտ հարց՝ ինչու՞ է լիազոր սուբյեկտն ընդունում վարչական բոլոր ընթացակարգային նորմերի արդյունքում հենց այն որոշումը, որը կայացնում է: Կարելի է լսել հարյուրավոր դիրքորոշումներ, անցկացնել բազմաթիվ հանրային լսումներ, բայց ոչ իշխանական մասնակիցների կարծիքները հաշվի առնելու անհրաժեշտության, վերջնական վարչական ակտի շահադրդման անհրաժեշտության մասին իմպերատիվ նորմերն անգամ չեն երաշխավորում դրա համապատասխանությունը, արդյունավետությունն ու նպատակահարմարությունը:

Եվ այսպես, ռոմանագերմանական իրավական համակարգում իրականացվել է կառավարչական գործողությունների ձևերի իրավականացման վառ արտահայտված գործընթաց, որի մեջ կարևորագույն նշանակություն ունի վարչական ընթացակարգային նորմերի ընդունումը: Սակայն միայն գործընթացներին հավատալը չտվեց այն հարցի պատասխանը, թե ինչպես պետք է գործել հայեցողությամբ կիրառվող

¹ Pretis D. Italian Administrative law under the influence of European law // Italian Journal of «Public Law», 2010, № 1, P. 36-37.

² «Сборник законодательных актов по административным процедурам», Алматы, 2013. - С. 181-184, 185-190.

վարչական ակտերի իրավիճակներում: Ի՞նչն է խթանել հայեցողությամբ ու դրա դատական վերահսկողության հիմնախնդրի դոկտրինալ ձևակերպումը: Դրանում ամենամեծ դերը թերևս ունեցել է գերմանական փորձը:

Առաջին. Գերմանական իրավագիտական միտքը մշակել է հայեցողության ձևերի մասին յուրահատուկ ուսմունք: Վարչական իրավունքի գերմանացի մասնագետներն ավանդաբար առանձնացնում են հայեցողության երկու այնպիսի տեսակներ, ինչպիսիք են անորոշ իրավական հասկացողությունները և հենց հայեցողությունը: Անորոշ իրավական հասկացողությունները («արդարություն», «բարեխղճություն», «հուսալիություն», «հանրային շահեր», «հարգելի պատճառ» և այլն) ամրագրվում են իրավական ակտերում, բայց դրանք քիչ տեղեկատվություն են պարունակում, այդ նորմերի որոշակիացումը տեղի է ունենում վարչական մարմինների իրավակիրառ գործունեության ընթացքում: Հետևաբար արդեն այստեղ վարչական օղակի գործունեության որոշակի տարածք է առանձնացված, որի շրջանակներում այն կարող է մեկնաբանել իրավական հասկացողությունները և անգամ որոշել, թե դրանք որքանով են համապատասխանում որոշակի իրավիճակի հանգամանքներին¹: Երկրորդ ձևը՝ «սովորական հայեցողությունը», Խ. Մաուրերը սահմանում է հետևյալ կերպ. «Հայեցողությունը առկա է, եթե կառավարվող օղակը օրենքով սահմանված հանգամանքներում կարող է ընտրություն կատարել գործունեության տարբեր եղանակների միջև: Օրենքն այդ դեպքում հանգամանքները չի համադրում մի իրավական հետևանքի հետ, այլ կառավարման օղակին լիազորում է ինքնուրույն որոշելու իրավական հետևանքը, ընդ որում՝ նրան առաջարկվում են երկու կամ ավելի հնարավորությունները, և մատնանշվում է գործողությունների որոշակի շրջանակ: Հայեցողությունը կարող է վերաբերել նրան, թե կառավարման օղակն արդյո՞ք ցանկանում է մոտենալ թույլատրելի սահմանին (հայեցողական որոշում), կամ թե տարբեր թույլատրելի միջոցներից ո՞րն է այն ուզում կիրառել, եթե գործելու է (հայեցողական ընտրություն)»²: Այսպիսով, նեղ իմաստով հայեցողության որոշիչ տարրերը գործունեության՝ առաջարկված տարբեր տեսակների միջև ընտրությունն է, որոնք իրավական տեսանկյունից համարժեք են:

¹ «Административное право зарубежных стран». - М., 2003. - С. 323.

² **Рихтер И., Шунперт Г.** Судебная практика по административному праву. - М., 2000. - С. 67.

Վերոնշյալին զուգահեռ՝ մասնագիտական գրականության մեջ հաճախ առանձնացվում են նաև հայեցողության այլ ձևեր, այդ թվում՝ հայեցողության պլանավորելիս¹: Ի դեպ, նկատենք, որ ԳԴՀ-ի 1976 թ. արդեն հիշատակված օրենքի 40-րդ պարագրաֆը (ինչպես և ԳԴՀ-ի 1960 թ. ընդունած «Վարչական դատավարության մասին» օրենքի 114-րդ պարագրաֆի դրան համապատասխանող նորմերը) առանց այդ էլ բավական մակերսային է, հասցեագրված է միայն հայեցողությանը նեղ իմաստով և անտեսում է անորոշ իրավական հասկացությունները:

Երկրորդ. գերմանական դատական պրակտիկայում կարևոր է սերտ փոխազդեցության մեջ գտնվող ամենատարբեր հիմնավորումների, այլ խոսքերով՝ հայեցողության «սխալների խմբերի» մշակումը: Դրանք են.

- հայեցողության սահմաններից դուրս գալը (մարմինն ընտրում է գործունեության այնպիսի ուղի, որը հանգեցնում է օրենքով սահմանված լիազորությունների սահմաններից դուրս իրավական հետևանքների),

- հայեցողություն չկիրառելը (հայեցողության դրսևորման իրավասության տրամադրման դեպքում վարչական մարմինը պարտավոր է այն կիրառել, եթե անգամ իրավասու մարմնի հայեցողության ներքո է դրա՝ որևէ գործողության դիմելու կամ չդիմելու հարցը),

- հայեցողության սխալ կիրառումը (վարչական մարմինը շեղվել է լիազորության բուն նպատակից կամ հանգամանքների գնահատման ժամանակ առաջնորդվել է թյուր դատողություններով),

- հիմնական իրավունքների կամ ընդհանուր վարչական ու սահմանադրական սկզբունքների խախտումը²:

Դժվար չէ նկատել, որ այստեղ նույնպես խոսքը հիմնականում հայեցողության միայն որոշ տեսակների մասին է (հայեցողությունը նեղ իմաստով):

Երրորդ. Հայեցողության տարբերակման ձևերին ու սխալներին զուգահեռ՝ հայեցողական ակտերի դատական գնահատականի «գործուն գործիքը», դրա մեթոդաբանական հիմքը համամասնության (համաչափության) սկզբունքի կիրառումն է, որն ամփոփում է ակտի նպատակի ֆրանսիական հայեցակարգը և այն ստեղծագործաբար լրացնում է: Իրավակիրարկման (որոշ դեպքերում նաև նորմաստեղծման) նշված

¹ Kunnecke M., նշվ. աշխ., էջ 78*-81, Рихтер И., Шупперт Г., նշվ. աշխ., էջ 38-39, 76-85:

² Административное право зарубежных стран: учебник / Под ред. А.Н. Козырина, М.А. Штатиной. - М., 2003, էջ 37, 89-92, 110-130 (գլխի հեղինակ՝ Կ. Ռայտենայեր), էջ 326:

սկզբունքը հիմնվում է նպատակների ու ձեռնարկված իրավաբանական ջանքերի հարաբերակցության վրա¹:

Ի վերջո, վարչական հայեցողության տեսության չորրորդ կողմը գերմանական իրավական համակարգի մշակած վարչական հայեցողական ակտերի նկատմամբ դատական հսկողության խորությամբ վերաբերող հայեցակարգն է: Սրանով վարչական ընթացակարգային նորմերի դերն ու նշանակությունը զգալիորեն նվազեցվում են, առավել կարևորվում են վարչական հայեցողական ուսմունքի առաջնայնությունն ու դատական պրակտիկան: Եվ եթե նեղ իմաստով հայեցողության ստուգման ժամանակ առաջին և երկրորդ մոտեցումները հանրային կառավարման որոշակի ազատության գաղափարի տեսակետից ընդհանրանում են, ապա անորոշ իրավական հասկացությունների առումով դրանք զգալիորեն հեռանում են միմյանցից: Բանն այն է, որ գերմանացի հետազոտողների առաջադրած դատական հսկողության «մաքրության» պահպանման պահպանողական ցանկության մեջ (այն տանում են զուտ «դասական», այդ թվում՝ ընթացակարգային օրինականության ստուգմանը) կա մի ակնառու, անհաղթահարելի, նաև վիճելի հետևանք. այն է՝ վարչական ընթացակարգերին ու դատական ստուգումներին չենթարկվող վարչական հայեցողության աճը, որը ոչ իշխանական սուբյեկտների համար լի է անբարենպաստ հետևանքներով: Ըստ երևույթին, հենց այս դատողություններով են առաջնորդվել գերմանական դատարանները, որոնք, սակայն, հետզհետե ավելի վճռականորեն էին մերժում սահմանափակող դոկտրինայի մոտեցումները: Դա է վկայում, օրինակ, Գերմանիայի դաշտային վարչական դատարանի 1988 թ. նոյեմբերի 10-ի որոշումը թունաքիմիկատների արտադրության ու իրացման արտոնագիր տալու գործի վերաբերյալ², կամ՝ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի 1990 թ. որոշումը «Ժոզեֆինա Մուցենբախեր» գործի հավելվածների ստուգման վերաբերյալ³, նաև՝ գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի 1991թ. որոշումը

¹ **Давыдов К.В.** Судебный контроль за дискреционными административными актами: европейский опыт // «Актуальные вопросы публичного права», 2014, № 5. - С. 9-27.

² 1988 BVerwGE 12.

³ BVerfGE 83, 130.

քննական գնահատականների ստուգման վերաբերյալ: Թվում է՝ կարճ ժամանակահատվածում գերմանական իրավական համակարգը, չբավարարվելով վարչական ընթացակարգերի ու վարչական հայեցողության կապակցման և դրա ստուգման վարչական դատավարության իրավական նորմերի սահմանափակ արդյունավետությամբ, ոչ միայն վերջնականապես անցում կկատարի նորմաստեղծ գործունեությունից իրավակիրարկմանը, այլև դատարաններին իրավասություն կտա՝ ստուգելու հայեցողական վարչական ակտերի օրինականությունն ու նպատակահարմարությունը:

Այսպիսով, համաձայն ԳՖՀ Վարչական վարույթի մասին 1976 թ. օրենքի 40-ի՝ «Եթե վարչական մարմինն իրավազոր է գործելու սեփական հայեցողությամբ, ապա նա այդ իրավունքը պատրավոր է իրականացնել վերապահված լիազորությունների նպատակին համապատասխան և պահպանել հայեցողական գործելակերպի համար օրենքով նախանշված սահմանները»²: Նշված օրենքի դրույթները հայեցողական վարչական ակտերի դատական ստուգման առումով զարգանում են ԳՖՀ 1980 թ. «Վարչական-դատական վարույթի մասին» օրենքի 114-ում. «Եթե վարչական մարմինն իրավազոր է գործել սեփական հայեցողությամբ, ապա դատարանը նույնպես ստուգում է՝ հանդիսանում է արդյոք վարչական ակտը կամ դրա հրապարակման մերժումը կամ վարչական մարմնի անգործությունը հակաիրավական այնքանով, որքանով գերազանցված են հայեցողության օրինական սահմանները, կամ հայեցողության իրավունքն իրականացված է վերապահված լիազորությունների նպատակին անհամապատասխան ձևով: Վարչական մարմինը կարող է լրացնել վարչական ակտի հայեցողության մասով իր նկատառումները միայն վարչական վարույթում»³:

Այսպիսով, հայեցողության ստուգումը նեղ իմաստով անցնում է ստուգման երկու փուլ: Նախ՝ պարզվում է, թե ինչ նպատակի է ծառայում

¹ Давыдов К.В. Судебный контроль за дискреционными административными актами: европейский опыт.

² «Сборник законодательных актов по административным процедурам», Алматы, 2013. - С. 181-184, 185-190.

³ Административно-процессуальное право Германии Verwaltungsrechtsschutz in Deutschland: Закон об административном производстве; Закон об административно-судебном процессе, Законодательство об исполнении административных решений: пер. с нем. В. Бергман. - М., 2007. - С. 160-161.

հայեցողության իրականացումը, ապա՝ գտնվում են կոնկրետ դեպքը և վարչական մարմնի կողմից հայեցողության օգտագործման վերլուծությունը՝ այդ հայեցողության նպատակին համապատասխան¹: Այստեղ առաջին պլան է մղվում դատարանի կողմից համապատասխան լիազորող նորմերի հեռակա մեկնաբանությունը համաչափության (համամասնության) սկզբունքի տեսակետից:

Սակայն, ինչպես արդեն նշվել էր, առավել բարդ է իրավաբանական անորոշ հասկացությունների դատական ստուգումը, քանի որ քվազի իրավաբանական հասկացությունները զուրկ են որոշակի ձևակերպման ենթակա բովանդակությունից: Գերմանական ուսմունքը գնացել է դատական ստուգման դասական տարբերակով, այն է՝ հայեցողության օրինականության ստուգումը՝ վեր բարձրանալով մեկ աստիճան և օրինականության հայեցակարգը դիտարկելով որպես նպատակահարմարության, խելամտության և արդարության ամբողջություն: Ինչպես գրում է Կ. Ռայթմայերը, անորոշ իրավական հասկացությունների ստուգման տեսական մոտեցումների հիմքը դրել են Օ. Բախովի աշխատությունները: Նա մշակեց, այսպես կոչված, գնահատականների համար *տարածության ուսմունքը*: Դրա համաձայն՝ վարչական մարմինները պետք է ստանան գնահատականների համար որոշակի տարածություն, որում նրանք կարող են անկաշկանդ կայացնել ինքնավար որոշումներ: Վարչական դատարանները պետք է համաձայնեն այդ որոշումների հետ և իրավասու լինեն ստուգելու միայն այն հանգամանքը, թե արդյոք վարչական մարմինները դուրս չեն եկել այդ տարածության սահմաններից: Այս ճանապարհով է շարժվում գերմանական դատաիրավական պրակտիկան՝ տեսությունը ենթարկելով զարգացման ու կատարելագործման²:

Բայց վարչական հայեցողությանն այսքան մեծ ինքնավարություն տալը ոչ իշխանական սուբյեկտների համար հղի է բացասական հետևանքներով, ինչպես, օրինակ՝ Գերմանիայի դաշնային վարչական դատարանի (ԴՎԴ) 1988 թ. նոյեմբերի 10-ի որոշումն է թունաքիմիկատների արտադրման և վաճառքի արտոնագրի վերաբերյալ³: Ըստ գործի՝ դիմումատուն ուներ թունաքիմիկատների արտադրման և վաճառքի արտոնագիր, սա-

¹ Административное право зарубежных стран. - М., 2003. - С. 323-325.

² Рихтер И., Шупперт Г. Судебная практика по административному праву. - М., 2000. - С. 85-87.

³ Дело Upjohn Ltd v The Licensing Authority Established by the Medicines Act 1968 and others ((Case c-120/97) 21 January 1999).

կայն լիազոր դաշտային կատարողական մարմինը մերժեց արտոնագրի երկարացումը և ևս մեկ արտոնագրի տրամադրումը նոր տեսակի արտադրանքի համար: Ընդ որում՝ դիմումատուն կատարել էր ընթացակարգային բոլոր անհրաժեշտ պահանջները: Եզրակացության մեջ մերժման հիմնավորումն այն էր, որ պարզվել է, թե համապատասխան թունաքիմիկատները կարող են գիտության նվաճումների տեսակետից անընդունելի վնաս հասցնել: Մերժումը բողոքարկվեց առաջին աստիճանի դատարանում, որը հաստատեց հետևյալը. համաձայն բույսերի պաշտպանության մասին օրենքի 15-րդ հոդվածի՝ թունաքիմիկատները չպետք է վտանգեն մարդկանց, կենդանիների առողջությունը կամ վնասակար ազդեցություն ունենան ջրային ռեսուրսների վրա, նաև՝ էկոհամակարգի վրա գիտության տեսակետից անընդունելի հետևանքներ պետք է չառաջացնեն: Դատարանի կարծիքով՝ թույլատրելի է արտոնագրի տրամադրումը մերժել միայն այն դեպքում, երբ առկա է էկոլոգիայի վրա թունաքիմիկատների վնասակար ազդեցության հավանականության բարձր աստիճան: Ապա, փաստացի չստուգելով թունաքիմիկատների վնասակարության առկայության կամ բացակայության փաստը՝ դատարանը որոշում է կայացնում մասնակիորեն բավարարել հայցը և պարտավորեցնել արտոնագրող մարմնին երկարացնել արտոնագիրը երկու տարի և ինը ամիս ժամկետով: Կարծում ենք՝ տարօրինակ և անհամոզիչ հիմնավորում է. նման սահմանափակ ժամկետում վնասակար ազդեցություն չի սպասվում շրջակա միջավայրի վրա:

Դատարանի որոշումը բողոքարկվեց Դաշնային վարչական դատարանում: Գործադիր մարմնի դիրքորոշումն այն էր, որ «շրջակա միջավայրի վրա այլ հետևանքներ» ձևակերպումը զուրկ է իրավական որոշակիությունից և ենթակա է միայն սահմանափակ դատական ստուգման, ըստ որում՝ հենց վարչական մարմինն է ունակ իրականացնելու գնահատում իր հայեցողական լիազորություններով, և դատարանը կարող է ստուգել վարչական ակտը միայն սխալների, այդ թվում՝ հայեցողական իշխանության կիրառման ընթացակարգերի առումներով: ԴՎԴ չհամաձայնեց ո՛չ արտոնագրող մարմնի, ո՛չ առաջին աստիճանի դատարանի հետ՝ հաստատելով, որ դատարաններն իրավասու են անորոշ իրավական հասկացողությունների լիարժեք ստուգման: Սա նշանակում է, որ դատական հսկողությունը սահմանափակված չէ, և այս պարագայում

գործը պետք է քննվի ըստ էության և պետք է որոշակիացվեն անորոշ հասկացության նպատակները: Եվ չնայած նրան, որ թունաքիմիկատների վնասակար ազդեցությունները պարզելու լիազորությունը պատկանում է գործադիր մարմնին, հենց դատարաններն են լիազորված պարզելու օրենքի կիրառման ճշտությունը փաստերին համապատասխան, այդ թվում՝ նոր ապացույցների, փորձագետների եզրակացությունների և այլնի օգնությամբ¹:

Այս հիմնական հայեցակարգերը՝ վարչական հայեցողության դատարանական հսկողությունը, կայացվող ակտի և կիրառված հայեցողության ու հետապնդվող օրինական նպատակի համաչափությունը, դատարանների կողմից հայեցողության թույլատրելի տարածությունից դուրս չգալու փաստի ստուգումն ու գնահատումը, իրավական որոշակիությունից զուրկ հասկացողությունների ըստ էության ստուգումը և անհրաժեշտության դեպքում մասնագիտական գնահատականների առաջադրումը, մեծ հաջողությամբ կարող են կատարելագործել ՀՀ իրավական պրակտիկան և նպաստել մի շարք խնդիրների լուծմանը:

Եզրակացություն: Հարկ է նշել, որ միայն ընթացակարգային հարցերի ստուգման վրա արված շեշտադրումը չի լուծում հայեցողական ակտերի և հայեցողության իրականացման ընթացքում ծագող խնդիրները: Ուշադրությունը պետք է կենտրոնացնել հատկապես հայեցողության սահմանների ուվագծման վրա: Այսինքն՝ պետք է կատարել օրենսդրության մշակում՝ հնարավորինս խուսափելով իրավական անորոշություն պարունակող հասկացողություններից՝ տալով առավելագույնս սպառիչ ձևակերպումներ որոշ ոլորտներ կարգավորող իրավական ակտերում, իսկ դրա անհնարինության դեպքում պետք է կատարել իրավաչափ լուծման մի քանի տարբերակների հստակ ամրագրում՝ որպես հայեցողության իրականացման շրջանակ և հայեցողության ընթացքում օրենքով սահմանափակված վարքագծի օրենքով չարգելակվող կամ հանրության շահին չհակասող տարբերակի ընտրություն:

Եթե վարչական մարմինները պատասխանատվություն չեն կրում իրենց հայեցողական գործողությունների համար, որը առանձին խնդիր է ՀՀ օրենսդրության մեջ, ապա նշանակում է՝ նրանք կարող են գործել կամա-

¹ Kunnecke M. Tradition and Change in Administrative Law. An Anglo- German Comparison, 2007, P. 119-122, 273; Закон об административно-судебном процессе, Законодательство об исполнении административных решений: пер. с нем. / Бергман В. - М. - С. 11-13.

յական, ինչի դեպքում մարդու իրավունքների պաշտպանվածությունից և օրինականությունից խոսելու խնդիրը համարվում է չլուծված:

Նշենք, որ շատ դեպքերում դատական հսկողությունը վարչական մարմինների հայեցողական ակտերի նկատմամբ պետք է դիտարկել զսպող և խնդիրն ավելի բարձր ատյաններ չփոխանցող մի «արգելակ», (օրինակ՝ ՄԻԵԴ-ի կողմից ոչ իրավաչափ ճանաչելու և ՀՀ առջև մեծ դրամական տուգանքներ չնշանակելուն ուղղված):

Գործադիր իշխանությունն ու դրա կառուցվածքային բոլոր բաղադրիչները պետք է օրենքով ամրագրված պարտականություն ունենան, որպեսզի իրավունքի նորմի բացակայության դեպքում խնդիր լուծելիս կարողանան համագործակցել դատարանների, իրավաբանների, մասնագետների հետ: Սա կնպաստի ինչպես խնդիրը հստակ հասկանալուն, այնպես էլ մասնագետներ «վերապատրաստելուն»՝ իրենց հայեցողական լիազորությունները ճիշտ կիրառելու և գործադիր մարմնի առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման գործում:

Տարբեր երկրների գիտական և իրավական պրակտիկան ուսումնասիրելիս հանգում ենք այն հետևությանը, որ զարգացած իրավական համակարգ ունեցող արտասահմանյան երկրներում կարողանում են քաղել հայեցողական լիազորությունների դրական ներուժը՝ թույլ չտալով, որ այն վերածվի թաքնված վարչական կամայականության:

Վերը քննարկված շատ դրույթներ հաջողությամբ կարող են ներդրվել նաև ՀՀ դատաիրավական պրակտիկայում, որոնք կարող են լուծել բազմաթիվ խնդրահարույց հարցեր: Իհարկե, պետք է խուսափել միջազգային փորձի մեխանիկական կրկնություններից, հարկավոր է հաշվի առնել մեր երկրի առանձնահատկությունները: Այս կերպ հնարավոր կլինի էապես բարելավել վարչարարության արդյունավետությունը և ապահովել անձանց իրավունքների պատշաճ իրականացումը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Административное право зарубежных стран. - М., 2003.
2. Административно-процессуальное право Германии Verwaltungrechtsschutz in Deutsch-land: Закон об административном

производстве, Закон об административно-судебном процессе; Законодательство об исполнении административных решений: пер. с нем. Бергман В. - М., 2007.

3. Административное право зарубежных стран: учебник / под ред. **Козырина А. Н., Шатиной М. А.** - М., 2003.

4. «Сборник законодательных актов по административным процедурам», Алматы, 2013.

5. «Сборник законодательных актов по административным процедурам», Алматы, 2013.

6. **Алехин А.П.** Административное право Российской Федерации. - М., 1997.

7. **Абушенко Д. Б.** Судебное усмотрение в гражданском и арбитражном процессе. - М., 2002.

8. **Анторопов В.Г.** Правоприменительное усмотрение: понятие и формирование (логико-семантический): автореф. дис. канд. юрид. Наук. - Волгоград, 1995.

9. **Аверина Н.А., Козлоба Л.С.** Административное и судебное усмотрение в производстве по делам об административных правонарушениях // «Молодой ученый». – 2013. - №11.

10. **Барак А.** Судейское усмотрение. - М., 1999.

11. **Бойко Д.В.** Виды правоприменительного усмотрения // Юристы-Правоведь. - М., 2010, № 1.

12. **Гунель М.** Введение в публичное право (пер. с франц.). - М., 1995.

13. **Давыдов К.В.** Судебный контроль за дискреционными административными актами: европейский опыт // «Актуальные вопросы публичного права». - 2014.

14. **Давыдов К.В.** Судебный контроль за дискреционными административными актами: европейский опыт. - 2014.

15. **Давыдов К.В.** Судебный контроль за дискреционными административными актами: европейский опыт. – Новосибирск, 2014 (Материалы I Всероссийской научно-практической конференции студентов и молодых ученых «Современные проблемы административного судопроизводства и административного процесса»).

16. **Елистратов А.И.** Основные начала административного права. 2-е изд. - 1917.

17. **Рихтер И., Шупперт Г.** Судебная практика по административному праву. - М., 2000.

18. **Рихтер И., Шупперт Г.** Судебная практика по административному праву. - М., 2000.
19. **Рихтер И., Шупперт Г.** Судебная практика по административному праву. - М., 2000.
20. **Pretis D.** Italian Administrative law under the influence of European law // Italian Journal of «Public Law», 2010, № 1.
21. **Лазарев Б.М.** Компетенция органов управления. - М., 1972.
22. **Чичерин Б.Н.** Избранные труды. - СПб, М., 1998.
23. **Alder J.** General Principles of Constitutional and Administrative Law. Fourth Edition. 2002. Administrative Law and Governance in Asia, Comparative perspectives. 2009.
24. **Barnes J.** Towards a third generation of administrative procedure // Comparative Administrative Law/ S. Rose-Ackerman, P. L. Lindseh, Northampton, 2010.
25. **Duguit L.** Les transformations du droit public, 1913.
26. **Kunnecke M.** Tradition and Change in Administrative Law. An Anglo-German Comparison, 2007. **Redecker K.** von Oertzen H. J. Verwaltungsgerichtsordnung. Vorwort, 1997.
27. **Kunnecke M.** Tradition and Change in Administrative Law. An Anglo-German Comparison, 2007.

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ КОНТРОЛЯ ЗА АДМИНИСТРАТИВНЫМИ АКТАМИ И ВОЗМОЖНОСТИ ЕГО ВНЕДРЕНИЯ

Аннотация

После распада советской власти в нашей стране начался процесс внедрения различных правовых институтов других государств, имеющих богатый опыт. Ни для кого не секрет, что недавно обретшая независимость Армения не могла собственными правовыми ресурсами решить многие возникающие изо дня в день и требующие первоочередного решения вопросы.

Между тем в это время во многих западных странах уже существовала давняя и эффективная научно-практическая правовая система, которую новым независимым странам необходимо было как можно скорее заимствовать, чтобы противостоять возникающим вызовам и создать систему управления, соответствующую демократическому государству.

Однако процесс внедрения правовой культуры зарубежных стран должен был осуществляться очень осторожно, с учетом национальных, культурных, религиозных, исторических особенностей данной страны.

Разумеется, механическое внедрение стиля работы зарубежных институтов было бы чревато рядом негативных последствий.

В данной статье сделано заключение об ограниченности применимости административно-процессуальных норм к дискреционным административным актам, особенно к таким видам дискреции, как «неопределенные правовые договоренности» и «дискреционный выбор» (когда последний предполагает содержательную оценку фактических обстоятельств).

Выходом из подобной ситуации является модернизация судебного контроля, расширение его предмета, а также глубины судебного контроля в зависимости от видов усмотрения и активного применения принципа правомерности (соразмерности).

Ключевые слова: административный акт, усмотрение, судебный контроль, процедура, прецедент, апелляция, судебный контроль, законодательный пробел.

INTERNATIONAL EXPERIENCE IN SUPERVISION OF ADMINISTRATIVE ACTS AND THE POSSIBILITIES OF ITS IMPLEMENTATION

Annotation

The collapse of Soviet power in our country was followed by the process of implementing various legal institutions of other states with rich experience.

It was no secret that the newly established and unprepared Armenia was unable to resolve issues in the country with its own legal resources, which were deepening every day and required priority attention. Meanwhile, during the same period, a number of Western countries already had a scientific, long-term and effective legal system, which the newly independent countries had to implement as quickly as possible in order to face the challenges and have a governance system suitable for a democratic state. However, the process of implementing the legal culture of a foreign state must be carried out carefully and take into account the national, cultural, religious and historical characteristics of a given country. Of course, the mechanical implementation of the practices of foreign institutions is fraught with a number of negative consequences.

The article concludes that the applicability of administrative procedural rules to discretionary administrative acts is limited, especially to such types of discretion as “uncertain legal agreements” and “discretionary choice” (when the latter involves a meaningful assessment of factual circumstances). The way out of this situation is the modernization of judicial control and expansion of its subject matter, as well as the expansion of the depth of judicial control depending on the types of discretion, and the active application of the principle of jurisprudence (proportionality).

Keywords: administrative act, discretion, judicial control, procedure, precedent, appeal, judicial control, legislative gap.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.09.2023 թ., տրվել է գրախոսության 26.09.2023 թ., ընդունվել է տպագրության 03.10.2023 թ.:

ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 3(111)2023

DOI: 10.59560/18291155-2023.3-213



ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ

*ՀՀ Վճռաբեկ դատարանի
աշխատակազմի իրավական
փորձաքննությունների
ծառայության գլխավոր
մասնագետի պաշտոնակատար,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Ամփոփագիր

Արտասահմանյան տարբեր երկրների և ներպետական օրենսդրության մի շարք ինստիտուցիոնալ կառուցակարգերում և իրավանորմերում հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ ամրագրված են որոշ դրույթներ, որոնք այս կամ այն կերպ հարաբերակցում են քրեաիրավական տարբեր ինստիտուտների հետ:

Այդ համատեքստում՝ պայմանավորված հատկապես 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի նորամուծություններով, առանձնակի կարևորվում է հետազոտության առարկա դարձնել հանցագործության պրովոկացիայի դրսևորումները անհրաժեշտ պաշտպանության շրջանակներում:

Մասնավորապես, այդ նորամուծությունների շարքում առանձնանում է պրովոկացիոն դրսևորումների՝ որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակի բացակայության պայմանի նախատեսումը:

Նախատեսված նորամուծումը պայմանը՝ անհրաժեշտ պաշտպանության շուրջ ձևավորված հարուստ փորձի համադրությամբ, խթան կհանդիսանա հանցագործության պրովոկացիայի դրսևորումները պատկերացնելու, տվյալ երևույթի տեղը քրեական իրավունքում ճշգրտելու, ինչպես նաև

3(111)2023
◆ ՏԵՂԵԿՎԵԿԻ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ներպետական կարգավորումների առաձևահատկություններն ընդգծելու, դրանցում առկա հիմնախնդիրները վերհանելու և զարգացման հետագա միտումները կանխորոշելու համար:

Հոդվածի շրջանակներում քննարկման առարկա են դարձվել անհրաժեշտ պաշտպանության և հանցագործության պրովոկացիայի համակցված կապի, անհրաժեշտ պաշտպանության իմիտացիայով պրովոկացիա իրականացնող և պրովոկացիայի ենթարկվող անձանց քրեաիրավական գնահատականների հիմնահարցերը:

Հոդվածում առաջ քաշված թեզերը հիմնվել են դոկտրինալ մեկնաբանությունների, դատական պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումների, արտասահմանյան երկրների և ներպետական փորձի վրա, ինչն էլ ավելի է ամրապնդել դրանց հիմնավորվածությունը:

Վերհանված խնդիրների շուրջ կատարվել են համապատասխան եզրահանգումներ և առաջ քաշվել համապատասխան առաջարկներ, որոնք օգտակար կլինեն, ինչպես քննարկված ինստիտուտների տեսական հիմունքների մեկնաբանման, այնպես էլ գործնականում նպատակային կիրառման և օրենսդրական հետագա զարգացման առումներով:

Հիմնաբառեր. հանցագործության պրովոկացիա, անհրաժեշտ պաշտպանություն, օրենսդրություն, դոկտրին, իրավանորմ, եզրակացություն, առաջարկ:

Հանցագործության պրովոկացիայի և քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք հանդիսացող անհրաժեշտ պաշտպանության միջև կապի առանձնահատկությունները՝ արտասահմանյան տարբեր երկրների և ներպետական կարգավորումների համակարգային վերլուծության հիման վրա կարելի է դասակարգել ներքոնշյալ երկու խմբի:

1) *Հանցագործության պրովոկացիան հանդիսանում է անհրաժեշտ պաշտպանության իրավիճակը բացառող պայման:*

Իսպանիայի քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված է, որ քրեական պատասխանատվության ենթակա չէ նա, ով գործում է ի պաշտպանություն սեփական անձի կամ իրավունքների, ինչպես նաև՝ ի պաշտպանություն այլ անձի կամ իրավունքների՝ պահպանելով այնպիսի պայմանը, ինչպիսին է պաշտպանվողի կողմից պրովոկացիայի բացա-

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(111)2023

կայությունը, այսինքն, երբ անհրաժեշտ պաշտպանության վիճակը չի հրահրվել վնաս պատճառած անձի կողմից¹:

Հարկ է նշել, որ համանման կարգավորումներ են նախատեսված նաև Արգենտինայի (34-րդ հոդված²), Էկվադորի (33-րդ հոդված³), ինչպես նաև Ուգանդայի (հոդված 37⁴) քրեական օրենսգրքերով:

Միննույն ժամանակ, հատուկ կարևորվում է քննարկման առարկա դարձնել գործող ՀՀ քրեական օրենսգրքի՝ սադրանքի կամ պրովոկացիայի⁵ որպես անհրաժեշտ պաշտպանության (32-րդ հոդվածի 7-րդ մաս) վիճակի բացակայության պայմանի առանձնահատկությունները, որը ներպետական քրեական օրենսդրությամբ սահմանված նորամուծություն է:

2) *Հանցագործության պրովոկացիան փութողի համար հանդիսանում է անհրաժեշտ պաշտպանության վիճակի առաջացման պայման և քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք:*

Սերբիայի քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով նշվում է «ինքնապաշտպանության» վիճակի մասին, որն իր հատկանիշներով նույնանում է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի հետ: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ այն դեպքում, երբ անձը սահմանազանցում է ինքնապաշտպանության սահմանը ծայրահեղ սադրանքի կամ հարձակման հետևանքով առաջացած վախի պատճառով, կարող է արդարացվել⁶:

Դասակարգման 1-ին խմբում վկայակոչված իրավադրույթների համադրությունից առաջ է գալիս հանցագործության պրովոկացիան անհրաժեշտ պաշտպանությամբ քողարկող անձի քրեական պատասխանատվության հիմնահարցը՝ պայմանավորված նրանով, որ անհրաժեշտ պաշտպանության պատրանք ստեղծող անձի արարքում նշմարվում է

¹Տե՛ս https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/ Criminal_Code_2016.pdf (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):

²Տե՛ս <http://observatoriolegislativocele.com/en/Criminal-Code-of-the-Argentine-Republic-Law-11179/> (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):

³ Տե՛ս <https://www.global-regulation.com/translation/ecuador/3349985/comprehensive-criminal-code.html> ((հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):

⁴Տե՛ս <https://lex.uz/mobileact/111457> (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):

⁵ Նշված տերմինների նույնական լինելու մասով տե՛ս **Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան**, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջ 78:

⁶ Տե՛ս https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20%20Code_2019.pdf (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):

հակահրավականության և վտանգավորության հատկանիշների առկայություն:

Այս մասին ուղղակիորեն վկայում են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով և նույն օրենսգրքի 34-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրավադրույթները:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի՝ անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացակայում է, եթե տեղի է ունեցել անհրաժեշտ պաշտպանության սադրում, այսինքն՝ երբ անձին վնաս պատճառելու նպատակով պաշտպանվողը նրան դրդել է հակահրավական ոտնձգություն կատարելու:

Այսինքն, հիշյալ դրույթները, նախատեսված լինելով քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում, միևնույն ժամանակ ներկայացնում են անձի արարքի նկարագրություն՝ իր օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի նշմամբ, ինչն էլ իր հերթին առաջ է բերում տվյալ իրողությանը քրեահրավական գնահատական տալու հիմնահարցը:

Պետք է նշել, որ հիշյալ հիմնահարցի շուրջ առկա են դատական պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումներ, ինչպես նաև մի շարք տեսաբանների իրարամերժ մոտեցումներ:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանն արձանագրել է, որ անհրաժեշտ պաշտպանության իրավիճակը բացակայում է բոլոր այն դեպքերում, երբ անձն ինքն է հրահրում հարձակում, որպեսզի դրա քողի տակ կատարի ապօրինի գործողություններ և նրա արարքները ենթակա են որակման ընդհանուր հիմունքներով¹:

Մ.Ա. Ֆոմինի կարծիքով, անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով, այն դեպքում, երբ առկա է հանցագործության պրովոկացիա, որի արդյունքում նրա ոտնձգությանը ենթարկված անձը, այսինքն՝ պրովակատորը՝ նշում է, որ ինքը դարձել է «հարձակման զոհ» և գտնվել անհրաժեշտ պաշտպանության վիճակում²,

¹ St' u O primeneniі sudami zakonodatel'stva o neobkhodimoy oborone i prichinenii vreda pri zaderzhanii lica, soverшившего преступление: Постановление Пленума Верховного Суда РФ от 27 сент. 2012 г. № 19, կետ 9:

² St' u **Фомин М.А.** Как искоренить провокацию преступлений // Уголовный процесс. – Москва, 2015. – №5. – էջեր 56-63:

ինչպիսի տեսակետ է արտահայտվել դեռևս Խորհրդային տարիների քրեական իրավունքի տեսությունում¹:

Նախորդ երկու պարբերություններից ձևավորվում է այն մոտեցումը, որ անհրաժեշտ պաշտպանության իրականացման տակ, պրովակատորի քրեական պատասխանատվությունը պետք է դիտարկվի ընդհանուր հիմունքներով՝ այն հանցատեսակով, որը նա նպատակ է ունեցել կատարել «իրական տուժողի» նկատմամբ:

Մի շարք հեղինակներ այլ մոտեցում են ցուցաբերել՝ նշելով, որ այն դեպքերում, երբ անհրաժեշտ պաշտպանության վիճակը հանդիսանում է անձին վնաս հասցնելը քողարկելու միջոց, այն պետք է համարել վտանգավորություն ունեցող առանձին արարք², ինչպիսի դիրքորոշումն առավել հիմնավոր է թվում, պայմանավորված մի շարք հանգամանքներով:

Նախ, հարկ է նշել, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակի «սցենարավորմամբ» անձին ոտնձգության դիմելու վճռականության մղելու պրովոկացիան խեղաթյուրում է օբյեկտիվ իրականությունը՝ այդպիսով փաստորեն խոչընդոտելով իրավասու մարմինների աշխատանքը, ինչով էլ փաստորեն արդարադատության շահը:

Բացի այդ, կատարված արարքն ուղղվում է նաև անձի դեմ՝ համապատասխան ներգործության գործադրմամբ, որը՝ պայմանավորված պրովոկացիայի բնույթով, ինքնին կարող է ոտնձգել քրեական օրենսդրությամբ պաշտպանվող օբյեկտի, օրինակ՝ անձի առողջությանը:

Հետևաբար, հանրային վտանգավորության տեսանկյունից արդարացի չէ նույն հարթության վրա դիտարկել արարքի կատարումը պրովոկացիայի ուղեկցմամբ և առանց դրա:

Այս դիրքորոշման ցայտուն վկայությունն է նաև այն հանգամանքը, որ ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների օրենսդիրները քրեական օրենսդրությամբ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան համարում են առանձին հանցակազմ, այսինքն պրովոկացիայի գործոնով պայմանավորված՝ քննարկվող

¹ Տե՛ս **Пионтковский А.А.** Необходимая оборона // Уголовное право. Общая часть: учебник. - Москва: Юрид. изд-во НКЮ СССР, 1938. - էջ 408:

² Տե՛ս **Ткаченко В.** Необходимая оборона // Законность. - 1997. - № 3 - էջեր 26-29; **Кабурнев Э.В.** Ответственность за убийство при превышении пределов необходимой обороны: дис. ... канд. юрид. наук. - Москва, 2002. - էջ 157:

հանցակազմը ոչ թե նույնանում է բուն կաշառքի հանցակազմի նպատակների հետ, այլ իրենից ներկայացնելով լոկ ապացույցների կեղծման կամ շանտաժի նպատակ ունեցող արարք՝ իր հակաիրավականությամբ և վտանգավորությամբ հանդիսանում է քրեական օրենսդրությամբ նախատեսված առանձին հանցատեսակ, ինչն էլ ցույց է տալիս նկարագրված արարքի վերաբերյալ քրեաիրավական հակազդման գործիքներ նախատեսելու անհրաժեշտությունը:

Վերը ներկայացված դասակարգման 2-րդ կետի համատեքստում քննարկման է ենթակա անհրաժեշտ պաշտպանության քողի տակ հանցագործության պրովոկացիայի իրականացումը՝ իրականում վնաս կրող անձի դիտանկյունից:

Անհրաժեշտ պաշտպանության պատկեր ստեղծող, սակայն իրականում պրովոկացիա իրականացնող անձի նկատմամբ քրեաիրավական հակազդման մեխանիզմներ նախատեսելու վերաբերյալ վերը շարադրված տեսակետերի պայմաններում նախորդիվ ներկայացված իրավիճակը կարող է առերևույթ վկայել այն մասին, որ փաստորեն անձը, ում նկատմամբ կատարվում է պրովոկացիան, իրականում հանդիսանում է ոտնձգության թիրախ:

Զուգահեռաբար պրովոկացիայի ենթարկվող անձը, թեև ենթարկվում է պրովակացիայի ներգործությանը, օբյեկտիվորեն հայտնվելով անհրաժեշտ պաշտպանության վիճակում, սակայն դրա հետ մեկտեղ հնարավոր են իրավիճակներ, երբ վերջինս իրեն ուղղված ներգործության արդյունքում կատարվող արարքով կարող է սահմանազանցել պրովակատորի ոտնձգությանը՝ օրինակ առողջության համար ոչ էական վնաս հասցնելու միջոցով ուղեկցվող պրովոկացիային սառը զենքով առողջությանը ծանր մարմնական վնաս հասցնելով, ինչն ակամայից վկայում է պրովոկացիայի ենթարկվող անձի կողմից անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում թույլ տալու մասին:

Մասնավորապես, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման օբյեկտիվ հատկանիշների կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) [Ո]րոշման նպատակն է պաշտպանությունը որոշվում են ուղեկցության օբյեկտի արժեքավորությամբ, ուղեկցության ինտենսիվությամբ, պաշտպանվողի և ուղեկցողի ֆիզիկական հնարավորություններով, նրանց քանակով, ուղեկցության իրադրությամբ և

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(11)2023

այլն: Ուստի, *անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ առկա է ակնհայտ (խիստ, էական) անհամապատասխանություն ուրնձգությամբ սպառնացող և պաշտպանվողի կողմից պատճառվող վնասների միջև:*

(...) Այլ կերպ՝ *անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ պաշտպանվողը կիրառել է պաշտպանության այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնց կիրառումն ակնհայտ կերպով չէր բխում ո՛չ ուրնձգության բնույթից և վրանգավորությունից, ո՛չ էլ իրադրությունից:*

(...)»¹:

Վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո կարելի է փաստել, որ հանցագործության պրովոկացիան ոչ թե անհրաժեշտ պաշտպանության վիճակի բացակայության և անձի՝ մյուս անձի քրեական պատասխանատվությունը բացառող բացարձակ պայման է, այլ այն ցանկացած իրավիճակում ենթակա է գնահատման համապատասխան գործոնների հաշվառմամբ:

Ուստի, հանցագործության պրովոկացիան կարող է ի սպառ բացառել անհրաժեշտ պաշտպանության վիճակը միայն այն դեպքում, երբ պրովոկացիայի ենթարկված անձի արարքները համաչափ են ուրնձգության բնույթին, վրանգավորությանը, ինչպես նաև բխում են օբյեկտիվ իրադրությունից:

Եզրակացություն

Ի մի բերելով աշխատանքը՝ կարելի է արձանագրել, որ հանցագործության պրովոկացիան անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի շրջանակներում հանդես է գալիս որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացառող պայման:

Միաժամանակ հարկ է նշել, որ անհրաժեշտ պաշտպանության իմիտացիայի իրականացման միջոցով էլ կարելի է պատկերացումներ կազմել հանցագործության պրովոկացիայի որոշ դրսևորումների երևութաբանական առանձնահատկությունների այն դրսևորումների

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անուշավան Թորոսյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0118/01/11 որոշման 15-16-րդ կետերը:

մասին, որոնցով սոցիալական կյանքում կարող է իրականացվել հանցագործության պրովոկացիան:

Հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուցիոնալ կառուցակարգերում ամփոփված դրույթները, պրովոկացիայի վերաբերյալ մտահայեցական պատկերացումներ փալուց և անհրաժեշտ պաշտպանության առկայության հարցը որոշելուց զատ, նաև կարևոր նշանակություն են ստանում պրովոկատորի քրեաիրավական գնահատականը լուծելու համար՝ վերհանելով այն առերևույթ բացերը, որոնք քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նախատեսմամբ անտեսվել են Հատուկ մասի կարգավորումներում:

Այսինքն, հանցագործության պրովոկացիան անհրաժեշտ պաշտպանության համարեքստում չի բավարարվում միայն Ընդհանուր մասի խնդիրներով, այլև շոշափում է նաև հանցագործության պրովոկացիայի հակազդման մեխանիզմներ մշակելու և ներդնելու անհրաժեշտության վերաբերյալ առավել ընդգրկուն հիմնախնդիրներ, ինչն ուղիղ համեմատական է դառնում փյալ իրավիճակներում պրովոկացիայի ազդեցության ենթարկվող անձին քրեաիրավական գնահատականներ փալու հետ:

Այսպիսով, հաշվի առնելով ինչպես արտասահմանյան փորձը, այնպես էլ ներպետական վերջին կարգավորումները և աշխատանքում շարադրված հիմնավորումները՝ կապված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի հետ, իրատեսական են դարձնում հանցագործության պրովոկացիայի՝ որպես առանձին հանցակազմ դիփարկելու անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով անհրաժեշտ պաշտպանության կատարումը հանցագործության պրովոկացիաով թաքցնելու դեպքում պրովոկացիայի ենթարկված անձի արարքներին՝ համոզմունք է ձևավորվում, որ հանցագործության պրովոկացիան անհրաժեշտ պաշտպանության վիճակն ի սպառ բացառող պարտադիր նախապայման հանդիսանալ չի կարող և ցանկացած դեպքում ենթակա է գնահատման համակցության մեջ:

Այս առումով ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված՝ «Անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացակայում է, եթե փեղի է ունեցել անհրաժեշտ պաշտպանության սադրում, այսինքն՝ երբ անձին վնաս պատճառելու նպատակով պաշտպանվողը նրան դրդել է

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(11)2023

հակահրավական ուրնձգություն կատարելու» դրույթը պետք է համարել անհարկի բացարձականացված և այն լրամշակելով ավելացնել՝ «և եթե սադրանք իրականացնող անձի նկատմամբ հասցված վնասն ակնհայտորեն չի գերազանցել վերջինիս կողմից անհրաժեշտ պաշտպանության պրովոկացիայի բնույթին և օբյեկտիվ իրադրությանը» պայմանով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գաբրույան Ա., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ.**, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական:
2. **Фомин М.А.** Как искоренить провокацию преступлений // Уголовный процесс. – Москва, 2015. - №5. - էջեր 56-63:
3. **Пионтковский А.А.** Необходимая оборона // Уголовное право. Общая часть: учебник. - Москва: Юрид. изд-во НКЮ СССР, 1938. - էջ 408:
4. **Ткаченко В.** Необходимая оборона // Законность. - 1997. - № 3. - էջեր 26-29; **Кабурнеев Э.В.** Ответственность за убийство при превышении пределов необходимой обороны: дис. ... канд. юрид. наук. – Москва, 2002. - էջ 157:
5. Վճռաբեկ դատարանի՝ Անուշավան Թորոսյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0118/01/11 որոշման 15-16-րդ կետերը:
6. О применении судами законодательства о необходимой обороне и причинении вреда при задержании лица, совершившего преступление: Постановление Пленума Верховного Суда РФ от 27 сент. - 2012 г. - № 19, կետ 9:
7. https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal_Code_2016.pdf (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):
8. <http://observatoriolegislativocele.com/en/Criminal-Code-of-the-Argentine-Republic-Law-11179/> (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):
9. <https://www.global-regulation.com/translation/ecuador/3349985/comprehensive-criminal-code.html> (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):
10. <https://lex.uz/mobileact/111457> (հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):

11. https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20%20Code_2019.pdf
(հղման վերջին մուտք՝ 29.09.2023 թ.):

ПРОЯВЛЕНИЯ ПРОВОКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ В РАМКАХ ИНСТИТУТА НЕОБХОДИМОЙ ОБОРОНЫ

Аннотация

В ряде институциональных структур и правовых норм зарубежного и внутригосударственного законодательства закреплены некоторые положения о провокации преступления, которые так или иначе соотносятся с различными уголовно-правовыми институтами.

В этом контексте, особенно в связи с нововведениями Уголовного кодекса РА, принятыми 5 мая 2021 года, придается особое значение тому, чтобы сделать предметом исследования проявления провокации преступления в рамках необходимой обороны.

В частности, среди этих нововведений выделяется предусмотрение провокационных проявлений как условия отсутствия необходимой обороны.

Предусмотренное новшество в сочетании с богатым опытом, сформировавшимся вокруг необходимой обороны, послужит стимулом для представления проявлений провокации преступления, уточнения места данного явления в уголовном праве, а также выделения особенностей внутригосударственных регулирований, выявления имеющих в них проблем и предопределения дальнейших тенденций развития.

В рамках статьи предметом обсуждения стали вопросы комбинированной связи необходимой обороны и провокации преступления, уголовно-правовых оценок лиц, осуществляющих провокацию с имитацией необходимой обороны и подвергающихся провокации.

Выдвинутые в статье тезисы основываются на доктринальных интерпретациях, правовых позициях, сформировавшихся в судебной практике, зарубежном и внутригосударственном опыте, что еще больше укрепило их обоснованность.

По выявленным проблемам были сделаны соответствующие выводы и выдвинуты соответствующие предложения, которые будут полезны как в

аспекте толкования теоретических основ рассматриваемых институтов, так и в аспекте целевого применения на практике и дальнейшего законодательного развития.

Ключевые слова: провокация преступления, необходимая оборона, законодательство, доктрина, верховенство права, вывод, положение.

MANIFESTATIONS OF PROVOCATION OF A CRIME WITHIN THE FRAMEWORK OF THE INSTITUTE OF NECESSARY DEFENSE

Annotation

In a number of institutional structures and legal norms of foreign and domestic legislation, certain provisions on provocation of a crime are fixed, which in one way or another correlate with various criminal law institutions.

In this context, especially in connection with the innovations of the RA Criminal Code adopted on May 5, 2021, special importance is attached to making the manifestations of provocation of a crime within the framework of necessary defense the subject matter of research.

In particular, among these innovations, the provision of provocative manifestations stands out as a condition for the absence of the necessary defense.

The envisaged innovation, combined with rich experience on the necessary defense, will serve as an incentive to introduce the manifestations of provocation of a crime, clarify the place of this phenomenon in criminal law, as well as highlight the features of domestic regulations, identify the problems existing therein, and predetermine further development trends.

Within the framework of the article, the issues of the combined connection of the necessary defense and provocation of a crime, as well as the criminal legal assessment of persons carrying out a provocation with imitation of the necessary defense were touched upon.

The theses put forward in the article were based on doctrinal interpretations, and legal positions formed in judicial practice, foreign and domestic experience, which further strengthened their validity.

Relevant conclusions were drawn on the identified problems, and relevant proposals were put forward, which will be useful both in terms of interpreting the theoretical foundations of the institutions under discussion, and for the targeted application in practice and further legislative enhancement.

Keywords: provocation of a crime, necessary defense, legislation, doctrine, rule of law, conclusion, proposal.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.10.2023 թ., փրվել է գրախոսության 06.10.2023 թ., ընդունվել է փայագրության 09.10.2023 թ.:



DOI: 10.59560/18291155-2023.3-225

ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈՐՅԱՆ

*«Սահմանադրական դատարանի
իրավախորհրդատվական
վարչության փորձագիտական-
վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ»*

**ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ամփոփագիր

Աշխատանքը նվիրված է ձերբակալման իրավաչափության դատական երաշխիքներին: Նոր ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հիմնարար փոփոխությունների է ենթարկել ձերբակալման կառուցակարգերը, ուստի ներկայացվող հոդվածում քննարկվել են ձերբակալման իրավաչափության հետ կապված որոշ հիմնահարցեր, որոնց հիման վրա ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ՝ նոր օրենսգիրքը ավելի դյուրին կիրառելու համար:

Սահմանադրությամբ ամրագրված նպատակներին հասնելու համար պետությունը, պիտանի և անհրաժեշտ միջոցների կիրառմամբ, կարող է համաչափորեն սահմանափակել անձանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Որքան ավելի ինտենսիվ է անձի հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը¹:

Սահմանափակման ենթակա հիմնարար իրավունքներից է նաև անձի ազատության իրավունքը: Ազատության իրավունքի սահմանափակման միջոց է անձի ձերբակալումը՝ անազատության մեջ պահելը, ինչպես նաև մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը:

¹ Հիմնարար իրավունքների և ազատությունների համաչափ սահմանափակման մասին ավելի մանրամասն տե՛ս Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ 1546 որոշումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023
◆ ՏԵՂԵԿՎԳԻ
◆ ՍԵՂԵԿՎԳԻ

Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը¹ (այսուհետ՝ նաև Օրենսգիրք), էական փոփոխությունների ենթարկելով քրեական դատավարության փուլային կառուցվածքը, սահմանում է մի շարք նորամուծություններ, որոնք վերաբերում են ձերբակալման կառուցակարգերին:

Նոր օրենսգրքի դեռևս բավականաչափ «հղկված» չլինելու պայմաններում սույն աշխատությունն էլ ավելի արդիական է դառնում:

Հիմնաբառեր. ազատություն, իրավունք, իրավաչափություն, ձերբակալում, որոշում, սահմանափակում:

1. Ձերբակալման իրավաչափության վիճարկման վերաբերյալ

հարուցած վարույթի մասին: Օրենսգիրքը դատարաններին պարտավորեցնում է կալանավորման հարցը քննարկելիս ստուգել նաև ձերբակալման իրավաչափությունը: Այս համատեքստում ուշադրության է արժանի այն իրավիճակը, երբ մինչև անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունն ստանալը ներկայացվում է անձի ձերբակալման իրավաչափության դեմ բողոք, որտեղ չկա հիմնավորում անձի կյանքին սպառնացող վտանգի, կամ նրան խոշտանգման ենթարկելու մասին: Նման պայմաններում², առաջնորդվելով Օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Դատարանը դատական նիստում բողոքը պետք է քննարկի ոչ շուտ, քան հինգ, և ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում: Ենթադրենք՝ ձերբակալման վերաբերյալ բողոքն ստանալուց հետո դատարանն անհապաղ որոշում է կայացնում ձերբակալման իրավաչափության վիճարկման վարույթ հարուցելու մասին և դատական նիստ է նշանակում՝ բողոքը ստանալու 7-րդ օրը: Բողոքն ստանալու հաջորդ օրը քննիչի կողմից ներկայացվում է նույն անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն, որը նույն օրը քննվում է այլ նախագահողի կազմով: Ենթադրենք՝ դատարանը հաստատում է տվյալ անձի իրավունքների խախտումը և ամբողջությամբ բավարարում է քննիչի միջնորդությունը (ըստ էության, էական չէ, թե ինչ հետևության կհանգի դատարանը, կարևորը՝ ձերբակալման իրավաչափությունը քննարկելու հանգամանքն է): Այլ խոսքով՝ խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը քննարկելիս դատարանն

¹ Ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:
² Խոսքը գնում է Օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքերի բացակայության մասին:

ստուգում է նաև ձերբակալման իրավաչափությունը: Նման պայմաններում հարց է առաջանում՝ ինչքանով է ողջամիտ և իրավաչափ քննարկել ձերբակալման իրավաչափության վիճարկման դեմ բողոքն այն պայմաններում, երբ արդեն նշանակված դատական նիստից 6 օր առաջ այլ նախագահողի կազմով դատարանն այն քննարկել է: Այլ խոսքով՝ արդյո՞ք առաջին աստյանի դատարանը կարող է կրկին քննարկման առարկա դարձնել այն հարցերը, որոնց վերաբերյալ առկա է նույն դատարանի (այլ նախագահող դատավորի կազմով) կողմից հրապարակված, ուժի մեջ մտած և չբեկանված դատական ակտ: Կարծում ենք, որ նման հարցերի կրկին քննարկումն անթույլատրելի է: Վերը հիշատակված իրավիճակում ձերբակալման իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցած վարույթը կարճելու հնարավորություն ընձեռելը լիովին արդարացված կլիներ և կբացառեր ժամանակի և ռեսուրսների անտեղի վատնումը:

Այնուամենայնիվ, գործնականում նման իրավիճակները կարող են լուծում ստանալ վարույթի հանրային կամ մասնավոր մասնակիցների գործողությունների արդյունքում: Մասնավորապես՝ մինչև դատական նիստը կամ դատական նիստի ընթացքում վարույթի մասնակիցները կարող են դատարանին ներկայացնել խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշում, որտեղ քննարկվել է նաև ձերբակալման իրավաչափության հարցը: Նման իրավիճակում այլ բան, քան ձերբակալման իրավաչափության վիճարկման վերաբերյալ բողոքը մերժելը դատարանին չի մնում:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում անդրադառնալ դատական երաշխիքների փուլում բողոքն առանց քննության թողնելու¹ և հարուցած վարույթը կարճելու մասին² որոշումներ կայացնելու դատարանի լիազորություններին: Օրենսգիրքը, որոշակի նախապայմանների առկայության դեպքում, այնուամենայնիվ լիազորում է դատարաններին կայացնել հարուցած վարույթը կարճելու և այն առանց քննության թողնելու հնարավորություն, սակայն պետք է պարզել, թե դրանք որքանով են կիրառելի ձերբակալման իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցած վարույթներին:

¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 6-րդ մասը:

² Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասը:

Այսպես. Օրենսգրքի 156-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ ներկայացված բողոքը¹ դատարանը կարող է թողնել առանց քննության այն դեպքում, երբ այն բերել է բողոք բերելու իրավունք չունեցող անձը, ժամկետանց է, չի պարունակում նշում բողոքարկվող վարության ակտի մասին կամ ստորագրված չէ:

Վերը հիշատակված պայմաններն անհերքելիորեն իրենցից ենթադրում են բողոք ներկայացնելու ձևական պահանջների չպահպանում, որի հետևանքով էլ դատարանը կարող է որոշում կայացնել բողոքն առանց քննության թողնելու մասին:

Վերոգրյալ վերլուծությունների պայմաններում կարող ենք արձանագրել, որ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում դատարանը կարող է կայացնել ներկայացված բողոքի ձևական պահանջները պահպանված չլինելու դեպքում, ուստի ձերբակալման իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցած վարույթն առանց քննության թողնելու մասին որոշում դատարանը չի կարող կայացնել, քանի որ ձերբակալման իրավաչափության վիճարկման վերաբերյալ վարույթ դատարանը հարուցում է այն ժամանակ, երբ, ի թիվս այլնի, պահպանված են դրանց ներկայացվող ձևական պահանջները:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորմանը, ապա այս մասով հարկ է արձանագրել, որ մինչդատական ակտի վիճարկման վերաբերյալ հարուցած վարույթը կարող է դատարանի որոշմամբ կարճվել այն դեպքում, երբ բողոքը ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը կամ պաշտպանը բողոքի քննության կապակցությամբ նշանակված դատական նիստին չեն ներկայացել: Վերոգրյալից հետևում է, որ դատական երաշխիքների փուլում դատարանը, չանդրադառնալով բողոքի հիմքերին և հիմնավորումներին, կարող է հարուցած վարույթը կարճել բողոքը ներկայացրած անձի կամ նրա ներկայացուցչի կամ պաշտպանի կողմից դատական նիստին չներկայանալու դեպքում, ինչը, մեր կարծիքով, բողոքի բովանդակության, հիմնավորվածության հետ որևէ կապ չունի, ուստի այն կարելի է դիտարկել որպես ձևական կողմի ապահովման բացակայություն:

¹ Խոսքը գնում է մինչդատական ակտը վիճարկելու վերաբերյալ բողոքների մասին. ձերբակալման իրավաչափության դեմ բերված բողոքների համար այլ կառուցակարգեր են սահմանված:

Վերոգրյալ վերլուծությունների պայմաններում կարող ենք արձանագրել, որ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու դատարանի լիազորությունը ևս կիրառելի չէ ձերբակալման իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցած վարույթների մասով:

2. Ձերբակալված անձին կրկին ձերբակալելու անթույլատրելիության մասին:

Օրենսգրքի 108 և 109-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ անձը ձեռք է բերում ձերբակալվածի կարգավիճակ նրան փաստացի ազատությունից զրկելու (արգելանքի վերցնելու) պահից: Ձերբակալվածին փաստացի ազատությունից զրկած անձը (նույն ինքը՝ ձերբակալում իրականացրած անձը) կազմում է անձի ձերբակալման արձանագրություն: Հարկ է արձանագրել, որ ձերբակալման արձանագրությունը կազմելու պահին փաստացի ազատությունից զրկված անձն արդեն իսկ ունի ձերբակալվածի կարգավիճակ: Ձերբակալվածին փաստացի ազատությունից զրկելուց հետո, անհապաղ, բայց ոչ ուշ, քան 6 ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձերբակալվածին հանձնել նրան ձերբակալելու կամ ազատ արձակելու մասին որոշումը: Ենթադրենք՝ վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում անձին ձերբակալելու մասին: Ստացվում է մի իրավիճակ, երբ վարույթն իրականացնող մարմինը իր որոշմամբ ձերբակալում է արդեն իսկ ձերբակալված անձին: Նման իրավիճակը կարելի է մեկնաբանել օրենսդրի կողմից անձի ազատության իրավունքի սահմանափակման հիմք հանդիսացող արձանագրությունը որոշմամբ փոխարինելու և ձերբակալվածի ազատության իրավունքի սահմանափակումը «վերանայելու» (ոչ ուշ, քան 6 ժամվա ընթացքում) գաղափարով: Այլ խոսքով՝ անձի ազատության իրավունքը սահմանափակելու համար հիմք պետք է հանդիսանա ոչ թե արձանագրությունը, այլ որոշումը՝ որպես առավել «ծանրակշիռ» փաստաթուղթ: Մինչույն ժամանակ հարկ է նշել, որ որոշման՝ որպես դատավարական փաստաթղթի կարևորությունն ընդգծելուն ուղղված կարգավորումները չպետք է առաջացնեն կրկնակի գործողություններ կատարելու անհրաժեշտություն (Օրինակ՝ ձերբակալել արդեն իսկ ձերբակալված անձին): Կարծում ենք, որ վարույթն իրականացնող մարմինն անձին «ձերբակալելու կամ ազատ արձակելու վերաբերյալ» (ձևակերպումն ըստ Օրենսգրքի) որոշմամբ պետք է

անդրադառնա հետևյալ հարցին՝ արդյո՞ք շարունակում են առկա լինել անձին փաստացի ազատությունից զրկելու հիմքերը: Այլ խոսքով՝ արդյո՞ք անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը չի վերացել: Անդրադառնալով վերոնշյալ հարցին՝ վարույթն իրականացնող մարմինը պետք է կայացնի հետևյալ որոշումներից մեկը.

- Որոշում՝ անձի ազատության իրավունքի սահմանափակումը վերացնելու և անձին ազատ արձակելու մասին, կամ

- Որոշում՝ անձին փաստացի ազատությունից զրկելու հիմքերի առկայության (հիմքերի առկայությունը պետք է կրկին գնահատվի որոշումը կայացնելու պահին) և անձի ազատության իրավունքի սահմանափակման շարունակական անհրաժեշտության մասին:

Նման մոտեցման պարագայում անձի ազատության իրավունքի սահմանափակման հիմք կհանդիսանա որոշումը՝ որպես «ծանրակշիռ» դատավարական փաստաթուղթ, հնարավորություն կտրվի «վերանայելու» ձերբակալվածի ազատության իրավունքի սահմանափակումը և վերջապես ձերբակալված անձը կրկին՝ երկրորդ անգամ չի ձերբակալվի:

Մինևույն ժամանակ հարկ է արձանագրել, որ ձերբակալման արձանագրությունն ու անձին ձերբակալելու մասին որոշումը պետք է փոխլրացնեն միմյանց: Այլ խոսքով՝ անձի ազատության իրավունքը սահմանափակելիս ձերբակալումն իրականացնող անձը պետք է ձերբակալման արձանագրության մեջ հստակ մատնանշի ձերբակալման այն հիմքերը, որի համար անձը պահվում է անազատության մեջ: Այդ հիմքերը պետք է նույնական լինեն անձին ձերբակալելու մասին որոշմամբ ամրագրված հիմքերի հետ: Հակառակ մոտեցման պարագայում կստեղծվի մի իրավիճակ, երբ ձերբակալումն իրականացրած անձը կարող է անձի ազատության իրավունքը սահմանափակել ընտրողական և հայեցողական մոտեցումներով, ինչն անթույլատրելի է¹:

Վերը նշվածը չի ենթադրում սակայն վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին ձերբակալելու մասին որոշում կայացնելիս ձերբակալման արձանագրության արտատպում: Որոշում կայացնելիս վարույթն իրականացնող մարմինը զրկված չէ առավել մանրամասն անդրադառնալ ձերբակալման հիմքերին, պատճառներին, պայմաններին, նպատակին և

¹ Վարույթն իրականացնող անձի հայեցողական մոտեցումների մասին առավել մանրամասն տես հաջորդ ենթահարցում:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(11)2023

մեկնաբանել դրանք՝ այդ կերպ ավելի համարժեք դարձնելով անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը:

3. Ձերբակալման պայմանների, պատճառների և նպատակի մեկնաբանության, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի հայեցողական մոտեցումների մասին: Օրենսդիրը ձերբակալումն իրականացնող անձի համար սահմանել է իմպերատիվ պահանջ՝ անձին ձերբակալելիս պետք է կազմել համապատասխան արձանագրություն, որը, ի թիվս այլնի, պետք է պարունակի անձին ազատությունից փաստացի զրկելու (...) պայմանները, պատճառները և հիմքերը.¹

Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ քրեադատավարական օրենսդրությունը չի պարունակում որևէ հիշատակում ձերբակալման պայմանների և պատճառների մասին: Այլ խոսքով՝ թե ինչը կարող է լինել ձերբակալման պատճառ կամ պայման, օրենսդիրը չի բացահայտել: Վերը հիշատակված պայմաններում գտնում ենք, որ ձերբակալումն իրականացնող անձին է թողնված դրանց մեկնաբանությունը, ինչը մեծ ռիսկեր է պարունակում և կարող է հայեցողական մոտեցում ձևավորել անձանց ազատության իրավունքը սահմանափակելու հարցում:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ դրանց մեկնաբանման համատեքստում վարույթն իրականացնող մարմինն այնուամենայնիվ սահմանափակված է ՀՀ Սահմանադրությամբ, մասնավորապես 27-րդ հոդվածով, որի վերլուծության արդյունքում կարող ենք հանգել հետևության առ այն, որ պայմանը հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունն է, իսկ պատճառն արտացոլվում է դրա նպատակի մեջ, այն է՝ ձերբակալումը հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ այն կատարելուց հետո անձի փախուստը կանխելու համար:

Վերոգրյալ վերլուծությունների պայմաններում կարող ենք արձանագրել, որ ձերբակալման պատճառները և պայմանները մեկնաբանելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է առաջնորդվի ՀՀ Սահմանադրությամբ, ինչը հանդիսանում է զսպող մեխանիզմ վարույթն իրականացնող մարմնի հայեցողական մոտեցումները կաշկանդելու համատեքստում: Հակառակ մոտեցման պարագայում դատարանը կարող է

¹ Տե՛ս Օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ:

ձերբակալումը ոչ իրավաչափ ճանաչել՝ արձանագրելով մեղադրյալի իրավունքների խախտումը:

Նման պայմաններում հարկ է նշել նաև, որ Օրենսգիրքը, ի տարբերություն նախորդ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, չի պարունակում ձերբակալման նպատակների վերաբերյալ նշում կատարելու պարտադիր պահանջ, սակայն անձին ազատությունից զրկելը պետք է համապատասխանի ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված նպատակներին: Գտնում ենք, որ անձի ազատության հիմնարար իրավունքի սահմանափակումը՝ առանց դրա նպատակը բացահայտելու կամ ձերբակալման նպատակին ընդհանրական, ընտրողական կամ վերացական բնույթի ձևակերպումներ տալու, ուղղակիորեն խախտում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջը. յուրաքանչյուր ոք պետք է տեղեկացված լինի իրեն ազատությունից զրկելու նպատակի, պատճառների և պայմանների մասին, այլապես վարույթն իրականացնող մարմինը ընտրողաբար և սեփական հայեցողությամբ կարող է նշել անձին ազատությունից զրկելու տարբեր նպատակներ (պատճառաբանություններ)՝ այդ կերպ ստեղծելով օրենքով սահմանված ընթացակարգերը շրջանցելու մեխանիզմներ, ինչն անընդունելի է: Անձի ազատության իրավունքի սահմանափակումը յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան՝ իրավական որոշակիության սկզբունքի պահպանմամբ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ձերբակալման պատճառների և պայմանների անհստակության, ինչպես նաև ձերբակալման նպատակի մասին պարտադիր նշում կատարելու պահանջի բացակայության պայմաններում Օրենսգիրքը կարիք ունի լրացումների և փոփոխությունների, քանի որ ձերբակալման վերաբերյալ հասարակական հարաբերությունները կարգավորող իրավանորմերը, որպես անձի հիմնարար իրավունքները և ազատությունները սահմանափակող նորմեր, պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին: Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձակա-

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(11)2023

նացվել. նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:¹

4. Հիմնավոր կասկածի անմիջականության մասին: Ուշադրության է արժանի Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի իրավակարգավորումը, համաձայն որի՝ դատարանը որոշում է կայացնում խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին, եթե հանգում է հետևության, որ սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած:

Այլ խոսքով՝ խափանման միջոց կիրառելու մասին միջնորդության քննության ընթացքում դատարանը ոչ միայն ստուգում է ձերբակալման իրավաչափությունը, այլև ստուգման է ենթարկում «հիմնավոր կասկածի» ակնհայտ անմիջականորեն ծագած լինելու հանգամանքը: Այդ հարցի պարզումը կարող է էական ազդեցություն ունենալ միջնորդության քննության կապակցությամբ կայացվող որոշման վրա, քանի որ, եթե դատարանը հանգի հետևության, որ անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած, ապա դատարանը պետք է որոշում կայացնի մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելու մասին:

Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը կարող է կասկածի տակ դրվել այն պայմաններում, երբ վարույթն իրականացնող մարմինը, տեսադաշտում ունենալով ենթադրյալ հանցանք կատարած անձին, անմիջապես ձեռնամուխ չի լինում վերջինին փաստացի ազատությունից զրկելուն՝ ձերբակալելուն: Բոլոր այն դեպքերում, երբ անձը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա ձերբակալվելու հետևանքով հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է ստուգել կասկածի հիմնավոր լինելը և նման պարագայում որոշում կայացնել անձին ձերբակալելու վերաբերյալ, իսկ կասկածի հիմնավոր չլինելու պարագայում՝ նրան ազատ արձակել:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշումը:

Վերոգրյալ վերլուծությունների պայմաններում ակնհայտ է դառնում, որ ցանկացած պարագայում՝ անկախ կասկածի հիմնավոր լինելուց կամ չլինելուց, երբ ենթադրյալ հանցանք կատարած անձը հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տեսադաշտում, վերջինս պարտավոր է ակտիվ գործողություններ սկսել վերը հիշատակված հարցերի պարզաբանման նպատակով:

Նման պայմաններում անթույլատրելի են այն մեկնաբանությունները, թե հիշատակված ընդհանուր կանոնից կարող են լինել բացառություններ. Մասնավորապես, տեսակետն առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը, ունենալով ծագած կասկած այն մասին, որ անձը կատարել է ենթադրյալ հանցագործություն, կարող է վերջինին չձերբակալել և շարունակել քննությունը, ապա քննության ընթացքում, երբ վարույթային, քննչական և գաղտնի քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալների համակցությունը կհատի հիմնավոր կասկածի նվազագույն շեմը, այլ խոսքով՝ ծագած կասկածը կդառնա հիմնավոր, վարույթն իրականացնող մարմինը կարող է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալել անձին, պետք է բացառել հետևյալ պատճառաբանությամբ:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության նախորդ օրենսգրքի, երբ կասկածը բավարար էր անձին ձերբակալելու համար, գործող Օրենսգիրքը սահմանել է անձին ձերբակալելու առավել համաչափ նախապայման՝ կասկածը պետք է լինի հիմնավոր:

Այս համատեքստում հստակ պետք է արձանագրել, որ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայությունն ամենևին կախված չէ տևական նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից ենթադրյալ հանցանքը կատարած անձի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու հետ. անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածը առկա է հանցանքի պահին, կամ դրանից անմիջապես հետո, որպես կանոն՝ հենց հանցանքի վայրում ենթադրյալ հանցանքը կատարած անձին ազատությունից զրկելու հետ, քանի որ հանցագործության դեպքի և ենթադրյալ հանցանքը կատարած անձին հայտնաբերելու միջև ժամանակային խզումը վերացնում է ծագած հիմնավոր կասկածի անմիջականությունը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(11)2023

Ընդ որում, Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով անձին ձերբակալելու համատեքստում անթույլատրելի է նաև մեկնաբանությունն առ այն, թե վարույթն իրականացնող մարմինն ամեն դեպքում պետք է հնարավորություն ունենա ծագած կասկածը հիմնավոր դարձնելուն ուղղված միջոցառումներ անցկացնելու համար, ուստի հանցագործության դեպքի և ենթադրյալ հանցանքը կատարած անձին հայտնաբերելու միջև ժամանակային խզումը թույլատրելի է: Նման մեկնաբանության պայմաններում քննարկվող ձերբակալման տեսակի համար առանցքային նշանակություն ունեցող անմիջականությունը կորցնում է իր տրամաբանությունը:

Այս համատեքստում կարելի է քննարկել իրավիճակ, երբ փաստացի ազատությունից զրկվում է ենթադրյալ հանցագործությանն առնչություն ունեցող անձը, սակայն փաստացի ազատությունից զրկելու պահին բացակայում է հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածը: Ձերբակալումից հետո 6 ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը ձեռք է բերում այնպիսի փաստական տվյալներ, որոնք հատում են ենթադրյալ հանցանք կատարելու հիմնավոր կասկածի շեմը, որպիսի պայմաններում վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում անձին ձերբակալելու մասին: Այլ խոսքով՝ վարույթն իրականացնող մարմնի գործողությունների արդյունքում կասկածը դառնում է հիմնավոր:

Բարձրացվող հարցը հետևյալն է՝ արդյո՞ք իրավաչափ է ձերբակալումն այն պայմաններում, երբ անձին փաստացի ազատությունից զրկելու պահին վերջինի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու հիմնավոր կասկածի շեմը հաղթահարված չի եղել:

Այսպես. Օրենսգիրքը անձի ազատության իրավունքը սահմանափակելու համար սահմանել է հանցանք կատարելու հիմնավոր կասկածի առկայություն, ուստի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու հիմնավոր կասկածը պետք է առկա լինի նրան փաստացի ազատությունից զրկելու պահին: Քննարկվող ձերբակալման տեսակի համար առանցքային է հիմնավոր կասկածի առկա լինելը մինչև անձին փաստացի ազատությունից զրկելը: Նման մեկնաբանության պայմաններում անթույլատրելի է անձին փաստացի ազատությունից զրկելուց հետո 6 ժամվա ընթացքում, մինչև ձերբակալման մասին որոշման կայացումը, կասկածը հիմնավոր դարձնելուն ուղղված գործողությունների իրականացումն այն տրամաբան

նությամբ, որ ձերբակալման որոշումը կայացնելու պահին ծագած կասկածն արդեն կլինի հիմնավոր, ուստի ձերբակալումը կլինի իրավաչափ:

Պետք է բացառել այն մոտեցումը, թե ձերբակալման իրավաչափության հարցը քննարկելիս անհրաժեշտ է գնահատել անձին ձերբակալելու մասին որոշում կայացնելու պահին հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը:

5. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի «իմպերատիվ» լինելու մասին:

Ուշադրության է արժանի այն իրավիճակը, երբ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձին ձերբակալելիս վարույթն իրականացնող մարմինը, առանց ձերբակալման արձանագրություն կազմելու, որոշում է կայացնում անձին ձերբակալելու մասին: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ անձը ձեռք է բերում մեղադրյալի կարգավիճակ, օգտվում է իր կարգավիճակից բխող իրավունքներից, կրում է պարտականություններ, ծանոթանում է իրեն անազատության մեջ պահելու պայմանների, պատճառների, նպատակների և հիմքերի մասին, սակայն զրկվում է փաստացի արգելանքի վերցվելուց հետո 6 ժամվա ընթացքում իր ազատության իրավունքի սահմանափակման հիմքերի վերանայման հնարավորությունից¹:

Քննարկենք մի իրավիճակ, երբ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում հարցաքննվում է տուժող ճանաչված անձը: Հարցաքննության ընթացքում, նախաձեռնված վարույթի շրջանակներում ձևավորված քննչական խմբի մեկ այլ քննիչ զննության է ենթարկում դեպքի վայրի տեսագրությունները և պարզում է, որ որպես տուժող հարցաքննվող անձը ենթադրաբար կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք, ուստի վերջինին ձերբակալելու անհրաժեշտություն է առաջանում: Քննիչը որոշում է կայացնում անձին ձերբակալելու մասին: Անձը ձերբակալվում է հարցաքննության ավարտից հետո՝ ժամը 18:00-ին, ենթադրենք՝ հարցաքննությունը տևել է 1 ժամ 30 րոպե: Հստակության համար նշենք, որ ձերբակալման արձանագրություն քննիչի կողմից չի

¹ Վարույթն իրականացնող մարմնի կողմից 6 ժամվա ընթացքում անձին ձերբակալելու կամ անձին ազատ արձակելու մասին որոշում կայացնելու կարևորության մասին արդեն խոսել ենք սույն աշխատության 2-րդ ենթահարցում:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(11)2023

կազմվել, ուստի անձին ձերբակալելու մասին որոշումը (72 ժամվա համատեքստում) հանդիսանում է անձին անազատության մեջ պահելու վերջնական դատավարական փաստաթուղթ. այն 6 ժամվա ընթացքում վերանայելու օրենսդրական պահանջ գոյություն չունի:

Այսպես. քննարկվող իրավիճակում մեր կողմից առաջ քաշված հարցը հետևյալն է՝ արդյո՞ք իրավաչափ է անձին ձերբակալելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը և արդյո՞ք կարող ենք արձանագրել մեղադրյալի իրավունքների խախտումը:

Օրենսգրքի 109-րդ հոդվածի վերլուծությունից կարելի է հանգել հետևության առ այն, որ ձերբակալման արձանագրություն կազմելը գործիքակազմ է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձին վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու համար: Ավելին՝ նույն հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն հիշատակում է կատարում վերոգրյալի մասին¹: Կազմել ձերբակալման արձանագրություն այն դեպքում, երբ ենթադրյալ հանցագործություն կատարած անձը գտնվում է վարույթն իրականացնող մարմնի տեսադաշտում, չի բխում Օրենսգրքի 109-րդ հոդվածի տրամաբանությունից:

Ինչ վերաբերում է փաստացի ազատությունից զրկվելուց հետո 6 ժամվա ընթացքում ձերբակալման հիմքերը վերանայելու և անձին ազատ արձակելու մասին որոշում կայացնելու «անհնարինությանը», ապա այս մասով հարկ է արձանագրել, որ բոլոր այն դեպքերում, երբ չի հաստատվի անձի կողմից քրեական օրենքով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ կասկածը կամ կվերանա անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը, վարույթն իրականացնող քննիչը կամ հսկող դատախազը, առաջնորդվելով Օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումներով, կարող են որոշում կայացնել անձին ազատ արձակելու մասին, ուստի քննարկվող դեպքում գուցե ձերբակալումն իրականացվել է քրեադատավարական կառուցակարգերի ոչ էական խախտմամբ, սակայն այն չի հանգեցնում ձերբակալման ոչ իրավաչափ լինելուն, հետևաբար չենք կարող արձանագրել նաև մեղադրյալի իրավունքների խախտում:

¹ Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալվածին հետաքննության մարմնին կամ վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմնին բերելուց անմիջապես հետո ձերբակալում իրականացրած անձը կազմում է անձի ձերբակալման արձանագրություն:

О НЕКОТОРЫХ ОСНОВОПОЛАГАЮЩИХ ПРОБЛЕМАХ ПРАВОМЕРНОСТИ АРЕСТА

Аннотация

Работа посвящена судебным гарантиям правомерности ареста. Недавно принятый Уголовно-процессуальный кодекс РА внес фундаментальные изменения в механизмы задержания, поэтому в представленной статье были рассмотрены некоторые вопросы, связанные с правомерностью задержания, на основании чего были сделаны конкретные предложения для более легкого применения нового Кодекса.

Для достижения закрепленных Конституцией целей государство, используя пригодные и необходимые средства, может соразмерно ограничивать основные права и свободы лиц. Чем интенсивнее ограничение основных прав и свобод человека, тем больше груз обоснования ограничения. Одним из основных прав, которые могут быть ограничены, является право человека на свободу. Мерой ограничения права на свободу является нахождение лица в заключении, а также применение ареста в качестве меры пресечения в отношении обвиняемого. Действующий уголовно-процессуальный кодекс РА (далее - Кодекс), подвергнув существенным изменениям поэтапную структуру уголовного судопроизводства, устанавливает ряд нововведений, касающихся механизмов задержания. Учитывая тот факт, что новый Кодекс еще недостаточно «отшлифован», тема настоящей работы представляется актуальной.

Ключевые слова: свобода, право, правомерность, арест, решение, ограничение.

ON CERTAIN ISSUES OF LEGITIMACY OF THE ARREST

Annotation

This research is dedicated to judicial guarantees of legitimacy of the arrest. The newly adopted Criminal Procedure Code of the Republic of Armenia has fundamentally changed the structures of the arrest, so this article discussed some issues related to the legitimacy of the arrest, and based on which,

specific recommendations were presented to make the new code easier to apply.

In order to achieve the goals set by the Constitution, the state, using suitable and necessary means, can proportionately limit the fundamental rights and freedoms of individuals. The more intensive the restriction of basic rights and freedoms of a person, the greater the burden of justifying the restriction. One of the fundamental rights subject to restriction is also the right to freedom of the person. A measure of restriction of the right to freedom is the arrest of a person, keeping him in prison, as well as applying detention to the accused as a preventive measure. The current Criminal Procedure Code of the Republic of Armenia (hereinafter referred to as the Code), making significant changes to the staged structure of the criminal procedure, establishes a number of innovations related to arrest procedures. Given that the new Code is not yet sufficiently "polished", this research becomes even more relevant.

Keywords: freedom, right, legitimacy, arrest, decision, limitation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.10.2023 թ., տրվել է գրախոսության 10.10.2023 թ., ընդունվել է տպագրության 12.10.2023 թ.:

DOI: 10.59560/18291155-2023.3-240



КАРЛОС АДАМЯН

Студент 4-го курса направления

“Юриспруденция”

Российско-Армянского университета

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С ПОНЯТИЕМ “ВОЛЯ ЗАКОНОДАТЕЛЯ”

Аннотация

В данной работе представлены понятие и явление "воля законодателя", в частности, в контексте цели толкования. Автор выставляет законодательную волю и ее раскрытие, как явление, имеющее высшую легитимность и обладающее демократичностью. Приводятся виды и общие методы выявления "воли законодателя", а также источники ее черпания.

Ключевые слова: "воля законодателя", толкование, демократичность, законность, источник.

Введение

Общественные отношения, складывающиеся вокруг правотворческого процесса, неизбежно сталкиваются и вытекают из "воли законодателя" (в широком смысле). Из данного фактора неизбежно возникает надобность в изучении понятия "воля законодателя" и некоторых связанных с этим вопросов.

1. Воля законодателя

1.1. Что понимать под волей законодателя (в контексте цели толкования).

Под волей законодателя следует понимать ту мысль, которую он хотел или смог материализовать в результате правотворческой деятельности. Волевое содержание нормативного правового документа имеет большое значение¹. Без этого норма не может являться законом (в широком смысле). Определяя выявление воли законодателя как цель толкования, мы неизбежно усложняем работу правоприменителя, но в то же время определяем высшую меру легальности и легитимности при применении нормы. Сложность состоит в том, что теперь правоприменителю в некоторых случаях предстоит проделать немалую работу для того, чтобы выявить волю законодателя, а именно понять истинное правовое регулирование конкретных общественных отношений. Для этого ему необходимо будет системно изучить соответствующую норму, его преамбулу, цели принятия, правовую сферу, определить исторические предпосылки, изучить внутренние и внешние источники² и т.д. Волю законодателя также принято называть “духом” закона³, а то, что он смог материализовать “буквой” закона⁴. В идеале, когда эти два понятия совпадают по объему, но в силу объективных и субъективных причин такое происходит не всегда. Именно этим и обусловлена вечная актуальность данного вопроса. Результат законодательного процесса, да и сам процесс никогда не смогут быть идеальными, и в этих условиях толкование с целью выявления воли законодателя является “жизненно важным” для всего права. Такой практики зачастую придерживаются

¹ Лазутин А.А. Воля и волеизъявление законодателя в процессе толкования норм права // Право и современные государства. - 6/2018. - С. 28-34.

² См. Աղաւյան Վ., Տարածական մեկնաբանման ինստիտուտը և դրա սահմանազատման հարցերն օրենքի անալոգիայի ինստիտուտի հետ // ՀՀ Սահմանադրական դատարան. Տեղեկագիր. 2022 N2 (106), էջեր 129-139.

³ См. Тихонова С.С. К вопросу о направлениях толкования уголовного закона // Вектор науки ТГУ. - N 2(2) 2010. - С. 157.

См. Աղաւյան Վ., Տարածական մեկնաբանման ինստիտուտը և դրա սահմանազատման հարցերն օրենքի անալոգիայի ինստիտուտի հետ // ՀՀ Սահմանադրական դատարան. Տեղեկագիր. 2022 N2 (106), էջեր 129-139.

⁴ См. Там же.

суды Армении, в том числе Конституционный Суд РА¹ и ЕСПЧ, а многие ученые² ставят это в приоритет, считая конституционно важным.

С одной стороны, как мы видим, определенные субъекты признают наличие воли законодателя, учитывают её при толковании, а с другой стороны, есть лица, которые и вовсе отвергают наличие законодательной воли, либо считают это бесполезным. К примеру, Э. Берроуз утверждает, что эта концепция лишена надлежащего содержания и бесполезна³. Дж. Меннинг утверждает, что суды должны заниматься толкованием законодательства “без претензии на законодательное намерение”⁴, а Верховный суд Австралии в свою очередь заявил, что законодательное намерение (воля законодателя – авт.) является фикцией, которая не служит никакой полезной цели⁵. Вышеперечисленные утверждения, как минимум, являются спорными. Такое отношение к воле законодателя, которое является проявлением института представительной демократии и опосредованно выражает волю народа, является неприемлемым. Утверждать, что законодательная воля не имеет значения – почти то же самое, что утверждать, что при выборах голоса избирателей не имеют значения.

Также вызывают интерес высказывания некоторых правоведов на счет того, что законодательные органы, являясь коллегиальными, не могут иметь или проявлять свою волю⁶. Это неправильный подход. Воля и волеизъявление не зависят от количества субъектов. К тому же в парламентах авторами законов являются несколько субъектов, а все остальные голосуют, в результате чего формируется коллективная воля. Законодательная воля есть и всегда была, а те, кто игнорируют ее, противопоставляются принципам демократичности и законности.

¹ См. ՄԴՈ – 815. Доступно: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=52742>.

² См. **Lord Sales**. Justice of the UK Supreme Court. In defence of legislative intention. Denning society lecture. 18 november 2019.

³ См. **Burrows A**. Thinking About Statutes: Interpretation, Interaction, Improvement. (2018).

⁴ См. **Manning J**. Without the Pretense of Legislative Intent. (2017). 130 Harv. L. Rev. 2397.

⁵ См. *Lacey v Attorney-General (Qld)*. (2011) 242 CLR 573. [43] (French CJ, Gummow, Hayne, Crennan, Kiefel and Bell JJ).

⁶ См. **Burrows A**. Thinking About Statutes: Interpretation, Interaction, Improvement. (2018); **Manning J**. Without the Pretense of Legislative Intent. (2017). 130 Harv. L. Rev. 2397; **Antonin Scalia & Bryan A. Garner**. Reading Law: The Interpretation Of Legal Texts 140, 334 (2012).

1.2. Воля законодателя в контексте принципов демократичности и законности.

Воля законодателя - это проявление института представительной демократии. В этом контексте можно сказать, что воля законодателя равна воле народа¹. Данное означает, что она всегда должна быть учтена при толковании, для обеспечения принципа демократичности. В условиях демократии, обращенная своими требованиями именно к власти прочная законность, основанная на неотъемлемости и высшей ценности прав человека, есть стержневое начало народовластия и правового государства². При отсутствии институтов демократии вопрос о наличии законности утрачивает свои реальные очертания³. Нету сомнений в том, что вышеперечисленные принципы взаимосвязаны и что для их обеспечения важным является вопрос толкования и законодательной воли.

У читателя от понятий “воля законодателя” или “дух закона” может сложиться впечатление, что правоприменитель при выявлении последних должен отступить от принципа законности. Неразрывная связь права с процессом реализации закона (толкования) конструирует понятие законности⁴ и, как следствие, данное впечатление неверно, так как законность следует понимать не в рамках текстуальной оболочки нормы, а в рамках сущностной. А так как выявление воли законодателя и духа закона это выявление сущности нормы, то не остается сомнений, что при совершении этой процедуры принцип законности не только не нарушается, но и соблюдается высшая степень законности. Следовательно, следует адекватно подходить к пониманию принципа законности, то есть в контексте права и демократичности. Как отмечает

¹ Такого мнения придерживается также Лорд Сейлс. См. **Lord Sales**. Justice of the UK Supreme Court. In defence of legislative intention. Denning society lecture. 18 november 2019.

² См. **Богославский Е.А., Эртель А.Г.** Вопросы теоретико-правового понимания правовой политики // Право и практика. - 2014. - N1.

³ См. **Працко Г.С.** Право и законность как основа правопорядка // Философия права. - 2018. - N2 (85). - С. 162-168.

⁴ См. **Алексеев С.С., Архипов С.И., Игнатенко Г.В.** и др. Теория государства и права/ Под. ред. Корельского В.М. и Перевалова В.Д. - М., 2000.

Лорд Сейлс, “учитывание принципа законности при толковании налагает на суды объективную дисциплину. В то же время это позволяет им легитимизировать свое вмешательство в придание смысла законодательным текстам путем ссылки на намерения законодателей и демократическую волю”¹.

Также отметим, что доктрина общего (англо-саксонского) права разрешает правоприменителю и суду “корректировать” закон, уточняя его содержание², не считая это отступлением от принципа законности, так как исторический и временной аспект многих источников англо-саксонского права (некоторым из них несколько десятков, а то и сотни лет) при одном лишь буквальном толковании не позволит эффективно урегулировать современные общественные отношения.

Обобщая, можно сделать вывод, что отстранение от воли законодателя при толковании приведет к нарушению принципов демократичности и законности.

1.3. Виды проявления воли законодателя и методы их выявления.

Проявление воли законодателя можно классифицировать по форме его выражения. Так, по этому критерию мы выделяем текстуальную и внетекстуальную волю законодателя. В первом случае волю законодателя можно выявить, изучив позитивное право, которое касается вопроса регулирования, используя при этом текстуальное толкование. Использование текстуального толкования в данном случае будет достаточно, так как воля законодателя лежит на законодательном уровне. Во втором случае воля законодателя лежит за пределами позитивного права, и для его выявления требуется использовать оригиналистичное или реалистичное толкование, тем самым не ограничиваясь только текстуальной оболочкой нормы при толковании.

Считаем необходимым отметить, что использование определенного метода толкования не означает, что субъект, который толкует норму

¹ См: **Lord Sales**. Justice of the UK Supreme Court. In defence of legislative intention. Denning society lecture. 18 november 2019.

² См: **Лазутин А.А.** Воля и волеизъявление законодателя в процессе толкования норм права // Право и современные государства. - 6/2018. – С. 28-34.

права, является приверженцем теории, из которой в свое время “родился” данный метод. Методы, являющиеся предметом нашей работы, на наш взгляд, не должны исключать или отвергать (как об этом говорят другие ученые, противопоставляя их) друг друга, каждый из методов применяется в своем определенном случае. Для толкования мы нуждаемся в различных инструментах¹. При изучении данных методов толкования мы рассматриваем именно методы как инструменты, которые могут и должны сосуществовать параллельно друг другу, а не теории, как таковые. Все они должны быть доступны правоприменителю. Именно с учетом вышеперечисленного можно с наибольшей эффективностью обеспечить правильное толкование права, а не спорить, какой из методов правильнее. Правильность примененного метода толкования исходит из каждого конкретного случая, и грамотный юрист должен уметь лавировать всеми доступными инструментами.

1.4. Источники черпания воли законодателя.

В классическом понимании объектом толкования является норма права. Безусловно, норма права является объектом толкования, даже можно сказать первичным объектом толкования, но точно не единственным. Под понятием “объект толкования” (в широком смысле) следует понимать не только толкуемую норму, но и те источники, с помощью которых мы выявляем волю законодателя.

Такие источники мы подразделяем на внутренние и внешние. Внутренними являются те источники, которые находятся на плоскости законодательства и имеют текстуальную форму. Таковыми могут являться различные “элементы” закона (в широком смысле) толкуемой нормы: его преамбула, принципы, руководящие положения и остальные нормы данного или другого нормативного правового акта, конечно же, кроме толкуемой нормы.

¹ См. **Richard A.P.** Legal formalism, legal realism, and the interpretation of statutes and the constitution. 1986. Доступно: <https://scholarlycommons.law.case.edu/caselrev/vol37/iss2/3>.

Внешними¹ являются те источники, которые находятся за рамками нормативного правового акта толкуемой нормы (законодательства) и могут иметь любое формальное выражение. К таковым относятся официальные обсуждения во время принятия правовой нормы (видеосъемка, записи, стенографии), travaux preparatoires, официальные разъяснения, социологические наблюдения и т.д.

Оба этих источника имеют важное значение для выявления воли законодателя и именно поэтому мы советуем правотворческим органам уделять больше времени сущностному аспекту принимаемых норм при осуществлении правотворческого процесса.

Конкретными примерами внешних источников в Армении являются стенографии заседаний Парламента, размещенные на официальном сайте Национального Собрания РА², или Руководство по новому Уголовному кодексу РА³.

Закключение

“Воля законодателя” – это явление и понятие, имеющее высокий уровень легитимности, демократичности и законности. Цель толкования должна быть направлена на ее раскрытие, так как благодаря ей норма права обретает “дух”. Законодательная воля имеет свои виды проявления, определенные источники, и в каждом случае следует пользоваться соответствующим методом толкования для ее раскрытия.

¹ См. **Աղամյան Կ.**, Տարածական մեկնաբանման ինստիտուտը և դրա սահմանազատման հարցերն օրենքի անալոգիայի ինստիտուտի հետ // ՀՀ Սահմանադրական դատարան. Տեղեկագիր. 2022 N2 (106), էջեր 129-139.

² См. [National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am](http://parliament.am).

³ См. ՀՀ Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: Доступно: [1680a72c57 \(coe.int\)](https://www.coe.int/t/turkey/legislation/1680a72c57.aspx).

Список использованных источников

1. **Աղամյան Վ.**, Տարածական մեկնաբանման ինստիտուտը և դրա սահմանազատման հարցերն օրենքի անալոգիայի ինստիտուտի հետ // ՀՀ Սահմանադրական դատարան. Տեղեկագիր, 2022 N2 (106), էջեր 129-139.
2. ՄԴՈ – 815. Доступно: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=52742>.
3. ՀՀ Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: Доступно: [1680a72c57 \(coe.int\)](https://www.coe.int/t/turkey/legislation/1680a72c57.aspx).
4. [National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am](https://www.parliament.am/).
5. **Тихонова С.С.** К вопросу о направлениях толкования уголовного закона // Вектор науки ТГУ. - N 2(2) 2010. - С. 157.
6. **Богославский Е.А., Эртель А.Г.** Вопросы теоретико-правового понимания правовой политики // Право и практика. - 2014. - N1.
7. **Працко Г.С.** Право и законность как основа правопорядка // Философия права. - 2018. N2 (85). С. 162-168.
8. **Алексеев С.С., Архипов С.И., Игнатенко Г.В. и др.** Теория государства и права под ред. Корельского В.М. и Перевалова В.Д. - М., 2000.
9. **Лазутин А.А.** Воля и волеизъявление законодателя в процессе толкования норм права // Право и современные государства. - 6/2018. – С. 28-34.
10. **Lord Sales** (Justice of the UK Supreme Court). In defence of legislative intention. Denning society lecture. 18 november 2019.
11. **Burrows A.** Thinking About Statutes: Interpretation, Interaction, Improvement. (2018).
12. **Manning J.** Without the Pretense of Legislative Intent. (2017). 130 Harv. L. Rev. 2397.
13. **Lacey v Attorney-General (Qld).** (2011) 242 CLR 573. [43] (French CJ, Gummow, Hayne, Crennan, Kiefel and Bell JJ).
14. **Lord Sales** (Justice of the UK Supreme Court). In defence of legislative intention. Denning society lecture. 18 november 2019.
15. **Richard A.P.** Legal formalism, legal realism, and the interpretation of statutes and the constitution. 1986. Доступно: <https://scholarlycommons.law.case.edu/caselrev/vol37/iss2/3>.
16. **Antonin Scalia & Bryan A. Garner.** Reading Law: The Interpretation Of Legal Texts 140, 334 (2012).

ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ՝ ԿԱՊՎԱԾ «ՕՐԵՆՍՊԻԻ ԿԱՄՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ամփոփագիր

Այս աշխատանքում ներկայացվում է «օրենսդրի կամք» հասկացությունն ու երևույթը, մասնավորապես, որպես մեկնաբանման նպատակ լինելու համատեքստում: Հեղինակը ներկայացնում է օրենսդրի կամքը և դրա բացահայտումը՝ որպես բարձրագույն լեգիտիմություն և ժողովրդավարություն ունեցող երևույթ: Ներկայացվում են «օրենսդրի կամքի» տեսակներն ու բացահայտելու ընդհանուր մեթոդները, ինչպես նաև դրա բացահայտման աղբյուրները:

Հիմնաբառեր. «օրենսդրի կամք», մեկնաբանում, ժողովրդավարություն, օրինականություն, աղբյուր:

SOME QUESTIONS RELATED TO THE CONCEPT OF THE "WILL OF THE LEGISLATOR"

Annotation

In this paper, the concept and phenomenon of the "will of the legislator" is presented, in particular, in the context of the purpose of interpretation. The author exposes the legislative will and its disclosure as a phenomenon having the highest legitimacy and possessing democracy. The types and general methods of identifying the "will of the legislator", as well as the sources of its drawing are given.

Keywords: the will of the legislator, interpretation, democracy, legality, source.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.08.2023 թ., տրվել է գրախոսության 28.08.2023 թ., ընդունվել է տպագրության 01.09.2023 թ.:

DOI: 10.59560/18291155-2023.3-249



ԱԼԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի և քաղաքականության
ինստիտուտի «Իրավագիտություն»
ուղղվածության 3-րդ կուրսի ուսանող*

**ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԱՄՐԱԳՐՈՒՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԻՋՈՑՈՎ**

Ամփոփագիր

Որոշ դեպքերում մարդիկ կարող են հրաժարվել իրենց սուբյեկտիվ իրավունքներից, օրինակ՝ թույլ տալով իրավապահ մարմիններին իրականացնել բնակարանի խուզարկություն՝ առանց դատարանի որոշման: Սակայն, նույնիսկ երբ անձը հրաժարվում է իր սուբյեկտիվ իրավունքներից՝ իրավունքին միջամտելու համաձայնություն տալով, պետությունը, այդուհանդերձ, պարտավոր է հետևել որոշակի ընթացակարգերի: Մասնավորապես՝ իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է ստանան խուզարկություն իրականացնելու մասին դատարանի որոշումը, նույնիսկ եթե անձը համաձայնում է առանց դատարանի որոշման բնակարանի խուզարկությանը:

Իսկ արդյո՞ք հնարավոր է հրաժարվել մարդու հիմնական իրավունքը սահմանադրորեն ամրագրելուց: Արդյո՞ք այդպիսի հնարավորության առկայության դեպքում անհրաժեշտություն չի առաջանում որոշակի սահմանափակումների նախատեսման, ինչպես սուբյեկտիվ սահմանադրական իրավունքներից հրաժարվելու ժամանակ:

Հոդվածի առաջին մասում խոսվում է մարդու հիմնական իրավունքների և հանրաքվեի ճանապարհով դրանց սահմանադրական ամրագրումից հրաժարվելու մասին, երկրորդ մասում՝ մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու հիմնա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ◆ 3(111)2023
249

պատճառների, իսկ վերջում՝ մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու իրավաչափության պայմանների և դրանց պաշտպանության որոշ միջոցների:

Աշխատության մեջ առավելապես քննարկվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների և Շվեյցարիայի փորձը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ պետություններն աչքի են ընկնում սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հանրաքվեների անցկացման հաճախակիությամբ:

Հիմնաբառեր. մարդու հիմնական իրավունքներ, իրավունքից հրաժարում, հանրաքվե, իրավունքի սահմանափակում, փոքրամասնություն:

1. Մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու հայեցակարգը

1.1. Մարդու հիմնական իրավունքների հասկացությունը

Մարդու հիմնական իրավունքների (այսուհետ՝ հիմնական իրավունքներ) հասկացության բացահայտման համար կարևոր նշանակություն ունի դրանց տարբերակումը սահմանադրական իրավունքներից: Թեպետ, որպես կանոն, հիմնական իրավունքներն ամրագրվում են պետությունների Սահմանադրություններում, բայց միշտ չէ, որ սահմանադիրը նախատեսում է դրանց ամբողջ ծավալով ամրագրումը: Դրանց ծավալը կարող է տարբերվել տարբեր Սահմանադրություններում՝ կախված համապատասխան պետությունների սահմանադիրների մոտեցումներից: Ուստի, կարելի է պնդել, որ ի տարբերություն սահմանադրական իրավունքների, որոնք տեղ են գտնում Սահմանադրության տեքստում, հիմնական իրավունքների գոյությունը փաստելու համար դրանց սահմանադրորեն ամրագրումն ամենևին պարտադիր նախապայման չէ:

Այսինքն, հիմնական իրավունքներն են՝

- 1. Սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնական իրավունքները և ազատությունները,
- 2. Սահմանադրությամբ չամրագրված, սակայն համընդհանուր ճանաչում ստացած մարդու հիմնական իրավունքները և ազատությունները:

1.2. Մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու հասկացությունը

Անձի՝ իր ինքնավարության շրջանակներում ինքնասահմանափակումը կամ արտաքին սահմանափակման հետ համակերպումը մշտապես մտա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 3(11)2023

հոգության առարկա են դարձել իրավունքի տեսաբանների համար՝ սկսած մարդու ինքնավարության գաղափարն արժևորող տեսությունների հիմնադիրներից:

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Ղամբարյանի կարծիքով՝ իրավունքից հրաժարումն իր էությանը հակասոցիալական արարք է, քանի որ իրավունքը, լինելով սոցիալական բարիք, որի ձեռքբերման համար մարդիկ հավերժական պայքար են մղում, կոչված է զարգացման և ընդարձակման, բացառությամբ, երբ այդ իրավունքից հրաժարվելն ինքնին ենթադրում է անվտանգության ապահովում¹:

Իրավական պետության շրջանակներում ժողովուրդը կարող է ինչպես պետականորեն ճանաչել որոշակի հիմնական իրավունքներ՝ դրանք սահմանադրորեն ամրագրելու եղանակով, այնպես էլ հրաժարվել դրանց սահմանադրական ամրագրումից՝ ակտիվ կամ պասիվ վարքագծի դրսևորմամբ (անգործությամբ)։

1. Ակտիվ վարքագծով հրաժարման դեպքում ժողովուրդը՝

1) հանդես է գալիս արդեն իսկ սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքից հրաժարվելու նախաձեռնությամբ և (կամ) ընդունում է այդպիսի առաջարկը հանրաքվեի արդյունքում կամ,

2) մերժում է իրավունքը սահմանադրորեն ամրագրելու առաջարկը հանրաքվեի արդյունքում,

2. Պասիվ վարքագծով հրաժարման դեպքում ժողովուրդը խուսափում է հանդես գալ հիմնական իրավունքը սահմանադրորեն ամրագրելու նախաձեռնությամբ:

Ուշագրավ է այն փաստը, որ որոշ պետությունների Սահմանադրություններ հոչակում են հիմնական (սահմանադրական) իրավունքների անօտարելիությունը², թեև դրանք նախատեսում են Սահմանադրության փոփոխության ընթացակարգեր³, որոնք տեսականորեն կարող են կիրառվել նաև հիմնական իրավունքներից հրաժարվելու նպատակով:

1.3. Հանրաքվեն՝ որպես մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու եղանակ

¹ Ղամբարյան Ա., «Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2018, էջ 106-7:

² *Germany's Constitution of 1949 with Amendments through 2014*, Art. 1 P. 2; *Russian Federation's Constitution of 1993 with Amendments through 2014*, Art. 17 P. 2.

³ *Germany's Constitution of 1949 with Amendments through 2014*, Art. 79; *Russian Federation's Constitution of 1993 with Amendments through 2014*, Art. 135.

Հանրաքվեի միջոցով հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելը հանրաքվեի արդյունքում Սահմանադրության ընդունումը կամ փոփոխումն է, որով այն ընդունող կամ փոփոխող սուբյեկտը հրաժարվում է նախկինում սահմանադրորեն ամրագրված կամ նախկինում սահմանադրորեն չամրագրված, սակայն համընդհանուր ճանաչում ստացած հիմնական իրավունքի ամրագրումից¹:

Հանրաքվեի միջոցով հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարումը կարելի է դասակարգել ըստ նախաձեռնող սուբյեկտների՝ ժողովրդի² և պետության կողմից նախաձեռնված: Պետության նախաձեռնությամբ իրականացված հիմնական (սահմանադրական) իրավունքների ռեգրեսը նման է էթթանագիայի փորձեր կատարող բժիշկ Ջ. Գևորգյանի և իր հիվանդների միջև եղած հարաբերություններին, երբ բժիշկը հիվանդներին զրկում էր կյանքից՝ նախապես ստանալով նրանց համաձայնությունը³:

Կարելի է թվարկել մի շարք հիմքեր, որոնց շնորհիվ հանրաքվեի ճանապարհով Սահմանադրության ընդունման կամ փոփոխության գաղափարը թվում է ոչ այնքան նպատակահարմար: Մասնավորապես՝ անփորձ ընտրողի համար դժվար է խելամիտ որոշումներ կայացնել հանրաքվեի դրվող բարդ հարցերի վերաբերյալ, որոնք ենթադրում են մասնագիտական գիտելիքների իմացություն, վերլուծողական մտածողություն և հեռատեսական մոտեցում: Հանրաքվեի մասնակիցները կարող են ապակողմնորոշվել առաջադրված հարցերի ոչ հստակ ձևակերպման պատճառով⁴: Անձանց ինքնավարության գաղափարի տեսանկյունից տարակուսելի է նաև հանրաքվեի արդյունքում հիմնական իրավունքների կորստի հետ անձանց լռելյայն համաձայնությունը՝ հաշվի առնելով այն, որ

¹ **Ղամբարյան Ա.**, տե՛ս ծանոթագրություն 1, էջ 96:

² Մի շարք պետություններ նախատեսում են քաղաքացիական նախաձեռնության կարգով սահմանադրական փոփոխություններ կատարելու հնարավորություն: Տե՛ս օրինակ՝ *Armenia's Constitution of 1995 with Amendments through 2015*, Art. 202 P. 1-2; *Costa Rica's Constitution of 1949 with Amendments through 2020*, Art. 105; *Kenya's Constitution of 2010*, Art. 257 P. 1:

³ **Garnett R.** “*Why Informed Consent? Human Experimentation and the Ethics of Autonomy*”, *Catholic Lawyer*, *Cathol. U. L. Rev.*, 1995-1996, 36 (4), P. 459.

⁴ **Stefanini M.** “*Le référendum et la protection des droits fondamentaux*”, *Revue française de Droit constitutionnel*, 2003, 53 (1), P. 82.

հարմարվողականության նման դրսևորումները պայմանավորված են այլընտրանքի բացակայությամբ¹:

2. Մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու հիմնապատճառները

2.1. Սահմանադրական օգտապաշտությունը

Կան մի շարք հիմքեր, որոնք կարող են պատճառ հանդիսանալ ժողովրդի կողմից հանրաքվեի դրված հիմնական իրավունքներից հրաժարվելու համար: Դրանցից մեկը քաղաքացիների կողմից որոշ հիմնական իրավունքների և իրենց անձնական արժեքների կամ համոզմունքների միջև հակասություն տեսնելն է: Օրինակ՝ 2016 թվականին անցկացված հանրաքվեի ժամանակ Շվեյցարիայի քաղաքացիները մերժեցին Սահմանադրության փոփոխության առաջարկը, որը նախատեսում էր բացարձակ բազային եկամտի² տրամադրում բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց աշխատելու հանգամանքից³ պնդելով, որ դա կխրախուսեր ծուլությունը⁴:

Սահմանադրության փոփոխության նմանատիպ այլ «ուտոպիական» նախագծերի փորձեր Շվեյցարիայում նախկինում ևս եղել են, որոնք հանրաքվեների արդյունքում մերժվել են⁵:

Շվեյցարացի գիտնական Ու. Ռապարդի կարծիքով՝ դա պայմանավորված է իր հայրենակիցներին բնորոշ խառնվածքով, որն արտահայտվում է իրենց կողմից ընդունված օրինագծերում. ըստ նրա՝ վերջիններս գերադասում են արժանավայել աղքատությունը անվայելուց ծուլությունից⁶:

¹ Sunstein C. “Legal Interference with Private Preferences”, U. Chic. L. Rev., University of Chicago Law School, 1986, 53 (4), P. 1147.

² Ներկայումս բացարձակ բազային եկամտի իրավունքի դիտարկումը որպես հիմնական իրավունք իրավաբանական գրականությունում առկա վիճելի հարցերից մեկն է: Այդ մասին տե՛ս՝ Rey Pérez J. L., “Basic Income In The Discussion About Human Rights: Right Or Guarantee?”, BIEN 2012, Munich, 18 էջ; García Pérez C., “Does the Right to Basic Income Already Exist? An Overview of the European and Spanish Legal Framework”, BIEN 2018, Tampere, էջ 9:

³ Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Für ein bedingungsloses Grundeinkommen’, 2016.

⁴ The Guardian, *Swiss voters reject proposal to give basic income to every adult and child*, New York, St Martin’s Press, 2011.

⁵ Օրինակ՝ «Նվազագույն աշխատավարձի նախաձեռնությունը», որն առաջարկում էր աշխարհում ամենաբարձր նվազագույն աշխատավարձի սահմանում: Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Für den Schutz fairer Löhne (Mindestlohn-Initiative)’, 2014; BBC, *Switzerland rejects world’s highest minimum wage*, 2014:

⁶ Rappard W. “The Initiative and Referendum in Switzerland”, Am. Polit. Sci. Rev., American Political Science Association, 1912, 6, (3), էջ 364.

Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ ժողովուրդը հրաժարվում է որևէ հիմնական իրավունքի սահմանադրական ամրագրումից՝ նպատակադրելով արդեն իսկ գոյություն ունեցող այլ հիմնական իրավունքի պահպանությունը: Այդպիսի օրինակ է 2016 թվականին Շվեյցարիայում հանրաքվեի դրված, առաջին հայացքից բարենպաստ թվացող «Ամուսնության և ընտանիքի համար՝ ընդդեմ ամուսնության համար պատժի» կոչվող Սահմանադրության փոփոխության նախագիծը, որն առաջարկում էր հրաժարվել ամուսնական ընտանիքների նկատմամբ գոյություն ունեցող հարկային խտրական քաղաքականությունից¹: Այն մերժվեց ժողովրդի կողմից, քանի որ սահմանում էր ընտանիքը որպես «միություն տղամարդու և կնոջ միջև»՝ սահմանադրորեն անհնարին դարձնելով միասեռականների ամուսնությունները²: Հանրաքվեի արդյունքում ընդունված սահմանադրական փոփոխությունների միջոցով միասեռականների ամուսնությունները արգելելու դեպքեր եղել են նաև ԱՄՆ-ում³:

Ժողովուրդը կարող է հրաժարվել սահմանադրությամբ մարդու որևէ հիմնական իրավունքի ամրագրումից նաև այն հիմքով, որ դա կարող է սպառնալ պետության անվտանգությանը: Օրինակ՝ 2009 թվականին Շվեյցարիայում քաղաքացիական նախաձեռնությամբ Սահմանադրության փոփոխության հանրաքվեն առաջադրում էր մզկիթներին կից աշտարակների՝ մինարեթների, կառուցման արգելքի հարցը⁴, որը թելադրված էր այն մտավախությամբ, որ այդ կառույցները կարող են նպաստել արմատական իսլամական գաղափարախոսության տարածմանը և սպառնալ Շվեյցարիայի անվտանգությանը⁵: Արդյունքում այն ընդունվեց, չնայած ակնհայտ հակասությանը Շվեյցարիայի կողմից վավերացված մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերի նորմերին՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածին⁶, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազ-

¹ Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Für Ehe und Familie - gegen die Heiratsstrafe’, 2016.

² **Fenazzi S.** *Tax initiative in hot water over marriage definition*, swissinfo.ch.

³ Օրինակ՝ 2008 թվականի Կալիֆոռնիայում անցկացված հանրաքվեն, որն ընդունվել է ընտրողների 52,24 տոկոս կողմ ձայներով: California Proposition 8, *Same-Sex Marriage Ban Initiative*, 2008:

⁴ Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Gegen den Bau von Minaretten’, 2009.

⁵ **Moos O.** “From Minarets to the ‘Muslim Question’: the New Critique of Islam”, *The Swiss Minaret Ban: Islam in question* (eds. Haenni P. & Lathion S.), Religioscope, 2011, էջ 79-81.

⁶ UN General Assembly, *Universal Declaration of Human Rights*, 1948, United Nations, Article 18.

գային դաշնագրի 2-րդ, 18-րդ, 27-րդ հոդվածներին¹, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ և 14-րդ հոդվածներին²:

2.2. Մեծամասնության բռնակալությունը

Հիմնական իրավունքների պահպանության նպատակով ժողովրդի ինքնասահմանափակումը լիովին իրավաչափ է այնքան ժամանակ, քանի դեռ այն ուղղված չէ մարդկանց որևէ որոշակի խմբի հիմնական իրավունքների սահմանափակմանը:

Խնդրահարույց է որոշակի խմբի անձանց վերաբերող հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրման վերաբերյալ հանրաքվեի անցկացման հարցը: Ընդ որում, ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Սահմանադրության փոփոխության առաջարկները, որոնք ուղղված են փոքրամասնությունների իրավունքների սահմանափակմանը, հիմնականում հանրաքվեի են դրվում քաղաքացիական նախաձեռնության կարգով: Այդպիսով ընտրողների նախապաշարմունքները մասնատում են ժողովրդին՝ թույլատրելով հասարակության մի մասին միջոցներ ձեռնարկել մյուս մասի նկատմամբ³: Դրանց ազդեցությունը հանրաքվեների արդյունքում ընդունված խտրական որոշումների վրա ակնհայտ է, չնայած ընտրողների կույր հավատին, որ հանրաքվեի ժամանակ կիրառվող քվեարկության մեթոդներն արդար են⁴: Արևմտյան գրականությունում տվյալ իրավիճակն ընդունված է անվանել «մեծամասնության բռնակալություն»⁵, որի ժամանակ որոշումները կայացվում են՝ հաշվի առնելով ոչ թե արդարության սկզբունքները, այլ մեծամասնության շահերը: Ժողովրդի զգալի մեծամասնությունը կարող է ընդլայնել իր իրավունքների ծավալը՝ սահմանափակելով փոքրամասնության իրավունքները: Այդպիսով, հիմնական իրավունքից հրաժարվելը կարող է հանգեցնել ինչպես ինքնավարության կորստի, այնպես էլ ինքնավարության ձեռքբերման՝ կախված անձանց շրջանակից⁶:

¹ UN General Assembly, *International Covenant on Civil and Political Rights*, 1966, United Nations, Articles 2, 18, 27.

² Council of Europe, *European Convention on Human Rights*, 1950, Articles 9, 14.

³ **Gamble B.** “*Putting Civil Rights to a Popular Vote*”, Am. J. Political Sci., The Midwest Political Science Association, 41 (1), 1997, էջ 262.

⁴ **Munro W.** “*The Initiative, Referendum And Recall*”, D. Appleton and Company, New York, 1912, էջ 37; **Bell D.**, “*The Referendum: Democracy’s Barrier to Racial Equality*”, Wash. L. Rev., University of Washington School of Law, 1978, 54 (1), էջ 15.

⁵ **Hamilton A., Madison J.** Jay J., “*The Federalist*”, The Independent Journal, New York, 1788, No. 10.

⁶ **Berg J.** “*Understanding Waiver*”, Hous. L. Rev., 2006, 40 (2), էջ 293.

Հանրաքվեները որպես փոքրամասնություններին վերաբերող հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու միջոց ծառայեցնելու մի շարք օրինակներ կարելի է վերհանել ԱՄՆ-ում հանրաքվեների անցկացման պատմական փորձից: Այսպես, օրինակ՝ 1857 թվականին ԱՄՆ Օրեգոն նահանգում անցկացված հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրությունն իր բաղկացուցիչ մաս ճանաչեց «Արտաքսման մասին օրենքը», որը սահմանափակում էր սևամորթների և մուսուլմանների՝ նահանգի տարածքում գտնվելու, բնակվելու և այլ իրավունքները¹, 1890-1910 թվականներին ԱՄՆ հարավային նահանգներում անցկացված հանրաքվեների արդյունքում ընդունված սահմանադրական փոփոխությունները սահմանափակում էին սևամորթների ընտրական և այլ իրավունքները², 1992 թվականին Կոլորադո նահանգում ընդունված Սահմանադրության փոփոխության հանրաքվեով արգելվեց հանրային իշխանության կողմից իրավական ակտերի ընդունումը, որոնցով կվերացվեին ԼԳԲՏ անձանց նկատմամբ ցանկացած խտրական կարգավորում³:

Վերջին երկու դարաշրջանների ընթացքում ԱՄՆ-ում անցկացված հանրաքվեները հիմնականում ուղղված են եղել սևամորթների, օտարերկրացիների, միասեռականների և կանանց դեմ:

Քննարկվող հիմնախնդրի լուծման հարցում մեծ թվով հեղինակների մոտեցումներ համընկնում են. փոքրամասնությունների հիմնական իրավունքների պաշտպանության տեսանկյունից առավել նպատակահարմար է, որպեսզի համընդհանուր նշանակության որոշումներն ընդունվեն ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչների կողմից, որոնք օժտված են բարձր մասնագիտացվածությամբ և, ենթարկվելով հատուկ ընթացակարգերի, մերժում կամ հավանության են արժանացնում առաջարկները միայն բանավեճերով և փոխզիջումներով⁴ լի քննարկումներից հետո՝ հաշվի

¹ *Oregon Constitution of 1857*, Sec. 35 Art. 1.

² **Valely R.** “*The Two Reconstructions: The Struggle for Black Enfranchisement*”, Chicago, University of Chicago Press, 2004, էջ 141.

³ Colorado Amendment 2, *No Protected Status for Sexual Orientation Initiative*, 1992.

⁴ Օրինակ՝ ձայների փոխանակման՝ «logrolling»-ի միջոցով՝ երբ օրենսդիր մարմնի անդամները համաձայնում են աջակցել միմյանց համար հետաքրքրություն ներկայացնող օրենսդրական ակտերի ընդունմանը: Այդ մասին տե՛ս՝ **Vatter A. & Danaci D.**, *Mehrheitstyannei durch Volksentscheide? Zum Spannungsverhältnis zwischen direkter Demokratie und Minderheitenschutz*, 2010, 51 (2), էջ 209; Baker L., “*Direct Democracy and Discrimination: a Public Choice Perspective*”, University of Virginia Law School of Law John M. Olin Foundation: Symposium on Law and Economics of Local Government, Chi.-Kent L. Rev., 1991, 67 (3), էջ 721:

առնելով հասարակության տարբեր խմբերի շահերը¹: Թեև գոյություն ունի այլ կարծիք ևս, համաձայն որի՝ հանրաքվեները խթանում են խնդրահարույց հարցերի քննարկմանն ինչպես քաղաքացիների, այնպես էլ վերջիններիս և քաղաքական գործիչների միջև², իսկ ներկայացուցչական իշխանության ժամանակ դա ոչ միշտ է երաշխավորված³:

«Մեծամասնության բռնակալությունը» առավել վտանգավոր է քան հանրային իշխանության ներգործությունը հիմնական իրավունքներին. ադպիսի միջամտության կանխումը կամ վերացումը առավել բարդ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժողովրդավարության պայմաններում դրանց կանխման կամ վերացման վերաբերյալ որոշումները ևս պետք է ընդունվեն ժողովրդի կողմից:

Ի տարբերություն հանրային իշխանության ճնշումների, որոնք կարող են ճանաչվել ոչ իրավաչափ և հանգեցնել պատասխանատվության, օրինակ, հաջորդ իշխանությունների կամ միջազգային հանրության կողմից, որևէ փոքրամասնության հիմնական իրավունքներին միջամտող մեծամասնության գերիշխող կարծիքը, համարվելով ժողովրդի որոշում, չի կարող կրել իր բացասական էությամբ պայմանավորված որևիցե հետևանք⁴:

Ամենևին այլ խնդիր է, երբ այդպիսի միջամտություններն առանձին անհատների կամ խմբերի կոնկրետ գործողությունների հետևանք են: Հանրաքվեների ճանապարհով Սահմանադրության փոփոխության վտանգներից մեկն այն է, որ դրանք կարող են ենթարկվել շահագրգիռ կողմերի շահարկումներին և ապատեղեկատվությանը՝ հանգեցնելով այնպիսի որոշումների ընդունման, որոնք իրապես չեն արտահայտում հասարակության կամքը: Օրինակ՝ դրանք կարող են օգտագործվել քաղաքական կուսակցությունների կողմից՝ հասարակության շրջանում իրենց հեղինակության բարձրացման նպատակով, երբ վերջիններս

¹ **Hamilton A., Madison J., Jay J.** “The Federalist”, տե՛ս ծանոթագրություն 24, No. 63; Oberholtzer E., “The Referendum in America; together with some chapters on the initiative and the recall”, Charles Scribner’s Sons, New York, 1911, էջ 500; **Moeckli D.**, “Of Minarets and Foreign Criminals: Swiss Direct Democracy and Human Rights”, Hum. Rights Law Rev., Oxford University Press, 2011, 11 (4), էջ 777; Eule J., “Judicial Review of Direct Democracy”, Yale L.J., Yale University, 1990, 99 (7), էջեր 1520, 1525, 1555; **Stefanini M.**, “Referendums, Minorities and Individual Freedoms”, The Routledge Handbook Compendium to Referendums and Direct Democracy (eds. Morel L. & Qvortrup M.), Routledge, 2017, էջ 2, էջ 11:

² **Frey S., Stutzer A., Neckerman S.** “Direct Democracy and the Constitution”, Constitutional Mythologies: New Perspectives (ed. Marciano A.), Studies in Public Choice, Vol. 23, 2011, էջ 109:

³ **Baker L.** տե՛ս ծանոթագրություն 29, էջեր 737-38:

⁴ **Mill J.** “On Liberty”, Batoche Books Limited, Ontario, Canada, 52 Eby Street South Kitchener, 2001, էջ 9:

հանդես են գալիս այնպիսի նախաձեռնություններով, որոնք թիրախավորում են փոքրամասնությանը, որպես պետության առաջ ծառայած խնդիրների պատճառ, ինչպես Շվեյցարիայում՝ Շվեյցարական ազգային կուսակցության նախաձեռնած սահմանադրական փոփոխությունների մի շարք նախագծեր (օրինակ՝ 2014 թվականի «Ընդդեմ զանգվածային ներգաղթի»¹, որը նախատեսում էր օտարերկրյա քաղաքացիների՝ Շվեյցարիա մուտք գործելու տարեկան թույլատրելի առավելագույն քանակ սահմանելու հնարավորություն կամ 2009 թվականի «Ընդդեմ մինարեթների կառուցման»², որն արգելում էր մինարեթների կառուցումը):

3. Հանրաքվեի միջոցով մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու իրավաչափությունը

Հանրաքվեի ճանապարհով հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելու գաղափարն ամբողջովին իրատեսական է թե՛ ժողովրդի, թե՛ պետության նախաձեռնությամբ Սահմանադրության ընդունման կամ փոփոխության դեպքում:

Այդպիսի հրաժարման իրավաչափությունը անհրաժեշտ է գնահատել՝ հաշվի առնելով հրաժարման նպատակները և որոշակի պայմանների ապահովվածությունը: Մասնավորապես՝ հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարումը պետք է լինի 1. **գիտակցված**. հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվող ժողովուրդը պետք է տեղեկացված լինի դրանց գոյության, դրանցից հրաժարվելու պատճառաբանության և հնարավոր հետևանքների մասին, 2. **կամավոր**. ժողովուրդը պետք է արտահայտի իր կամքը ժողովրդավարության սկզբունքների պահպանմամբ անցկացված հանրաքվեի ժամանակ (այս տեսանկյունից խնդրահարույց է այն պետությունների օրինակը, որոնք հրաժարվել են հանրաքվեի, որպես իշխանության իրականացման ձևի ճանաչումից), 3. **ոչ վերջնական**. հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարումը չպետք է լինի վերջնական՝ նախատեսելով դրանք վերականգնելու իրավական արգելքներ:

Որպես հիմնական իրավունքների պաշտպանության միջոց կարելի է նախատեսել Սահմանադրության ընդունման կամ փոփոխության նախա-

¹ Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative 'Gegen Masseneinwanderung', 2014.

² (Mindestlohn-Initiative), տե՛ս ծանոթագրություն 12:

գծերի նկատմամբ վերահսկողության նախնական (ex ante) և հետագա (ex post) ընթացակարգեր: Օրինակ՝ 1. հիմնական իրավունքների վերաբերյալ հանրաքվեների անցկացման արգելք¹, 2. միջազգային իրավունքի jus cogens նորմերին, որոնց վրա հիմնվում են հիմնական իրավունքների մեծ մասը, հակասող հանրաքվեների անցկացման արգելք², 3. դաշնային պետություններում հանրաքվեների անցկացում միայն տեղական մակարդակում, 4. նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ ընթացակարգային նորմերի պահպանման ստուգում, 5. հանրաքվեի դրվող հարցի՝ պետության միջազգային պարտավորություններին համապատասխանության ստուգում, 6. հանրաքվեի արդյունքում ընդունված որոշումների մեկնաբանում, որով դրանք կհամապատասխանեցվեն հիմնական իրավունքների էությանը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Ղամբարյան Ա.**, «Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2018, 542 էջ:

2. *Armenia's Constitution of 1995 with Amendments through 2015*, Constitute Project, Art. 202 P. 1-2, [Armenia 1995 \(rev. 2015\) Constitution - Constitute \(constituteproject.org\)](https://www.constituteproject.org/Armenia-1995) (15.05.2023).

3. *Azerbaijan's Constitution of 1995 with Amendments through 2016*, Constitute Project, Art. 155, [Azerbaijan 1995 \(rev. 2016\) Constitution - Constitute \(constituteproject.org\)](https://www.constituteproject.org/Azerbaijan-1995) (28.05.2023).

4. **Baker L.** *Direct Democracy and Discrimination: a Public Choice Perspective*, University of Virginia Law School of Law John M. Olin Foundation: Symposium on Law and Economics of Local Government, Chi.-Kent L. Rev., 1991, 67 (3), էջեր 708-775, <https://scholarship.kentlaw.iit.edu/cklawreview/vol67/iss3/2> (27.05.2023).

¹ Տե՛ս օրինակ՝ *Azerbaijan's Constitution of 1995 with Amendments through 2016*, Art. 155; *Morocco's Constitution of 2011*, Art. 175; *Slovakia's Constitution of 1992 with Amendments through 2017*, Art. 93 P. 3:

² *Switzerland's Constitution of 1999 with Amendments through 2014*, Art. 139 P. 3.

5. BBC, *Switzerland rejects world's highest minimum wage*, 2014, <https://www.bbc.com/news/business-27459178> (23.05.2023).

6. **Bell D.** “*The Referendum: Democracy’s Barrier to Racial Equality*”, Wash. L. Rev., University of Washington School of Law, 1978, 54 (1), 29 էջ, <https://digitalcommons.law.uw.edu/wlr/vol54/iss1/3> (03.24.2023).

7. **Berg J.** “*Understanding Waiver*”, Hous. L. Rev., 2006, 40 (2), էջ 281, <https://houstonlawreview.org/article/4848-understanding-waiver> (27.05.2023).

8. Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Für den Schutz fairer Löhne (Mindestlohn-Initiative)’, 2014, <https://www.bk.admin.ch/ch/d/pore/vi/vis399t.html> (23.05.2023).

9. Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Für Ehe und Familie – gegen die Heiratsstrafe’, 2016, <https://www.bk.admin.ch/ch/d/pore/vi/vis404t.html> (22.05.2023).

10. Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Für ein bedingungsloses Grundeinkommen’, 2016, <https://www.bk.admin.ch/ch/d/pore/vi/vis423t.html> (23.05.2023).

11. Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Gegen den Bau von Minaretten’, 2009, <https://www.bk.admin.ch/ch/d/pore/vi/vis353t.html> (31.01.2023).

12. Bundeskanzlei BK, Eidgenössische Volksinitiative ‘Gegen Masseneinwanderung’, 2014, <https://www.bk.admin.ch/ch/d/pore/vi/vis413t.html> (02.05.2023).

13. California Proposition 8, *Same-Sex Marriage Ban Initiative*, 2008, [https://ballotpedia.org/California_Proposition_8_Same-Sex_Marriage_Ban_Initiative_\(2008\)](https://ballotpedia.org/California_Proposition_8_Same-Sex_Marriage_Ban_Initiative_(2008)) (24.05.2023).

14. Colorado Amendment 2, *No Protected Status for Sexual Orientation Initiative*, 1992, [https://ballotpedia.org/Colorado_Amendment_2_No_Protected_Status_for_Sexual_Orientation_Initiative_\(1992\)](https://ballotpedia.org/Colorado_Amendment_2_No_Protected_Status_for_Sexual_Orientation_Initiative_(1992)) (27.05.2023).

15. Council of Europe, *European Convention on Human Rights*, 1950, Articles 9, 14, https://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf (22.05.2023).

16. **Eule J.** “*Judicial Review of Direct Democracy*”, Yale L.J., Yale University, 1990, 99 (7), էջեր 1508-1539, <http://hdl.handle.net/20.500.13051/16685> (04.05.2023).

17. Fenazzi S., *Tax initiative in hot water over marriage definition*, swissinfo.ch, <https://www.swissinfo.ch/eng/cccccccccccc tax-break-vote-shell/41874934> (22.05.2023).

18. **Frey S., Stutzer A., Neckerman S.** “*Direct Democracy and the Constitution*”, *Constitutional Mythologies: New Perspectives* (ed. Marciano A.),

ՄԱՀԱՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 3(111)2023

Studies in Public Choice, Vol. 23, 2011, էջ 107, <https://www.bsfrey.ch/wp-content/uploads/2021/08/direct-democracy-and-the-constitution.pdf> (29.05.2023).

19. **Gamble B.** “*Putting Civil Rights to a Popular Vote*”, Am. J. Political Sci., The Midwest Political Science Association, 41 (1), 1997.

20. **García Pérez C.** “*Does the Right to Basic Income Already Exist? An Overview of the European and Spanish Legal Framework*”, BIEN 2018, Tampere, 9 էջ, https://basicincome.org/wp-content/uploads/2018/12/Paper_BIENCONGRESS2018_CarmenGarciaPerez.pdf (10.05.2023).

21. **Garnett R.** “*Why Informed Consent? Human Experimentation and the Ethics of Autonomy*”, Catholic Lawyer, Cath. U. L. Rev., 1995-1996, 36 (4), էջեր 455, <https://scholarship.law.stjohns.edu/tcl/vol36/iss4/5/> (27.24.2023):

22. *Germany's Constitution of 1949 with Amendments through 2014*, Art. 1 P. 2, *Germany 1949 (rev. 2014) Constitution - Constitute* ([constituteproject.org](https://www.constituteproject.org)) (28.05.2023).

23. **Hamilton A., Madison J., Jay J.** “*The Federalist*”, The Independent Journal, New York, 1788, No. 10, 63, <https://csac.history.wisc.edu/document-collections/foundational-documents-of-american-constitutionalism/the-federalist-papers/> (08.05.2023).

24. *Kenya's Constitution of 2010*, Constitute Project, Art. 257 P. 1, *Kenya 2010 Constitution - Constitute* ([constituteproject.org](https://www.constituteproject.org)) (12.05.2023).

25. **Mill J.** “*On Liberty*”, Batoche Books Limited, Ontario, Canada, 52 Eby Street South Kitchener, 2001, 109 էջ, <https://socialsciences.mcmaster.ca/econ/ugcm/3ll3/mill/liberty.pdf> (15.05.2023).

26. **Moeckli D.** “*Of Minarets and Foreign Criminals: Swiss Direct Democracy and Human Rights*”, Hum. Rights Law Rev., Oxford University Press, 2011, 11 (4), էջ 774, <https://corteidh.or.cr/tablas/r27640.pdf> (30.03.2023).

27. **Moos O.** “*From Minarets to the “Muslim Question”: the New Critique of Islam*”, The Swiss Minaret Ban: Islam in question (eds. Haenni P. & Lathion S.), Religioscope, 2011, 97 էջ, https://www.minaret.li/resources/Religioscope_Swiss_MinaretBan.pdf (22.05.2023).

28. *Morocco's Constitution of 2011*, Constitute Project, Art. 175, *Morocco 2011 Constitution - Constitute* ([constituteproject.org](https://www.constituteproject.org)) (28.05.2023).

29. **Oberholtzer E.** “*The Referendum in America; together with some chapters on the initiative and the recall*”, Charles Scribner's Sons, New York, 1911, 533 էջ:

30. *Oregon Constitution of 1857*, Sec. 35 Art. 1, <https://mnchexhibits.uoregon.edu/racing-to-change/pre-civil-rights/constitution/> (23.05.2023).

31. *Political Constitution of The Republic of Chile of 1980*, International Foundation for Electoral Systems (IFES), <https://www.ifes.org/tools-resources/election-materials/political-constitution-republic-chile-1980> (22.05.2023).

32. **Rappard W.** “*The Initiative and Referendum in Switzerland*”, Am. Polit. Sci. Rev., American Political Science Association, 1912, 6, (3), էջ 345, <https://www.jstor.org/stable/1944524> (23.05.2023).

33. **Rey Pérez J. L.** “*Basic Income In The Discussion About Human Rights: Right Or Guarantee?*”, BIEN 2012, Munich, 18 էջ, <https://basicincome.org/bien/pdf/munich2012/ReyPerez.pdf> (10.05.2023).

34. *Russian Federation's Constitution of 1993 with Amendments through 2014*, Art. 17 P. 2, Russian Federation 1993 (rev. 2014) Constitution - Constitute (constituteproject.org) (28.05.2023).

35. Schmitt C., “*Constitutional Theory*” (Seitzer J. translation), Duke University Press, 2008, 468 էջ, https://www.academia.edu/35892524/Carl_Schmitt_Constitutional_Theory_eng (27.05.2023):

36. *Slovakia's Constitution of 1992 with Amendments through 2017*, Constitute Project, Art. 93 P. 3, Slovakia 1992 (rev. 2017) Constitution - Constitute (constituteproject.org) (28.05.2023).

37. **Stefanini M.** “*Le référendum et la protection des droits fondamentaux*”, Revue française de Droit constitutionnel, 2003, 53 (1), էջ 73, <https://doi.org/10.3917/rfdc.053.0073> (09.05.2023).

38. **Stefanini M.** “*Referendums, Minorities and Individual Freedoms*”, The Routledge Handbook Compendium to Referendums and Direct Democracy (eds. Morel L. & Qvortrup M.), Routledge, 2017, 23 էջ, <https://shs.hal.science/halshs-01676497> (04.05.2023).

39. **Sunstein C.** “*Legal Interference with Private Preferences*”, U. Chic. L. Rev., University of Chicago Law School, 1986, 53 (4), էջ 1129, <https://chicagounbound.uchicago.edu/uclrev/vol53/iss4/1/> (19.04.2023).

40. *Switzerland's Constitution of 1999 with Amendments through 2014*, Constitute Project, Art. 139 P. 3, Switzerland 1999 (rev. 2014) Constitution - Constitute (constituteproject.org) (29.05.2023).

41. The Guardian, *Swiss voters reject proposal to give basic income to every adult and child*, New York, St Martin's Press, 2011, <https://www.theguardian.com/world/2016/jun/05/swiss-vote-give-basic-income-every-adult-child-marxist-dream> (23.05.2023).

42. UN General Assembly, *International Covenant on Civil and Political Rights*, 1966, United Nations, Articles 2, 18, 27, [https://undocs.org/A/RES/2200\(XXI\)](https://undocs.org/A/RES/2200(XXI)) (05.05.2023).

второй части - об основных причинах отказа от конституционного закрепления основных прав человека, а в заключительной третьей части - об условиях правомерности отказа от конституционного закрепления основных прав человека и некоторых средствах их защиты.

В статье в основном рассматривается опыт Соединенных Штатов Америки и Швейцарии, учитывая тот факт, что данные государства отличаются периодичностью проведения референдумов по конституционным поправкам.

Ключевые слова: основные права человека, отказ от права, референдум, ограничение права, меньшинство.

REJECTION OF CONSTITUTIONAL ENTRENCHMENT OF BASIC HUMAN RIGHTS BY REFERENDUM

Annotation

In some cases, people can waive their subjective rights, for example, by allowing law enforcement authorities to search an apartment without a court decision. However, even when a person waives his subjective rights by giving consent to the interference with his rights, the state is still obliged to follow certain procedures. In particular, law enforcement officers must obtain a search warrant, even if the person gives consent to allow the search of the apartment without a search warrant.

Is it possible to reject to entrench the basic human right in the constitution? Does it not arise, if such an opportunity exists, the need to provide for certain restrictions as in the case of the waiver of subjective constitutional rights?

The first part of the article will discuss the basic human rights and the rejection of their constitutional entrenchment by referendum, the second part - the main reasons for the rejection of the constitutional entrenchment of basic human rights, and the final part - the conditions for the legitimacy of rejection of the basic human rights, and some protection measures.

The article mainly discusses the experience of the United States of America and Switzerland, considering the fact that these states differ in the frequency of holding referendums on constitutional amendments.

Keywords: basic human rights, waiver of the right, referendum, restriction of the right, minority.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 10.10.2023թ., փրվել է գրախոսության 11.10.2023թ., ընդունվել է փրագրության 12.10.2023թ.:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԶԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 317-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 337-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

Քաղ. Երևան

4 հուլիսի 2023թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Սուսաննա Բազիկյանի ներկայացուցիչ Կ. Թունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Սուսաննա Բազիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի և 337-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին,

Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենսգրքի՝ «Անվավեր գործարքներով հայցային վաղեմության ժամկետները» վերտառությամբ 317-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, եթե գործարքը կնքվել է բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, դրա դադարման օրվանից (313 հոդվածի 1-ին կետ) կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին»:

Օրենսգրքի՝ «Հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը» վերտառությամբ 337-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով»:

Վիճարկվող դրույթները որևէ փոփոխության կամ լրացման չեն ենթարկվել:

Սահմանադրական դատարանն իր 2021 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ «(...) «պարտավոր էր իմանալ» կամ «պետք է իմացած լիներ» հասկացությունները վերաբերում են այն իրավիճակներին, երբ քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության դեպքում կիմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին»:

Գործի քննության առիթը Սուսաննա Բազիկյանի (այսուհետ նաև՝ Դիմող)՝ 2023 թվականի մարտի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023 ՍԵՆՏԵՄԲԵՐԻ ԿԻՄՆԵՐԻ 267

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

1. Գործի դատավարական նախապատմությունը¹

1.1. Թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործի առնչությամբ

1. Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործով 2016 թվականի փետրվարի 17-ին կայացրած վճռով Արմեն Հակոբյանին ճանաչել է սնանկ:

2. Դատարանը 2016 թվականի օգոստոսի 15-ին կայացրել է «Արմեն Միսակի Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մասին» որոշում²:

3. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի օգոստոսի 15-ի՝ «Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մասին» որոշման դեմ Սուսաննա Բազիկյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, 2017 թվականի փետրվարի 2-ին³ որոշել է մերժել վերաքննիչ բողոքը, Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 15.08.2016 թ. որոշումը թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

Տվյալ որոշմամբ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, ի թիվս այլնի, արձանագրել է հետևյալը. «Տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքը գույքի վաճառքն ուղիղ գործարքով իրականացնելու համար չի նախատեսում երրորդ անձի, ում գույքով ապահովված է պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջը, համաձայնության առկայության պայման, ուստի Դատարանի կողմից ճիշտ է գնահատվել հաստատման ենթակա փաստերի շրջանակը և թույլ չի տրվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

(...)

¹ Սույն գործի դատավարական նախապատմությունը ներկայացվում է՝ հիմք ընդունելով Դիմողի կողմից դիմումի շրջանակներում ներկայացված տվյալները, ինչպես նաև սույն գործով ներկայացված դատական ակտերով հաստատված հանգամանքները:

² «Արմեն Միսակի Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մասին» Դատարանի որոշումը վկայակոչված է վերաքննիչ քաղաքացիական և Վճռաբեկ դատարանների համապատասխան որոշումներում:

³ Թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման մեջ որպես որոշման հրապարակման ամսաթիվ նշված է 2016 թվականի փետրվարի 2-ը, սակայն նույն սնանկության գործով Վճռաբեկ դատարանի որոշման շրջանակներում, ինչպես նաև www.datalex.am դատական տեղեկատվական համակարգում որպես դատական ակտի հրապարակման ամսաթիվ նշվում է 2017 թվականի փետրվարի 2-ը:

Վերոնշյալ նորմի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի] և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանը կողմին ծանուցելու պարտականություն ունի միայն դատական նիստ հրավիրելու կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու դեպքում, իսկ գույքն ուղղակի գործարքով վաճառելու մասին միջնորդության քննությունն իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու: Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Դատարանը բողոքաբերին ծանուցելու պարտականություն չի կրել, հետևաբար բողոքի նշված փաստարկը նույնպես գնահատվում է չիմնավորված»:

4. Վճռաբեկ դատարանը, քննելով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2017 թվականի որոշման դեմ Սուսաննա Բազիկյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը, 2019 թվականի հունիսի 7-ին որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2017 թվականի որոշումը և գործը՝ Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի ներկայացրած՝ Արմեն Հակոբյանի վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին վաճառել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդությունը քննարկելու մասով, ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

Հիշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, փաստել է. «(...) Սուսաննա Բազիկյանը տեղեկացված չի եղել իրեն համարել սեփականության իրավունքով պատկանող գույքի վաճառքի գործընթացի վերաբերյալ, քանի որ գործում բացակայում են ապացույցներ ինչպես սնանկության գործով կառավարչի, այնպես էլ Դատարանի կողմից այդ գործընթացի մասին Սուսաննա Բազիկյանին տեղեկացնելու վերաբերյալ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Սուսաննա Բազիկյանը, լինելով գրավի առարկա գույքի համասեփականատեր, պետք է իրական հնարավորություն ունենար մասնակցելու գրավի առարկա գույքի վաճառքին վերաբերող գործընթացին, այդ թվում՝ իրական հնարավորություն ստանալով օգտվելու «Սնանկության մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով իր համար սահմանված երաշխիքներից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱԲԱՆ
 ◆ ՍԵՆԵԿԱՆՏ
 ◆ 3(111)2023
 269

Այսպիսով, նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի 15.08.2016 թվականի որոշումն ուղղակիորեն շոշափել է Սուսաննա Բազիկյանի իրավունքները և օրինական շահերը, մինչդեռ վերջինիս համար չի ապահովվել նշված որոշման կայացմանը նախորդող գործընթացին մասնակցելու իրական հնարավորություն, որպիսի հանգամանքն էլ անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սուսաննա Բազիկյանը սնանկության վարույթում իր գույքի վաճառքի վերաբերյալ գործընթացին մասնակից չդարձվելու հետևանքով զրկվել է իր իրավունքներից իրապես օգտվելու հնարավորությունից, ինչի արդյունքում սահմանափակվել է նրա՝ ինչպես ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքը»:

1.2. Թիվ ՍնԴ/0129/02/19 քաղաքացիական գործի առնչությամբ

1. Սնանկության դատարանը, քննելով ՍնԴ/0129/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Սուսաննա Բազիկյանի ընդդեմ Արմեն Հակոբյանի, Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի, Շուշանիկ Ղազարյանի, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի, Վարդան Ավետիսյանի՝ անշարժ գույքի առուվաճառքի և հաջորդող գրավի գործարքը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի և գրավի իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, 2020 թվականի օգոստոսի 28-ին վճռել է Սուսաննա Բազիկյանի հայցը մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով:

Սույն վճռով սնանկության դատարանը փաստել է. «Հայցադիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Դատարանն արձանագրում է, որ հայցվոր կողմը գործարքն անվավեր ճանաչելու հիմքում դրել է այն հանգամանքը, որը հայցվորը, հանդիսանալով գույքի սեփականատեր, տեղեկացված չի եղել գույքի օտարման մասին և հնարավորություն չի ունեցել պատշաճ օգտվելու անշարժ գույքը ձեռք բերելու իր իրավունքներից:

Հայցվորը «16.12.2016 թվական» թվագրությամբ թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործով վերաքննիչ բողոքում մասնավորապես նշել է.

«(...) Բողոքաբերը գույքի վաճառքի մասին տեղեկացել է բացառապես 23.09.2016 թվականին, երբ բանկը բողոքաբերին առաջարկել է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

ներկայանալ բանկ, որպեսզի քննարկվեր գույքի ուղղակի գործարքով վաճառքի որոշ հանգամանքներ և որպեսզի բողոքաբերը բանկին հանձներ գույքի բանալիները: (...)»:

Այսպիսով հայցվորը գործարքն անվավեր ճանաչելու համար իր կողմից նշված հիմքերի վերաբերյալ տեղեկացված է եղել դեռևս 2016 թվականի սեպտեմբերի 23-ից, ուստի վաղեմության ժամկետի հաշվարկը պետք է սկսել հենց տեղեկացված լինելու օրվանից:

Համադրելով վերը նշված վերլուծությունները սույն քաղաքացիական գործի փաստերի հետ՝ Դատարանը փաստում է, որ հայցվորը հայցադիմումը ներկայացրել է հայցային վաղեմության ժամկետի ավարտից շուրջ երկու տարի հետո՝ 2019 թվականի սեպտեմբերի 24-ին»:

2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով Սուսաննա Բազիկյանի՝ սնանկության դատարանի 28.08.2020 թվականի վճռի դեմ ներկայացրած վերաքննիչ բողոքը, 2021 թվականի փետրվարի 8-ին որոշել է Սուսաննա Բազիկյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի, սնանկության դատարանի 28.08.2020 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Տվյալ որոշմամբ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, ի թիվս այլնի, արձանագրել է. «(...) սույն գործով Դատարանը հայցային վաղեմություն կիրառելով հաշվի չի առել այն, որ օրենսդիրը նման պահանջներով հայցային վաղեմության հաշվարկի սկիզբ է դիտել հայցվորի կողմից գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին իմանալու կամ իմանալու պարտավորության առկայության հանգամանքները, այլ ոչ թե գործարքի մասին իմանալու կամ այդպիսի պարտականություն ունենալու հանգամանքը:

Կարևոր է շեշտադրել այն հանգամանքը, որ խախտված իրավունքի պաշտպանությունը պետք է իրական լինի և ոչ տեսական, ինչը սույն գործի հանգամանքների, հայցային վաղեմության հարցը քննարկելիս նշանակում է նաև ուշադրության արժանացնել այն հանգամանքը, թե արդյոք անձը հնարավորություն ուներ իր իրավունքի արդյունավետ պաշտպանությունն իրականացնել, քանի դեռ դատական կարգով չէր վերացվել դատարանի կայացրած որոշումը:

Ավելին, դատարան ներկայացված հայցադիմումով հայցվորը որպես հայցի փաստական հիմք նշել է ոչ թե գործարքի վերաբերյալ տեղեկացված լինել/չլինելու հանգամանքը, այլ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԱՎԴԴ/0006/04/16 սնանկության գործով կայացված «Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մասին» որոշումը վերացվելու հանգամանքը՝ վիճելի գործարքի օրինական հիմքի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

բացակայությունը, ինչի մասին բողոքաբերն ավելի վաղ, քան ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից որոշում կայացնելու պահը՝ 07.06.2019 թվականը, իմանալ չէր կարող ուստի սույն գործով հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել է ոչ թե իրավունքի խախտման մասին տեղեկանալու պահից, այլ գործարքն անվավեր ճանաչելու համար բողոքաբերի գնահատմամբ հիմք ծառայող հանգամանքի վերաբերյալ տեղեկանալու պահից (...):»:

3. Վճռաբեկ դատարանը, քննելով Շուշանիկ Ղազարյանի և Վարդան Ավետիսյանի՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2021 թվականի որոշման դեմ ներկայացրած վճռաբեկ բողոքը, 2022 թվականի նոյեմբերի 18-ին որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2021 թ. որոշումը և օրինական ուժ տալ սնանկության դատարանի 28.08.2020 թ. վճռին:

Տվյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, արձանագրել է. «Իր իրավունքի խախտման մասին Հայցվորն իմացել է 2016 թվականին, ինչը հաստատվում է նրանով, որ Հայցվորը այդ ժամանակ թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործով ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ հայցվորը որևէ կերպ կաշկանդված չէր ՀՀ Արարադի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 15.08.2016 թվականի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելուց բացի ներկայացնել նաև հայցադիմում՝ անշարժ գույքի առուվաճառքի և հաջորդող գրավի գործարքը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի և գրավի իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որոնք անմիջականորեն խախտել են իր սուբյեկտիվ իրավունքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սուսաննա Բազիկյանն իր իրավունքի խախտման հարցում համոզված լինելու պահից չիրացնելով դատական պաշտպանության իր իրավունքը, սույն գործով բաց է թողնի իր իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու՝ հայցային վաղեմության օրենքով սահմանված մեկամյա ժամկետը»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասին, 61 և 63-րդ հոդվածներին:

Դիմողը նշում է. «Իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների պայմաններում անձի կողմից իր իրավունքների պաշտպանության գործին ձեռնամուխ լինելը կարող է պայմանավորված լինել երկու գործոններով.

1. Երբ անձը հիմնավոր կասկածներ ունի իր իրավունքի խախտման /տվյալ դեպքում՝ գույքի վերաբերյալ կնքված գործարքի/ վերաբերյալ, որը պայմանավորված չէ որևէ դատական ակտի առկայությամբ,

2. Երբ անձի իրավունքը խախտված է դատական ակտով, այդ խախտումը հաստատվում է համապատասխան /վերադաս դատական ատյանի կողմից կայացված/ դատական ակտով, որպիսի պարագայում գործ ունենք ոչ թե հիմնավոր կասկածների կամ կայացված որոշման չհամաձայնելու, այլ օրենքով նախատեսված կարգով ձևավորված դատական ատյանի կողմից օրենքով սահմանված կարգով կայացված և օրինական ուժ ստացած դատական ակտով արձանագրված իրավունքի խախտման հետ, և այդ իրավունքի խախտումից ածանցվել է անձի իրավունքի խախտումը /կնքվել է գործարք/»:

Դիմողը պնդում է, որ քննարկման առարկա դատական գործի շրջանակներում վիճարկվող դրույթներին տրվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ հայցային վաղեմության ժամկետը հաշվելիս հաշվի չեն առնվում այն դեպքերը, երբ անձի նկատմամբ կայացված դատական ակտով է ճանաչվում իրավունքի խախտման փաստը, և դիմողը դատարանում բարձրացնում է իրավունքի խախտման այդ փաստից ածանցվող և իր իրավունքը խախտող գործարքի կնքման անվավերության հարց:

Դիմողը նաև հայտնում է, որ անիմաստ է քննարկման առարկա իրավիճակում վիճարկել այն գործարքի վավերությունը, որի կնքման թույլտվությունը տրվել է դատական ակտով, քանի որ այդ պարագայում սկզբում պետք է հասնել տվյալ դատական ակտի բեկանմանը, որից հետո նոր միայն կսկսվի գործարքն անվավեր ճանաչելու հայց ներկայացնելու համար նախատեսված հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը:

Դիմողը, նշելով, որ քննարկման առարկա գործով վիճարկվող դրույթներին Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանության պայմաններում արժեզրկվում է ընդհանրապես դատարանի որոշման, մասնավորապես՝ տվյալ դեպքում հենց Վճռաբեկ դատարանի կայացրած որոշման իրավաբանական ուժն ու կարևորությունը, գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անձի կողմից բարձրացվող գործարքի անվավերության հարցն անմիջականորեն կապված է գործարքի կնքման հիմք հանդիսացող դատական ակտի հետ, գործարքի անվավերության հայց

ներկայացնելու համար հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը պետք է սկսել այն դատական ակտի բեկանման պահից, որով թույլատրվել է գործարքի կնքումը:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ Դիմողը խնդրում է. «(...) Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասին, 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասին և 337-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող) գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը համապատասխանում է Սահմանադրությանը:

Անդրադառնալով դիմումում նկարագրված փաստական հանգամանքներին՝ Պատասխանողը հայտնում է, որ պարտապանին սնանկ ճանաչելուց բխող գործընթացների, այդ թվում՝ գրավադրված գույքի վաճառքի մասին իրապես չտեղեկացնելը հանգեցրել է երրորդ անձ գրավատուի իրավունքների խախտման. «Հետևաբար այդ իսկ պահից էլ կամ նվազագույնը խախտման իրավական հետևանքները իր վրա տարածվելու պահից վերջինս գիտի կամ պարտավոր է իմանալ իր իրավունքի խախտման մասին և ձեռնարկել համապատասխան քայլեր՝ խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ: Վերոգրյալից հետևում է, որ առկա է բավարար իրավական գործիքակազմ սեփականության իրավունքի լիարժեք պաշտպանության համար»:

Պատասխանողը նաև գտնում է, որ քննարկվող դեպքում անհրաժեշտ է տարբերակել «իրավունքի խախտման մասին իմանալ» և «իրավունքի խախտման փաստը հաստատող ապացուցողական բազա ձեռք բերելու» իրավիճակները, որոնք չպետք է նույնացվեն: Իրավունքի խախտման մասին իմանալու պահից սահմանված վաղեմության ժամկետում շահագրգիռ անձը պարտավոր է գործողություններ ձեռնարկել իր իրավունքների պաշտպանության նպատակով, իսկ խախտման փաստը հիմնավորող ապացույցների ձեռքբերման գործընթացը կարող է իրականացվել զուգահեռ:

Ի լրումն վերոգրյալի՝ Պատասխանողը նաև նշում է. «ՀՀ քաղաքացիական դատավարությունը նախատեսում է նաև գործի քննության կասեցման ինստիտուտ: Հետևապես, եթե անձը տեղեկացել է իր իրավունքների խախտման մասին, կարող է դիմել դատական պաշտպանության համար, իսկ հետագայում խախտման փաստը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 3(111)2023

հաստատող այլ դատական գործի (նախադատելի փաստ կամ ապացույց ձեռքբերելուն միտված դատական գործ) քննության պայմաններում վերջինս զրկված չէ և ունի բավարար իրավական հնարավորություն սկզբնական գործի քննությունը կասեցնելու (...) մինչև առնչվող գործով վերջնական դատական ակտի կայացման պահը»:

Եզրափակելով իր դիրքորոշումը՝ Պատասխանողը խնդրում է վիճարկվող դրույթները, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը, ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ անձի իրավունքի խախտման փաստը, այն է՝ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված լինելու պարագայում՝ տվյալ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման վերաբերյալ քաղաքացիական գործերով հայցային վաղեմության ժամկետի սկիզբ է համարվում անձի՝ իր իրավունքի խախտման հարցում համոզված լինելու պահը՝ **այն չպայմանավորելով իրավունքի խախտման փաստը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահով (այն դեպքերում, երբ գործարքի վավերության վիճարկման հիմքը դատական ակտով թույլ տրված իրավունքի խախտումն է),** համահունչ է անձի սեփականության և դատական պաշտպանության հիմնական իրավունքների վերաբերյալ սահմանադրաիրավական կարգավորումներին:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեև Վճռաբեկ դատարանի խնդրո առարկա որոշման շրջանակներում բառացիորեն բացակայում է քննարկման առարկա մեկնաբանությունը, սակայն տվյալ դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանն իր որոշման հիմքում դրել է հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման վերաբերյալ հիշատակված մեկնաբանությունը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը հոչակում է.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 3(11)2023

«1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը հոչակում են.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում ամրագրված 10-րդ հոդվածը ելակետային դերակատարություն ունի սեփականության հարաբերությունների սահմանադրաիրավական կանոնակարգման համար: Սեփականության իրավունքի ճանաչումը և դրանից բխող պարտավորությունը՝ պաշտպանել այդ իրավունքը, պետության հիմնարար պարտականություններն են: Վկայակոչված հոդվածի տրամաբանական շարունակությունը սահմանադիրն ամրագրել է Սահմանադրության 60-րդ հոդվածում՝ սահմանելով սեփականատիրոջ իրավազորությունների այն եռամիասնությունը, որը կազմում է սահմանադրական այս իրավունքի բովանդակային հիմքը:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-92, ՍԴՈ-630, ՍԴՈ-649, ՍԴՈ-650, ՍԴՈ-667, ՍԴՈ-669, ՍԴՈ-735, ՍԴՈ-815, ՍԴՈ-901, ՍԴՈ-903, ՍԴՈ-1009, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1073, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1189, ՍԴՈ-1203, ՍԴՈ-1210 և այլն) անդրադարձել է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին՝ իրավական դիրքորոշումներ արտահայտելով սեփականության իրավունքի էության, այդ իրավունքի սահմանափակման, դադարման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սահմանադրականության վերաբերյալ՝ կարևորելով այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգա-

վորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն»:

Սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ նաև արձանագրել է, որ «(...) ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով հաստատված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, մասնավորապես.

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը»:

Վերահաստատելով և զարգացնելով սեփականության իրավունքի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դիտարկելով դրանք հայցային վաղեմության ինստիտուտի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշմամբ փաստել է. «(...) սեփականության իրավունքի հետ առնչակցություն ունեցող ցանկացած օրենսդրական կարգավորում, դրա մեկնաբանություն և կիրառում պետք է համապատասխանեն նշյալ իրավունքի առնչությամբ Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումներին և Սահմանադրական դատարանի՝ ներկայացրած իրավական դիրքորոշումներին, մասնավորապես՝ դրանք պետք է երաշխավորեն սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար, պետք է երաշխավորեն օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով

3(111)2023
 ◆ ՏԵՆԿԻՎԻԿԻ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 277

անձին սեփականությունից զրկելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը, **ինչպես նաև երաշխավորեն սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանությունը**»:

5.2. Սեփականության իրավունքի իրացման որոշակի առանձնահատկություններ դրսևորվում են, մասնավորապես, սնանկության վարույթի շրջանակներում:

«Սնանկության ինստիտուտը տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է, որը, մի կողմից՝ կոչված է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցներն արդար բաշխելով վերջիններիս միջև, մյուս կողմից՝ օրենսդրական կարգավորումների ներդրման միջոցով փրկել գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտներին» (ՍԴՈ-1609, 14.09.2021թ.):

Հաշվի առնելով *սնանկության վարույթի առանձնահատկությունները, դրա շրջանակներում իրականացվող դատավարական ընթացակարգերի իրավական բնույթն ու հետևանքները՝* առանձնակի կարևորություն է ձեռք բերում ոչ միայն պարտատերերի և պարտապանների, այլև սնանկության վարույթի շրջանակներում *երրորդ անձ գրավատուների իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանությունը*:

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջիններս սնանկության վարույթ ներգրավվում են սեփականության իրավունքով իրենց պատկանող և պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման համար գրավադրված գույքի՝ սնանկության վարույթի հետ անմիջական առնչության համատեքստում, որպիսի պայմաններում **խնդրո առարկա սուբյեկտների և սնանկության վարույթի այլ մասնակիցների իրավունքների հարաբերակցության և արդարացի հավասարակշռության ապահովումը դառնում է առավել քան նպատակային՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով իրար հետ առանձին դեպքերում չհատվող սնանկության և քաղաքացիական ու քաղաքացիադատավարական օրենսդրության համապատասխան իրավակարգավորումները**:

Սնանկության վարույթում գրավադրված գույքի իրացման եղանակներից մեկը դատարանի՝ **գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվություն փախու մասին որոշման հիման վրա գրավադրված գույքի իրացումն է, ըստ որի՝ կնքվում է համապատասխան գործարք**: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱԲԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 3(111)2023

պրակտիկան զարգացել է այն տրամաբանությամբ, որ սնանկության վարույթում պետք է երաշխավորվի գրավաբու հանդիսացող երրորդ անձի կողմից իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացին մասնակցելու իրական հնարավորությունը: Միաժամանակ, սնանկության վարույթը կարգավորող օրենսդրությունը չի ամրագրում խնդրո առարկա դատական ակտի բեկանման հիման վրա դրա համապատասխան հետևանքների վերացման անմիջական հնարավորություն, այլ կերպ ասած՝ **գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշման բեկանումը վերադաս դատարանի կողմից ուղղակիորեն չի հանգեցնում դրա հիման վրա կնքված գործարքի վերացման:**

Այս համարեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ երրորդ անձ գրավաբուին սեփականության իրավունքով պարկանող գույքի վերաբերյալ կնքված ենթադրյալ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը ներկայացնելը գործուն երաշխիք է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության համար՝ հաշվի առնելով այն, որ տվյալ **գործարքի կնքման հիմքում ընկած է եղել բեկանված դատական ակտ: Նման պայմաններում առանցքային է հայցային վաղեմության ինստիտուտի՝ իրավական բովանդակության բացահայտումը՝ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված լինելու համարեքստում:**

Այսպիսով, առանձնակի արժևորելով հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման շրջանակներում անձի սեփականության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում վերոգրյալ ինստիտուտին տրված ցանկացած մեկնաբանություն պետք է համահունչ լինի անձի սեփականության իրավունքի վերաբերյալ սահմանադրաիրավական կարգավորումներին և Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, մասնավորապես՝ այդ մեկնաբանության շրջանակներում պետք է երաշխավորվի սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով ինչպես սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պարկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և փոփոխման համար՝ ընդհանուր առմամբ, այնպես էլ՝ սեփականատիրոջ՝ սեփականության իրավունքի դադարման հիմք հանդիսացող ենթադրյալ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայց

ներկայացնելիս՝ ապահովելով սեփականության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը:

5.3. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է դատական պաշտպանության հիմնարար իրավունքին՝ բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունն ու ընդգծելով առանձնակի կարևորությունը՝ հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման ու պաշտպանության գործում: Իր մի քանի որոշումներում (ՍԴՈ-690, 719, 733, 765, 780, 849, 873, 890, 918, 922, 936, 1037, 1052, 1062, 1114, 1115, 1190, 1191, 1192, 1196, 1197, 1220, 1222, 1231, 1249, 1254, 1257, 1263, 1265, 1268, 1275, 1289, 1290, 1293, 1395) արդար դատաքննության և դատական բողոքարկման, դատարանի մատչելիության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները Սահմանադրական դատարանը վերահաստատել և ընդհանրացրել է 2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշմամբ՝ արձանագրելով, որ՝

«- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման»:

Սահմանադիրը, մարդու հիմնական իրավունքները և ազատությունները դիտարկելով իբրև ժողովրդավարական և իրավական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

պետության անսասան հիմքեր, դրանց ապահովումը երաշխավորել է իրավունքների պաշտպանության և վերականգնման արդյունավետ ընթացակարգերով, որոնք կենսագործվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների իրացման միջոցով՝ թույլ չտալով այլ հիմնական իրավունքներին և ազատություններին կրել լոկ հոչակագրային բնույթ:

Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համատեքստում առանձնակի կարևորություն ունի **հայցային վաղեմության** ինստիտուտի իրավական բովանդակության բացահայտումը: Այսպես.

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈ-1495 որոշմամբ, վաղեմության ժամկետի ինստիտուտը դիտարկելով իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակման համատեքստում, արձանագրել է. «(...) քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ժամկետներն (...) նպատակ ունեն ոչ միայն **ժամանակի առումով կանոնակարգելու** քաղաքացիական շրջանառությունը, այլ նաև **ապահովելու** քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց իրավունքների իրացման հնարավորությունը, **դրդելու** անձանց կատարելու իրենց պարտականությունները, ինչպես նաև **խթանելու** խախտված իրավունքների ժամանակին պաշտպանությունը»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշմամբ արձանագրել է. «(...) հայցային վաղեմության ինստիտուտը կողմերից մեկի դիտանկյունից հանդես է գալիս որպես դատարան դիմելու իրավունքի սահմանափակում՝ դատավարական կոնկրետ կանոնի հիմքով, որը, միևնույն ժամանակ, համապատասխանում է իրավունքի սահմանափակման իրավաչափության (...) չափանիշներին: Ուստի, նշյալ ինստիտուտի և իրավակարգավորումների՝ այդ հանգամանքին հակասող որևէ եղանակով մեկնաբանություն և կիրառում կհակասի վերջիններիս սահմանադրաիրավական բովանդակությանը»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքին առնչվող դիրքորոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ վաղեմության ժամկետները «ծառայում են մի քանի կարևոր նպատակների, որոնցից են՝ իրավական որոշակիության և վերջնականության ապահովումը, հնարավոր պատասխանողներին հնացած և հետևաբար դժվարությամբ վիճարկելի պահանջներից պաշտպանությունը, անարդար որոշումների նախականիսումն այն դեպքերում, երբ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 3(11)2023

դատարանից պահանջվի լուծել պահանջը վաղ անցյալում տեղի ունեցած փաստերի հաստատման միջոցով և այնպիսի ապացույցներով, որոնք զգալի ժամանակ անցնելու պատճառով այլևս անարժանահավատ կամ ոչ ամբողջական են դարձել» (Սթաբինգսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 22083/93 և 22095/93 դիմումներ, կետ 51, 1996 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ, ինչպես նաև Կոեմեն և այլք ընդդեմ Բելգիայի, թիվ 32492/96 և 4 այլ դիմումներ, 146 կետ, 2000 թվականի հունիսի 22-ի վճիռ)»:

2021 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է նաև. «(...) հայցային վաղեմության ինստիտուտն ինքնին ուղղված է քաղաքացիական շրջանառության մեջ սեփականության, տնտեսական գործունեությամբ զբաղվելու, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքներին և մյուս սահմանադրական արժեքներին առնչվող քննարկված նպատակների երաշխավորմանն ու դրա միջոցով քաղաքացիական շրջանառության կայունության, իրավահարաբերությունների որոշակիության, դրանց մասնակիցների բարեխղճության, իրավունքների պաշտպանության գործիքակազմերի բարեխիղճ օգտագործման, արդյունքում նաև՝ իրավահարաբերությունների ոչ թե մեկ, այլ բոլոր սուբյեկտների հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովմանը: Նշված նպատակները բացառիկ կարևորություն ունեն իրավական պետության կայացման տեսանկյունից և պետք է ընկած լինեն հայցային վաղեմությանն առնչվող ցանկացած իրավակարգավորման և իրավակիրառական պրակտիկայի հիմքում»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ «(...) հայցային վաղեմության ինստիտուտի նպատակն է կանոնակարգել քաղաքացիական շրջանառությունը, ստեղծել իրավական կապերի որոշակիություն ու կայունություն, ապահովել իրավահարաբերության մասնակիցների կարգապահությունը, նպաստել պայմանագրերի կատարմանը, ապահովել քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և շահերի ժամանակին պաշտպանությունը: Խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար ողջամիտ ժամանակային սահմանափակումների բացակայությունը կհանգեցնե՞ր պատասխանողների և երրորդ անձանց իրավունքների ու շահերի խախտման, որոնք միշտ չէ, որ նախապես կարող էին հաշվի առնել գործի քննության համար նշանակություն ունեցող տեղեկությունների և փաստերի հավաքման ու պահպանման անհրաժեշտությունը: Միաժամանակ, հայցային վաղեմության կիրառումը

քաղաքացիական շրջանառության մասնակիցներին պաշտպանում է անհիմն պահանջներից և միաժամանակ դրդում է նրանց ժամանակին հոգ տանել իրենց իրավունքների իրացման և պաշտպանության մասին»:

5.4. Խնդրո առարկա ինստիտուտի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատմանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի հանգուցալուծումն առավելապես պայմանավորված է վիճարկվող դրույթներում բովանդակվող **«իր իրավունքի խախտման փաստը» ձևակերպման՝ բացառապես դատական ակտով հաստատված լինելու** բովանդակային հստակ ծավալների բացահայտմամբ:

Թիվ ՍնԴ/0129/02/19 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2022 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ վիճարկվող դրույթներին տրված **մեկնաբանության արդյունքում ստացվում է**, որ *այն դեպքում, երբ գործարքի կնքման հիմքը դատական ակտն է, որը բեկանվել է վերադաս դատարանի կողմից, տվյալ գործարքի անվավեր ճանաչման և անվավերության հետևանքների կիրառման վերաբերյալ քաղաքացիական գործերով հայցային վաղեմության ժամկետի սկիզբ է համարվում անձի՝ իր իրավունքի խախտման հարցում համոզված լինելու պահը՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ տվյալ պայմաններում իրավունքի խախտման փաստը կարող է հաստատվել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:*

Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ օրենսդիրը վիճարկվող դրույթների շրջանակներում անվավեր գործարքներով հայցային վաղեմության ժամկետների հաշվարկման ելակետ է դիտել **«իր իրավունքի խախտման»**, այն է՝ **« գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին»** իմանալու հանգամանքը: Այս համատեքստում ակնհայտ է, որ այն դեպքում, երբ **վիճահարույց գործարքը կնքվել է դատական ակտի հիման վրա, անձի իրավունքի խախտման փաստի մասին կարելի է խոսել բացառապես գործարքի կնքման հիմքում ընկած դատական ակտը բեկանող վերադաս դատարանի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պայմաններում:** Այլ խոսքով՝ նման իրավիճակում անձի իրավունքի խախտման առկայությունն ինքնին կարող է հավաստվել բացառապես վերադաս դատարանի կողմից գործարքի հիմքում ընկած դատական ակտի բեկանմամբ, քանզի միայն համապատասխան դատական ակտի բեկանումն է ազդարարում անձի իրավունքի խախտման մասին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023 ՏԵՂԵԿՎԵԿԻ ԿԻՍԵԼԻՆԻ

«Քաղաքացիական օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցապահանջների համար օրենսդիրը սահմանել է հայցային վաղեմության ընդհանուր ժամկետից ավելի կրճատ՝ մեկամյա ժամկետ, ինչպես նաև այդ ժամկետի հաշվարկման ընդհանուր կարգից բացառություն, այն է՝ երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցապահանջների համար օրենսդրությամբ սահմանված մեկամյա ժամկետի սահմանումն ինքնանպատակ չէ՝ հաշվի առնելով այն, որ սույն ժամկետի սահմանումը հետապնդում է, մի կողմից՝ խախտված քաղաքացիական իրավունքների վերականգման դատական պաշտպանության իրավունքի ապահովման, մյուս կողմից՝ քաղաքացիական շրջանառության հենասյուներից մեկը հանդիսացող սկզբունքի՝ պայմանագրի ազատության սկզբունքի երաշխավորման նպատակներ՝ վերջնարդյունքում ապահովելով քաղաքացիիրավական հարաբերությունների կայունությունն ու կանխապեսելիությունը:

5.5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը պետք է լինի իրական, այլ ոչ թե կրի երևութական բնույթ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանները պետք է հայցային վաղեմության հարցը քննելիս միանշանակ հետևություն անեն, թե արդյո՞ք անձն ուներ իրական հնարավորություն իր իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունն իրականացնելու համար, քանի դեռ դատական կարգով չէր բեկանվել համապատասխան դատական ակտը:

Իրավական պետության սահմանադրաիրավական հայեցակարգից և դրանից ածանցվող իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքից ուղղակիորեն բխում է **օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նկատմամբ վստահելիության** կամ այլ կերպ ասած՝ **օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ճշմարտացիության կանխավարկածը**, որը քննարկվող դեպքում ենթադրում է, որ անձի՝ իր իրավունքի խախտման վերաբերյալ սուբյեկտիվ ընկալումներից ավելի վեր պետք է դասվեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստական հանգամանքները, ինչը, բացի այն, որ երաշխավորում է անձի՝ իր խախտված իրավունքի դատական կարգով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

վերականգնելը, նաև լիովին համապատասխանում է հայցային վաղեմության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանն այն առումով, որ **անձի՝ իր իրավունքի խախտման փաստը կարող է հաստատվել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:**

Այս առումով ակնհայտ է, որ գործարքի կնքման հիմքը դատական ակտն է, առանց որի բեկանման՝ չի կարելի գալ միանշանակ հետևության՝ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների, կամ որ նույնն է՝ անձի իրավունքի խախտման փաստի առկայության մասին:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այն տրամաբանությամբ, որ **սնանկության վարույթի շրջանակներում գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշման հիման վրա կնքված գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման վերաբերյալ քաղաքացիական գործերով հայցային վաղեմության ժամկետի սկիզբը պետք է հաշվարկել տվյալ գործարքի կնքման թույլտվություն տվող դատական ակտը բեկանող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից:**

Վերոգրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ հիշատակված սահմանադրաիրավական արժեքների՝ սեփականության իրավունքի երաշխավորման և արդյունավետ դատական պաշտպանության ապահովման հետ անհամադրելի է իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մեկնաբանությունն առ այն, որ անձի իրավունքի խախտման փաստը, այն է՝ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքը օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված լինելու պարագայում՝ տվյալ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման վերաբերյալ քաղաքացիական գործերով հայցային վաղեմության ժամկետի սկիզբ է համարվում անձի՝ իր իրավունքի խախտման հարցում **համոզված լինելու պահը, և հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ իրավունքի փաստը հաստատված է եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:**

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի առարկա օրենսդրական դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը **խնդրահարույց է անձի արդյունավետ դատական պաշտպանության իրականացման** տեսանկյունից նաև այն առումով, որ խնդրահարույց մեկնաբանության արդյունքում ստացվում է, որ անձը, անկախ դա-

տարանի համապատասխան որոշումը բողոքարկելու հանգամանքից, պետք է ներկայացնեն հայցադիմում՝ գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվություն սահմանող դատարանի որոշման հիման վրա գործարքն անվավեր ճանաչելու պահանջով՝ այդ պահին դեռևս գոյություն չունեցող (չհաստատված) փաստի՝ դատարանի որոշմամբ իր իրավունքը խախտված լինելու հիմքով:

Նման իրավիճակում ստացվում է, որ նախ՝

- **դատարանը քննության առարկա պետք է դարձնեն վիճարկվող գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող այնպիսի հանգամանքները, որոնք, ըստ էության, վիճարկվում էին այլ դատարանում,**

- խնդրո առարկա իրավիճակը, ըստ էության, հանգեցնելու էր նաև տվյալ դատական գործի վարույթի կասեցման՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումն առ այն, որ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև (...) քաղաքացիական, (...) դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը.

կամ

- **ընդհուպ մինչև՝ ակնհայտ անհիմն հայց ներկայացնելուց բխող օրենքով նախատեսված բացասական հետևանքների, լրացուցիչ դատական ծախսերի ռիսկի՝** հաշվի առնելով այն, որ տվյալ քաղաքացիական գործի շրջանակներում քննության առարկա է դառնալու մեկ այլ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափության հարցը, որը դուրս է դատարանի քննության տիրույթից:

Վերոգրյալը վկայում է նաև տվյալ ընթացակարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման **անարդյունավետության** մասին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական ինստիտուտների համապատասխան նորմերին մեկնաբանություն հաղորդելիս դատարանները պետք է որպես ուղենիշ որդեգրեն այն մոտեցումները, որոնք առավելագույնս ապահովում են Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության բարձր մակարդակը՝ այս համատեքստում հաշվի առնելով, ի թիվ այլնի, նաև դատարանի մատչելիության աստիճանը, դատավարության խնայողականությունն ու արագությունը, անձին ձևական պահանջներով չծանրաբեռնելու անհրաժեշտությունը, իսկ վերջնարդյունքում՝ մատուցվող արդարադատության պատշաճ որակը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 3(111)2023

Սահմանադրական դատարանն իր վերոնշյալ ՍԴՈ-1611 որոշմամբ արձանագրել է, որ «(...) հայցային վաղեմության ինստիտուտը ևս նպատակ ունի ապահովել հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման անհրաժեշտ երաշխիքներ, և պետք է հանգեցնի ոչ թե նշված իրավունքների էության ձևախեղմանը, այլ վերջիններիս արդյունավետ իրացմանն ու պաշտպանությանը»:

Վերահաստատելով և զարգացնելով իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձի սեփականության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների երաշխավորման համապետքստում իրավակիրառ պրակտիկայում հայցային վաղեմության ինստիտուտին տրված ցանկացած մեկնաբանության շրջանակներում պետք է հավասարապես պաշտպանվեն ինչպես պատասխանողի և երրորդ անձանց շահերը՝ նրանց դեմ անհիմն հայց ներկայացնելու տեսանկյունից, այնպես էլ հայցվորի՝ սեփականության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները:

Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում տրվել է սույն որոշման մեջ տրված մեկնաբանությունից փարբերվող մեկնաբանություն. դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մտպեցմամբ, որ այն բոլոր դեպքերում, երբ գործարքի վավերության վիճարկման հիմքը դատական ակտով թույլ տրված իրավունքի խախտումն է, հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբ պետք է համարել այդ իրավունքի խախտումը ճանաչելու մասին համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանը՝ այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքում, երբ գործարքի վավերության վիճարկման հիմքը դատական ակտով թույլ տրված իրավունքի խախտումն է, ապա հայցային վաղեմության ժամկետի հաշ-

վարկի սկիզբ է համարվում այդ իրավունքի խախտումը ճանաչելու մասին համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը Դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

4 հուլիսի 2023 թվականի
ՍԴԴ-1693



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ՝ «ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԺԻ
ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հուլիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արդարադատության նախարարի տեղակալ Կ. Կարապետյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և

3(111)2023
ՏԵՂԵԿՎՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
289

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի մայիսի 4-ի N 657-Ա որոշմամբ հավանություն է տվել 2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային (ստորև՝ նաև Կոնվենցիա) կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունը (ստորև՝ նաև Արձանագրություն) ստորագրվել է 2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում՝ Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար՝ Կոնվենցիայով երաշխավորված կյանքի իրավունքի պաշտպանության ամրապնդման և բոլոր դեպքերում մահապատիժը վերացնելու ուղղությամբ վերջնական քայլ ձեռնարկելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությամբ ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- 2.1. վերացնել մահապատիժը և երաշխավորել, որ ոչ ոք չդատապարտվի կամ չենթարկվի մահապատժի,
- 2.2. բացառել Արձանագրության դրույթների նկատմամբ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կիրառումը («Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում»),
- 2.3. Արձանագրության դրույթների վերաբերյալ չկատարել Կոնվենցիայի 57-րդ հոդվածով նախատեսված որևէ վերապահում,

2.4. Արձանագրության 1-4-րդ հոդվածների դրույթներն ընդունել որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ:

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանը կայացրել է 2007 թվականի ապրիլի 17-ի ՍԴՈ-694 որոշումը, որի եզրափակիչ մասի առաջին կետի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Արձանագրությունն Ազգային ժողովի կողմից չի վավերացվել:

4. Սահմանադրական դատարանը շեշտում է, սույն գործով Սահմանադրական դատարանի խնդիրն է որոշել Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը:

Սահմանադրաիրավական վերաբերելի փոփոխությունների համալիր վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա հարցում հայ ժողովրդի կամքն անսասան է: Այսպես՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 17-րդ հոդվածը հռչակում էր. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Մահապատիժը՝ մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար»:

Սահմանադրական դատարանն՝ իր 2003 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-437 որոշմամբ արձանագրել է. «(...) Հայաստանի Հանրապետությունը, իր անկախությունը հռչակելուց հետո, միանալով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ կարևորագույն համընդգրկուն և տարածաշրջանային միջազգային պայմանագրերին, ճանաչեց մարդուն, նրա կյանքն ու առողջությունը, պատիվը և արժանապատվությունը, անձեռնմխելիությունը և անվտանգությունը որպես բարձրագույն սոցիալական արժեք:

(...)

ՀՀ Սահմանադրությունը 17 հոդվածում սահմանելով, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, այդ իրավունքի պաշտպանության առնչությամբ պարունակում է միայն մեկ շեղում՝ կապված մահապատժի հետ: Դա

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրության նույն 17 հոդվածում ամրագրված այն դրույթն է, համաձայն որի «Մահապատիժը՝ մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար»:

(...) Ինչպես ՀՀ Սահմանադրության համակարգային վերլուծությունը, այնպես էլ ՀՀ միջազգային պայմանագրերի բովանդակության ուսումնասիրությունը վկայում են, որ հանրապետությունը, որպես կյանքի իրավունքի երաշխավորման գործոն, մերժում է մահապատիժը՝ որպես պատժատեսակ, և որպես նորմ-նպատակ ամրագրում է մահապատժի վերացումը:

Մահապատժի վերացումը պայմանավորելով հասարակական գիտակցության մեջ որոշակի արժեքների փոխակերպման անհրաժեշտությամբ, որի կարևոր տարրերից է նաև ժամանակի գործոնը, Սահմանադրության 17 հոդվածը մահապատիժը թույլատրում է որպես «ժամանակավոր» և «բացառիկ» պատժատեսակ, և որ այն կարող է նշանակվել միայն «ծանր հանցագործությունների համար»: Միաժամանակ, ըստ Սահմանադրության 17 հոդվածի՝ մահապատիժը, որպես բացառիկ պատժատեսակ, կարող է նշանակվել օրենքով:

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 15-րդ հոդվածը հոշակում էր. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»:

Սահմանադրաիրավական նույն արժեքանությունն է ընկած Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) «Կյանքի իրավունքը» վերտառությամբ 24-րդ հոդվածի հիմքում, որով սահմանված է.

- «1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:
- 2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:
- 3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 24-րդ հոդվածը լրացվել է «ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից» դրույթով, որն ընդգծում է սահմանադրի կամքը՝ վերադասել անձի կյանքի իրավունքը՝ բացառելով մահապատժի առկայությունը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 15-րդ հոդվածով ամրագրված կարգավորումներն իրենց արտացոլումն են գտել 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 24-րդ հոդվածում, ինչը բխում է **հայ ժողովրդի սահմանադրական ինքնությունից, որի հետ անհամատեղելի է մարդու արժանապատվությունը և կյանքի իրավունքը խախտող մահապատժի գոյությունը:**

Այսպիսով, որդեգրելով մարդու արժանապատվության ուժով անհատի հասարակական արժևորման գաղափարները՝ հայ ժողովուրդը 1995 թվականի Սահմանադրության ընդունմամբ, հետագայում նաև՝ 2005 և 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ, ինքնասահմանափակվելով ընտրել է մահապատժից հրաժարվելու անխախտ հունը:

Վերոնշյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ Սահմանադրությունը 2015 թվականին բովանդակային առումով չի ենթարկվել այնպիսի փոփոխության, որը կհանգեցներ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու/դրա արդյունքի առումով այլ/տարբերվող գնահատականի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

28 հուլիսի 2023 թվականի
ՍԴՈ-1694

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023
◆ ՏԵՂԵԿԻԿՎԻ Կ
◆ 293

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ՝ «ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1694 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈ-1694 որոշմամբ որոշել է, որ 2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունում (այսուհետ՝ Արձանագրություն) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈ-1694 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդուն-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

մանր: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Սույն հատուկ կարծիքի շրջանակում նախևառաջ քննարկման առարկա կդարձնեմ քննարկվող միջազգային պայմանագրի սահմանադրականության հարցը՝ բովանդակային տեսանկյունից, այնուհետև նաև՝ սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումը պատշաճ ներկայացված չլինելու հարցի տեսանկյունից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

ԲԱԺԻՆ I

1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունը (այսուհետ նաև՝ Արձանագրություն) ստորագրվել է 2002 թվականի մայիսի 3-ին Վինյուսում՝ Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար՝ Կոնվենցիայով երաշխավորված կյանքի իրավունքի պաշտպանության ամրապնդման և բոլոր դեպքերում մահապատժի վերացնելու ուղղությամբ վերջնական քայլ ձեռնարկելու նպատակով:

Հանրապետության Նախագահը 2007 թվականի փետրվարի 15-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ Արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար: Նշված գործի կապակցությամբ Սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 17-ի ՍԴՈ-694 որոշմամբ եկել է այն եզրահանգման, որ ««Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»: Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է. «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վերացնել մահապատժի և երաշխավորել, որպեսզի ոչ ոք չդատապարտվի կամ ենթարկվի նման պատժի,
- բացառել Արձանագրության դրույթների նկատմամբ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կիրառումը («Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում»),
- Արձանագրության դրույթների վերաբերյալ չհանել Կոնվենցիայի 57-րդ հոդվածով նախատեսված որևէ վերապահում,
- Արձանագրության 1-4-րդ հոդվածների դրույթներն ընդունել որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ:

Սույն Արձանագրությունը հանդիսանում է փոխլրացնող գործոն՝ ՀՀ Սահմանադրության 15 հոդվածի ամբողջական իրացման համար»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2023 թվականի մայիսի 4-ի N 657-Ա որոշմամբ հավանություն է տվել 2002 թվականի

ՍԱԳՄԱՆԱՐԴՐՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(111)2023

մայիսի 3-ին Վիլնյուսում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան, իսկ Սահմանադրական դատարանի 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈ-1694 որոշմամբ այն ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող:

Քննարկվող դեպքում Սահմանադրական դատարանի՝ սույն գործով կայացրած ՍԴՈ-1694 որոշման պատճառաբանությունները՝ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ պայմանավորվել է հիմնականում այն հանգամանքով, որ «Սահմանադրությունը 2015 թվականին բովանդակային առումով չի ենթարկվել այնպիսի փոփոխության, որը կհանգեցնեի Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու/դրա արդյունքի առումով այլ/տարբերվող գնահատականի»:

Իմ գնահատմամբ՝ Սահմանադրական դատարանի կողմից Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ գործող Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար նախևառաջ պետք է հաղթահարվեր նշված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից 2007 թվականի ապրիլի 17-ին կայացված ՍԴՈ-694 որոշման առկայության հարցը: Տվյալ դեպքում Սահմանադրական դատարանի կողմից 2007 թվականի ապրիլի 17-ին կայացված ՍԴՈ-694 որոշմամբ կաշկանդված լինելու հարցը պարզելու համար նախևառաջ անհրաժեշտ է բովանդակային առումով վերլուծել և գնահատել ինչպես նախկինում գործող Սահմանադրության այն դրույթները, որոնց հիմքով Սահմանադրական դատարանը Արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել էր Սահմանադրությանը համապատասխանող, այնպես էլ ներկայումս գործող Սահմանադրության համապատասխան դրույթները:

Այսպես, 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

Փաստորեն, սահմանադիրը կյանքի իրավունքն ամրագրել է որպես բացարձակ իրավունք՝ չնախատեսելով որևէ վերապահում: Կյանքի իրավունքի վերաբերյալ համապատասխան իրավակարգավորում ամրագրված է եղել նաև 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 17-րդ հոդվածով, սակայն ի տարբերություն 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 15-րդ հոդվածի՝ նշված դրույթով ամրագրված է եղել մահապատժի կիրառման որոշակի բացառություն, այն է՝ «Մահապատիժը՝ մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար»:

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 15-րդ հոդվածով նախատեսված դրույթները նույն բովանդակությամբ զետեղվել են 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 24-րդ հոդվածում:

Մասնավորապես՝ գործող Սահմանադրության 24-րդ հոդվածով սահմանվել է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Վերոնշյալ դրույթների բովանդակությունից հետևում է, որ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 15-րդ հոդվածով նախատեսված կարգավորումն ամբողջությամբ իր ամրագրումն է ստացել 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ: Փաստորեն, 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության և գործող Սահմանադրության վերոնշյալ դրույթների բովանդակությունը հանգում է նրան, որ սահմանադիրը 2005 թվականից ի վեր արտահայտել է նույն դիրքորոշումն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է յուրաքանչյուրի կյանքի իրավունքի պաշտպանությունը և բացառվում մարդուն կյանքից զրկելը, այդ թվում նաև՝ մահապատժի դատապարտման և ենթարկման տեսքով: Նշվածից հետևում է, որ 2005 թվականի փոփոխություններով գործող Սահմանադրության 17-րդ հոդվածը բովանդակային առումով փոփոխության չի ենթարկվել, ինչից էլ բխում է, որ սահմանադիրը 2005 թվականից առ այսօր այս հարցի առնչությամբ ձևավորել է իր կայուն և անփոփոխ դիրքորոշումը: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 24-րդ հոդվածը պարունակում է լոկ լրացում, այն է՝ «Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից», մինչդեռ նշված լրացումը չի կարող դիտարկվել որպես 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ կյանքի իրավունքին վերաբերող դրույթների՝ նոր ընկալում առաջացնող բովանդակային փոփոխություն:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՄԱՆ 3(111)2023

Հաշվի առնելով վերոնշյալ սահմանադրական դրույթների սահմանադրաիրավական բովանդակության առ այսօր անփոփոխելի մնալու հանգամանքը, ինչպես նաև սահմանադրական դրույթների անփոփոխելի մնալու պայմաններում Սահմանադրական դատարանի կողմից Արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու վերաբերյալ 2007 թվականի ապրիլի 17-ին կայացված ՍԴՈ-694 որոշման առկայությունը, ինչպես նաև այն, որ առկա չէ թե՛ դիմողի կողմից ներկայացված, և թե՛ Սահմանադրական դատարանի կողմից նշված որևէ փաստարկ նախկինում՝ Սահմանադրական դատարանի կողմից 2007 թվականի ապրիլի 17-ին կայացված ՍԴՈ-694 որոշմամբ արտահայտված դիրքորոշումից շեղվելու համար՝ գտնում եմ, որ Արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցի վերաբերյալ 2007 թվականի ապրիլի 17-ին կայացված ՍԴՈ-694 որոշման առկայության պայմաններում Սահմանադրական դատարանի կողմից կրկին նույն հարցին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում էր:

Բացի այդ, առանձնակի կարևորում եմ նաև հետևյալ հանգամանքը. սահմանադրական արդարադատության իր գործառույթն իրականացնելիս Սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ընդ որում, նշված որոշումները չեն դիտարկվում միայն որպես քննության առարկա հանդիսացող հարցի վերաբերյալ սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունը հավաստող իրավական փաստաթղթեր, այլ նշված որոշումները պարունակում են իրավական դիրքորոշումներ, ըստ էության հանդիսանալով Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ, որոնք պետք է պարտադիր և կաշկանդող լինեն ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այլ նաև հենց Սահմանադրական դատարանի համար:

Նշվածից որպես բացառություն կարող են համարվել այն դեպքերը, երբ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենքով սահմանված դեպքերում ենթակա են վերանայման, ինչը փաստում է այն իրողությունը, որ Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԿՏԱՐԱՆ ◆ ՏԵՆԵԿԱԿԻ 3(111)2023

որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները որոշակի օբյեկտիվ հիմքերի և հիմնավոր փաստարկների առկայության դեպքում կարող են փոփոխվել:

Մասնավորապես, օրենսդիրը սահմանել է Սահմանադրական դատարանի կողմից իր իսկ որոշումների վերանայման որոշակի կարգ: Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասը նախատեսում է Սահմանադրական դատարանի կողմից նույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա վերանայելու հնարավորություն, եթե փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը և եթե ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Փաստորեն, Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների վերանայման հնարավորության վերաբերյալ սահմանված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի քննարկվող կարգավորումը կիրառելի է բացառապես երկու դեպքերում, այն է՝

- առկա է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթի փոփոխություն,
- առկա է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Սահմանադրի և օրենսդրի վերոնշյալ մոտեցման համատեքստում քննարկման առարկա դարձնելով սույն գործով առաջացած իրավիճակը՝ արդյունքում արձանագրում եմ, որ՝

- 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության դրույթները՝ կյանքի իրավունքի վերաբերյալ, և 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության դրույթները՝ նույն հարցի սահմանման առումով ունեն բովանդակային միևնույն հենքը, և սահմանադրի կողմից որևէ բովանդակային փոփոխության չեն ենթարկվել,
- ի հայտ չի եկել կյանքի իրավունքի վերաբերյալ սահմանադրական դրույթի այնպիսի նոր ընկալում, որ Սահմանադրական դատարանի կող-

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

մից 2007 թվականի ապրիլի 17-ին կայացված ՍԴՈ-694 որոշման առկայության պայմաններում անհրաժեշտ էր նույն հարցի վերաբերյալ կրկին որոշում կայացնել,

Փաստորեն, Սահմանադրական դատարանի կողմից 2007 թվականի ապրիլի 17-ին կայացված ՍԴՈ-694 որոշման գոյության պարագայում, այն պայմաններում, երբ դրանով արձանագրվել է Արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը, և երբ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ կյանքի իրավունքի մասին սահմանադրական դրույթն ունի միևնույն բովանդակային հենքը՝ չենթարկվելով սահմանադրի կողմից որևէ բովանդակային փոփոխության, սույն գործով կայացված վերջնական ակտով Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչվել մի միջազգային պայմանագիր, որի վերաբերյալ արդեն իսկ առկա է դրա՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ վերջնական դատական ակտ՝ Սահմանադրական դատարանի որոշման տեսքով:

Վերոգրյալից ելնելով՝ կարծում եմ, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունը չի ենթարկվել այնպիսի բովանդակային փոփոխության, որպիսի պարագայում անհրաժեշտ կլիներ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը դիտարկել դրա լույսի ներքո: Ավելին՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ նաև Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որով պայմանավորված նույն հարցի վերաբերյալ կարող էր ընդունվել Սահմանադրական դատարանի նոր որոշում:

ԲԱԺԻՆ II

1. Միաժամանակ հարկ եմ համարում անդրադառնալ սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումի պատշաճ ներկայացված չլինելու հանգամանքին:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

ՍԱՀՄԱՆԱՐՈՎՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմա-

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

նադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներ-

ՍԱԿՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

կայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա

առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ

համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն,


այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Սույն հատուկ կարծիքի 2-րդ բաժնի՝ վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«01» օգոստոսի 2023թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հուլիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Փոստային վճարումների ծառայությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

3(111)2023
◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
309

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(11)2023

Կառավարությունն իր՝ 2023 թվականի մայիսի 18-ի N 746 - Ա որոշմամբ հավանություն է տվել «Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաշխարհային փոստային միության (այսուհետ՝ Միություն) «Փոստային վճարումների ծառայությունների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կարգավորում է փոստային դրամական միջոցների փոխադրության, այդ թվում՝ թղթային փոխադրումների և էլեկտրոնային փոխանցումների հետ կապված իրավահարաբերությունները:

2. Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության նշանակած օպերատորին ներգրավել ֆինանսական վճարումների ծառայությունների բոլոր տեսակի ցանցերում, որը հնարավորություն կընձեռի Միության ցանկացած անդամ պետության հետ հնարավորինս սեղմ ժամկետներում փոստային դրամական փոխադրությունների փոխանակում իրականացնել և՛ թղթային, և՛ էլեկտրոնային եղանակով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. հայտնել Միության գործադիր մարմնին՝ Միջազգային բյուրոյին (այսուհետ՝ Միջազգային բյուրո), այն պետական մարմնի անունը և հասցեն, որը պատասխանատու է փոստային վճարման ծառայությունների մատուցման հետ կապված պետական կարգավորում և վերահսկողություն իրականացնելու համար (հոդված 3, մաս 1),

3.2. հայտնել Միության Միջազգային բյուրոյին այն օպերատորի անունը և հասցեն, որը պաշտոնապես նշանակվել է իր ցանցի միջոցով

առնվազն մեկ փոստային վճարումների ծառայություն առաջարկելու կամ ընդունելու եղանակով փոստային վճարման ծառայությունը գործարկելու և իր երկրի տարածքում Միության ակտերից բխող պարտավորությունները կատարելու նպատակով (հոդված 3, մաս 2),

3.3. ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու փոստային վճարումների ծառայությունների անխափան մատուցումն իր նշանակած օպերատորի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում՝ պահպանելով այդ օպերատորի՝ այլ նշանակված օպերատորների նկատմամբ Միության ակտերով ստանձնած պատասխանատվությունը (հոդված 4, մաս 1),

3.4. տեղեկացնել Համաձայնագրի կողմ հանդիսացող մյուս անդամ երկրներին իր նշանակած օպերատորի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում՝

1) իր կողմից մատուցվող փոստային վճարման ծառայությունների կասեցման մասին,

2) այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են նոր նշանակված օպերատորի պատասխանատվության ներքո ծառայությունները վերականգնելու ուղղությամբ (հոդված 4, մաս 2),

3.5. ապահովել նշանակված օպերատորների և լիազորված ընդլայնված փոստային ոլորտի դերակատարների (այսուհետ՝ ԸՓՈԴ) պատասխանատվության կրումը այլ օպերատորների և օգտվողների առջև՝ փոստային վճարման ծառայությունների իրականացման համար (հոդված 6, մաս 1),

3.6. ապահովել նշանակված օպերատորների և լիազորված ԸՓՈԴ-ների կողմից երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքումը իրենց կողմից ընտրված այլ նշանակված օպերատորների և լիազորված ԸՓՈԴ-ների հետ (հոդված 6, մաս 3),

3.7. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի մասով ազգային և միջազգային օրենսդրությունից բխող իրենց պարտավորությունները կատարելու համար (հոդված 8, մաս 1),

3.8. տեղեկացնել իրավասու մարմիններին կասկածելի գործարքների մասին (հոդված 8, մաս 2),

3.9. ապահովել անձնական տվյալների խորհրդապահությունը և անվտանգությունը (հոդված 9, մաս 1),

3.10. օգտագործել անձնական տվյալները միայն այն նպատակներով, որոնց համար դրանք հավաքվել են՝ գործող ներպետական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան (հոդված 9, մաս 2),

3.11. փոխանցել անձնական տվյալները միայն այն երրորդ կողմերին, որոնք գործող ներպետական օրենսդրությանը համապատասխան լիազորված են հասանելիություն ունենալ այդ տվյալներին (հոդված 9, մաս 3),

3.12. տեղեկացնել իրենց հաճախորդներին անձնական տվյալների օգտագործման և այդ տվյալների հավաքման նպատակի մասին (հոդված 9, մաս 4),

3.13. տրամադրել փոստային տվյալներ Միջազգային բյուրոյին տարին առնվազն մեկ անգամ (հոդված 9, մաս 6),

3.14. կիրառել սպասարկման տարրերի և չափանիշների նվազագույն քանակ՝ էլեկտրոնային եղանակով փոխանցվող փոստային վճարման հանձնարարությունների համար (հոդված 12, մաս 3),

3.15. օգտագործել Միության էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգը կամ ցանկացած այլ համակարգ, որով ապահովվում է Համաձայնագրին համապատասխան փոստային վճարումների ծառայությունների փոխգործելիությունը՝ բոլոր նշանակված օպերատորների միջև փոստային վճարումների ծառայությունների կատարման համար անհրաժեշտ տվյալների փոխանակման և ծառայությունների որակի դիտանցման համար (հոդված 13, մաս 1),

3.16. ապահովել գործարքների անվտանգությունը (հոդված 14, մաս 2),

3.17. կատարել կանխիկ վճարումը՝ ստացողի ինքնությունը ներպետական օրենսդրությանը համապատասխան հաստատելուց և նրա կողմից տրամադրված տեղեկությունների ճշգրտությունը ստուգելուց հետո (հոդված 17, մաս 1),

3.18. հաղորդել Միջազգային բյուրոյին ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ ուղարկման կամ ստացման մասով առավելագույն գումարների չափը (հոդված 18),

3.19. օգտագործել օգտվողների դրամական միջոցները բացառապես ստացողներին վճարված փոստային վճարումները կարգավորելու կամ չկատարված փոստային վճարման հանձնարարությունների դիմաց ուղարկողներին փոխհատուցելու համար (հոդված 25, մաս 4):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ

բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Փոստային վճարումների ծառայությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

28 հուլիսի 2023 թվականի
ՍԴՈ-1695

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՓՈՍՏԱՅԻՆ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1695 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Փոստային վճարումների ծառայությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈՒ-1695 որոշմամբ որոշել է, որ «Փոստային վճարումների ծառայությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈՒ-1695 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայք-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(11)2023

էջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1695 որոշմամբ «Փոստային վճարումների ծառայությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱԴՄԱՆԱՐՈՎՎԱՆ ՂԱՏՎՈՐ 3(111)2023

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանն ղիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանն ղիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանն ղիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԿՏՐՈՐ ԿԵՆՏՐՈՆ 3(111)2023

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԵՂԵԿՎՈՐ

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդա-

կանություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմա-

ՍԱԳՄԱՆԱԿՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

նադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«28» հուլիսի 2023թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հուլիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Համաշխարհային փոստային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի մայիսի 18-ի N 738-Ա որոշմամբ հավանություն է տվել «Համաշխարհային փոստային կոնվենցիան վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ՍԵՂԵՎԱԳԻՐ 3(111)2023

վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաշխարհային փոստային կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) կարգավորում է Հայաստանի Հանրապետության կողմից փոստային նշանակված օպերատորի փոխհարաբերություններն ու պարտավորությունները ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, փակ փոստային առաքումների, մաքսային հսկողության, վճարման դրույքաչափերի, փոստային վճարումից ազատելու, արգելված առաքանիների, տարանցիկ և վերջնական վճարների, Համաշխարհային փոստային միության (այսուհետ՝ Միություն) անդամ երկրների և նրանց կողմից նշանակված օպերատորների և ուղարկողի պատասխանատվության, արագընթաց և էլեկտրոնային փոստային ծառայության մատուցման հետ կապված և այլ իրավահարաբերություններ:

2. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ Միության անդամ երկրները ապահովում են՝

1) բոլոր օգտվողների/հաճախորդների համաշխարհային փոստային ծառայություններից օգտվելու իրավունքը, այդ թվում՝ որակյալ հիմնական փոստային ծառայությունների տրամադրումն իրենց տարածքի բոլոր կետերում՝ մատչելի գներով,

2) համաշխարհային փոստային ծառայություններ տրամադրելու համար պատասխանատու օպերատորների կողմից փոստային ծառայությունների առաջարկների և որակի չափանիշների պահպանումը,

3) համաշխարհային փոստային ծառայությունների տրամադրման համար հուսալի հիմք՝ երաշխավորելով դրա կայուն զարգացումը:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. ապահովել նշանակված օպերատորների մեկ այլ նշանակված օպերատորի կողմից իրեն փոխանցված փակ փոստային առաքումների ու բաց

3(111)2023
 ՍԵՆԵԿԿԵԿԻ
 ՍԵՆԵԿԿԵԿԻ
 ՍԵՆԵԿԿԵԿԻ
 ՍԵՆԵԿԿԵԿԻ

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(11)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

տարանցման միջոցով ուղարկվող գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների ուղարկման իրականացումը սեփական առաքանիներն ուղարկելու համար օգտագործվող ամենաարագ ճանապարհով և ամենահուսալի միջոցներով (հոդված 4, մաս 1),

3.2. ապահովել նշանակված օպերատորների կողմից առաքանիների վերահասցեավորումը, եթե հասցեատերը փոխել է իր հասցեն, ինչպես նաև առաքման ոչ ենթակա առաքանիների վերադարձը ուղարկողին (հոդված 5, մաս 3),

3.3. ընդունել և իրականացնել կայուն զարգացման արդյունավետ ռազմավարություն փոստային գործունեության բոլոր մակարդակներում՝ կենտրոնանալով բնապահպանական, սոցիալական և տնտեսական ոլորտների գործունեության վրա, ինչպես նաև նպաստել կայուն զարգացման հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը (հոդված 7),

3.4. ընդունել և փոստային գործունեության բոլոր մակարդակներում իրականացնել անվտանգության արդյունավետ ռազմավարություն՝ նշանակված օպերատորների կողմից տրամադրվող փոստային ծառայությունների նկատմամբ վստահությունը հասարակության լայն զանգվածների շրջանում պահպանելու և ամրապնդելու նպատակով՝ ելնելով բոլոր ներգրավված պաշտոնատար անձանց շահերից (հոդված 8, մաս 1),

3.5. ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կանխելու, քրեորեն հետապնդելու կամ պատժելու այն անձանց, որոնք մեղավոր են ճանաչվել Կոնվենցիայով նախատեսված գործողությունների կատարման համար (հոդված 9, մաս 1),

3.6. ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Կոնվենցիայում սահմանված փոստային կանխավճարի վճարամիջոցներին վերաբերող ցանկացած իրավախախտում կանխելու, քրեորեն հետապնդելու և պատժելու համար (հոդված 9, մաս 2),

3.7. օգտագործել փոստային ծառայություններից օգտվողների անձնական տվյալները միայն այն նպատակներով, որոնց համար դրանք ձեռք են բերվել՝ համաձայն գործող ներպետական օրենսդրության (հոդված 10, մաս 1),

3.8. բացահայտել օգտվողների անձնական տվյալները միայն այն երրորդ կողմերին, որոնց գործող ներպետական օրենսդրության համաձայն թույլատրվում է հասանելիություն ունենալ այդ տվյալներին (հոդված 10, մաս 2),

3.9. ապահովել օգտվողների անձնական տվյալների գաղտնիությունը և անվտանգությունը՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան (հոդված 10, մաս 3),

3.10. տեղեկացնել Միության գործադիր մարմնին՝ Միջազգային բյուրոյին (այսուհետ՝ Միջազգային բյուրո), փոխանակման արտատարածքային գրասենյակներից կամ միջազգային փոստի մշակման կենտրոններից փոխանցվող և (կամ) դրանցից ստացվող փոստային առաքանիների մասով իր ունեցած քաղաքականությունների վերաբերյալ՝ ապահովելով այդ տեղեկությունների հասանելիությունը Միության ինտերնետային կայքում (հոդված 13, մաս 5),

3.11. սահմանել Կոնվենցիայով սահմանված տարբեր փոստային ծառայությունների վճարները՝ համաձայն ներպետական օրենսդրության (հոդված 15, մաս 1),

3.12. սահմանել գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների և ծանրոց հանդիսացող փոստային առաքանիների փոխադրման փոստային վճարները՝ ներպետական օրենսդրության համաձայն (հոդված 15, մաս 2),

3.13. չգանձել հաճախորդներից ակտերով չնախատեսված փոստային վճարներ (հոդված 15, մաս 6),

3.14. մատուցել Կոնվենցիայով նախատեսված հիմնական և պարտադիր հավելյալ մի շարք ծառայություններ, այդ թվում՝

1) ապահովել նշանակված օպերատորների կողմից գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների ընդունումը, մշակումը, փոխադրումը և առաքումը (հոդված 17, մաս 1),

2) ապահովել նշանակված օպերատորների կողմից մինչև 20 կիլոգրամ քաշ ունեցող ծանրոց հանդիսացող փոստային առաքանիների ընդունումը, մշակումը, փոխադրումը և առաքումը (հոդված 17, մաս 7),

3) ապահովել ելքային պատվիրված առաջնահերթ և ավիափոստային գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների ծառայություն (հոդված 18, մաս 1),

4) ապահովել մուտքային պատվիրված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների ծառայություն (հոդված 18, մաս 1),

5) ընդունել մուտքային առաքման մասին ծանուցում (հոդված 18, մաս 3),

3.15. չընդունել Կոնվենցիայով սահմանված պայմաններին չհամապատասխանող առարկաներ, ինչպես նաև այն առաքանիները, որոնք ուղարկվել են խարդախության արդյունքում կամ համապատասխան վճարների լրիվ վճարումից խուսափելու նպատակով (հոդված 19, մաս 1),

3.16. տեղեկացնել Միջազգային բյուրոյին այն մասին, որ ցանկանում է ընդլայնել կամ փոփոխել այն առարկաների ցանկը, որն արգելում կամ պայմանականորեն ընդունում է որպես ներմուծված (կամ տարանցված) ապրանք (հոդված 19, մաս 1):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Համաշխարհային փոստային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:
2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

28 հուլիսի 2023 թվականի
ՍԴՈ-1696

3(111)2023



Տեղեկագիր



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1696
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Համաշխարհային փոստային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈՒ-1696 որոշմամբ որոշել է, որ Համաշխարհային փոստային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈՒ-1696 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԵԾ ♦ 3(111)2023

ՍԱԿՄԱՆԱԿՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(11)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱԿՄԱՆԱԿՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1696 որոշմամբ Համաշխարհային փոստային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն

անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱԿՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(11)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԵՂԵԿՎՈՐ

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք

կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու

ՍԱՀՄԱՆԱՊՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական

դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

◆ 3(111)2023

◆ ՍԵՆՏԵՆՏԻՎԻ

◆ ՌԵՍՍՍԿՐԵՍԻՎՆԻ ՎԵՐԱԿՐԵՄ

ՍԱԿՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ

համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(111)2023

այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

3(111)2023

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

◆

«28» հուլիսի 2023թ.

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հուլիսի 2023թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորություն-

3(111)2023
ՏԵՂԵԿՎԵՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱԿՎԱԾ ԴԱՏԱՐԱՆ

ների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի հունիսի 16-ի N 966-Ա որոշմամբ հավանություն է տվել 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հունիսի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի հոկտեմբերի 14-ին՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Մեծ քսանյակի (G20) պետությունների կողմից համատեղ մշակված Հարկային հարցերում ֆինանսական տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտին (Standard for Automatic Exchange of Financial Information in Tax Matters) համապատասխան՝ տեղեկությունների ավտոմատ փոխանակման գործընթացի դյուրացմանն ուղղված՝ ստանդարտացված և արդյունավետ մեխանիզմի ապահովման նպատակով:

Համաձայնագիրը հաջորդում է Եվրոպայի խորհրդի «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիային ու այն փոփոխող արձանագրությանը, որոնք, ըստ էության, քննարկվող համաձայնագրի իրավական հիմքերից են, և որոնք Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել են 2019 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՕ-275-Ն օրենքով (ՍԴՈ-1490):

2. Համաձայնագիրն ունի հետևյալ վեց հավելվածները.

Հավելված Ա՝ «Ոչ փոխադարձության սկզբունքով գործող պետությունների ցանկը» (ենթակա է լրացման), Հավելված Բ՝ «Փոխանցման

մեթոդները» (ենթակա է լրացման), Հավելված Գ՝ «Տվյալների պաշտպանության նշված երաշխիքները» (ենթակա է լրացման), Հավելված Դ՝ «Գաղտնիության պահպանման վերաբերյալ հարցաշար» (ենթակա է լրացման), Հավելված Ե՝ «Իրավասու մարմինները, որոնց համար սույն Համաձայնագիրը գործողության մեջ է դրվել» (ենթակա է լրացման), Հավելված Զ՝ «Փոխանակման նախատեսված ամսաթվերը»:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. ապահովել, որ Կոնվենցիայի 6-րդ և 22-րդ հոդվածների դրույթների և Միասնական հաշվետվողական ստանդարտով (հարկային հարցերով ՏՀԶԿ-ի կողմից Մեծ քսանյակի երկրների հետ համատեղ մշակված՝ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտ (որը ներառում է Մեկնաբանությունները)) նախատեսված հաշվետվության տրամադրման և պատշաճ ստուգումների կիրառվող կանոններին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինն («Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի Հավելված Բ-ում նշված անձինք և մարմինները) այլ Իրավասու մարմնի հետ, որի համար Համաձայնագիրը համարվում է գործողության մեջ մտած, յուրաքանչյուր տարի ավտոմատացված ձևով փոխանակի այդ կանոնների համաձայն և Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված կարգով ձեռք բերված տեղեկությունները (հոդված 2, ենթապարբերություն 1.1),

3.2. ապահովել, որ Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված տեղեկությունների փոխանակման նպատակով՝ փոխանակված տեղեկություններում նշվի արժույթը, որով յուրաքանչյուր համապատասխան գումար արտահայտված է (հոդված 3, պարբերություն 2),

3.3. հաշվի առնելով Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը և համաձայն 7-րդ հոդվածով սահմանված ծանուցման ընթացակարգերի, ներառյալ՝ դրանում նշված ամսաթվերը՝ ապահովել, որ տեղեկությունները փոխանակվեն Հավելված Զ-ում նշված տարվանից սկսած այն օրացույցային տարվա ավարտից հետո ինն ամսվա ընթացքում, որին վերաբերում են տեղեկությունները (հոդված 3, պարբերություն 3),

3.4. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինն այլ Իրավասու մարմնի հետ ավտոմատ կերպով փոխանակի Համաձայնագրի 2-րդ հոդվածում ներկայացված տեղեկությունները միասնական հաշվետվողական ստանդարտի սխեմայով՝ Նշագրման ընդլայնվող լեզվով (XML) (հոդված 3, պարբերություն 5),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 3(111)2023

3.5. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինն այլ Իրավասու մարմնի հետ մշակի և համաձայնեցնի տվյալների փոխանցման մեկ կամ մի քանի մեթոդներ, այդ թվում՝ գաղտնագրման չափանիշները՝ ստանդարտացումն առավելագույնի հասցնելու և բարդությունները և ծախսերը նվազագույնի հասցնելու համար՝ նշելով դրանք Հավելված Բ-ում (հոդված 3, պարբերություն 6),

3.6. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը մյուս Իրավասու մարմնին ծանուցի, երբ հիմքեր ունի կարծելու, որ սխալը կարող է դարձած լինել տեղեկությունների ոչ ճիշտ կամ թերի տրամադրման պատճառ, կամ Հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատության (Պետության ցանկացած ֆինանսական հաստատություն, որը չի համարվում Հաշվետվություն չտրամադրող ֆինանսական հաստատություն) կողմից չի ապահովվել Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված՝ հաշվետվության տրամադրման գործող պահանջներին և համալիր ստուգման ընթացակարգերին համապատասխանությունը, իսկ այդպիսի ծանուցում ստացած Իրավասու մարմին հանդես գալու դեպքում՝ ձեռնարկի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ծանուցման մեջ մատնանշված սխալները և անհամապատասխանությունները վերացնելու համար (հոդված 4),

3.7. փոխանակվող բոլոր տեղեկությունների նկատմամբ կիրառել Կոնվենցիայով նախատեսված գաղտնիության պահպանման կանոնները և այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակվող տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթներն այն չափով, որը պահանջվում է անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար՝ այն երաշխիքների համաձայն, որոնք կարող են տեղեկություններ տրամադրող Իրավասու մարմնի կողմից նշվել որպես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող, և որոնք թվարկված են Հավելված Գ-ում (հոդված 5, պարբերություն 1),

3.8. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը Համակարգող մարմնի քարտուղարությանն (ՏՀԶԿ-ի քարտուղարություն, որը, համաձայն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 3-րդ կետի, աջակցություն է տրամադրում Կոնվենցիայի կողմ հանդիսացող իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված համակարգող մարմնին) անհապաղ տեղեկացնի գաղտնիության պարտավորության ցանկացած խախտման կամ երաշխիքների չկատարման և արդյունքում կիրառված ցանկացած պատժամիջոցի և հետևանքների վերացման նպատակով ձեռնարկված գործողությունների վերաբերյալ (հոդված 5, պարբերություն 2),

3.9. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը Համաձայնագրի ստորագրման պահին կամ Հայաստանի Հանրապետության կողմից Միասնական հաշվետվողական ստանդարտի կիրարկման համար անհրաժեշտ օրենսդրական մեխանիզմների ներդրումից հետո հնարավորինս շուտ Համակարգող մարմնի քարտուղարությանն ուղարկի Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պահանջներին համապատասխան ծանուցում (հոդված 7, պարբերություն 1),

3.10. Համաձայնագիրը ստորագրող մյուս բոլոր կողմերի հետ՝ տարեկան կտրվածքով հավասարապես կրել Համակարգող մարմնի քարտուղարության կողմից Համաձայնագրի կիրարկումը վարելու հետ կապված ծախսերը (հոդված 8, պարբերություն 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

28 հուլիսի 2023 թվականի
ՍԴՈ-1697

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1697 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈՒ-1697 որոշմամբ որոշել է, որ «2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈՒ-1697 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԳՆԱԿՈՒՄ 3(111)2023

Եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ

այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1697 որոշմամբ 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի

3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 3(111)2023

նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԱՏԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ 3(111)2023

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկա-

յացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու

համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«28» հուլիսի 2023թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

3(111)2023

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

26 սեպտեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի հունիսի 23-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև՝ մաքսային հարցերով համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1415-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի հունիսի 23-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև՝ մաքսային հարցերով համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023 թվականի օգոստոսի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև՝ մաքսային հարցերով համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի հունիսի 23-ին Բրյուսելում՝ ծախսերի նվազեցման և երկու երկրների միջև օրինական առևտրի դյուրացմանն ուղղված՝ ժամանակակից, արդյունավետ և թափանցիկ ընթացակարգերի խթանման նպատակով:

3(111)2023
 ◆ ՏԵՐԿԻՎԻԿԻ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ազգային իրավական ընթացակարգերը կատարելու մասին Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր) դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր ծանուցելուց հետո՝ երկրորդ ամսվա առաջին օրը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

2.1. ՀՀ մաքսային ծառայությունների միջոցով և Համաձայնագրի դրույթներին համապատասխան, հնդկական կողմին տրամադրել օգնություն մաքսային օրենսդրության պատշաճ կիրառման նպատակով մաքսային իրավախախտումները կանխելու, քննելու և դրանց դեմ պայքարելու և օրինական առևտուրը դյուրացնելու նպատակով (հոդված 2, կետ 2),

2.2. ապահովել, որ ՀՀ մաքսային ծառայությունը հարցման հիման վրա կամ իր նախաձեռնությամբ հնդկական կողմին տրամադրի տեղեկություններ և օպերատիվ տվյալներ, որոնք կօգնեն ապահովել մաքսային օրենսդրության պատշաճ կիրառումը, ինչպես նաև Պայմանավորվող կողմերի միջև ապրանքների և ուղևորների տեղաշարժի հետ կապված մաքսային իրավախախտումների կանխումը, քննությունը, դրանց առնչությամբ իրականացվող քրեական հետապնդումը և դրանց դեմ պայքարը (հոդված 3, կետ 1),

2.3. ապահովել, որ հնդկական կողմի մաքսային ծառայության հարցման հիման վրա ՀՀ մաքսային ծառայությունը տրամադրի ՀՀ տարածքում կիրառելի մաքսային օրենսդրության և ընթացակարգերի վերաբերյալ բոլոր այն տեղեկությունները, որոնք առնչվում են մաքսային իրավախախտման հետ կապված հարցումներին (հոդված 3, կետ 2),

2.4. ապահովել, որ ՀՀ մաքսային ծառայությունները հարցման հիման վրա կամ իրենց նախաձեռնությամբ հնդկական կողմի մաքսային ծառայությանը փոխանցեն ցանկացած հասանելի տեղեկություն, որը վերաբերում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետում շարադրված դեպքերին (հոդված 3, կետ 3),

2.5. ապահովել, որ ՀՀ մաքսային ծառայությունը հարցման հիման վրա հնդկական կողմի մաքսային ծառայությանը տրամադրի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ կետում շարադրված ցանկացած հասանելի տեղեկություն (հոդված 3, կետ 4),

2.6. ապահովել, որ ՀՀ մաքսային ծառայությունը հնդկական կողմի մաքսային ծառայության հետ համագործակցի հետևյալի շուրջ. հաղորդակցման ուղիների ստեղծում և պահպանում՝ խթանելու համար տեղեկությունների անվտանգ և արագ փոխանակումը, արդյունավետ համակարգման խթանում, նոր մաքսային ընթացակարգերի ուսումնասիրություն, մշակում և կիրառում, փոխադարձ հետաքրքրությունը խթանելու նպատակով անձնակազմերի վերապատրաստում և փոխանակում, նոր սարքավորումների կամ ընթացակարգերի դիտարկում ու փորձարկում և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ հարցի, որի առնչությամբ ժամանակ առ ժամանակ կարող է պահանջվել նրանց կողմից համատեղ գործողության իրականացում (հոդված 3, կետ 5),

2.7. ապահովել, որ ՀՀ մաքսային ծառայությունը հնարավորության սահմաններում հնդկական կողմի մաքսային ծառայության հետ համագործակցի և տեղեկություններ փոխանակի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, քիմիական պրեկուրսորների և այլ արգելված ապրանքների ապօրինի շրջանառության առնչությամբ իր կողմից կատարվող հարկադիր գործողությունների վերաբերյալ (հոդված 3, կետ 6),

2.8. ապահովել, որ Հայցվող ՀՀ մաքսային ծառայությունը հնդկական կողմի մաքսային ծառայության արած հատուկ հարցման առկայության դեպքում տրամադրի տեղեկություններ թե արդյո՞ք Հայցող հնդկական մաքսային ծառայության տարածք ներմուծված ապրանքներն օրինական կարգով են արտահանվել Հայցվող ՀՀ մաքսային ծառայության տարածքից, և արդյո՞ք Հայցող հնդկական մաքսային ծառայության տարածքից արտահանված ապրանքներն օրինական կարգով են ներմուծվել Հայցվող ՀՀ մաքսային ծառայության տարածք, ինչպես նաև ներկայացնի ապրանքների մաքսագերծման ընթացքում կիրառվող մաքսային ընթացակարգերի վերաբերյալ մանրամասները (հոդված 4, կետեր 1 և 2),

2.9. ապահովել, որ Հայցվող ՀՀ մաքսային ծառայությունը՝ հարցման հիման վրա, ՀՀ տարածքի սահմաններում հնարավորինս վերահսկողություն իրականացնի, ինչպես նաև տեղեկություններ

տրամադրի փոխադրվող կամ պահեստավորված այն ապրանքների վերաբերյալ, որոնք հայտնի է, որ օգտագործվել են Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ կատարելու համար կամ կասկածվում են այդ նպատակով օգտագործված լինելու մեջ, այն տրանսպորտային միջոցների վերաբերյալ, որոնք հայտնի է, որ օգտագործվել են Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ կատարելու համար կամ կասկածվում են այդ նպատակով օգտագործված լինելու մեջ, Հայցվող ՀՀ մաքսային ծառայության պետության տարածքում գտնվող այն շինությունների վերաբերյալ, որոնք հայտնի է, որ օգտագործվել են Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ կատարելու համար կամ կասկածվում են այդ նպատակով օգտագործված լինելու մեջ և այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ, որը հայտնի է, որ Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ է կատարել կամ կասկածվում է դրանց կատարման մեջ, ինչպես նաև այդ վերահսկողության արդյունքները հնարավորինս ողջամիտ սեղմ ժամկետում փոխանցի հնդկական կողմի մաքսային ծառայությանը (հոդված 5),

2.10. ապահովել, որ ՀՀ մաքսային ծառայությունը հնդկական կողմի մաքսային ծառայության հարցման հիման վրա կամ իր նախաձեռնությամբ հնդկական կողմի մաքսային ծառայությանը տրամադրի տեղեկություններ և օպերատիվ տվյալներ այնպիսի գործարքների կամ ավարտված կամ պլանավորված գործողությունների վերաբերյալ, որոնք հանդիսանում են կամ կարող են համարվել մաքսային իրավախախտում (հոդված 6, կետ 1),

2.11. երաշխավորել, որ ՀՀ մաքսային ծառայությունը կձգտի դյուրացնել առևտուրը և կհամաձայնի, որ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետում նշված սկզբունքները, մասնավորապես, հիմք են առևտրի դյուրացմանն ուղղված միջոցների մշակման և կառավարման համար (հոդված 8, կետ 1),

2.12. ընդունել կամ վարել պարզեցված մաքսային ընթացակարգեր իրենց հուսալիությունն ապացուցած ներմուծողների կամ նրանց լիազորված գործակալների հայտարարագրած ապրանքների արդյունավետ մաքսազերծման համար (հոդված 8, կետ 2),

2.13. ապահովել, որ ՀՀ մաքսային ծառայությունը հնդկական կողմի մաքսային ծառայության ներկայացրած հատուկ հարցման հիման վրա տրամադրի մաքսային փաստաթղթեր, փոխադրման վերաբերյալ փաստաթղթեր, ապացույցների մասին արձանագրություններ կամ դրանց վավերացված պատճենները, որոնք տեղեկություններ են պարունակում իրականացված կամ նախատեսված այնպիսի գործողությունների մասին, որոնք համարվում են կամ կարող են համարվել հնդկական կողմի մաքսային ծառայության տարածքում գործող մաքսային օրենսդրության խախտում (հոդված 12, կետ 1),

2.14. ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում փոխանակման ենթակա բոլոր տեղեկությունները և օպերատիվ տվյալները ուղեկցվեն դրանք մեկնաբանելու կամ օգտագործելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկություններով (հոդված 12, կետ 4),

2.15. հարցումների փոխանցումն իրականացնել Համաձայնագրի 13-րդ հոդվածով սահմանված կարգով (հոդված 13),

2.16. չնայած այն հանգամանքին, որ թույլատրվում է Համաձայնագրի շրջանակներում ստացված ցանկացած տեղեկության կամ փաստաթղթի օգտագործումը մաքսային օրենսդրության համաձայն իրականացվող վարույթի կամ հարցումների ընթացքում, այնուամենայնիվ, այդ տեղեկությունները և փաստաթղթերը չօգտագործել այլ նպատակներով՝ Համաձայնագրում նշված նպատակներից բացի, բացառությամբ այն դեպքերի, եթե չի ստացվել հնդկական կողմի մաքսային ծառայության գրավոր համաձայնությունը (հոդված 15, կետ 1),

2.17. Համաձայնագրի շրջանակներում անձնական տվյալների փոխանակման դեպքում, երաշխավորել, որ ՀՀ մաքսային ծառայությունը կապահովի, որ դրանք օգտագործվեն միայն նշված նպատակներով, ինչպես նաև կապահովի տվյալների պաշտպանության չափանիշ՝ ՀՀ օրենսդրության համապատասխան (հոդված 15, կետ 3),

2.18. եթե հարցման կատարման համար պահանջվում են կամ պահանջվելու են էական կամ չափից մեծ ծախսեր, ապա ապահովել, որ ծառայությունները խորհրդակցեն հարցման պահանջների կատարման ժամկետների ու պայմանների շուրջ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես են կրելու ծախսերը (հոդված 18, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և

4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի հունիսի 23-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև՝ մաքսային հարցերով համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 սեպտեմբերի 2023 թվականի
ՍԴՈ-1698



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԴԵՍՊԱՆԸ
ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ**



2023 թվականի օգոստոսին Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելության ժամկետի ավարտի կապակցությամբ Հայաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Յակոբ Սխերմերսը հրաժեշտի հանդիպում է ունեցել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի հետ:

Հանդիպման ընթացքում Սահմանադրական դատարանի նախագահը բարձր է գնահատել Նիդերլանդների Թագավորության դեսպանատան հետ համագործակցությունը՝ ընդգծելով, որ անգնահատելի է դեսպան Նիկո Սխերմերսի դերը Բարձր դատարանի և Դեսպանության միջև ձևավորված օրինակելի գործընկերության և բարեկամության գործում:

Նիդերլանդների Թագավորության դեսպան Նիկո Սխերմերսն իր հերթին նշել է, որ Դեսպանությունը պատրաստ է աջակցել Հայաստանի իրավական ինստիտուտներին՝ ժողովրդավարական գործընթացների իրականացման գործում, և այդ առումով, Բարձր դատարանի հետ համագործակցությունն իսկապես օրինակելի է ու արդյունավետ:

Երկուստեք կարևորվել է Նիդերլանդների դեսպանության աջակցությամբ իրականացվող **«Աջակցություն Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին»** ծրագրի լիարժեք իրագործումը, որի նպատակն է խթանել Սահմանադրական դատարանում ընթացող ինստիտուցիոնալ բարեփոխումները, բարելավել Բարձր դատարանի ներքին ընթացակարգերն ու նպաստել հանրային հաշվետվողականության բարձրացմանը: Դեսպան Նիկո Սխերմերսը հույս է հայտնել, որ արդեն իսկ ամուր հիմքերի վրա դրված համագործակցությունն էլ ավելի կզարգանա և առավել ընդգրկուն կդառնա:

Արման Դիլանյանը հաջողություններ է մաղթել դեսպան Նիկոլաս Յակոբ Սխերմերսին իր հետագա գործունեության ընթացքում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԴԱՏԱԵԹԱՑ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



2023 թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ Նիդերլանդների Թագավորության աջակցությամբ և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության գործընկերությամբ իրականացվող «Աջակցություն Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում Սահմանադրական դատարանում տեղի է ունեցել **«Սահմանադրական դատարանի գործունեության լուսաբանման առանձնահատկությունները»** թեմայով վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են տարբեր ԶԼՄ-ների իրավական թեմաներ լուսաբանող լրագրողներ:

Դասընթացի պաշտոնական բացմանը ողջույնի խոսքով հանդես են եկել Սահմանադրական դատարանի փոխնախագահ պրն Վ. Գրիգորյանը, Հայաստանում Նիդերլանդների թագավորության արտակարգ և լիազոր դեսպան պրն Ն. Սխերմերսը և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության նախագահ տկն Լ. Հակոբյանը:

Սահմանադրական դատարանի փոխնախագահը, ողջունելով սեմինարի մասնակիցներին, նշել է, որ լրատվամիջոցների հետ համագոր-

ծակցության այս ձևաչափը հնարավորություն է տալիս օժանդակել իրավական ոլորտը լուսաբանող լրագրողներին՝ առավել արդյունավետ լուսաբանելու ոչ միայն Սահմանադրական դատարանի գործունեությունը, այլև՝ իրավական ոլորտի խնդիրներն՝ ընդհանրապես:

Դեսպան Սխերմերսը բարձր է գնահատել լրատվամիջոցների հետ արդյունավետ համագործակցությանն ուղղված նախաձեռնությունը, կարևորելով դրա շարունակականությունը:

«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Լուսինե Հակոբյանի խոսքով նման գիտելիքափոխանակմանը հնարավորություն են ընձեռում ամրապնդել պատասխանատու լրագրության գաղափարը, ինչպես նաև նպաստել պետական կառավարման մարմինների հանրային հաշվետվողականության բարձրացմանը:

Մեկնարկի պաշտոնական արարողությունից հետո, տեղի են ունեցել երկու թեմատիկ դասընթացներ՝ Սահմանադրական դատարանի փոխնախագահ պրն Վ. Գրիգորյանի և աշխատակազմի ղեկավար պրն Ս. Առաքելյանի բանախոսությամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸԿԱԼԿԵԼ ԵՆ ՀԱԿԱԿՈՈՒԴՅՈՒՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ



2023 թվականի հուլիսի 21-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 9-րդ հոսքի ունկնդիրները, որոնց ընդունել է Սահմանադրական դատարանի դատավոր, փոխնախագահ Վահե Գրիգորյանը: Դասախոսությունը տեսակապի միջոցով Ստեփանակերտից ունկնդրել է նաև նույն հոսքի մեկ ուսանող:

Դատավոր Գրիգորյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի դերը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության համակարգում, ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության պաշտպանությանն ուղղված Բարձր դատարանի առանցքային գործառույթները, ինչպես նաև պատասխանել է քննարկման մասնակիցների հարցերին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 3(111)2023

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(11)2023 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

2023 թվականի հուլիսի 29-30-ը Սահմանադրական դատարանը՝ «Աջակցություն Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում, անցկացրեց առաջին ամառային դպրոցը հայաստանյան բուհերի իրավագիտության ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողների համար:

Նիդերլանդների Թագավորության ֆինանսական աջակցությամբ իրականացվող Ամառային դպրոցը կազմակերպվել էր «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության կողմից:

Ամառային դպրոցին մասնակցել են Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, Եվրասիա միջազգային համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի և Հայաստանի եվրոպական համալսարանի կողմից ներկայացված ուսանողներ:

Ամառային դպրոցի դասախոսությունները վերաբերել են Սահմանադրական դատարանի ձևավորման և գործունեության սկզբունքներին, Սահմանադրական դատարանի՝ հանրային իշխանության մարմինների համակարգում ունեցած դերին, Սահմանադրական դատարանի՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների և սահմանադրական ժողովրդավարության պաշտպանության հիմնական գործառույթներին, որոնցով դասախոսել են Սահմանադրական դատարանի դատավորներ

տիկին Ս. Սաֆարյանը և պարոնայք Է. Շաթիրյանը, Հ. Հովակիմյանը և Վ. Գրիգորյանը:

Ամառային դպրոցն ավարտվել է Սահմանադրական դատարան ճանաչողական այցով, որին հաջորդել է ամառային դպրոցի մասնակիցներին հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը:

Ամառային դպրոցի առաջին շրջանավարտներին ողջունել են Սահմանադրական դատարանի նախագահ պարոն Ա. Դիլանյանը, Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների թագավորության դեսպան պարոն Ն. Սխեմերսը և «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ տիկին Լ. Հակոբյանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԵՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ



2023 թվականի օգոստոսին «Եվրոպական մեդիահարթակ Հայաստանում. հուսալի ու պրոֆեսիոնալ լրատվամիջոցների կառուցում» ծրագրի շրջանակներում Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Երևանի մի քանի ԲՈՒՀ-երի լրագրության ֆակուլտետների ուսանողները:

Ապագա լրագրողների հետ հանդիպմանը Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, կարևորելով լրագրողի մասնագիտությունը, նշել է, որ լրագրությունը՝ որպես հանրային պարտականություն, բարձր պատասխանատվությանն այլընտրանք չպետք է ունենա, քանի որ նպատակին ծառայել և արդյունավետ հանրային վերահսկողություն կարող է իրականացնել բացառապես պատասխանատու լրագրությունը:

Բարձր դատարանի նախագահին ուսանողները հարցեր են ուղղել Սահմանադրական Դատարանի գործունեության, Հայաստանի Հանրապետության իրավական մարմինների դասակարգման, գործառույթների և, ընդհանուր առմամբ, իրավական տարբեր գործընթացների հրապարակայնության առանձնահատկությունների վերաբերյալ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(11)2023 ՏԵՂԵԿԱԳԻՐ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
ՀՅՈՒՐՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ**



2023 թվականի օգոստոսի 16-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Եվրոպական ԲՈՒՀ-երի ուսանողները: Եվրասիա միջազգային համալսարանի կողմից կազմակերպված, ԵՄ-ի և DAAD-ի աջակցությամբ իրականացվող Ժան Մոնե **«Միջազգային և ԵՄ իրավունքի և քաղաքականության արդի մարտահրավերները. անվտանգության և մարդու իրավունքների ճգնաժամերը Եվրոպական հարևանության երկրներում»** (Երևան, 14-25 օգոստոսի 2023 թ.) ամառային դպրոցի ուսանողների հետ հանդիպել է Սահմանադրական դատարանի դատավոր, փոխնախագահ Վահե Գրիգորյանը:

Դատավոր Գրիգորյանը ուսանողներին ներկայացրել է Հայաստանում սահմանադրական արդարադատության ինստիտուցիոնալ և մեթոդական զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դերը Հայաստանյան իրավական համակարգի կայացման գործում: Անդրադարձ է կատարվել ներպետական իրավական համակարգում միջազգային իրավական չափանիշների դերին:

Բարձր դատարանում տեղի ունեցած հանդիպմանը մասնակցել են Ֆրանկֆուրտ Օդերի Եվրոպական համալսարանի, Բեռլինի Ֆրեյ համալ-

սարանի, Եվրոպայի համալսարանի, Ֆուլդայի կիրառական գիտությունների համալսարանի, Դուբլինի համալսարանական քոլեջի, Լայպցիգի համալսարանի, Տրիերի համալսարանի, Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոցի, Քրիստիան-Ալբրեխտի Քիլի համալսարանի, Մայնի Ֆրանկֆուրտի Գյոթեի համալսարանի, Պասաուի համալսարանի, Նովա համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Պետական կառավարման ակադեմիայի և Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողները:

Հանդիպմանը հաջորդեց աշխույժ քննարկում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
 ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԲԱՐՁՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
 ՑԱՆՑԻ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՖՈՐՈՒՄԸ**



2023 թվականի օգոստոսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավերով Սահմանադրական դատարանի նախագահի օգնական Նաիրա Հովհաննիսյանը՝ որպես Սահմանադրական դատարանի կողմից Բարձր դատարանների ցանցի համակարգող, Ստրասբուրգում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, մասնակցել է Բարձր դատարանների ցանցի վեցերորդ ֆորումին:

Բարձր դատարանների ցանցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ստեղծվել է 2015 թվականին՝ ազգային բարձր դատարանների առաջադեմ փորձի, կոնվենցիոն նախադեպային իրավունքի և հարակից հարցերի վերաբերյալ գիտելիքների փոխանակման միջոցով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի իմպլեմենտացիային նպաստելու նպատակով: Բարձր դատարանների ցանցի վեցերորդ ֆորումը ներառել է նախադեպային իրավունքի վերաբերյալ երկու նիստ՝ «Դատական իշխանության անկախությունը» թեմայով, ինչպես նաև աշխատանքային խմբերի քննարկում՝ «Գիտելիքների կառավարում, իրավական հետազոտություն և իրավախորհրդատուի դերը» թեմայով:

ԱՄՆ ՄՁԳ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ



ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ 3(11)2023

2023 թվականի սեպտեմբերին Սահմանադրական դատարանը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ համատեղ մեկնարկել է «Սահմանադրական արդարադատության հարթակ» (ՍԱՀ) նոր նախաձեռնությունը՝ որին մասնակից են դառնալու այն պետական մարմիններն ու քաղաքացիները, որոնք Սահմանադրության ուժով իրավունք ունեն դիմելու Հայաստանի Բարձր դատարան:

Սահմանադրական դատարանը կենսական նշանակություն ունի Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման գործում: Աջակցելով ՍԱՀ նախաձեռնությանը՝ ԱՄՆ ՄՁԳ-ն նպատակ ունի ՀՀ-ում սահմանադրական արդարադատության շուրջ բաց երկխոսություն սկսել: Նախաձեռնությունը կնպաստի ավելի միասնական իրավական պրակտիկային, սահմանադրական արդարադատության մատչելիության բարելավմանը, ինչպես նաև Հայաստանում ժողովրդավարության, մարդու իրավունքների, իրավահավասարության և իրավունքի գերակայության առավել լավ ընկալմանը:

ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ ստեղծվող հարթակը կապահովի պետական գերատեսչությունների և ներպետական այլ դերակատարների միջև համագործակցություն և փորձի փոխանակում՝ նպաստելու Հայաստանում առկա իրավական պրակտիկայի ընդհանուր մարտահրավերների հաղթահարմանը:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, կարևորելով «Սահմանադրական արդարադատության հարթակի» ստեղծումը, նշեց.

«Սահմանադրական դատարանի առաքելությունն է ապահովել ժողովրդավարության, ինքնիշխանության, ազատության և իրավունքի գերակայության անշեղ ամրապնդումը մեր երկրում: 2023-2025 թվականների ռազմավարական զարգացման գործողությունների հայեցակարգով մենք արդեն իսկ վերհանել ենք այն առաջնահերթ խնդիրները, որոնց համակարգված լուծումը էլ ավելի կբարձրացնի Սահմանադրական դատարանի աշխատանքի արդյունավետությունը: Այս ճանապարհին մեր կողքին են միջազգային գործընկերները, այդ թվում՝ արդեն նաև ԱՄՆ ՄՁԳ-ն: «Սահմանադրական արդարադատության հարթակի» մեկնարկով մենք պաշտոնապես ազդարարում ենք Սահմանադրական դատարանի և ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի Արդարադատության ոլորտի ծրագրի հետ մեր համագործակցությունը»:

Նախաձեռնությունն իրականացվում է ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի Արդարադատության ոլորտի աջակցության հնգամյա ծրագրի շրջանակում, որի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին՝ ձևավորելու առավել անաչառ և անկախ արդարադատական համակարգ, ինչպես նաև բարձրացնելու իրավունքի գերակայության հանդեպ հանրային վստահությունը երկրում: ԱՄՆ ՄՁԳ հայաստանյան առաքելության տնօրեն Ջոն Ալելոն իր ողջույնի խոսքում նշեց.

«Մենք հպարտ ենք, որ «Սահմանադրական արդարադատության հարթակ» նախաձեռնության շրջանակում համագործակցում ենք Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի հետ: Համարեղ ջանքերի միջոցով մենք նպատակ ունենք Հայաստանում ամրապնդելու իրավունքի գերակայությունը, բարձրացնելու արդարադատության մատչելիությունը և խթանելու ավելի միասնական ու անաչառ իրավական համակարգը: Այս հարթակն արտացոլում է մեր հանձնառությունը՝ աջակցելու ժողովրդավարական արժեքներին, մարդու իրավունքներին և բոլորի համար հավասար պայմաններով արդարադատությանը»:

«Սահմանադրական արդարադատության հարթակի» շրջանակում առաջիկայում կիրականացվեն հատուկ նախագծված աշխատաժողովներ Սահմանադրական դատարանի հետ փոխառնչվող որոշակի խմբերի համար: Աշխատաժողովները նվիրված կլինեն Հայաստանում իրավունքի գերակայությանը և միասնական դատական պրակտիկային:

«Սահմանադրական արդարադատության հարթակ» նախաձեռնությունն ազդարարում է ԱՄՆ ՄՁԳ հայաստանյան առաքելության և Սահմանադրական դատարանի միջև երկարաժամկետ համագործակցության մեկնարկը:

Առաջիկա ամիսների ընթացքում ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի Արդարադատության ոլորտի աջակցության ծրագիրը Հայաստանի Բարձր դատարանին տրամադրելու է մասնագիտական փորձագիտական և տեխնիկական աջակցություն: ԱՄՆ ՄՁԳ աջակցությունն ուղղված կլինի Սահմանադրական դատարանի վարչարարության, ներքին աշխատանքային ընթացակարգերի և ռազմավարական հաղորդակցման զարգացմանը՝ խթանելով դատարանի ընթացիկ ինստիտուցիոնալ բարեփոխումները:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ, Ա.
ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 10.11.2023թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը՝ 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Բաղրամյան 10

Հեռախոս՝ 011-58-81-81 (189)

E-mail: armlaw@concourt.am

<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(111)2023

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(111)2023

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(111)2023

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

